Ключевыми составляющими формирования научной культуры разных стран являются обмен научными ресурсами (кадры, оборудование, опыт организации научных исследований и т. д.), реализация совместных научных проектов, расширение научных связей, которые способствуют развитию отношений между этими странами. Высокая мобильность науки и научных кадров является предпосылкой эффективного развития науки сегодня и завтра. Мы более чем убеждены, что тупиковые ситуации в отношениях между некоторыми странами можно преодолеть, используя потенциал дипломатии науки. Отношения между странами в области научного сотрудничества формируются и развиваются в первую очередь учеными, которые являются уникальными **ПОСЛАМИ НАУКИ** в своих странах.

Вот почему роль дипломатии науки сегодня растет также, как это было во времена Холодной войны. Почему же государственные деятели и политики ожидают поддержки ученых в критические для страны времена? Дело в том, что люди с научным мировоззрением лучше понимают масштабы вызовов и угроз. Когда дипломаты, политики, бизнесмены, высокопоставленные военные теряют доверие друг к другу, отношения между учеными часто становятся жизненно важными для межгосударственных отношений. Действительно важная роль ученых определяется одним обстоятельством: независимо от того, в какой части планеты они живут, какой они национальности, они хорошо понимают друг друга, потому что у них есть объединяющее начало – язык науки, который помогает решать международные проблемы.

Ясно одно: и методы, которые предлагает дипломатия науки, и инструменты, которые она использует, могут помочь в решении спорных и важных вопросов. Множество примеров доказывают, что ученые - те же дипломаты, которые могут влиять на политику и, следовательно, на успешное развитие международных отношений.

Хочется верить, что дипломатия науки может в значительной степени способствовать установлению мира во всем мире, формированию добрососедских отношений между народами, сохранению планеты Земля и устойчивому развитию.

Журнал ОМУСА «Научный Арцах» должен стать одной из важных платформ для развития дипломатии науки в Арцахе, чтобы, наука, служа дипломатии, смогла противопоставить материалистическому мировоззрению понимание важности силы человека и его научных возможностей, питающихся мудростью родной земли, поскольку именно такой человек может верно использовать свои возможности, служа самой главной, приоритетной цели: международного признания и процветания Республики Арцах.

АВЕТИК АРУТЮНЯН

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

**TRANSFORMATION OF THE STRATEGY OF AMERICAN AID
TO ARTSAKH IN THE CONTEXT OF THE
NEW ECONOMIC POLICY OF THE POST-COVID ERA***

341.232 (73+479.25)

MARTUN AZATYAN

*Russian-Armenian University,
International Relations Chair, Ph.D Student,
Yerevan, Republic of Armenia
martun.azatyan2018@gmail.com*

The article examines the origins of the idea of International Development Assistance (IDA) and the process of its transformation into a separate branch of international relations on the example of the USA. It analyzes the features of American support for Artsakh in accordance with the interests of the USA in the South Caucasus. The purpose of the research is to detect possible transformations of American allocations to Artsakh in the changing realities of the world economic system, which will allow formulating recommendations for the development of the most popular industries in the context of the pandemic. Based on a comparative analysis of annual payments, it is concluded that the size and direction of financial assistance depends on the need to maintain the process of sustainable development in the region. The impact of the coronavirus pandemic on the amount of subsidies is considered, and the strengthening of the agricultural and medical sectors of Artsakh is proposed to increase the mobilization potential of the country. Thus, Artsakh and Armenia will increase their role as key players in maintaining stability in the region and will provide the population with essential products in case of repeated border closures.

Key words: Artsakh, USA, USAID, financial aid, coronavirus, economy, transformation.

On January 20, 1949, after reading the inaugural speech of the 33rd President of the United States Harry Truman, the official approval of a new separate direction of world politics was launched. This stands for the ODA (Official Development Assistance) - the idea of economic and technical support to other countries, which was declared by the fourth point of the President's speech.

It is known that before the Second World War, the United States positioned itself as a supporter of a policy of minimal intervention in the matters of the rest of the world. However, the main postulate of the Messianic tradition – the idea of exclusivity – after two centuries of development and formation had to find an application beyond the borders of the American state. The features of the American way of life laid down by the founding fathers, first of all, showed

* Հոդվածը ներկայացվել է 20.04.2020թ., գրախոսվել՝ 22.04.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

themselves on the positive side within their own society; therefore, they could become guidelines for the formation and development of societies in Western countries, as well as the rest of the world.

In parallel with the above process, in the 40s of the last century, the necessary process of approving the Institute of technical assistance continued to gain momentum, because the support of the allies, which took place before and during the war, was mostly episodic. One of the first steps in the formation of an international tradition of assistance to countries in need was taken in November 1943, when representatives of 44 states gathered in Washington and signed an agreement on the establishment of the United Nations Relief and Rehabilitation Administration (UNRRA). And after the signing of the Bretton Woods Agreement in July 1944, the International Monetary Fund (IMF) and the International Bank for Reconstruction and Development (IBDR) were created, which still provides assistance to the economies of the organization's member countries¹.

As for the geopolitical situation, after the change of the phases of the war from “hot” to “cold”, the world was seen as a battleground of democratic and undemocratic forces. Among the latter, first of all, the communist countries with their own ideology – communism – were considered as threats to the ideals of freedom and democracy. The beginning of national liberation movements in South-East Asia (India, Burma and Ceylon) only accelerated the mobilization of resources in both systems.

After examining the process of implementing the “Truman Doctrine” and the “Marshall Plan”, the liberal wing of the US political elite (Bowles, Galbraith, Kennan) came to the conclusion that military assistance to allied countries was ineffective, instead offering social and economic reforms in these states that would allow them to “step on” hunger and disease. For this purpose, it was supposed to use American scientific achievements and the fruits of industrial progress². So, this idea was expressed in 4th paragraph of the President's inaugural speech, which noted the need of creating a social base in donor countries that supports a political and economic regime that would be able to resist communism³.

This approach formed the basis of the “Foreign Assistance Act”, signed by President Kennedy in 1961, which led to the creation of the Peace Corps and the United States Agency for International Development (USAID) – the top federal aid agency outside the United States. It is worth noting that the main executive authority, that determines the strategy of the ODA, is the US National Security Council, in which, since 2010, USAID was included. As for the legislative branch (Congress), in the Upper House (Senate) international development assistance is handled by the US Senate Committee on Foreign Relations, and in the Lower House (House of Representatives) by the US House of Representatives Committee on Foreign Affairs. The final decision is made by the Appropriations Committees of both houses.

In studying the ODA process, it is necessary to emphasize the most important role of the US State Department, especially in the context of providing non-military assistance to recipient countries. The Department includes the Office of U.S. Foreign Assistance Resources, which determines the state Department's plan of action in the field of ODA in a particular region. The main priorities are non-violent conflict resolution, support for democratic societies, the fight against climate change and etc.⁴

¹ The World Bank Group: <https://www.worldbank.org/en/what-we-do>

² Глазунова Е.Н., У истоков содействия международному развитию: американская программа технической помощи развивающимся странам. Вестник Московского университета. Серия 25. Международные отношения и мировая политика. 2012. №2. С. 126-157.

³ Inaugural Addresses of the Presidents of the United States: <https://www.bartleby.com/124/pres53.html>.

⁴ QUADRENNIAL DIPLOMACY AND DEVELOPMENT REVIEW: ENDURING LEADERSHIP IN A DYNAMIC WORLD (QDDR): <https://www.usaid.gov/qddr>.

Despite all the actions aimed at the final formation of the ODA Institute, the scope and scale of foreign support varied depending on the political situation in the United States, as well as on the processes taking place in the rest of the world. In particular, in the early 80's, military aid became relevant again, as the recipient countries, on the one hand, did not want to fall under full economic dependence on Washington, on the other hand, the methods no longer justified themselves in practice, in particular, during the Vietnam war⁵.

However, in the 80's, liberal trends became relevant again, and US President Ronald Reagan noted the need to implement economic policies in recipient countries that would promote the development of market relations, free trade, as well as strengthening socio-political institutions. The collapse of the Soviet Union did not make serious adjustments to the strategy of the ODA, since most of the States that gained independence declared the need to establish a democratic system and a market economy in their countries.

From that moment on, the ODA bodies were guided by the politicentric model of development of the recipient country, the axis of which was political development – the key link of economic and social prosperity⁶. The reason for this evolution was, first of all, the approaches of neoinstitutionalists, who advocated the strengthening of the rule of law and the fight against corruption. Secondly, the views of the US political elite have had a significant impact on the “third wave of democratization” and the need to support it through policies promoting democracy⁷.

In any case, in the mid-90s, the absence of a geopolitical rival began to have an impact on the logic of the ODA, in particular, in optimizing expenditures allocated for foreign aid. If at the beginning of the 90-s about 27 billion dollars were allocated for the ODA, then with the advent of the new Millennium this figure has decreased to 20 billion dollars.⁸

The most important event that paved the way for upcoming financial assistance directly to the Nagorno-Karabakh Republic was the joint adoption of the “Freedom Support Act” in August 1992 by the House of Representatives and the Senate. According to the document, the need for assistance from the United States to the post-Soviet states in order to create and maintain a democratic system of government and a liberal economy was declared. Since 1998, the Nagorno-Karabakh Republic has officially received annual financial assistance from the United States. Below is a column table of the expected and officially received amount from the United States, indicating the date and purpose of receiving funds (n/a – no data available).

Year	The expected amount (mln.)	Actual amount (mln.)	Purpose
1998	12,5	5,5	For victims of conflict
1999	7,5	3,5	To reconstruction and other activities related to a peaceful settlement
2000	n/a	2	To implementation of confidence-building measures and other measures to promote a peaceful settlement

⁵ **Roper J.** John F. Kennedy and Lyndon Johnson. In US Foreign Policy and Democracy Promotion: From Theodore Roosevelt to Barack Obama. Michael Cox, Timothy J. Lynch, and Nicolas Bouchet. P. 103-120

⁶ DEMOCRACY AND GOVERNANCE: https://pdf.usaid.gov/pdf_docs/PNABL224.pdf

⁷ **Huntington, Samuel P.** "Democracy's Third Wave." Journal of Democracy 2.2 (1991)

⁸ Query Wizard for International Development Statistics: <https://stats.oecd.org/qwids/>

2001	n/a	4	To implementation of confidence-building measures and other measures to promote a peaceful settlement
2002	n/a	2	To implementation of confidence-building measures and other measures to promote a peaceful settlement
2003	5	2	To satisfaction of current humanitarian needs
2004	5	2	To provide humanitarian and emergency assistance to meet the basic needs of the population, including drinking water supply programmes
2005	3	2.5	For humanitarian and emergency assistance
2006	3	3	For humanitarian and emergency assistance
2007	3	2	To implementation of confidence-building measures and other measures to promote a peaceful settlement
2008	6	2	To solve current humanitarian problems
2009	8	2	To solve current humanitarian problems
2010	8	2	To solve current humanitarian problems
2011	n/a	2	n/a
2012	n/a	2	n/a
2013	n/a	2	n/a
2014	n/a	2	n/a
2015	n/a	2	n/a
Total (1998-2015)		44,5	

Figure 1. Legislative History of U.S. Assistance to Nagorno Karabakh⁹

If we analyze the goals of allocating funds, it becomes clear that they are based on the logic of geopolitical interests of USA in the South Caucasus. In the late 90's, in order to implement energy projects in the region, the Americans were interested in stability, in democratic systems, as well as in preventing possible military clashes. Interests have undergone certain modifications since the events of September 11, 2001, when there was a need for decisive measures in the fight against terrorism. In addition, Azerbaijan had announced its accession to the UN anti-terrorist measures. It was in this context that US President George W. Bush sought to suspend Section 907 to the "Freedom Support Act", which prohibited providing military assistance to Azerbaijan. The confirmation of the aforementioned is the data of the decrease in the amount of financial subsidies

⁹ https://anca.org/assets/pdf/misc/US_assistance_to_NKR.pdf.

since 2002. In this context, it is necessary to take into account the fact that the development and adoption of the state budget and expenditures is carried out during the previous year.

Another factor that has influenced and continues to influence the reduction of foreign aid is the arrival of President Donald Trump in the White House, who during the presidential race announced about the need to reduce subsidies to international organizations and individual states from the US. The Congress has been and continues to be a deterrent in this context, which, in particular, has become an insurmountable barrier for Trump in cutting the share of foreign aid in the US budget for 2019¹⁰.

The reduction of financial assistance to Artsakh in a number of areas also has other reasons. In particular, the company HALO Trust, which has been carrying out mine clearance in the territory of Artsakh since 2010, received about 11 million dollars from the United States in general, which allowed to clear agricultural land from unexploded shells, and this led to a reduction in the number of civilian casualties by 80%¹¹. It should be noted that the largest amount of financial subsidies was allocated in 2017, which was 3.5 million dollars, and the reason for the possible reduction in funding could be the fact of mine clearance of 95% of territories.

In March 2020, 73 congressmen sent a letter to the Appropriations Committee with a proposal to allocate \$ 100 million in financial assistance to Armenia and \$1.5 million to Artsakh. The purpose of financial assistance to Artsakh was again related to mine clearance program. At the end of the month, the US presidential administration announced a reduction in aid to Artsakh, which, according to international expert Suren Sargsyan, was done not only because Armenia and Artsakh are not priorities for Trump's administration, but also because foreign aid in general is not a priority for them. In addition, the possibilities of the Armenian lobby to oppose the approval of this decision are very limited due to the situation with the spread of the coronavirus¹². The thing is that the main tools of lobbying – promotion of the issue in person, stocks and pickets – are not possible in the conditions of quarantine caused by a virus. Lobbyists will also encounter significant difficulties in the information field, which as of April 2020 is almost completely filled with materials about COVID-19.

In our opinion, the coronavirus and the introduced pandemic are the cornerstones on which it's necessary to build a scenario for future economic relations between the United States and Artsakh. In the “new” world that will be established after overcoming the peak of COVID-19, the main goal of the Armenian lobby and political structures of Armenia and Artsakh will be to find common interests with their American counterparts.

The main areas where Armenian producers have the opportunity to use the resources of their own country are medicine and agriculture. These sectors of the economy make the possibility to not only export products abroad, but also to provide their own population with basic necessities, both at a normal pace of life, and in conditions of crisis and closed borders. As mentioned earlier, the United States are interested in the continued development of the South Caucasus countries and in overcoming military and economic crises. Therefore, it is necessary to do everything possible to increase the role of Artsakh in maintaining stability in the region, especially in times of crisis. The Republic of Armenia, for its part, should develop mechanisms to promote the development of agriculture and medicine in the territory of Artsakh, with the condition of constant and

¹⁰ Трамп предложит сократить иностранную помощь и социальные программы: <https://www.golos-ameriki.ru/a/trump-slashes-foreign-aid-cuts-safety-net-programs-in-new-budget-proposal/5281342.html>.

¹¹ ԱՄՆ օգնությունը միշտ եղել է Ղարաբաղում իրականացվող HALO-ի ծրագրերի հիմնասյունը, դրա դադարեցումը կստիպի HALO-ին զգալիորեն նվազեցնել աշխատանքները Ղարաբաղում: <https://www.aravot.am/2019/08/17/1060904/>;

¹² «ԱՄՆ-ի՝ Արցախի օգնության տրամադրման ծրագիրը պահպանելը բարդ է լինելու»: <https://www.aravot.am/2020/03/28/1102496/>;

uninterrupted supply of products to the territory of the Republic of Armenia with the possibility of exporting them.

We believe that the upcoming US presidential election, which is scheduled for November 3, 2020, will not affect the increase in subsidies to Armenia and Artsakh, unless the Armenian side offers and substantiates alternative ways to receive financial support. The fact is that the current US President has not declared his intention of changing the main logic of his policy. As for the main opponent of Donald Trump – Joe Biden - in this case there are both positive and negative factors for Armenia and Artsakh. On the one hand, Biden is a member of the US Democratic Party, which has supported other countries and international organizations more often than Republicans. On the other hand, Biden says that it is necessary to continue the fight against terrorism in the Middle East, so the logic of external support will be based on the factor of ensuring security, mainly by military means. In our opinion, Armenia, as a member of the CSTO, will be in a difficult geopolitical situation if it decides to participate in anti-terrorist operations and receive military support from the United States.

At the end of March 2020, it was announced that the United States will allocate \$ 1.1 million to Armenia to fight against the coronavirus and its consequences. Delegation of the European Union to Armenia declared that the EU will provide assistance to Armenia in the amount of 51 million euros, which will be used to purchase medical equipment, advanced training of medical staff, as well as for supporting small and medium-sized businesses¹³. This kind of assistance can become a precedent for future subsidies on mutually beneficial terms with the aim of development of medicine and agriculture in the territory of Armenia and Artsakh.

ԱՐՑԱԽԻՆ ՀԱՏԿԱՑԿՈՂ ԱՄԵՐԻԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄԸ POST-COVID ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՄԱՐՏՈՒՆ ԱԶԱՏՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի
միջազգային հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Հոդվածում ուսումնասիրվում են Միջազգային զարգացման աջակցության գաղափարի՝ որպես միջազգային հարաբերությունների առանձին ճյուղի վերածվելու գործընթացի ակունքները ԱՄՆ օրինակով: Վերլուծվում են Արցախին տրամադրվող ամերիկյան աջակցության առանձնահատկությունները՝ Հարավային Կովկասում ԱՄՆ շահերին համապատասխան: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել համաշխարհային տնտեսական համակարգի փոփոխվող իրողություններում ԱՄՆ կողմից ֆինանսական հատկացումների հնարավոր փոխակերպումները, ինչը հնարավորություն կտա մշակել առաջարկություններ՝ համաճարակի պայմաններում արտադրության առավել պահանջված ճյուղերի զարգացման համար: Հոդվածում օգտագործվում են էմպիրիկ (համեմատություն) և տեսական (վերլուծություն ու սինթեզ) հետազոտության մեթոդները: Ամենամյա հատկացումների համեմատական վերլուծության հիման վրա եզրակացություն է արվում, որ ֆինանսական օգնության չափն ու ուղղվածությունը կախված են տարածաշրջանում կայուն զարգացման գործընթացի պահպանման անհրաժեշտությունից: Դիտարկվում է կորոնավիրուսի համաճարակի ազդեցությունը դոտացիաների չափի վրա, առաջարկվում է Արցախի

¹³ ЕС предоставит Армении 51 млн. евро на борьбу с коронавирусом: <https://newsarmenia.am/news/armenia/es-predostavit-armenii-51-mln-evro-na-borbu-s-koronavirusom/>.

գյուղատնտեսական և բժշկական սեկտորների հզորացում՝ ուղղված երկրի մոբիլիզացիոն ներուժի բարձրացմանը: Իբրև արդյունք՝ Արցախին ու Հայաստանը, որպես առանցքային դերակատարներ, կբարձրացնեն իրենց դերը տարածաշրջանում կայունության պահպանման գործընթացում և փակ սահմանների դեպքում կապահովեն երկու երկրների բնակչությանը առաջին անհրաժեշտության ապրանքներով:

Հիմնաբառեր՝ Արցախ, ԱՄՆ, USAID, ֆինանսական օգնություն, կորոնավիրուս, տնտեսություն, փոխակերպում:

ТРАНСФОРМАЦИЯ СТРАТЕГИИ АМЕРИКАНСКОЙ ПОМОЩИ АРЦАХУ В КОНТЕКСТЕ НОВОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ ЭРЫ POST-COVID

МАРТУН АЗАТЯН

*аспирант кафедры международных отношений
Российско-Армянского Университета,
г. Ереван, Республика Армения*

Статья рассматривает предпосылки идеи содействия международному развитию (СМР) и процесса его преобразования в отдельную отрасль международных отношений на примере США. Анализируется специфика американской поддержки Арцаха в соответствии с интересами США на Южном Кавказе.

Цель исследования – выявление возможных трансформаций американских ассигнований Арцаху в изменяющихся реалиях мировой экономической системы, что позволит выработать рекомендации для развития наиболее востребованных отраслей производства в условиях пандемии. В статье использованы методы эмпирического (сравнение) и теоретического (анализ и синтез) исследования. На основе сравнительного анализа ежегодных выплат делается заключение, что размер и направленность финансовой помощи зависят от необходимости поддержания процесса устойчивого развития в регионе. Рассматривается влияние пандемии коронавируса на размер дотаций, делаются предложения по усилению сельскохозяйственного и медицинского секторов Арцаха для увеличения мобилизационного потенциала страны. Как результат, Арцах и Армения повысят свою роль ключевых игроков в деле сохранения стабильности в регионе и обеспечат население стран продукцией первой необходимости в случае закрытия границ.

Ключевые слова: *Арцах, США, USAID, финансовая помощь, коронавирус, экономика, трансформация.*

**ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ Փ. ԿԱԼԵՆԱԹԻՆԻ.
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԸ***

ՀՏԴ 32 (479.243)

ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ Գիտությունների պաշտպանության ակադեմիայի իրավունքի, սոցիոլոգիայի և փիլիսոփայության ինստիտուտի գիտաշխատող, ԱԵԳՄՄ-ի անդամ,
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն,
Ուփսալայի համալսարանի Ռուսաստանի և Եվրասիայի
ուսումնասիրությունների ինստիտուտի հրավիրյալ գիտաշխատող,
բ. Ուփսալա, Շվեդիա
anigrigoryan@gmail.com

Սույն հետազոտական աշխատանքը խարսխված է հակամարտությունների կարգավորման տեսաբան Փիթեր Վալենստինի կողմից առաջ քաշված հակամարտությունների կարգավորման չորս կատեգորիաների ուսումնասիրման վրա: Հետազոտության նպատակն է ներկայացնել հակամարտությունների չորս՝ հեղինակի տերմինաբանությամբ գեոպոլիտիկ (աշխարհաքաղաքական), ռեալպոլիտիկ, իդեալպոլիտիկ (գաղափարաքաղաքական) և կապիտալպոլիտիկ (տնտեսաքաղաքական) սկզբնապատճառների ուսումնասիրության արդիականությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համատեքստում:

Հրնթացս փորձ է արվում վերհանված ընհանուր մոտեցումները տեղայնացնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության ներկա փուլի վրա: Հաշվի են առնվում ինչպես հակամարտության աշխարհաքաղաքական-տարածաշրջանային գործոնները, այնպես էլ ներքաղաքական ուժային (վերա)դասավորումները, երկրի վարգսման ներքին տրամաբանությունը, այդ թվում՝ լեգիտիմության հիմնահարցը:

Մեթոդաբանության տեսանկյունից հետազոտությունն իրականացվել է որակական գործիքակազմով՝ մասնավորապես դիսկուրսի (խոսույթի) ուսումնասիրությամբ՝ հիմք ընդունելով պաշտոնական փաստաթղթերն ու հայտարարությունները:

Ցույց է տրվում, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, հիմքում ունենալով վերոնշյալ չորս սկզբնապատճառները, վերահաստատում է առավել համապարփակ ու անշտապ ուղիների փնտրման հրատապությունը՝ առաջնորդվելով շեշտակի փոփոխվող աշխարհի կողմից պարտադրված նոր իրողությունների հրամայականով:

Հիմնաբառեր՝ հակամարտությունների տիպաբանություն՝ գեոպոլիտիկ (աշխարհաքաղաքական), ռեալպոլիտիկ, իդեալպոլիտիկ (գաղափարաքաղաքական) և կապիտալպոլիտիկ (տնտեսաքաղաքական), հակամարտությունների կարգավորում, Լեռնային Ղարաբաղ, խաղաղության գործընթաց, անվտանգություն:

* Հոդվածը ներկայացվել է 11.05.2020թ., գրախոսվել՝ 14.05.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

Ներածություն

Հակամարտաբանությունը, որպես գիտակարգ, վերջին տասնամյակների ընթացքում և հատկապես Խորհրդային Միության լուծարումից հետո շեշտակի զարգացում է ապրել: Լինելով համեմատաբար երիտասարդ գիտակարգ՝ այն աննախադեպ ծավալների գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների է արժանացել, որոնց մի մասը նվիրված է հակամարտությունների քանակական հավաքագրմանը, իսկ մյուս մասն իրականացնում է արդեն հավաքագրված հակամարտությունների համեմատական ուսումնասիրություններ՝ վերհանելով հակամարտությունների օրինաչափությունները, հիմնական տարբերություններն ու նմանությունները: Նման հետազոտությունները հետապնդում են տարատեսակ գիտական ու գործնական նպատակներ, որոնցից թերևս առավել մեծ պահանջարկը վայելում է հակամարտությունների կարգավորման ոլորտը:

Հակամարտությունների կարգավորումը բարդ ու բազմաշերտ ոլորտ է, որը հակամարտությունները ներկայացնում է ամենատարբեր տեսանկյուններից: Հաշվի են առնվում գլոբալ ու տեղական սոցիալ-քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացները: Առաջնահերթ է դառնում հակամարտության սկզբնապատճառների խորքային վերլուծությունը՝ կարգավորումն առավել համակարգված ու իրատեսական դարձնելու նպատակով:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը հակամարտությունների հայտնի տեսաբան Փիթեր Վալենստինի կողմից առաջ քաշված հակամարտությունների կարգավորման տեսության համատեքստում: Մասնավորապես՝ հոդվածում ներկայացվում են հակամարտությունների չորս հիմնական տեսակները՝ հիմնվելով դրանց սկզբնապատճառների վրա՝ աշխարհաքաղաքական, ռեալպոլիտիկ, գաղափարաքաղաքական և քաղաքատնտեսական:

Հակամարտությունների կարգավորման չորս կատեգորիաներն ըստ Վալենստինի

Հակամարտությունների առաջացման սկզբնապատճառները բազմաթիվ են: Կարգավորման երկարաձգման պարագայում դրանք նենգափոխվում են՝ աղավաղելով հակամարտությունների սկզբնապատճառների էությունական նկարագիրը և խճճելով հնարավոր խաղաղ կարգավորման հեռանկարները: Հետևաբար կենսական նշանակություն են ձեռք բերում հակամարտությունների ծագման հիմնապատճառների վերհանումը և ուսումնասիրությունը՝ կարգավորման ուղիների համակարգված մոտեցում մշակելու նպատակով:

Հակամարտությունների կարգավորումը Վալենստինը սահմանում է որպես «սոցիալական իրավիճակ, երբ հակամարտող կողմերը (կամավոր) համաձայնում են խաղաղ գոյակցման և/կամ լուծում են հիմնական անհամապատասխանությունները (incompatibilities)՝ այդպիսով դադարելով կիրառել գինված ուժ միմյանց նկատմամբ»¹⁴: Սրան հասնելու համար առանձնացվում են յոթ հիմնական մեխանիզմներ՝ 1. առաջնահերթությունների վերանայում, 2. ռեսուրսների բաժանում, 3. փոխզիջում, 4. համատեղ վերահսկողություն, 5. երրորդ կողմի ներգրավում և կռվանի հանձնում այդ կողմին, 6. կարգավորման այլ մեխանիզմների՝ ինչպես, օրինակ, արբիտրաժի կիրառում կամ ad hoc մեխանիզմներ, 7. հակամարտության սառեցում¹⁵: Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության բազմաշերտությունը՝ լոկալ, տարածաշրջանային ու

¹⁴ Wallenstein P., Understanding Conflict Resolution: War, Peace and the Global System, London, 2002, էջ 50.

¹⁵ Սույն տեղում, էջ 54-57:

միջազգային շահագրգիռ կողմերի ներկայացվածությամբ¹⁶ և բանակցային գործընթացի դինամիկան՝ դրա կարգավորման տարբեր փուլերում առաջարկվել է վերոնշյալ մեխանիզմների կիրառում՝ սկսած խաղաղապահ գործերի տեղակայումից¹⁷ մինչև փոխզիջումային տարբերակների բնևարկումներ¹⁸: Վերոնշյալ մեխանիզմները մեթոդաբանորեն կիրառվում են հայտնի բոլոր հակամարտությունների կարգավորման դեպքում առավել համապարփակ հանգուցալուծում գտնելու նպատակով՝ հաշվի առնելով առաջարկվող թիրախավորված լուծումները և հակամարտությունների առանձնահատկությունները:

Փ. Վալենստինի առաջ քաշած աշխարհաքաղաքական կատեգորիան, որպես հակամարտությունների սանձագերծման սկզբնապատճառ, ծավալվում է այնպիսի տարածքների շուրջ, որոնց վերագրվում է քաղաքական-մարտավարական ծանրակշիռ նշանակություն: Ընդ որում, խնդիրը ծավալվում է ոչ միայն տարածքի շուրջ¹⁹, որպես աշխարհագրական միավորի, այլ կարևորվում է այն պրիզման, որով որոշում կայացնողները կամ հիմնական խաղացողները դիտարկում են տվյալ տարածքը²⁰: Պատմական հետահայացով նկատելի է Հարավային Կովկասի շուրջ համաաշխարհային մեծ տերությունների մղած պայքարը՝ տարածաշրջանում հեգեմոն դիրքերի հասնելու համար: Դիցուք, ինչպես ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովն է նշում, Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղության ամենակարևոր գրավականը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումն է²¹: Այս իմաստով դժվար է թերագնահատել Հարավային Կովկասի շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացների կարևորությունը և դրանց որոշիչ ազդեցությունը հակամարտության հետագա ընթացքի վրա²²: Այս համատեքստում հասկանալի է դառնում տարածաշրջանային խաղացողների մարտավարական քայլերը՝ զորօրինակ՝ վերջին տարիներին ռուսական և արևմտյան ինտեգրացիոն մոդելների պարտադրումը Հարավային Կովկասի պետություններին: Ըստ Վալենստինի՝ հակամարտությունները մտնում են բանակցային փուլ, երբ հակամատող կողմերը ռազմաքաղաքական ու տնտեսական համապատասխան ու անհրաժեշտ ռեսուրսների չեն տիրապետում վերջ դնելու հակամարտությանը²³: Այլ կերպ ասած՝ ուժն այստեղ հանդես է գալիս որպես միջոց՝ և՛ սկզբնավորելու, և՛ ավարտին հասցնելու հակամարտությունը:

¹⁶ **Բեգարյան Ա.**, Ղարաբաղյան հակամարտության աշխարհաքաղաքականությունը, «Բուն ԹՎ», 8 դեկտեմբերի 2013 թ., <http://boon.am/geopolitics-of-nagorno-karabakh-conflict> (հղվել է 02.05.2019 թ.):

¹⁷ **Մամեդյարով.** «Համաձայնություն է ձեռք բերվել Ղարաբաղում խաղաղապահ ուժերի մասին», «Ազատություն» *ռ/կ*, 7 հունիսի 2011 թ., <https://www.azatutyun.am/a/24227209.htm> (հղվել է 02.05.2019 թ.): Лукашенко рассказал о предложениях по участию России и Беларуси в разрешении нагорно-карабахского конфликта, *БЕЛТА - Новости Беларуси*, 14 դեկտեմբերի 2018 թ., <https://www.belta.by/president/view/lukashenko-rasskazal-o-predlozhenijah-po-uchastiju-rossii-i-belarusi-v-razreshenii-nagorno-329365-2018/> (հղվել է 02.05.2019 թ.):

¹⁸ Полная версия интервью президента Армении Сержа Саргсяна Дмитрию Киселеву, «Sputnik на русском» *յուրոնլայն ալիք*, 17 նոյեմբերի 2016 թ., <https://www.youtube.com/watch?v=CyOezqB14RE> (հղվել է 02.05.2019 թ.):

¹⁹ **Diehl P. F.**, *A Road Map to War: Territorial Dimensions of International Conflict*, London, 1999, P. 16-19.

²⁰ **Wallensteen P.**, նշ. աշխ., էջ 97:

²¹ Москва – Баку: как купировать риски, *Sputnik Азербайджан*, 2 սեպտեմբերի 2015 թ., <https://az.sputniknews.ru/expert/20150902/401873007.html> (հղվել է 02.05.2019 թ.):

²² **Манасян А.** Знать правду: политические мотивы в подтекстах карабахского конфликта, «Դիսուսկետ», 2 նոյեմբերի 2018 թ., <http://ditaket.info/Александр-Манасян-Знать-правду-пол/> (հղվել է 11.05.2019 թ.):

²³ **Wallensteen P.**, նշ. աշխ., էջ 102.

Աշխարհաքաղաքական կատեգորիայի համատեքստում հակամարտությունները կարգավորելիս փորձագետների, քաղաքագետների ու դիվանագետների առջև ծառայում է այն հարցը, թե որն է այն սկզբնական կետը, որից անհրաժեշտ է (կամ քաղաքական առումով կոռեկտ է) սկսել հակամարտությունների լուծումը: Այդ կապակցությամբ առաջ է քաշվում երկու ելակետային մոտեցում՝ ստատուս քվո (status quo²⁴) կամ ստատուս քվո միջև պատերազմական գործողությունները (status quo ante bellum)²⁵: ՄԱԿ-ի կանոնադրության յոթերորդ գլուխը նախատեսում է «խաղաղության վերականգնման և պահպանման համար» հիմք ընդունել նախապատերազմական իրավիճակը²⁶: Այլ կերպ ասած՝ հակամարտության խաղաղ լուծման միջոցառումները դիտարկվում են միջև պատերազմական գործողությունները, ոչ թե պատերազմական գործողություններից հետո ստեղծված իրավիճակի համատեքստում: Եվ այստեղ է, որ միջազգային իրավունքի հիմնադրույթները, մասնավորապես ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքն ու աշխարհաքաղաքական իրողությունները տարամիտվում են, իսկ ՄԱԿ-ի հակամարտությունների լուծման քաղաքականությունը՝ հաճախ անտեսվում: Ինչպես փաստարկում է Վալենտինը, սա թուլացնում է այդ դրույթի կանխող ուժը՝ այդպիսով մոռացության մատնելով այնպիսի դեպքեր, երբ ստատուս քվոյի խաթարումը կարող է հանգեցնել միջազգային անվտանգության վնասման և լայնածավալ պատերազմական գործողությունների սանձազերծման: Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում Մինսկի խմբի համանախագահության կողմից մշտապես փաստացի քննադատության է ենթարկվել ստատուս քվոն խաթարելուն միտված ցանկացած գործողություն²⁷:

Ավելին, միջև հակամարտությունը եղած իրավիճակը բանակցությունների սեղան բերելը կարող է ոչ միայն կողմերի անհամաձայնությունների տեղիք տալ, այլև նպատակահարմար չէ այն առումով, որ հակամարտության ներկա պատկերը բոլորովին չի արտահայտում հակամարտության առաջին փուլի իրողությունները, և հետևաբար բանակցությունների ընթացքում ելակետային համարել առաջին փուլը և փորձել լուծումներ գտնել այդ համատեքստում կնշանակի անտեսել ներկա քաղաքական, տնտեսական, ինչպես նաև աշխարհաքաղաքական իրողությունները: Հավելենք, որ բանակցային գործընթացի վերսկսումը, հիմք ընդունելով միջև պատերազմական գործողությունները ընկած ժամանակահատվածը, իրատեսական չէ նաև միջազգային Նորմերի և մասնավորապես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի տեսանկյունից, ինչպես նաև 1990-ականների սկզբին հայկական ուժերի կողմից հաղթանակի, ինչպես նաև հնարավոր հասարակական բողոքի այլքի ֆոնին: Գեոպոլիտիկ կատեգորիայի պարագայում, որպես հակամարտության լուծման մի տարբերակ, առաջ է մղվում վեճի առարկան հակամարտող կողմերի միջև կիսելու ուղին²⁸, որը ինչպես ավելի վաղ նշել էինք, հակամարտության կարգավորման յոթ մեխանիզմների շարքին է դասվում: Այդուհանդերձ, կարգավորման նման ճանապարհը չի համապատասխանում Լեռնային Ղարաբաղի հակամարտության ներքին տրամաբանությանը (Արցախի տարածքը տեղագրական առումով մեկ ամբողջություն է), մյուս կողմից էլ երկրորդ

²⁴ CHAPTER VII: ACTION WITH RESPECT TO THREATS TO THE PEACE, BREACHES OF THE PEACE, AND ACTS OF AGGRESSION; <http://www.un.org/en/sections/un-charter/chapter-vii/index.html>

²⁵ Wallenstein P., նշ. աշխ., էջ 97.

²⁶ Տե՛ս հոդված 39, CHAPTER VII: ACTION WITH RESPECT TO THREATS TO THE PEACE, BREACHES OF THE PEACE, AND ACTS OF AGGRESSION, <https://www.un.org/en/sections/un-charter/chapter-vii/index.html>

²⁷ Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, Belgrade, 3 դեկտեմբերի 2015 թ., <https://www.osce.org/mg/206036> (հղվել է 06.05.2019 թ.).

²⁸ Wallenstein P., նշվ. աշխ., էջ 108.

համաշխարհային պատերազմից ի վեր հակամարտությունների լուծման փորձում նման դեպք չի արձանագրվել:

Ռեալպոլիտիկ կատեգորիա պատժողական և ինտեգրման քաղաքականությունների միջև

Ի տարբերություն աշխարհաքաղաքական կատեգորիայի, որի պարագայում հակամարտությունների սկզբնապատճառն աշխարհաքաղաքական իրողություններն են, ռեալպոլիտիկ կատեգորիայի դեպքում առաջնային կարևորություն տրվում է կողմերի ուժային հնարավորություններին՝ քաղաքական, տնտեսական ու ռազմական. «Ռեալպոլիտիկ հարթությունում գործ ունենք երկկողմ հարաբերությունների հետ: Կողմերը հազվադեպ են դիտարկում ընդհանուր հակամարտության հարթումը որպես որոշակի տարածաշրջանում նոր հարաբերությունների կառուցման սկիզբ: Համապատասխանաբար՝ պատերազմների արդյունքում տարածաշրջանային նոր իրողություններ ի հայտ չեն գալիս, փոխարենը դիտարկվում են շղթայական պատերազմների ժամանակավոր ավարտ»²⁹: Սա հիմնականում ուղեկցվում է սպառազինությունների մրցավազքով, ինչպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարագայում, որի ոչ համաչափ զարգացման և միջազգային վերահսկողության մեխանիզմների արդյունքում էսկալացիան դարձնում է անխուսափելի³⁰: Հատկանշական է, որ դրանից հետո Հայաստանը սկսել է պաշտպանական հայեցակարգի համալիր մշակում³¹, ինչը որոշակի զսպիչ դերակատարում ունի նոր պատերազմի սանձազերծման ծարավ հակառակորդի համար: Վալենտինի առաջ քաշած ռեալպոլիտիկ հարթակն առավել միտված է խաղաղարարության, քան թե հակամարտությունների բուն կարգավորմանը: Առանձին ուսումնասիրության կարիք ունի այն հարցը, թե ինչպիսի փոխհարաբերությունների (հիերարխի³², թե՞ գծային) մեջ են գտնվում խաղաղարարությունն ու հակամարտությունների կարգավորման ոլորտը: Այդուհանդերձ, այս պարագայում խաղաղարարություն ասելով՝ հասկանում ենք պարտված կողմի նկատմամբ տարվող մարտավարությունը, այն է՝ պատժողական կամ ինտեգրման: Պատժողականի պարագայում ենթադրվում է, որ պարտվող կողմը ամենայն հավանականությամբ ժամանակի ընթացքում գեներացնում է ռևանշ վերցնելու հնարավորությունը ամենատարբեր մակարդակներում՝ ռազմական պոտենցիալի հզորացում, տնտեսության ծառայեցում այդ նպատակին, ինչպես նաև արժեքանական մակարդակում թշնամու կերպարի ստեղծում և հասարակության արժեքային համակարգի հարմարեցում: Պատժողական քաղաքականության վտանգավորության ցցուն օրինակ է Գերմանիայի հզորացումը Առաջին համաշխարհային պատերազմից հետո:

Ինտեգրման քաղաքականությունը ենթադրում է պարտված կողմի ինտեգրում տարբեր տնտեսամշակութային իրադարձությունների միջազգային կամ տարածաշրջանային մակարդակում, ինչը գերազանցապես տեղավորվում է ցանցայնության տեսության տրամաբանության մեջ՝ նպաստելով տևական խաղաղության ձեռքբերմանը: Այդ դեպքում կարևորվում է ժողովրդավարական

²⁹ Լույս տեղում, էջ 106:

³⁰ **Մայիլյան Մ.**, 2016-ի դասերը. ապրիլյան պատերազմից առաջ եւ հետո, «Անալիտիկոն», <http://theanalyticon.com/?p=8610> (հղվել է 30.06.2019 թ.):

³¹ **Սարգսյան Վ.**, «Ազգ-բանակ» հայեցակարգի քաղաքականության հինգ հիմնական ուղղությունները, <https://www.aniarc.am/2017/12/15/vigen-sargsyan-azg-banak-18-september-2017;>, տե՛ս նաև **Տոնոյան Դ.**, Պարտականությունը պետք է փոխարինենք առաքելությամբ, <https://mediamax.am/am/news/interviews/29332>:

արժեքների սերմանումը հասարակություններում Արևմտյան Գերմանիայի օրինակով³²: Լեռնային Ղարաբաղի պատերազմից ի վեր հատկապես միջազգային հանրության ջանքերով մերձեցման փորձեր կատարվեցին, որոնց արդյունավետությունը փաստորեն ապրիլյան պատերազմի, ինչպես նաև Ադրբեջանի կողմից քսենոֆոբիայի ակտիվ քարոզչության³³ արդյունքում կասկածի տակ դրվեց:

Հակամարտությունների ուսումնասիրության տնտեսաբաղաբական և գաղափարաբաղաբական հարթությունները

Հակամարտությունները սնող երևույթների շարքին են դասվում գաղափարախոսական և տնտեսական բաղադրիչները: Գաղափարախոսական մոտեցումը Վալենստինը զուգորդվում է կառավարության լեգիտիմության հետ³⁴: Այս առումով նշանակություն է ստանում ժողովրդավարություն-խաղաղություն տանդեմը՝ առաջ քաշված Ռուսոյի (2005³⁵), Ռասեթի և Դաֆոյի (2013³⁶) և Դիքսոնի և Սինիսի(2002³⁷) կողմից՝ որպես գաղափարախոսական կատեգորիայի առաջին հիպոթեզը: Թերևս այս առումով արժե հիշատակել Մինսկի խմբի համատեղ հայտարարությունը Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հանդիպումից հետո, երբ հայտարարվեց հասարակություններին երկուստեք խաղաղության պատրաստելու մասին³⁸:

Ամերիկյան ժամանակակից քաղաքական մտքի ներկայացուցիչ Ս. Հանթինգտոնի կողմից առաջ քաշված քաղաքակրթական համակարգերի բախումը՝ արտացոլված մշակութային ու քաղաքական հարթություններում, կազմում է գաղափարախոսական կատեգորիայի մյուս հիմնաքարը³⁹: Հակամարտող կողմերի միջև մշակութային ընկալումների տարբերությունները, պայմանավորված էթնիկ ծագմամբ, հաճախ քողարկված լինելով քաղաքական դրդապատճառներով և մատուցվելով էթնիկ աստառով, անտեսվում են և, այդուհանդերձ, կարևոր դերակատարում ունեն ինչպես հակամարտության ծագման, այնպես էլ ընթացքի և հանգուցալուծման տեսանկյունից⁴⁰:

Հակամարտությունների լուծման և դրանց դինամիկայի վերաբերյալ գաղափարաբաղաբական մոտեցման համատեքստում շատ է կարևորվում ներքին քաղաքական պատկերի փոփոխության հարցը: Մասնավորապես շահախաղերը ծավալվում են այն հանգամանքի շուրջ, թե ինչպես է իդեալոլիտիկ բաղադրիչը երևան հանում լեգիտիմ կառավարության խնդիրը՝ որպես հակամարտության արմատների առավել խորքային հիմնապատճառ: Այդ խնդիրը ինչպես հանգեցնում է

³² Wallenstein P., նշվ. աշխ., էջ 108-112:

³³ Adibekyan A., Elibegova A.; Armenophobia in Azerbaijan, Yerevan: "Information and Public Relations Center" of the Administration of the President of the Republic of Armenia, 2015

³⁴ Նույն տեղում, էջ 114:

³⁵ Rousseau D., Democracy and War: Institutions, Norms and the Evolution of International Conflict, Stanford University Press, Stanford, California, 2005

³⁶ Dixon J. W., Senese P. D., Regime Type, Strategic Interaction, and the Diversionary Use of Force: Democracy, Disputes, and Negotiated Settlements, Journal of Conflict Resolution, 2002; pp. 547–571

³⁷ Dafoe A., Russett B., The Democratic Peace: Weighing the Evidence and Cautious Inference, International Studies Quarterly, № 57, 201–214, Yale University, 2013

³⁸ Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, Paris, 16 հունվարի 2019 թ., <https://www.osce.org/minsk-group/409220> (հղվել է 06.05.20 19 թ.):

³⁹ Wallenstein P., նշվ. աշխ., էջ 114:

⁴⁰ Gurr T. R., Minorities at risk, Minorities at Risk: A Global View of Ethnopolitical Conflicts, United States Institute of Peace Press, 1993.

ժողովրդավարական խաղաղության տեսությանը⁴¹, այնպես էլ լույս է սփռում իշխանության լեգիտիմության, դրա կայացման և հակամարտության՝ այդ բնագավառում ունեցած դերի վրա: Մասնավորապես անհրաժեշտություն է առաջանում վերադառնալ այն հիմնական մեխանիզմներին, որոնք հակամարտությունները վերածում են իշխող էլիտայի համար գործիքի՝ իրենց քաղաքական շահերը հաջողությամբ իրականացնելու, իշխանությունը իրենց ձեռքում պահելու և որոշակի գործողություններ լեգիտիմացնելու նպատակով:

Հարց է առաջանում, թե արդյոք հնարավոր է այս անկվը հետ պտտել՝ հակամարտությունները դարձնելով իշխանափոխության կամ իշխող վերնախավի որդեգրած հիմնական քաղաքական գիծը կերպափոխելու գործիք, ինչն իր հերթին պարարտ հող կնախապատրաստի խաղաղության ձեռքբերման ուղղությամբ իշխող օրակարգի փոփոխության և դրանով իսկ գործընթացը հաջողությամբ իրականացնելու համար: Վալենտինը հանգում է նրան, որ գաղափարախոսական մոտեցումը կարևորություն է ձեռք բերում հիմնականում հակամարտությունների կառավարման, ոչ թե կարգավորման պարագայում⁴²: Վերջինի դեպքում առանձնակի կարևորվում է տնտեսական գործոնի դերը հակամարտությունների ինչպես կարգավորման, այնպես էլ հետհակամարտական խաղաղարարության համատեքստում:

Առաջին երեք կատեգորիաները՝ ռեալպոլիտիկ, աշխարհաքաղաքական ու գաղափարաքաղաքական, դասվում են «լեգիտիմ» բացատրությունների շարքին: Տնտեսական գործոնը զուգամիտվում է հիմնականում զենքի արդյունաբերության հետ: Այլ կերպ ասած՝ այդ դեպքում կարևորվում է ոչ այնքան հակամարտությունը, որքան դրա սպառնալիքը, ինչը հանգեցնում է շարունակական զինման, որը տնտեսական առումով շատ ավելի շահույթաբեր է, քան դրա գործնական կիրառումը պատերազմում⁴³: Այս համատեքստում է գերազանցապես տեղավորվում Ադրբեջանի վարած զենքի գնումների քաղաքականությունը Ռուսաստանից⁴⁴, Իսրայելից, Թուրքիայից ու Բելառուսից: Նման քաղաքականությունն անուղղակիորեն ծառայում է հակառակորդի շարքերում վախի մթնոլորտ ստեղծելու և ընդհանուր ոգին թուլացնելու նպատակին: Ապրիլյան քառօրյա պատերազմը՝ սանձազերծված Ադրբեջանի կողմից, աշխարհին ցուցադրեց զինվելու անդառնալի հետևանքները, որոնք զլորալացման պայմաններում սպառնում են ոչ միայն տարածաշրջանին, այլ նաև դրա սահմաններից դուրս անվտանգային համակարգին:

Ընդհանուր առմամբ տնտեսական կատեգորիայի պարագայում առանձնացվում են երկու հիմնական գործոններ՝ նավթային ռեսուրսները և տրանսպորտային ուղիները⁴⁵, որոնք վճռորոշ դերակատարում ունեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարագայում մի կողմից՝ կարգավորման, մյուս կողմից՝ կառավարման, Եսկալացիայի կանխման համատեքստում: Որպես կանոն, օրինակ է բերվում ԱՄՆ ընդդիմության կարգախոսը Պարսից ծոցի պատերազմի դեմ՝ «նավթի համար արյուն չթափել⁴⁶»: Իմաստն այն է, որ դժվար է ռազմական ինտերվենցիա իրականացնել՝ հիմնավորելով այն որոշակի տնտեսական ձեռքբերումներով: Դա հակասում է լայնորեն ընդունված բարոյական նորմերին և դժվար թե հավանության արժանանա հասարակության կոմից: Այդ իսկ պատճառով շատ հաճախ տնտեսական

⁴¹ *Liberalism in International Relations*, International Encyclopedia of Political Science, Los Angeles, 2011, էջ 1437, http://www.stefanorecchia.net/1/137/resources/publication_1040_1.pdf (հղվել է 03.04.2019 թ.):

⁴² **Wallenstein P.**, նշ. աշխ., էջ 116

⁴³ Նույն տեղում, էջ 120:

⁴⁴ **Kucera J.**, Report: Azerbaijan Gets 85 Percent Of Its Weapons From Russia, *Eurasianet*, 18 մարտի 2015 թ., <http://www.eurasianet.org/node/72581> (հղվել է 06.05.2019 թ.):

⁴⁵ **Wallenstein P.**, նշվ. աշխ., էջ 120:

⁴⁶ Նույն տեղում, էջ 119:

մոտիվները ներկայացվում են այլ հազուստով՝ վերը նշված երեք մոտեցումներից մեկի կամ երբեմն միաժամանակ բոլորի լույսի ներքո, որը լեգիտիմացնում է ռազմական ինտերվենցիան, իսկ աջակիցների թիվն անհամեմատ ավելանում է:

Ամենատարբեր հակամատուցությունների ուսումնասիրության արդյունքում Կալենստինը հանգում է այն եզրակացության, որ տնտեսական հիմնահարցերը անհրաժեշտ է քննարկել առավել լայն համատեքստում՝ հաշվի առնելով այլ ասպեկտներ ևս⁴⁷: Այնուամենայնիվ, առավել նպատակահարմար է հակամարտություններում կապիտալոյիտիկ ասպեկտն առանձնացնել, քանի որ հավանականությունը մեծ է, որ դրա շուրջ համաձայնության կհանգեն, իսկ հակամարտության շուրջ ծավալված անհամաձայնություններից գոնե մեկը կլուծվի: Այլ կերպ ասած՝ տնտեսական ասպեկտը կարող է ծառայել որպես հակամարտության լուծման սկզբնակետ: Այն արդյունավետ միջոց է կողմերին հաշտեցնելու, կառավարական ու հասարակական մակարդակով երկխոսություն սկսելու համար: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է, քանի որ կողմերին հնարավորություն է ընձեռվում լսելու միմյանց, ինչի արդյունքում, ըստ տեսության, պարարտ հող է ստեղծվում միջերևույթի ու կարծրատիպերը կոտրելու, քարոզչությանը քննադատորեն մոտենալու, բացահայտ ատելություն սերմանող ռեսուրսները, օրինակ՝ Azerichild.info, safarov.org և Xocali.net, բացառելու և առավել մասշտաբային համագործակցության համար:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարագայում գոյություն ունեն տարածաշրջանային տնտեսական համագործակցության մի շարք հեռանկարներ, որոնց ելքը դժվար է կանխատեսել, սակայն ինչպես նշել են Մինսկի խմբի համանախագահները, հակամարտող կողմերի քաղաքական կամքի դրսևորման պարագայում և միջազգային դիտորդների մասնակցությամբ հնարավոր կդառնա որոշակի տնտեսական միջոցառումների իրականացումը: Այս պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել, որ Ադրբեյջանի կողմից տնտեսական շրջափակումն ի չի ք է դարձնում նման հույսերն ու սպասելիքները, իսկ միջազգային հանրությունը կարծես թե չի հիշում դրա մասին: Մեծ հաշվով Հայաստանի շրջափակումը աշխարհաքաղաքական ու տնտեսական միջազգային թատերաբեմում մեծ կարևորություն չունի, ինչի պատճառով համաշխարհային խաղացողները նախընտրում են լռություն պահպանել:

Եզրակացություն

Ժողովրդավարացող և առավել ինտեգրված աշխարհում չեն նվազել հակամարտությունները: Դրանք շարունակում են ի հայտ գալ աշխարհի տարբեր կետերում, իսկ հին հակամարտությունները սպառնում են նորոգվել նոր թափով՝ ընդգրկելով տարածքային, աշխարհաքաղաքական, ռեալոյիտիկ շահային զինման, գաղափարախոսական լեգիտիմության, տնտեսական ռեսուրսների նկատմամբ պայքարի տարրեր: Տարբեր գնահատականների համաձայն⁴⁸, աշխարհաքաղաքական դրդապատճառներով ծագած հակամարտությունները շարունակում են գերակշռել հակամարտությունների ընդհանուր պատկերում: Եվ թեև բնույթով միատարր՝ դրանց կարգավորման համար պահանջվում են համալիր լուծումներ:

Հարավային Կովկասում, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված խճանկարը 1994 թ.-ի հրադադարից ի վեր չի կորցրել պայթյունավտանգությունը, իսկ կարգավորումն անհնար է դառնում մի կողմից՝ միջազգային հանրության անտարբերության, մյուս կողմից՝ ժամանակակից իրողություններն անտեսելու, երկակի ստանդարտներով առաջնորդվելու և համարժեք պատասխաններ չտալու պատճառով:

⁴⁷ Wallensteen P., նշվ. աշխ., էջ 121:

⁴⁸ Pettersson Th., Eck K., Organized violence, 1989–2017, Journal of Peace Research. Vol. 55(4) 535–547, 2018.

Այս համաշարում Վալենտինի առաջ քաշած չորս կատեգորիաները իմաստավորվում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության ամենատարբեր փուլերում: Թեև այդ սզբնապատճառների հստակ գիտակցումը չի ուրվագծում հակամարտության կարգավորման հեռանկար, այդուհանդերձ խիստ արդիական է ինչպես (փորձա)գիտական, այնպես էլ որոշում կայացնողների մակարդակում կյանքի չորրորդ տասնամյակը թևակոխող հակամարտության շուրջ համապետական դիսկուրս ձևավորելու տեսանկյունից:

CONFLICT RESOLUTION TYPOLOGY ACCORDING TO P. WALLENSTEEN: THE CASE OF NAGORNO-KARABAKH CONFLICT

ANI GRIGORYAN

*National Academy of Sciences, Institute of Law, Sociology and Philosophy, Researcher;
UYSSA, Member, Yerevan, Republic of Armenia;
Uppsala University, The Institute for Russian and Eurasian Studies, Researcher,
Uppsala, Sweden*

The given paper anchors upon the four categories of conflicts resolution suggested by conflict resolution theorist Peter Wallensteen. Thus, the study aims at introducing the importance of the study of four - geopolitik, realpolitik, kapitalpolitik and idealpolitik (according to the terminology of the author) sources of conflict in the context of the Nagorno-Karabakh conflict.

Such geopolitical-regional factors as well as local political power share, the inner logic of the overall development of the country as well as the problem of legitimacy will be taken into account.

From methodological viewpoint we have applied qualitative toolkit and particularly discourse analysis based on the study of official documents and statements.

The study demonstrates that the Karabakh conflict having the four aforementioned categories in its origins reaffirms the need for seeking more comprehensive and balanced avenues of resolution having on mind the imperatives of new realias imposed by drastically changing world.

Key words: *conflict typology: geopolitik, realpolitik, kapitalpolitik and idealpolitik, conflict resolution, Nagorno-Karabakh, peace process, security.*

ТИПОЛОГИЯ УРЕГУЛИРОВАНИЯ КОНФЛИКТОВ ПО П. ВАЛЕНСТАЙНУ. ПРИМЕР НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

АНИ ГРИГОРЯН

научный сотрудник Института права, социологии и философии

Национальной Академии Наук;

член ОМУСА, г.Ереван, Республика Армения,

научный сотрудник Института исследований

России и Евразии Уппсальского Университета,

г. Уппсала, Швеция

Данное исследование основывается на рассмотрении четырех категорий урегулирования конфликтов, выдвинутых теоретиком Питером Валенстайном. Целью данной статьи является обосновать актуальность анализа предложенных специалистом четырех типов первопричин конфликтов: «геополитик» (геополитических), «реалполитик», «идеалполитик» (идейно-политических), «капиталполитик» (политико-экономических) в контексте урегулирования нагорно-карабахского конфликта.

В то же время рассматривается вопрос возможной проекции вышеупомянутых общих подходов на настоящий этап мирного процесса карабахского конфликта. Учитываются как геополитические и региональные факторы, так и внутривнутриполитические расстановки и возможные перестановки сил, внутренняя логика развития страны, а также вопрос легитимности.

Методологически исследование основывается на документальной базе и инструментарии, в частности, на дискурс-анализе официальных документов и заявлений.

Доказывается, что (убрать слова «что, как») нагорно-карабахский конфликт, имея в основе четыре вышеуказанных фактора, требует поиска всеобъемлющих и сбалансированных вариантов разрешения, которые соответствуют новым реалиям стремительно развивающегося мира.

Ключевые слова: *типология конфликтов; геополитик, реалполитик, идеалполитик и капиталполитик; резолюция, конфликт Нагорный Карабах, мирный процесс, безопасность.*

ԳԴՅ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ (1991-2008 ԹԹ.)*

ՅՏԴ 327.56

ՄԱՐՏԻՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի արտաքին կապերի գծով տեղակալ,
ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասիստենտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
martin.tovmasyan@ysu.am*

Հոդվածի նպատակն է ներկայացնել և լուսաբանել ՀՀ-ԳԴՅ միջպետական հարաբերություններում Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ երկկողմ քննարկումները և հիմնախնդրի կարգավորման գործում Գերմանիայի դիրքորոշումը:

Հետազոտության նպատակից էլնելով՝ խնդիր է դրվել ներկայացնել Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ քննարկումները հայ-գերմանական քաղաքական շփումների ընթացքում, Գերմանիայի օրենսդիր ու գործադիր իշխանության մարմիններում, վերլուծել հարցի առնչությամբ պաշտոնական Բեռլինի դիրքորոշումն արտահայտող մոտեցումների ձևավորման վրա ապդող գործոնները:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ, պատմական փաստարկման), այնպես էլ հատուկ (ձևական-տրամաբանական, համեմատական) մեթոդներ: Հետազոտության իրականացման ընթացքում հիմնային են եղել իրադարձային ու բովանդակային վերլուծության մեթոդները:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Գերմանիան մշտապես հետաքրքրված է խնդրի խաղաղ կարգավորմամբ: Պաշտոնական Բեռլինը ուշի ուշով հետևել է Ղարաբաղյան հակամարտության շուրջ պարզացումներին, և ԳԴՅ պաշտոնական դիրքորոշումը 1991-2008թթ.-ի ընթացքում էականորեն չի փոխվել: Չունենալով հակամարտության կարգավորման գործում անմիջական դերակատարություն՝ ԳԴՅ-ն շարունակում է աջակցել հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը և տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդմանը:

Հիմնաբառեր՝ Արցախի Հանրապետություն, Ղարաբաղյան հիմնախնդիր, ԳԴՅ-ՀՀ հարաբերություններ, Հարավային Կովկաս, Եվրոպական Միություն, անվտանգություն, ԵԱՀԿ Մինսկի հումբ:

Ղարաբաղյան հիմնախնդիրը 1990-ական թվականների սկզբներին հայ-ադրբեջանական կամ տարածաշրջանային լուրջ հակամարտությունից աստիճանաբար վերածվեց Անդրկովկասում շահեր հետապնդող մի շարք երկրների հետաքրքրությունների սուբյեկտի՝ ձեռք բերելով միջազգային կարգավիճակ: Տարածաշրջանում քաղաքական ու տնտեսական հավակնություններ էր դրսևորում նաև

* Հոդվածը ներկայացվել է 01.05.2020թ., գրախոսվել՝ 04.05.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

Գերմանիան, որը վերամիավորումից հետո փորձում էր վերագտնել իր տեղը համաշխարհային քաղաքականության մեջ ու դիմակայել միջազգային հարաբերություններում առկա նոր մարտահրավերներին:

Սառը պատերազմի ավարտն ու Արևելք-Արևմուտք հակամարտության թուլացումը ենթադրում էին աշխարհաքաղաքական նոր տեղաշարժեր, որոնցում ուրույն տեղ ունեին տարածքային հակամարտությունները: Դրանք դարձան հետխորհրդային տարածաշրջանի, ինչպես նաև Արևելք-Արևմուտք բաժանարար գոտիների միջև հիմնական խնդիրներից մեկը՝ անմիջական սպառնալիք ներկայացնելով այդ թվում Գերմանիայի անվտանգությանը: Վերջինս, որպես միջազգային հանրության մի մաս և Եվրոպական անվտանգության համակարգի կարևորագույն օղակ, ձեռնամուխ եղավ այդ մարտահրավերներին դիմագրավելու ռազմավարության մշակման գործընթացին, որի առանցքային ուղղություններից մեկը դարձավ հնարավոր հակամարտությունների կանխարգելումը և արդեն իսկ ծայր առած կոնֆլիկտների սառեցումը⁴⁹:

ՀՀ անկախության հռչակումից հետո Գերմանիան ուշադրությունը կենտրոնացրեց Ղարաբաղյան հիմնախնդրի վրա: Գերմանիան, որպես արևմտյան ժողովրդավար երկիր, ուշադիր հետևում էր այստեղ ընթացող իրադարձություններին: Հայ-գերմանական հարաբերությունների զարգացման ողջ ընթացքում պարբերաբար շոշափվել են Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանն ուղղված բազում հարցեր, առաջարկություններ և հնչել են տարբեր կարծիքներ:

Արցախյան պատերազմի ընթացքում ձևավորված ԵԱՀԿ Մինսկի խումբը ստանձնեց հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային մանդատը: 1994թ.-ի մայիսից մինչև այսօր ԵԱՀԿ-ի վերահսկողությամբ պահպանվում է հրադադարի ռեժիմը: ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Ֆրանսիան Մինսկի խմբի համանախագահող երկրներ են և եռանախագահության ձևաչափով 1997թ.-ից համակարգում են խմբի աշխատանքները: Հակամարտության հիմնական բանակցող կողմեր հանդիսացող Հայաստանից ու Ադրբեջանից բացի ԵԱՀԿ Մինսկի խմբի մշտական անդամներ են նաև Բելոռուսը, Ֆինլանդիան, Իտալիան, Շվեդիան, Թուրքիան, համանախագահող եռյակը և Գերմանիան⁵⁰: Թեպետ Գերմանիան Մինսկի խմբի անդամ երկիր է, ըստ պաշտոնական Բեռլինի՝ Ֆրանսիան եռանախագահողների մակարդակով ներկայացնում է նաև Գերմանիայի դիրքորոշումները՝ որպես Եվրոպական Միության անդամ պետություն:

Ղարաբաղյան հակամարտության շուրջ հայ-գերմանական քաղաքական շփումները ՀՀ անկախության առաջին տարիներին

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հետ կապված քննարկումները պաշտոնական Երևանի և Բոննի, այնուհետև Բեռլինի միջև մեկնարկել են ՀՀ անկախությունից անմիջապես հետո: Ի սկզբանե տարբեր հանդիպումների ժամանակ Գերմանիան փորձում էր լրացնել տեղեկատվական բացը և Հայաստանին մի շարք ճանապարհներով ներկայացնել խնդրի կարգավորման իր տարբերակները: Անհրաժեշտ է նշել, որ այս հանդիպումներում ոչ միշտ էին հնչում Հայաստանի համար շահեկան առաջարկներ:

Դեռևս 1992թ.-ի օգոստոսի 18-ին ՀՀ Արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ.Ղազիսյանի հետ հանդիպման ժամանակ Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության պատգամավոր Դիտրիխ Շպեռլինգը ներկայացրեց գործողությունների

⁴⁹ Տե՛ս ԳԴՀ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջ, <http://www.auswaertiges-amt.de/diplo/de/Aussenpolitik/Themen/Krisenpraevention/Grundlagen/Ueberblick.html> (մուտք՝ 10.01.2012):

⁵⁰ Տե՛ս OSCE official website, Minsk Group, <https://www.osce.org/minsk-group/108306> (մուտք՝ 12.11.2019)

մի ծրագիր, ըստ որի՝ առաջնահերթ խնդիր էր համարվում Լեռնային Ղարաբաղում զինադադարի հաստատումը⁵¹: Շպեռլինգը հարցի լուծումը դեռևս 1992թ.-ին տեսնում էր ԵԱՀԽ-ի շրջանակներում: Հաշվի առնելով Հոմի բանակցությունների անհաջողությունը՝ նա այն կարծիքին էր, որ զինադադարի ընդհանուր պայմանները կարող են մշակվել Թուրքիայի ու Ֆրանսիայի միջև ոչ պաշտոնական զրույցների ընթացքում և, ըստ Շպեռլինգի, Թուրքիան, որն ամենաազդեցիկ դաշնակիցն էր Բաքվի համար, պետք է ներկայացներ Ադրբեջանի, իսկ Ֆրանսիան՝ Հայաստանի շահերը⁵²: Նա առաջարկում էր որպես քննարկման հիմք վերցնել հետևյալ թեզերը.

1. Տարածքի անվտանգության նոր համակարգի ձևավորում միջազգային վերահսկողության ներքո (Արցախում և նրա սահմանների շուրջ),

2. Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի ապաշրջափակում, Արծվաշենի ու Լաչինի ապառազմականացում և այդ տարածքներում համապատասխանաբար Հայաստանի ու Ադրբեջանի վերահսկողության վերականգնում,

3. Տեղահանված խաղաղ բնակչության վերադարձ իրենց բնակավայրեր (խոսքը գնում էր միայն Լեռնային Ղարաբաղից փախստականների մասին՝ թե՛ հայ, թե՛ ադրբեջանցի):

Այստեղ օրակարգից պայմանականորեն դուրս էր բերվում Ղարաբաղի կարգավիճակի (պատկանելության) հարցը. Շպեռլինգը որպես նման մոտեցման հիմնավորման օրինակ էր բերում Արևմտյան Բեռլինի հարցի կարգավորման փորձը, երբ քաղաքի ու Գերմանիայի միջև կապի պրոբլեմը լուծվել էր՝ մի կողմ թողնելով նրա պատկանելության հարցը⁵³:

Սակայն պետք է նշել, որ Շպեռլինգի առաջարկները չէին բխում հայկական կողմի շահերից և չէին համապատասխանում ռազմաճակատում առկա իրավիճակին, որտեղ հայկական զինված ուժերն ունեին որոշակի առավելություն ադրբեջանական կողմից պարտադրված պատերազմում: Իսկ ինչ վերաբերում էր կարգավիճակի հարցին, ապա կարծում ենք, որ Բեռլինի օրինակն այստեղ տեղայնացնելն այդքան էլ նպատակահարմար չէր: Նույնիսկ առաջարկվում էր միջազգային վերահսկողություն իրականացնելու համար օգտագործել Միավորված ազգերի կազմակերպության զորքերը՝ կազմի մեջ մտցնելով թուրքական խաղաղապահ ջոկատներ: Զանի որ ԵԱՀԽ-ն չունեի խաղաղապահ ջոկատներ, Շպեռլինգն ամեն կերպ փորձում էր իր առաջարկություններում ներգրավել Թուրքիային՝ պատճառաբանելով, որ վերջինս կդրսևորի բարի կամք և շահագրգռված է տարածաշրջանային զարգացումների խաղաղ կարգավարմամբ՝ այն հիմնավորմամբ, որ դրանից էր կախված Արևմուտքի բարի վերաբերմունքը Թուրքիայի հանդեպ⁵⁴:

Որպես այս իրավիճակում Գերմանիայի՝ Ղարաբաղյան հիմնախնդրում վարած քաղաքականության հնարավորինս խոր ընկալման համար արվող հավելում՝ ներկայացնենք հետևյալ դրվագը. Գյոթթինգենում գտնվող «Վտանգված ազգերի համար ընկերակցությունը» այդ ժամանակահատվածում պնդում էր, թե Գերմանական Նախկին զինանոցներից Թուրքիային մեծ թվով զենք էր հանձնվել, որը տեղափոխվել էր Ադրբեջան: Սակայն այս տեղեկատվության հավաստիությունն առնվազն կարելի է

⁵¹ Տե՛ս ՀՀ ԱԳ Նախարարի տեղակալ Գ.Ղազինյանի և ԳՖՀ-ի Բունդեսբազի պատգամավոր Դիթրիխ Շպեռլինգի միջև կայացած զրույցի գրառում, Գ. Ղազինյանի օրագրից, ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 84, թ. 21:

⁵² Տե՛ս Նույն տեղում:

⁵³ Տե՛ս Նույն տեղում, թ. 22:

⁵⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 84, թ. 22:

հարցականի տակ դեռ, նամանավանդ, որ պաշտոնական Բոննը նշում էր, թե տեղյակ չէ Թուրքիայից Ադրբեջան գեներալ տեղափոխման մասին⁵⁵:

Իսկ ինչ վերաբերում է ռուսական գործոնին, Շպեռլինգը պնդում էր, որ այս գործընթացում վերջինս վճռական դեր չունի, իսկ Մոսկվայի դիրքորոշումը Չայաստանի նկատմամբ այսպես էր բացատրում. «Չայաստանը կախված է ռուսական բարեհաճությունից և պետք է մտավախություն ունենալ, որ Ռուսաստանը կարող էր դաշնակցել Թուրքիայի հետ»⁵⁶:

Այստեղ սոցիալ-դեմոկրատ Շպեռլինգի խոսքերում ակնհայտ նկատում ենք որոշակի իրարամերժություն. նա մի կողմից՝ խոսում էր այն մասին, որ Թուրքիան պետք է ներգրավված լինի հակամարտության կարգավորման ձևաչափերում, իսկ մյուս կողմից՝ մտավախություն էր հայտնում, որ ռուս-թուրքական հնարավոր գործակցությունը կարող է խանգարել հակամարտության կարգավորման գործընթացին: Իհարկե, Շպեռլինգը հայ-գերմանական հարաբերությունների հաստատման սկզբից փորձում էր աջակցել այդ հարաբերությունների կայացմանը, սակայն Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ նրա առաջարկություններն անընդունելի էին հայկական կողմի համար:

Չիշարժան են նաև ՀՀ-ում ԳԳՀ գործերի հավատարմատար Վ. Բռեթի՝ հիմնախնդրի վերաբերյալ պաշտոնական Երևանի ներկայացուցիչների հետ ունեցած քննարկումների որոշ դրվագներ: 1992 թ.-ի սեպտեմբերին ՀՀ արտաքին գործերի նախարար Գ. Ղազիսյանի հետ հանդիպման ժամանակ Վ. Բռեթը նշում էր, որ Գերմանիան մասնակցում է բոլոր հակամարտությունների լուծման փորձերին, հատկապես՝ Արևելյան Եվրոպայում, քանի որ այս տարածաշրջանը մտնում է իր քաղաքական ու տնտեսական հետաքրքրությունների մեջ⁵⁷: Վերջինս փաստում էր նաև, որ տարածքային հակամարտությունների կարգավորման գործընթացում Գերմանիան առաջնորդվում է ոչ թե սեփական քաղաքական շահերով, այլ առաջարկում է խնդիրների կարգավորման հայեցակարգ, համակարգային մոտեցումներ: Դրա էությունն այն էր, որ Հարավային Կովկասի երկրների միջև սահմանները ԽՍՀՄ կազմում հաճախ գծվել են կամայականորեն, անարդարացի ձևով, ուստի դրանց փոփոխումը պետք է իրականացվի ընդհանուր մոտեցմամբ, խաղաղ ճանապարհով: Բռեթը շեշտադրում էր նաև փախստականների և մարդու իրավունքների երաշխիքների տրամադրման հիմնախնդիրը: Նրա հիմնական գաղափարներից էր հակամարտության առարկա հանդիսացող գոտիներին հատուկ կարգավիճակ տալու հարցը: Լեռնային Ղարաբաղի դեպքում այս առաջարկը ենթադրում էր, որ վերջինիս կտրվեն անվտանգության միջազգային երաշխիքներ, այնտեղի բնակչությանը կտրվեն ինքնորոշման և իրենց տարածքում պետականակերպ կազմավորում ստեղծելու երաշխիքներ, սակայն դա պետք է իրականացվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման տրամաբանության շրջանակներում՝ Լեռնային Ղարաբաղը դիտարկելով որպես դրա մի մաս: Իսկ որպես այդ ամենի իրացման երաշխավոր՝ այստեղ պետք է տեղակայվեին խաղաղապահ ուժեր⁵⁸:

Ի պատասխան՝ արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ. Ղազիսյանը նշեց, որ Ղարաբաղյան հարցը մեզ համար փոքրամասնությունների խնդիր չէ և մի շարք փաստարկներ բերեց, որոնք խոսում էին հիմնախնդրի իրավական, քաղաքական, էթնիկ երանգների մասին: Այնուհետև Գերմանիայի ներկայացուցիչը նշեց, որ իրենց համար ինքնորոշման իրավունքը բարձրագույն իրավական արժեք է, սակայն Չայաստանը

⁵⁵ St' u Waffen aus Deutschland in Berg - Karabach eingesetzt? Bonner Rundschau, Deutscher Bundestag Pressedokumentation, 04.02.1994.

⁵⁶ St' u նույն տեղում:

⁵⁷ Չրոյցի գրառում, Չայաստանում ԳԳՀ ժամանակավոր հավատարմատար Վ.Բռեթի հետ, 15.09.1992թ., ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 84, թ. 71-72:

⁵⁸ St' u նույն տեղում, թ. 73:

ինքնորոշման իրավունքի հարցում պետք է ճկուն լինի հատկապես այդ մասով Ադրբեջանին պահանջներ ներկայացնելիս: Հարկ ենք համարում շեշտել, որ Բռեթի խոսքերում նույնպես կային պաշտոնական Երևանի համար ոչ շահեկան շեշտադրումներ կամ երկիմաստ մտքեր⁵⁹: Սակայն այն հստակ մոտեցումները, որոնք հայ պաշտոնյաների կողմից շարադրվեցին ու ներկայացվեցին գերմանական կողմին, մեծ նշանակություն էր ունենալու Բոննում հիմնախնդրի վերաբերյալ պատկերացումն ավելի լիարժեք դարձնելու համար:

Վերոնշյալը կարևորվում է նաև այն տեսանկյունից, որ պաշտոնական Բոննի հետ Բաբուն բավականին ինտենսիվորեն աշխատում էր իր տեսակետները հրամցնելու ուղղությամբ: Արդեն 1992 թ.-ին Գերմանիայում Ադրբեջանի ներկայացուցչությունը, մասնավորապես՝ դեսպան Յուսեֆին Ադա Մ. Սաադիզը⁶⁰, ինտենսիվորեն աշխատում էր ոչ միայն գերմանացի պաշտոնյաների, այլ նաև օտարերկրյա ներկայացուցիչների հետ: Բնական է, որ վերջինիս գործունեության հիմքում ընկած էր հակահայկական քարոզչությունը: Նա ամեն կերպ փորձում էր Հայաստանին ներկայացնել որպես ագրեսոր և կեղծ հակահայկական փաստարկներ տարածել Գերմանիայում⁶¹:

Արցախյան պատերազմում հրադադարի ռեժիմի հաստատումից հետո էլ Գերմանիան շարունակում էր հետաքրքրվել հիմնախնդրի կարգավորումով: Գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաները Երևանի հետ շփումների ընթացքում մշտապես շեշտել են իրենց ցանկությունը՝ պահելու հրադադարի ռեժիմը և հասնելու վերջնական խաղաղության: Իհարկե, այս ամենի հետևում երևում է նաև Գերմանիայի տնտեսական շահը, որը հիմնականում կապվում է տարածաշրջանի տարանցիկ ու էներգետիկ նշանակության հետ: 1995թ.-ին Գերմանիայի տնտեսական համգործակցության և զարգացման նախարար Կարլ Դիթեր-Շպրանգերը Երևան կատարած այցելության ժամանակ հույս հայտնեց, որ շուրջ մեկ տարի Լեռնային Ղարաբաղում արդեն տևող զինադադարը բխում է բոլոր ազգերի շահերից, որը կբերի տարածաշրջանի երկարատև խաղաղության⁶²:

Հատկանշական են 1995թ.-ին Հայաստան կատարած այցելության ժամանակ Գերմանիայի արտաքին գործերի նախարար Զլաուս Զինքելի մեկնաբանությունները Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ: Զինքելը վստահեցնում էր, որ իր երկիրը կանի հնարավոր ամեն ինչ, որպեսզի աջակցի հակամարտության խաղաղ կարգավորմանը. «Գերմանիան մեծ քաղաքական նշանակություն է տալիս Կովկասյան տարածաշրջանին⁶³», - նշում էր Զինքելը: Զինքելի այցը Հարավային Կովկաս բավականին լայն արձագանք գտավ գերմանական մամուլում: Ինչպես գերմանական «Ֆրանկֆուրտեր Ալթեմայնե Ցայտունգ» թերթը գրում էր «Եվրոպայի և Ասիայի սահմանագծում» վերտառությամբ հոդվածում, Զինքելի այցը Եվրոպայի, Ասիայի և Մերձավոր արևելքի սահման հանդիսացող այս տարածաշրջան ուներ մեկ գլխավոր նպատակ, այն էր՝ թույլ չտալ տարածաշրջանում առկա հակամարտություններից մեկի՝

⁵⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 74:

⁶⁰ Հիշյալ անձը երկար ժամանակ Գերմանիայի ժողովրդական Հանրապետությունում խորհրդային Միության դիվանագետներից էր, որ հետագայում դարձել է Ադրբեջանի խորհրդային Հանրապետության արտաքին գործերի նախարարը:

⁶¹ Տե՛ս Gemma Pörzgen, Im Gespräch: Bakus Botschafter, Bonn sieht weg im Kaukasus, Frankfurter Rundschau, Deutscher Bundestag, Pressedokumentation; 09.09.1993.

⁶² Տե՛ս Carl-Dieter Spanger, Armen Jegiasarjan, zu den Ergebnissen ihrer Gespraech in Eriwan, Fernseh- und Hoerfunkspiegel, 26.05.1995.

⁶³ Տե՛ս Klaus Kinkel, Aussenminister der Bundesrepublik Deutschland z.Z Eriwan, Wagan Papasjan, Aussenminister der Republik Armenien, zu den deutsch-armenischen Beziehungen sowie zum Karabach Konflikt, Fernseh- und Hoerfunkspiegel, 22.12.1995.

հայ-ադրբեջանական հակամարտության հետագա սրումը⁶⁴: Նույն թերթի մեկ այլ հոդվածում էլ նշվում էր. «Անդրկովկասյան տարածաշրջանի նշանակությունը գնալով ավելի ու ավելի է մեծանում Արևելք-Արևմուտք փոխհարաբերությունների լույսի տակ, և հետևաբար Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաև Կովկասի մյուս հակամարտությունները ընդհանուր աշխարհաբաղաբանական նշանակություն ունեն և պահանջում են այնպիսի լուծում, ինչպիսին եղավ, օրինակ, Բոսնիայում»⁶⁵:

Հայաստանի Հանրապետությունում ԳԴՀ դեսպանների հայտարարությունները Ղարաբաղյան հակամարտության շուրջ

Բարձր մակարդակի պաշտոնական երկկողմ փոխայցելությունների ընթացքում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման թեման գրեթե միշտ առանցքային է եղել: Ղարաբաղյան խնդրի կարգավորմանը պարբերաբար անդրադարձել են նաև Հայաստանում հավատարմագրված ԳԴՀ դեսպանները: 2000 թ.-ին Գերմանիայի Նորանշանակ դեսպան Ֆոլկեր Չայթըրը հավաստիացնում էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծմամբ հայ-գերմանական հարաբերությունները զարգացման նոր մակարդակի կհասնեն⁶⁶: Գերմանիայի միասնության 14-րդ տարեդարձին նվիրված «Ազգ» օրաթերթի հատուկ թողարկման մեջ դեսպան տիկին Յ. Փայչն իր ողջույնի խոսքում Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ նշում էր. «Գերմանիան շարունակում է հանդես գալ հոգուդ Հարավային Կովկասում հակամարտությունների խաղաղ կարգավորման: Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ՝ մեր երկիրն առանձնապես սատարում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը: Հայաստանի համար հարատև անվտանգ ապագա կարող է ապահովվել միայն այն դեպքում, եթե Հարավային Կովկասը դառնա խաղաղության և բարիդրացիական հարաբերությունների գոտի»⁶⁷: Մեկ այլ՝ «Երրորդ ուժ» թերթին տված հարցազրույցում Գերմանիայի դեսպան տիկին Յայկե Փայչին այն հարցին, թե ԳԴՀ-ի համար ինչն է որոշիչ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման համար, պատասխանել է. «Հարավկովկասյան 3 երկրների ներգրավումը «Շևոյախված Եվրոպա, նոր հարևաններ» ծրագրում նշանակում է, որ մենք այդ երկրները համարում ենք Եվրոպայի հարևաններ: Այդ իսկ պատճառով կցանկանայինք, որ մեր հարևանները նման խնդիրներ չունենային: Հույս ունենք, որ «Նոր հարևաններ» ծրագրի մեջ ներառումը հնարավորություն կընձեռնի լուծել տարածաշրջանային այդ խնդիրները: Ինչ վերաբերում է կոնկրետ Ղարաբաղի հակամարտությանը, չի բացառվում, որ հետագա ամիսների ընթացքում որևէ առաջխաղացում լինի այս խնդրում»⁶⁸:

2007թ.-ին ՀՀ արտաքին գործերի նախարարի հետ հանդիպմանն իր ողջույնի խոսքում Գերմանիայի դեսպան Անդրեա Վիկտորը վերահաստատեց տիկին Փայչի այն խոսքերը, որ Գերմանիան, որպես Մինսկի խմբի անդամ երկիր, ողջունում է Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված Հայաստանի ջանքերը և փաստում, որ Հայաստանի երկարատև, ծաղկուն ապագան կապահովվի, երբ

⁶⁴ Տե՛ս նույն տեղում:

⁶⁵ Տե՛ս «Քինկելի Անդրկովկաս կատարած այցը նպատակ ուներ թույլ չտալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետագա սրումը», - գրում է գերմանական մամուլը, <http://nt.am/am/news/140867/>, 12.01.1996 (մուտք՝ 15.13.2014):

⁶⁶ Ազատ օր, Գերմանիոյ դեսպանին համաձայն՝ Արցախի հարցին լուծումը կը նպաստե հայ-գերմանական գործակցութեան, 27 հունվար 2000թ., էջ 5:

⁶⁷ «Ազգ» հավելված, Գերմանիայի միասնության 14-րդ տարեդարձ, Tag der Deutschen Einheit, Դր. Յայկե Փայչ, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Դր. Յայկե Ռենատե Փայչի ողջույնի խոսքը, 2-ը հոկտեմբեր, 2004թ., էջ 1:

⁶⁸ Երրորդ ուժ, Գերմանիան կտրուկ ակտիվանում է Կովկասում, հարցազրույցը վարեց Սուսաննա Պետրոսյանը, 17 դեկտեմբերի 2004թ., էջ 8-9:

Հարավային Կովկասը վերածվի խաղաղության և բարիդրացիության գոտու⁶⁹: Ցանկանում ենք այստեղ առանձնացնել երկու կարևոր իրողություն. գերմանացի պաշտոնյաները Ղարաբաղյան հիմնախնդիրը տեսնում են ընդհանուր՝ Հարավային Կովկասում առկա հակամարտությունների կարգավորման տրամաբանության մեջ, և տիկին դեսպանի՝ Հայաստանին որպես բանակցային միջնորդ, այլ ոչ թե որպես հակամարտության կողմ ներկայացնելու գործոնը:

Ղարաբաղյան հիմնախնդիրը ՀՀ-ԳԴՀ բարձր մակարդակի պաշտոնական երկկողմ փոխայցելությունների ժամանակ և ԳԴՀ խորհրդարանական շրջանակներում

2004թ.-ի ապրիլի 22-ին Ղաշնային Նախարար Դ. Ֆիշերը տարածաշրջանային այցով գտնվում էր Երևանում: Նախագահ Քոչարյանի հետ հանդիպման ժամանակ Ֆիշերը նշեց. «Մեզ համար շատ կարևոր է, որպեսզի կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծվի»⁷⁰: Բացի այդ, Նախարար Ֆիշերը նշեց, որ Ղարաբաղի հարցով երկու կողմերն էլ պետք է փոխզիջումների գնան, իսկ Գերմանիան ու Եվրոմիությունը կարող են իրենց ներդրումն ունենալ վստահության մթնոլորտի ձևավորման հարցում: Իր ամփոփիչ խոսքում Նախարարը վերահաստատեց, որ տևտեսական զարգացման ու բարեկեցության համար Հարավային Կովկասին անհրաժեշտ է խաղաղության ու ժողովրդավարության ամրապնդում⁷¹:

Փաստորեն, գերմանական կողմը, թեև հետաքրքրված էր Հարավային Կովկասում տեղի ունեցող իրադարձություններով, գերմանական բարձրաստիճանի պաշտոնյաների ելույթներում կարծես թե Եական տարբերություններ չէին նկատվում, և վերջիններս Լեռնային Ղարաբաղի ինդրի շուրջ չէին ցանկանում շեղվել ԵՄ ընդհանուր դիրքորոշումներից: Հարկ ենք համարում փաստել նաև, որ ընդհանուր առմամբ ԵՄ-ն Հարավային Կովկասում խաղաղության քաղաքականության առումով ավելի քիչ է ներգրավված, քան Բալկաններում: ԵՄ Հարավային Կովկասում իրականացնում են մի շարք ծրագրեր, որոնցից ոչ մեկում չեն անտեսվում տարածաշրջանային հակամարտությունները, սակայն դրանցից և ոչ մեկը չունի հստակ հեռանկար՝ այստեղ առկա հակամարտությունների կարգավորման մեջ ներգրավվելու գործում⁷²:

Հիմնախնդիրը քննարկվել է նաև Գերմանիայի ԱԳ ղաշնային Նախարար Ֆրանկ-Վալտեր Շթայնմայերի՝ 2007թ.-ի փետրվարին Երևան կատարած այցի ընթացքում: ՀՀ ԱԳ Նախարար Վարդան Օսկանյանը հանդիպումից հետո այդ առնչությամբ նշել է. «Ես իմ գործընկերոջը ներկայացրեցի կարգավորման ընթացքը և հետագա հնարավոր քայլերը»⁷³: Հայ քաղաքական շրջանակները բավականին մեծ ակնկալիքներով էին սպասում Շթայնմայերի մամլո ասուլիսին, սակայն վերջինս ներկայացրեց բավական ծեծված դիրքորոշումներ և տվեց շատ ընդհանուր գնահատականներ. «Տարեսկզբին Ռումինիայի և Բուլղարիայի անդամակցությունից հետո ԵՄ-ն մոտեցել է անմիջականորեն Հարավային Կովկասին և այդ տեսանկյունից ԵՄ-ին, այդ թվում՝ նաև

⁶⁹ Տե՛ս «Ազգ» հավելված, Գերմանիայի միասնության 14-րդ տարեդարձ, Tag der Deutschen Einheit, Անդրեա Վիկտորին, ՀՀ-ում Գերմանիայի Ղաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեա Վիկտորինի ողջունի խոսքը, 2 հոկտեմբերի 2007թ., էջ 1:

⁷⁰ Die Welt, Fischer wirbt für Kompromissbereitschaft im Südkaukasus, von AP, 24.04.2004.

⁷¹ Տե՛ս Նույն տեղում:

⁷² Տե՛ս Stiftung Wissenschaft und Politik, SWP Studien, Ungelöste Regionalkonflikte im Südkaukasus, Dr.Uwe Halbach, S.32, 10 März 2010, Berlin.

⁷³ Գերմանիայի ԱԳ ղեկավարը հուսով է, որ համագործակցությունը Հարավային Կովկասի երկրների հետ կընդլայնվի, <http://panarmenian.net/arm/news/21111>, 20 փետրվարի, 2007 (մուտք՝ 24.13.2014):

Գերմանիային պետք է կայուն ու զարգացած Հայաստան»⁷⁴: Սա էր Շթայնմայերի ելույթի հիմնական շեշտադրումը: Փաստ է նաև, որ վերջինիս նշած իրադարձությամբ տարածաշրջանի քաղաքական նշանակությունը ԵՄ-ի համար բարձրանում էր:

2006թ.-ի փետրվարին Մյունխենի Անվտանգության 42-րդ կոնֆերանսին իր ելույթում Շթայնմայերը ավելի վճռական արտահայտվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ՝ մասնավորապես նշելով, որ թեպետ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման գործում վճռորոշ դերակատարություն ունի Ռուսաստանը, արդյո՞ք ժամանակը չէ, որ շուրջ 18 տարի տևող հակամարտության լուծման ուղղությամբ մյուս երկրները ևս միավորեն իրենց ուժերը⁷⁵:

Լեռնային Ղարաբաղի խնդիրը պարբերաբար արծարծվել է նաև Գերմանիայի խորհրդարանական շրջանակներում՝ քննարկումների, տարածաշրջանային բանաձևերի ընդունման և խորհրդարան-կառավարություն հարց ու պատասխանի ընթացքում: 2001թ.-ին Բունդեսթագում խորհրդարանական քննարկման էր դրվել մի բանաձև՝ ԶԴՄ/ԶՍՍ խմբակցության կողմից, որը կոչվում էր «Կովկասյան Հանրապետություններ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ռազմավարական նշանակության քաղաքական իրականացումը»⁷⁶: Բանաձևի քննարկմանը ներկա էր նաև Հայաստանից պատվիրակություն՝ խորհրդարանի փոխխոսնակ Գագիկ Ալախյանի գլխավորությամբ: Ղարաբաղյան խնդրին վերաբերող սուր հարցադրումներով ու փաստարկներով հանդես եկավ Զրիստոնեա-դեմոկրատական կուսակցության պատգամավոր Փեթեր Վայսը: Վերջինս իր ելույթում⁷⁷ հստակ շեշտեց, որ ակնկալում են՝ Գերմանիան մեծ ներդրում կունենա հակամարտության կարգավորման գործում և հավելեց, որ, չնայած 1992 թ.-ից Գերմանիան ևս ընդգրկված է Մինսկի խմբում, երկար տարիներ Գերմանիայից ոչինչ չեն լսել: Պարոն Վայսը հայտնեց նաև. «Մենք սպասում ենք, որ Դաշնային կառավարությունն իր գործընկերների հետ վերջապես Կովկասյան տարածաշրջանում ակտիվ կլինի և ակնկալում, որ Կովկասի գծով հատուկ հանձնակատար կնշանակվի, որը քաղաքական երկխոսություն կվարի կողմերի միջև»⁷⁸: Սոցիալ-դեմոկրատ Յոհանես Փֆլուգը հակադարձում էր պարոն Վայսին, որ Գերմանիան չի հանդիսանում հակամարտության կարգավորման անմիջական դերակատար և ամենևին պարտադիր չէ, որ Գերմանիան կարող է ավելի հաջողակ լինել՝ անմիջականորեն ներգրավվելով բանակցային գործընթացին: Նշենք, որ Դաշնային Նախարար Ֆիշերը ողջունել է Փֆլուգի ելույթը՝ այն համարելով իրատեսական և հավելել, որ Գերմանիայի՝ Ղարաբաղյան խնդրի

⁷⁴ Տե՛ս <http://www.aravot.am/2007/02/21/326409/>, Շթայնմայերն օրիգինալ չէր, 21 փետրվարի 2007:

⁷⁵ Տե՛ս Rede des Bundesministers des Auswärtigen, Dr. Frank-Walter Steinmeier, auf der 42. Münchner Konferenz für Sicherheitspolitik, "Russland, Europa und die Welt - Perspektiven der Zusammenarbeit in globalen Sicherheitsfragen" 5. Februar 2006, München, Bulletin der Bundesregierung Nr. 12-3 vom 5. Februar 2006.

⁷⁶ Deutscher Bundestag, Drucksache 14/5961 14. Wahlperiode Antrag der Abgeordneten Volker Rühle, Karl Lamers, Klaus-Jürgen Hedrich, Die strategische Bedeutung der Kaukasus-Republiken Armenien, Aserbaidschan und Georgien politisch umsetzen, Christian Schmidt (Fürth), Hermann Gröhe, Ruprecht Polenz, Hans-Peter Reppnik, Dr. Andreas Schockenhoff, Reinhard Freiherr von Schorlemer, Peter Weiß (Emmendingen) und der Fraktion der CDU/CSU, 08. 05. 2001, Berlin <http://dipbt.bundestag.de/doc/btd/14/059/1405961.pdf> (մուսք՝ 12.05.2012):

⁷⁷ Տե՛ս նույն տեղում:

⁷⁸ Տե՛ս Deutscher Bundestag, 14. Wahlperiode, 177. Sitzung, Tagesordnungspunkt 21: b) Beratung des Antrags der Abgeordneten Volker Rühle, Karl Lamers, Klaus-Jürgen Hedrich, weiterer Abgeordneter und der Fraktion der CDU/CSU Die strategische Bedeutung der Kaukasus-Republiken, Armenien, Aserbaidschan und Georgien politisch umsetzen, Drucksache 14/5961, 22.06.2001, Berlin.

կարգավորման գործում կենտրոնական դերակատարության ստանձնումը բացառվում է⁷⁹:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում Գերմանիայի դիրքորոշումն ավելի հստակ արտացոլված է Բուլդեթթագի ձախերի (Դիե Լինքե) (Die Linke) խմբակցության՝ կառավարությանը «Աջակցություն Հարավային Կովկասում խաղաղության և կայունության համար»⁸⁰ բովանդակությամբ վերնագրով հարցման պատասխանում: 18-րդ կետում արված այն հարցադրմանը, թե Գերմանիայի կառավարությունն ինչ դիրքորոշում ունի Ղարաբաղի հետագա կարգավիճակի վերաբերյալ, նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի հետագա կարգավիճակը պետք է Հայաստանի ու Ադրբեջանի միջև բանակցությունների արդյունքում հաստատվի Մինսկի խմբի հովանու ներքո: Իսկ այն հարցին, թե ինչպես է գնահատում Ղաշնային կառավարությունը Լեռնային Ղարաբաղի անկախության համար անցկացված հանրաքվեն, նշվում է, որ Գերմանիայի կառավարությունը և ԵՄ-ն հստակ արտահայտվել են, որ ո՛չ Լեռնային Ղարաբաղի անկախությունն են ճանաչում, ո՛չ էլ նրա անցկացրած սահմանադրական բարեփոխումները⁸¹: Փաստորեն, կարող ենք եզրակացնել, որ Գերմանիայում գերիշխում է այն կարծիքը, որ հիմնախնդրի կարգավորումը չպետք է դուրս գա արդեն իսկ հաստատված ձևաչափից:

Ղարաբաղյան հիմնախնդրում Գերմանիայի դիրքորոշման մասին խոսելիս պետք է հաշվի առնենք նաև թուրք-գերմանական ռազմաքաղաքական դաշնակցային կապերը, ինչպես նաև տարածաշրջանում նրա հետապնդած քաղաքական ու տնտեսական ավելի լայն շահերը: Հիմնախնդրի շուրջ Գերմանիայի դիրքորոշումն ամփոփվում է ԳԴՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքում հայ-գերմանական երկկողմ հարաբերությունների բնութագրման մեջ Գերմանիայի դիրքորոշման ներկայացմամբ. որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկիր՝ Գերմանիան աջակցում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գործընթացում Մինսկի խմբի համանախագահների՝ Հայաստանի ու Ադրբեջանի միջև բանակցային ջանքերին և կոչ անում երկու կողմերին դեռևս կալցիայի և հուժկու փոխզիջումների պատրաստակամության⁸²:

Այսպիսով՝ չնայած ուսումնասիրվող ժամանակահատվածում Գերմանիան Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում անմիջական դերակատարություն չունեի, այնուամենայնիվ աջակցում էր հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը և Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանմանը: Հիմնախնդրի վերաբերյալ Գերմանիան այսօր էլ հետևում է այն մոտեցումներին, որոնք ձևավորվել են դեռևս 1990-ական թվականներին: Չենք բացառում, որ Գերմանիան կարող է ակտիվացնել իր բանակցային ջանքերը, սակայն այդպիսի հեռանկարների մասին խոսելը դեռևս վաղ է:

⁷⁹ Տե՛ս նույն տեղում:

⁸⁰ Wahlperiode, Kleine Anfrage der Abgeordneten Dr. Diether Dehm, Dr. Hakki Keskin, Monika Knoche, Paul Schäfer (Köln), Bodo Ramelow, Alexander Ulrich, Wolfgang Gehrcke und der Fraktion DIE LINKE. Förderung von Frieden und Stabilität im Südkaukasus, 02. 04. 2007, Deutscher Bundestag, Drucksache 16/4949, Berlin.

⁸¹ Տե՛ս Deutscher Bundestag, Drucksache 16/5221 16. Wahlperiode, Die Antwort wurde namens der Bundesregierung mit Schreiben des Auswärtigen Amts vom 3. Mai 2007 übermittelt. Die Drucksache enthält zusätzlich – in kleinerer Schrifttype – den Fragetext. Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage der Abgeordneten Dr. Diether Dehm, Dr. Hakki Keskin, Monika Knoche, weiterer Abgeordneter und der Fraktion DIE LINKE. – Drucksache 16/4949 – Förderung von Frieden und Stabilität im Südkaukasus, 04. 05. 2007.

⁸² Տե՛ս ԳԴՀ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք էջ, Beziehungen zu Deutschland, Politik, http://www.auswaertiges-amt.de/DE/Aussenpolitik/Laender/Laenderinfos/Armenien/Bilateral_node.html (մուտք՝ 11.11.2015):

GERMANY'S POSITION ON NAGORNO-KARABAKH CONFLICT IN 1991-2008.

MARTIN TOVMASYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Deputy Dean for International Cooperation;
Department of International Relations and Diplomacy, Assistant,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to present and to identify the bilateral discussion on the Karabakh issue undertaken in the inter-state relations between the Republic of Armenia and the Federal Republic of Germany as well as to state the position of Germany on the settlement of the conflict. In accordance with the objective of the research, the article is aimed to reflect on the discussions on the NK conflict during the Armenian-German political debates and with the German legislative and executive bodies, and to analyze the factors influencing Berlin's position and approaches to the issue.

During the research, scientific (analysis, synthesis, historical argumentation) and special (formal-logical, comparative) methods were equally used. The research also applied an essential methodology of event and content analysis.

The results of the research allow to conclude that Germany has always been interested in the peaceful settlement of the NK issue. The official Berlin closely followed the NK conflict related developments, and the official position of the FRG in 1991-2008 has not significantly changed since. Having no direct role in the settlement of the conflict, the FRG continues to support the peaceful settlement of the NK conflict and the strengthening of peace and stability in the region.

Key words: *Republic of Artsakh, Nagorno-Karabakh conflict, Armenia-Germany relations, Southern Caucasus, European Union, security, OSCE Minsk Group.*

ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ ПО НАГОРНО-КАРАБАХСКОМУ КОНФЛИКТУ В 1991-2008 ГГ.

МАРТИН ТОВМАСЯН

*заместитель декана факультета международных отношений по внешним связям
ассистент кафедры международных отношений и дипломатии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является представление и изложение двусторонней дискуссии по карабахскому вопросу в контексте межгосударственных отношений между Республикой Армения и Федеративной Республикой Германия, а также уточнение позиции Германии по урегулированию данного конфликта. Исходя из цели исследования, была поставлена задача представить дискуссии по карабахскому вопросу в ходе армяно-германских политических контактов в законодательных и исполнительных органах Германии, проанализировать факторы, влияющие на формирование подходов, выражающих официальную позицию Берлина по данному вопросу. В ходе исследования были использованы как научные (анализ, синтез, историческая аргументация), так и специальные (формально-логические,

сравнительные) методы, в качестве базовых методов были применены методы анализа событий и контента.

В результате исследования мы пришли к выводу о том, что Германия всегда была заинтересована в мирном урегулировании конфликта. Официальный Берлин внимательно следил за развитием событий вокруг карабахского конфликта, и позиция Федеративной Республики Германии по данному вопросу в период за 1991-2008 годы существенно не менялась. Не принимая непосредственного участия в урегулировании конфликта, ФРГ продолжает способствовать мирному его решению и укреплению мира и стабильности в регионе.

Ключевые слова: *Республика Арцах, Карабахский конфликт, отношения между РА-ФРГ, Южный Кавказ, Европейский Союз, Нагорно-Карабахский конфликт, безопасность, Минская группа ОБСЕ.*

**ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝**

ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՂԱՆԱԿ*

ՀՏԴ 327.82:341.218.2 (479.25)

ՍՈՖՅԱ ՕՐԱՆՅԱՆ

ՀՊՏՀ փոլիստիպայության և հայոց պատմության ամբիոնի վարիչի
ժամանակավոր պաշտոնակատար, ԱԵԳՄՄ անդամ,
փոլիստիպայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sofyaohanyan@mail.ru

Հոդվածի նպատակն է առաջադրել և հիմնավորել այն գաղափարը, որ փոխկապակցված աշխարհի գլոբալացման պայմաններում, երբ վանգվածային հաղորդակցության տեխնոլոգիաների տարածումը նպաստում է տարբեր երկրների քաղաքացիների շփմանը, մշակութային դիվանագիտությունը վերածվում է միջազգային կայունության պահպանման բացառիկ կարևոր գործոնի: Մեր խնդիրն է ներկայացնել մշակութային դիվանագիտությունը՝ որպես հանրային դիվանագիտության և «փափուկ ուժի» տեսակ՝ մտքերի, տեղեկատվության, մշակույթի փոխանակման ձևով, որի նպատակն է ժողովուրդների միջև փոխըմբռնման սերտացումը, ինչպես նաև մեկնաբանել այն փաստը, թե ինչու ներկայումս ավելի ու ավելի շատ երկրներ են փորձում մշակութային դիվանագիտությունը ներառել իրենց արտաքին քաղաքական ռազմավարությունների մեջ:

Հետապոտության իրականացման ընթացքում ընդհանուր-աշխարհայացքային դիալեկտիկական մեթոդին զուգահեռ կիրառել ենք նաև ընդհանուր-գիտական (համանմանության, համեմատության, վերլուծության, համադրության) և մասնավոր-գիտական (նկարագրական, վիճակագրական) մեթոդներ:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ արտաքին քաղաքականության հավաքակազմում ներառված մշակութային գործիքների կիրառման ժամանակահատվածում մշակվել են արդյունավետ մեթոդներ ու հնարներ, հասկանալի են դարձել միջազգային հարաբերությունների օտարերկրյա մասնակիցների վրա մշակույթի արդեցության սահմանները: Այս համատեքստում փորձել ենք հիմնավորել, որ մշակույթը չի փոխարինում արտաքին քաղաքականության ռազմական գործիքները, ինչպես նաև լիովին չի փոխհատուցում միջազգային տնտեսական ռեսուրսների պակասը, սակայն համաաշխարհային քաղաքական ու տնտեսական ասպարեզում բարձր դիրքեր չլիցիտացնող երկրներն այս կամ այն կերպ պետք է զբաղվեն արտասահմանում ազգային մշակույթի ժողովրդայնացմամբ, ուստի մշակութային դիվանագիտությունը կարող է էական ներդրում ունենալ Արցախի հիմնարար նպատակներին հասնելու, արտաքին քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու և միջազգային մշակութային ասպարեզում ճանաչելի դարձնելու հարցում:

* Հոդվածը ներկայացվել է 10.04.2020թ., գրախոսվել՝ 20.04.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

Հիմնաբառեր՝ «փափուկ ուժ», հանրային դիվանագիտություն, մշակույթ, մշակութային դիվանագիտություն, արտաքին մշակութային քաղաքականություն, կրթասաշրջություն, մշակութային փոխանակում:

Մշակութային դիվանագիտության նշանակությունը արդի աշխարհում

Կոնֆլիկտների ու անկայունության դարաշրջանում մշակույթի՝ որպես «փափուկ ուժի» գործիքի դերն անհնար է չկարևորել: Այն դիվանագիտության առանցքային ռեսուրս է, որն օգտագործվում է պետության շահերի առաջնման, էլիտաների և ժողովուրդների միջև փոխըմբռնման բարելավման համար:

Դեռ 1785 թ.-ին ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից մեկը՝ Թոմաս Ջեֆերսոնը, լինելով դեսպան Փարիզում, գրում էր Ջ. Մեդիսոնին, որ մշակույթի ու արվեստի օգնությամբ կարելի է զարգացնել հայրենակիցների ճաշակը, բարձրացնել վարկը, ապահովել նրանց հարգանքն ու պատիվն աշխարհում:

Այսօր՝ ավելի քան 200 տարի անց, մշակույթի դերը միջազգային հարաբերություններում սկսել են ավելի բարձր գնահատել: Արտաքին քաղաքականության մեջ մշակութային գործիքներն օգտագործել են շատ ավելի վաղ, քան ձևավորվել է մշակութային դիվանագիտության տեսական հիմքը: Միայն XX-XXI դդ. սահմանագծին մշակութային դիվանագիտությունը տեսականորեն հիմնավորվեց «փափուկ ուժի» հայեցակարգի միջոցով, որը Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Նայը սահմանել է հետևյալ կերպ. «Փափուկ ուժը» ցանկալիին հասնելու ընդունակությունն է դաշնակիցների կամավոր մասնակցությամբ, այլ ոչ թե պարտադրման կամ սիրաշահման միջոցով»⁸³: «Փափուկ ուժ» հասկացության ի հայտ գալով՝ մշակույթը դարձավ դիվանագիտության կարևոր ռեսուրս, որը կիրառվում էր պետության շահերի առաջնման, սոցիոմշակութային համագործակցության ընդլայնման և երկրների ու ժողովուրդների միջև փոխըմբռնման բարելավման համար:

Մշակութային դիվանագիտությունը կարող է արդյունավետ կերպով լրացնել կառավարության միջազգային ռազմավարությունը, ինչն արդիական է առաջին հերթին այն երկրների համար, որոնց վարկանիշն ու ազդեցությունը չեն համապատասխանում իրենց քաղաքական հավակնություններին, ռազմական կամ տնտեսական ռեսուրսներին: Այդ է պատճառը, որ որոշ հետազոտողներ մշակույթը բնորոշում են որպես արտաքին քաղաքականության «երրորդ չափում»⁸⁴, «մշակութային դիվանագիտություն» հասկացությանը զուգահեռ որպես հոմանիշ հաճախ գործածելով «արտաքին մշակութային քաղաքականություն» հասկացությունը:

Եթե XX դարի 30-ական թթ.-ին, երբ հայտնվեց այս եզրույթը, մշակութային դիվանագիտությունը քաղաքական, դիվանագիտական, քարոզչական նպատակներին հասնելու համար պետության կողմից գոյություն ունեցող կամ հատուկ հաստատված մշակութային, հասարակական ու գիտական կապերի օգտագործումն էր, ապա հետագայում արևմտյան զարգացած երկրների կողմից ակտիվ գործածվելուն զուգընթաց՝ «մշակութային դիվանագիտություն» հասկացությունը ստացավ լիովին դրական մեկնաբանություն՝ նշանակելով մշակութային կապերի զարգացում և օգտագործում միջազգային հարաբերություններում երկրների միջև փոխըմբռնման բարելավման համար: Այդ գործընթացում կարևոր դեր են կատարում զանգվածային

⁸³ Най Дж. «Мягкая» сила и американо-европейские отношения // Центр исследований постиндустриального общества. М., 2004. URL: <http://postindustrial.net/2004/11/myagkaya-sila-i-amerikano-evropejskieotnosheniya>.

⁸⁴ Stі'u Павлов Н. Культура – третье измерение внешней политики // URL: <https://interaffairs.ru/jauthor/material/1572>.

լրատվամիջոցների, համացանցի ու սոցիալական ցանցերի տարածումը, զբոսաշրջության ու միգրացիոն գործընթացների զարգացումը:

Ժամանակակից գրականության մեջ առավել տարածված է ամերիկացի հետազոտող Միլթոն Ջամինգս կրտսերի մեկնաբանությունը, համաձայն որի՝ մշակութային դիվանագիտությունը գաղափարների, տեղեկատվության, արժեքների, ավանդույթների, հավատալիքների և մշակույթի այլ բաղադրիչների փոխանակում է, ինչը կարող է նպաստել փոխըմբռնման բարելավմանը: Ընդ որում, մշակութային դիվանագիտությունը հանրային դիվանագիտության բաղադրիչն է և իրենից ներկայացնում է պետությունների, միջազգային կազմակերպությունների և այլ ինստիտուտների մշակութային փոխազդեցության ոլորտում ռազմավարական ու մարտավարական նպատակներ ունեցող պրակտիկ գործողությունների համալիր:

Մշակութային դիվանագիտության ուսումնասիրությամբ զբաղվողները համակարծիք են, որ ժամանակակից աշխարհում էլիտաների (դիվանագետներ, քաղաքական ու հասարակական գործիչներ) դիվանագիտության հետ մեկտեղ ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում ժողովրդական դիվանագիտությունը, որը ենթադրում է սովորական մարդկանց միջև մեծաչափ մշակութային փոխանակում:

Այսպիսով՝ գլոբալացվող աշխարհում մշակույթը դառնում է միջազգային քաղաքականության ու պետության «փափուկ ուժի» կարևոր բաղադրիչը:

Կարելի է ասել, որ մշակութային դիվանագիտությունը պետության հանրային դիվանագիտության ինքնատիպ բանալին է, քանի որ հատկապես մշակույթի միջոցով է ազգն աշխարհին ներկայացնում իր ինքնությունը, արժեքներն ու գաղափարները⁸⁵:

Մշակութային դիվանագիտության գործիքակազմը

Պետության մշակութային դիվանագիտության վրա ազդող գործոններն են.

- արտաքին քաղաքականության առաջնահերթությունները,
- դրական վարկանիշ ստեղծելու ձգտումը,
- երկրի պատմությունը,
- մշակութային քաղաքականության ռեսուրսներն ու ֆինանսավորումը,
- աշխարհում երկրի պետական լեզվի տարածումն ու ժողովրդականությունը,
- պետության առևտրային շահերը:

Մշակութային դիվանագիտության նախաձեռնությունների շրջանակներում կարող են օգտագործվել.

- արվեստը, այդ թվում՝ թատրոնը, կինեմատոգրաֆը, երաժշտությունը, պարը, գեղանկարչությունը, ֆանդակագործությունը,
- ցուցահանդեսները, ներառյալ միջազգային EXPO ցուցահանդեսները,
- կրթական ծրագրերն ու ակադեմիական և գիտական փոխանակման ծրագրերը, լեզվական ծրագրերը արտերկրում,
- գրականությունը. արտերկրում գրադարանների ստեղծումը և ազգային ստեղծագործությունների թարգմանությունը օտար լեզուներով,
- նորությունների և մշակութային հաղորդումների հեռարձակումն արտերկրում,
- կրոնական դիվանագիտությունը, այդ թվում՝ միջկրոնական երկխոսության նախաձեռնությունները:

Մշակութային դիվանագիտության հիմնական ուղղություններից մեկը սովորական մարդկանց հետ երկարաժամկետ փոխհարաբերությունների հաստատումն է մշակութային ու ակադեմիական փոխանակումների ծրագրերի, դրամաշնորհների ու կրթաթոշակների, թրեյնինգների, գիտաժողովների միջոցով: Այսպիսով՝ մշակութային

⁸⁵ Տե՛ս **Попов В.** Современная дипломатия: теория и практика. Дипломатия – наука и искусство: курс лекций. М., 2003, С. 215-216.

կապերը կարող են դառնալ պետության հանրային դիվանագիտության արդյունավետ գործիք և նպաստել երկրի բարենպաստ վարկանիշի ձևավորման գործին:

Ներկայումս ամեն երկիր մշակութային նոր կերպարներ ու խորհրդանշաններ գտնելու և հներն արդիականացնելու խնդիր ունի՝ երկրի արժանի իմիջի ստեղծման և օտարերկրյա լսարանի ներգրավման համար, ինչն անում են ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Իտալիան և այլ երկրներ:

Ֆրանսիայում «մշակութային դիվանագիտություն» եզրույթի փոխարեն գործածվում է ավելի անմիջական ու լայն «ազդեցության դիվանագիտություն» հասկացությունը: Ֆրանսիական մոդելի տարբերակիչ առանձնահատկությունը մշակութային դիվանագիտության մեջ պետության կոորդինացնող դերն է և մշակութային ծրագրերի պետական ֆինանսավորման բարձր մակարդակը:

Մինչդեռ Իտալիան մշակույթի համար ծախսում է ազգային բյուջեի 1 %-ից պակաս (համեմատության համար նշենք, որ Ֆրանսիան ծախսում է 2,5 %, իսկ Իսպանիան՝ 3,3 %): Մշակութային քաղաքականության իտալական մոդելը ֆրանսիականի հակապատկերն է. պետությունը չի օգտագործում իտալական մշակույթի ողջ ներուժն աշխարհում իր ազդեցության ամրապնդման համար՝ ֆինանսավորելով մշակույթը մնացորդային սկզբունքով: Չնայած դրան՝ մշակույթը տարօրինակ կերպով իտալական բյուջե է բերում տարեկան մոտ 80 մլրդ եվրո (ինչը կազմում է ՀՆԱ-ի 5,8 %-ը), իսկ այնպիսի բնագավառ, ինչպիսին է մշակութային զբոսաշրջությունը, աճում է տարեկան 3 %-ով: Բայց ընդհանուր առմամբ ցուցանիշները զարմանալի չեն՝ հաշվի առնելով, որ Իտալիան տիրապետում է համաշխարհային մշակութային ժառանգության 40 %-ին: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում Իտալիան առաջինն է մշակույթի 47 հուշարձանով (երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցնում են Իսպանիան ու Չինաստանը):

Բրիտանական «փափուկ ուժի» հաջողությունը կապված է անգլերենի տարածման ու ժողովրդականության, բրիտանական կրթության բարձր վարկանիշի, ինչպես նաև համաշխարհային պատմության ու մշակույթի մեջ Մեծ Բրիտանիայի կարևոր դերակատարման հետ: Մեծ Բրիտանիայի «փափուկ ուժի» և մշակութային դիվանագիտության ոլորտում տարվող քաղաքականությունը կենտրոնացված կոորդինացնում է պետությունը՝ ի դեմս մի շարք գերատեսչությունների և ինստիտուտների:

Մշակութային գործիքների կիրառումն արտաքին քաղաքականության մեջ, բնականաբար, չի կարող փոխարինել արտաքին քաղաքականության ռազմական գործիքակազմին, ինչպես նաև լիովին չի փոխհատուցում միջազգային տնտեսական ռեսուրսների պակասը: Սակայն համաշխարհային քաղաքական ու տնտեսական ասպարեզում բարձր դիրքեր չզբաղեցնող երկրներն այս կամ այն կերպ պետք է զբաղվեն արտասահմանում ազգային մշակույթի ժողովրդայնացմամբ: Այս համատեքստում մշակութային դիվանագիտությունը կարող է էական ներդրում ունենալ Արցախի հիմնարար նպատակներին հասնելու, արտաքին քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու և միջազգային մշակութային ասպարեզում ճանաչելի դարձնելու հարցում: Մշակութային կապերը, որպես արտաքին քաղաքական գործունեության մեխանիզմում ամենաճկուն, ուստիև առավել գործուն գործիքներ, կոչված են աշխատելու աշխարհում երկրի բարեշահ կերպարի ստեղծման ուղղությամբ: Մշակույթը, դառնալով նաև արտաքին քաղաքականության գործիք, պետք է ձևավորի երկրի հանդեպ համակրանքի զգացում, ամրապնդի երկրի դրական վարկանիշն արտերկրում, նպաստի պետությունների, հասարակական կազմակերպությունների ու մարդկանց միջև երկարատև կապերի ձևավորմանը, ներդրում ունենա այլ ոլորտներում, այդ թվում՝ տնտեսության մեջ միջպետական փոխազդեցության հաստատմանը:

Այդ նպատակին հասնելու համար մշակութային քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է մշակել հետևողական, համալիր գործողությունների ծրագիր, որը սահմանափակ ռեսուրսների պայմաններում թույլ կտա առավելագույնս գրավիչ ներկայանալ միջազգային հանրությանը:

Արցախի Հանրապետության մշակութային դիվանագիտության բաղադրիչները

Մշակույթի բնագավառում Արցախի Հանրապետության իրականացրած քաղաքականությունը կարգավորվում է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքի (ընդունված 18.06.2003 թ.) 2-րդ («Պետական մշակութային քաղաքականության կազմակերպումը»), 3-րդ («Պետական մշակութային քաղաքականության սկզբունքները») և 4-րդ («Պետական մշակութային քաղաքականության նպատակները») հոդվածներով: Նախկինում ոլորտի խնդիրները կարգավորում էր ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը (այժմ՝ ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարություն), իսկ այժմ՝ մշակութային գործառնությունները փոխանցվել են կրթության և գիտության նախարարությանը, որը վերանվանվել է կրթության, գիտության և մշակույթի նախարարություն: Այդ վերակազմակերպումը հիմք է տալիս ենթադրելու, որ մշակութային դիվանագիտության գործիքակազմում ավելի մեծ նշանակություն կհատկացվի գիտակրթական բաղադրիչին, ինչը միանշանակ դրականորեն կազդի Արցախի միջազգային ճանաչման գործընթացում մշակույթի դերի մեծացման վրա: Երկու գերատեսչությունների (կրթության, գիտության և մշակույթի նախարարություն, ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարություն) համագործակցությունը արդյունավետ կլինի մշակութային դիվանագիտության զարգացման համար, քանի որ մշակութային ու գիտակրթական ոլորտների կանոնակարգումը կարող է ռազմավարական ավելի ամուր հիմքերի վրա դրվել:

Նշենք, որ մինչև ԱՀ կառավարության կառուցվածքային փոփոխությունների իրականացումը Արցախի մշակութային դիվանագիտության ասպարեզում հստակ տարրորոշվել են հետևյալ գերակա ուղղությունները.

1. փառատոների ու մրցույթների կազմակերպում Արցախում,
2. մասնակցություն արտերկրյա ցուցահանդեսներին, մրցույթներին ու շնորհանդեսներին,
3. մարզական միջազգային մրցաշարերի կազմակերպում և մասնակցություն,
4. զբոսաշրջային հոսքերի գրագետ կառավարում:

Մշակութային դիվանագիտության միջոցառումներ Արցախի Հանրապետությունում

Ներկայացնենք օրինակներ, որոնք վկայում են Արցախում մշակութային քաղաքականության ուղղությամբ տարվող նպատակադիր աշխատանքների մասին:

Մշակութային դիվանագիտության ուշագրավ դրսևորումներից է «Տուշբե» պատանի երաժիշտ-կատարողների միջազգային երաժշտական փառատունը (անցկացվում է 2010 թվականից), որը կարևոր դերակատարություն ունի ոչ միայն հանրապետության կյանքում, այլև Արցախը միջազգային մշակութային ասպարեզում ճանաչելի դարձնելու գործում: Այդ տեսանկյունից կարևոր է նաև Արցախի ներկայացուցիչների մասնակցությունը Հովիվուդում անցկացվող Աշխարհի կատարողական արվեստների առաջնությանը:

Միջազգային մշակութային ասպարեզում Արցախի ներկայացվածության առումով հետաքրքրական է 2013 թ.-ից Շուշիում անցկացվող ծնունդով շուշեցի քանդակագործ

Հակոբ Գյուրջյանի անվան քանդակագործության միջազգային սիմպոզիումը, որի նպատակն է ոչ միայն Արցախում քանդակագործության զարգացմանը, Շուշիի երբեմնի մշակութային դիմագծի վերականգնմանը նպաստելը, այլև կերպարվեստի բնագավառում միջազգային համագործակցության խթանումը, հայ և օտարազգի արվեստագետների համար մասնագիտական հաղորդակցման միասնական հարթակի ստեղծումը:

Մշակութային, մասնավորապես գիտության դիվանագիտության տեսանկյունից աննախադեպ է 2015թ.-ին Ստեփանակերտում հիմնադրված Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպության ծավալած գործունեությունը: Գիտական ձեռնարկումների զուգահեռ՝ Միավորումը կազմակերպում է նաև բնապահպանական, մշակութային, մարզական, ռազմահայրենասիրական միջոցառումներ, մրցույթներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ: Հատկանշական է Կազմակերպության գլխավոր միջոցառման՝ **«Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան»** խորագրով ամենամյա միջազգային Երիտասարդական գիտաժողովների կազմակերպումը, որոնց մասնակցության կազմը, հիրավի, ներկայացուցչական է և՛ աշխարհագրական ընդգրկմամբ, և՛ գիտական կշռով: Բացի այդ, 2018թ.-ից ԱԵԳՄՄ-ն գործարկել է **Արցախի էլեկտրոնային գրադարանը (www.artsakhib.am)**, որում զետեղված է արցախագիտական հարուստ գրականություն: Կայքի դիտումների շրջանակը աշխարհագրական առումով բավականին լայն է, ինչն իր հերթին նպաստում է Արցախի ճանաչելիության բարձրացմանը, Արցախի մասին օբյեկտիվ տեղեկատվության տարածմանը: ԱԵԳՄՄ-ն հրատարակում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում ընդգրկված **«Գիտական Արցախ»** պարբերականը, որը նույնպես նպաստում է Արցախի միջազգային ճանաչելիությանն ու գիտական ներուժի բացահայտմանը:

Գիտամշակութային կարևոր նշանակություն ունի 2019 թ.-ի հոկտեմբերի 11-ին Ստեփանակերտում կայացած «Համագործակցություն հանուն արդարության և խաղաղության» խորագրով Արցախի բարեկամների համաժողովը, որին մասնակցել են շուրջ 30 երկրներից ավելի քան 150 հասարակական-քաղաքական գործիչ ու մտավորական:

Խրախուսելի է նաև «Ժամանակակից արվեստի ինստիտուտ» հիմնադրամի նախաձեռնությամբ 2019թ.-ի հոկտեմբերի 5-7-ը Ստեփանակերտում անցկացված ARTsakh Fest ժամանակակից արվեստի փառատոնը՝ Արցախի, Հայաստանի և արտերկրի շուրջ 30 արվեստագետների մասնակցությամբ:

Մարզական փառատոների շարքում ինքնատիպությամբ է առանձնանում Արցախի օդային փառատոնը (Artshakh AirFest), որի բացումը տեղի է ունեցել 2017թ.-ի հունիսի 17-ին Արցախի թեթև ավիացիայի օդանավակայանի տարածքում: Եթե առաջին կազմակերպիչներն էին «Յելլ Էքստրիմ պարկ» (Yell Extreme Park) ընկերությունը և ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը, ապա երկրորդինը (16.06.2018թ.) նաև ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը, Սթայ Զլաբ-Պարազլայինգ ին Արմենիա (Paragliding in Armenia – SKY CLUB) և Սթայբոլ (Skyball) ընկերությունները:

Մարզական մյուս հետաքրքիր միջոցառումը 2018 թ.-ի հուլիսի 28-ին Հայ Ավտոմարզիկների Ակումբ (STR) մարզական հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ և Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության համագործակցությամբ կազմակերպված առաջին ավտո-մոտո փառատոնն է:

Արցախի միջազգային վարկանիշի բարձրացման տեսանկյունից առանձնահատուկ է Չճանաչված պետությունների ֆուտբոլի կոնֆեդերացիայի (CONIFA)-ի՝ 2019 թ.-ի հունիսի 3-15-ը Արցախում ֆուտբոլի Եվրոպայի առաջնության անցկացման փաստը:

Որպես այդպիսին՝ աննախադեպ եր Պարի և սպորտային պարերի համահայկական խորհրդի և ԱՀ պարի և սպորտային պարերի միության համատեղ նախաձեռնությամբ, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության և մի շարք մասնավոր ընկերությունների աջակցությամբ Ստեփանակերտում 2019 թ.-ի հուլիսի 19-21-ն անցակցված «Պար առանց սահմանների» սպորտային-պարահանդեսային պարերի միջազգային մրցույթ-փառատունը: Միջոցառումը վարում էր սպորտային պարերի համաշխարհային խորհրդի պատվավոր անդամ, պարարվեստի կենդանի լեգենդ, Ռուսաստանի պարի միության նախագահ, պարի վաստակավոր գործիչ Ստանիսլավ Պոպովը: Տարիքային տարբեր խմբերում սպորտային պարերի եռօրյա մրցապայթարին ընդգրկված էին շուրջ 300 մասնակիցներ Իտալիայից, Ռուսաստանից, Ուկրայինայից, Հայաստանից ու Արցախից:

Դիվանագիտական առումով նույնպես Արցախի Հանրապետության պարի և սպորտային պարերի միության ստեղծումը 2017թ.-ին շատ ճկուն և ճիշտ բայլ էր:

Արցախ - Հայաստան - Սփյուռք եռամիասնության խոսուն օրինակ են 2019թ.-ի օգոստոսի 5-17-ը Հայաստանում և Արցախում տեղի ունեցած համահայկական ամառային 7-րդ խաղերը, որոնց բացման հանդիսավոր արարողությունը և մրցումային 3 օրերն անցկացվեցին Ստեփանակերտում, իսկ մրցումային հաջորդ օրերը՝ օգոստոսի 9-17-ը, Երևանում:

Արցախի արտաքին մշակութային քաղաքականության գերակայություններից է պատմամշակութային ժառանգության գրագետ կառավարումը: Մշակութային դիվանագիտության ամենահաջողված ուղղություններից պետք է համարել թերևս միջոցառումային զբոսաշրջային դիվանագիտությունը, իսկ մշակութային ժառանգության տնտեսական ու քաղաքական ռեսուրսների մոբիլիզացումը երկրի ռեգեներացայի հիմքն է: Քանի որ այստեղ առկա են զբոսաշրջային հոսքերի ներգրավման համար անհրաժեշտ ռեսուրսներ, Արցախի մշակութային քաղաքականության մեջ առաջին հերթին ներառվում է զբոսաշրջությունը՝ որպես ժողովրդի մշակութային ինքնադրսևորման հանդեպ հետաքրքրության բավարարման, մշակութային կապերի ստեղծման և միջազգային համագործակցության հաստատման կարևոր եղանակ: Այս համատեքստում Արցախի համար մշակութային ժառանգությունը կարող է ունենալ նույն նշանակությունը, ինչ որոշ երկրների համար բնական ռեսուրսները, նավթը կամ ոսկին: Գեղագիտական բարձր որակները և պատմական միջավայրի պահպանվածության աստիճանը կարող են ապահովել Արցախի ներդրումային գրավչությունը, նրա իրական առևտրային արժեքը, նպաստել միջազգային հարթակում համագործակցության ընդլայնմանը, հանդիսանալ Արցախի Հանրապետության բնակչության բարեկեցության գրավակները: Այս առումով դրական են www.karabakh.travel և www.artsakh.travel դոմեններով Արցախի զբոսաշրջային պաշտոնական կայքի միջոցով երկրի զբոսաշրջային արդյունքի հանրահռչակման աշխատանքները:

Այդ տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության է արժանի Արցախի Հանրապետի շրջանի Տոլ գյուղում 2014 թվականից անցկացվող Արցախյան գիտու փառատունը, որը շարունակական բնույթ է կրում և կազմակերպվում է ամեն տարի՝ սեպտեմբերի երրորդ շաբաթ օրը: Փառատունի բացումը տեղի է ունեցել 2014 թ.-ի հոկտեմբերի 18-ին՝ Արցախի ԿԱ զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության նախաձեռնությամբ՝ զբոսաշրջության միջոցով Հարավային զբոսաշրջային երթուղու վրա գտնվող համայնքների զարգացումն աշխուժացնելու և Արցախի զբոսաշրջության զարգացմանը նպաստելու նպատակով:

Փառատոնի նպատակներից մեկն էլ արցախյան գիտագործության ավանդույթների վերակոչումն է: Վերջին՝ վեցերորդ փառատոնի (21.09.2019թ.) կազմակերպիչն արդեն ԱՅ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունն էր:

Նույնքան հետաքրքիր միջոցառում է Գյուղատնտեսության աշխատողի օրը Ստեփանակերտում անցկացվող բերքի ամենամյա տոնը, որի մեկնարկը տրվել է 2012թ.-ի հոկտեմբերի 14-ին: Տոնի բովանդակությունն արցախյան գյուղատնտեսական մթերքների և արտադրատեսակների նմուշների ցուցահանդես-վաճառքն է: Վերջին՝ իններորդ տոնի (13.10.2019 թ.) մասնակիցների թիվն անհամեմատ մեծ էր, ընդգրկված էին Արցախի բոլոր շրջանները, հյուրընկալվել էին նաև վերամշակող մի քանի տասնյակ կազմակերպություններ Յայաստանից: Տոնին նախորդել էր հանրապետության գիտատնտեսական կյանքի համար չափազանց կարևոր միջոցառում՝ չորս փուլից բաղկացած գիտագործնական կոնֆերանս՝ «Գյուղատնտեսության ներկան և ապագան» խորագրով: Ինը տարիների ընթացքում փառատոնի զարգացման դինամիկայի էական աճը վկայում է, որ միջոցառումն ընդլայնման մեծ հնարավորություններ ունի, մասնավորապես կարելի է մեծացնել աշխարհագրությունը՝ ներգրավելով նաև արտերկրյա շահագրգիռ կազմակերպություններին ու անհատներին:

Միջոցառումային զբոսաշրջության շրջանակներում հիշարժան է 2016 թ.-ի սեպտեմբերի 16-ին Շուշիի շրջանի «Իսահակի աղբյուր» հանգստի գոտում մի շարք երկրների առաջատար խոհարարների մասնակցությամբ կազմակերպված «Արցախեթնոֆեստ» միջազգային առաջին փառատոնը, որը կրում էր «Երկրի համը» խորագիրը և ներկայացնում տարբեր երկրների ազգային խոհանոցները:

2014 թ.-ի հոկտեմբերի 25-ին Հաղրութի շրջանի Դրախտիկ գյուղում կայացել է արցախյան թթվի առաջին փառատոնը, որը կազմակերպվել էր ԼՂ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ու Հաղրութի շրջվարչակազմի նախաձեռնությամբ:

2018 թ.-ի օգոստոսի 28-ին Ստեփանակերտում անցկացվել է զարեջրի առաջին փառատոնը: Փառատոնը կազմակերպվել էր «Կոտայք» զարեջրի գործարանի կողմից՝ ընկերության Արցախի ներկայացուցչության աջակցությամբ:

Ուշադրության է արժանի նաև Արցախի մասնակցությունը արտերկրում կայացող զբոսաշրջային ցուցահանդեսներին, որոնք կարևոր են երկկողմ ուղղակի կապեր հաստատելու առումով, քանի որ դրանք հյուրընկալում են ոլորտի առաջատար մասնագետներին ու ընկերություններին: Թվարկենք դրանցից մի քանիսը.

1. 1999 թ.-ի փետրվարի 13-ին «Լոս Անջելես թայմզի» կազմակերպած «Զբոսաշրջություն և արկածներ» ցուցահանդեսում, որը զբոսաշրջության ամենամեծ ցուցահանդեսն է ԱՄՆ-ում, Յայաստանի «Բարի գալուստ Յայաստան» տաղավարի շրջանակներում ներկայացել է նաև Արցախի զբոսաշրջության գործակալությունը:

2. 2010 թ.-ի փետրվարի 18-21-ը Միլանում տեղի է ունեցել BIT զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսը, որին, ի թիվս ներկայացված 140 երկրների, առաջին անգամ առանձին տաղավարով մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: ԼՂ պատվիրակությունը ղեկավարել է ԼՂ կառավարության զբոսաշրջության վարչության պետ Սերգեյ Շահվերդյանը:

3. 2012 թ.-ի սեպտեմբերի 18-21-ը Յայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչները հայկական զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ ներկայացրել են Յայաստանը և Արցախը Փարիզի «TopResa» զբոսաշրջային միջազգային տարեկան ցուցահանդեսին:

4. 2013 թվականից Արցախի զբոսաշրջային ընկերությունները և հյուրանոցային տնտեսության օբյեկտները ԱՅ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աջակցությամբ և Արցախի զբոսաշրջության և

մշակույթի զարգացման գործակալության նախաձեռնությամբ մասնակցում են երևանում ընթացող «Ինտուր Էքսպո» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին:

5. 2014 թ.-ի սեպտեմբերի 23-26-ը Փարիզ քաղաքում կայացել է «IFTM Top - Resa - 2014» ամենամյա միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը, որին մասնակցել է նաև ԼՂՀ պատվիրակությունը՝ ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության պետ Ս. Շահվերդյանի գլխավորությամբ: Պատվիրակությունը հանդես է եկել առանձին տաղավարով, որը ձևավորված էր ավանդական ոճով՝ Արցախի մասին տեղեկատվական հարուստ գրականության, զբոսաշրջավայրերի, հյուրանոցների մասին ծալաթերթիկների, քարտեզների և այլ նյութերի ցուցադրությամբ:

6. 2014 թ.-ի նոյեմբերի 3-4-ը Արցախի ներկայացուցիչները մասնակցել են Լոնդոնի «World Travel Market-Excell London 2014» ցուցահանդեսի աշխատանքներին: Արցախյան պատվիրակությունը քարոզչական աշխատանքներ է իրականացրել՝ բաժանելով գրականություն, հյուրերին ներկայացնելով Արցախի զբոսաշրջավայրերը, կազմակերպել ավանդական հյուրասիրություն և գինու համեստ ցուցահանդեսի մասնակիցների համար:

7. 2015 թ.-ի հոկտեմբերի 2-4-ը ՀՀ Արեւի գյուղում կայացած ամենամյա գինու փառատոնին մասնակցել է նաև ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարության պատվիրակությունը: Փառատոնին ներկայացված էին Արցախի զբոսաշրջային ներուժը քարոզող տուրիստական գրականություն, արցախյան գինեգործական ընկերություններ, «Ղարաբաղ Կարպետ» և «Արցախ Մեդր» կազմակերպությունների արտադրանքը: Փառատոնի ողջ ընթացքում ԼՂՀ պատվիրակությունը իրականացրել է նաև քարոզչական աշխատանք՝ հյուրերին տրամադրելով տեղեկատվություն Արցախի զբոսաշրջավայրերի, ենթակառուցվածքների մասին:

8. 2015 թ.-ի հոկտեմբերի 4-ին Կոլորադո նահանգի Դենվեր քաղաքում տեղի է ունեցել Դենվերի թույր քաղաքների միջազգային փառատոնը: Միջոցառմանը, որին ներգրավված են եղել մասնակիցներ շուրջ տասը երկրից, ԼՂՀ-ն ներկայացված է եղել առանձին տաղավարով, որտեղ ցուցադրվել են հանրապետությանը վերաբերող տարբեր հուշանվերներ, նկարներ, գրքեր, ինչպես նաև հայկական հրուշակեղեն: Տաղավարի կազմակերպիչները այցելուներին են ներկայացրել Արցախի պատմությունն ու մշակութային ժառանգությունը: Արցախի մասնակցությանը աջակցել են Հայ դատի ԱՄՆ Արևմտյան ափի Կոլորադոյի գրասենյակը, «SOAR» և «Ամերիկացիները Արցախին» կազմակերպությունները:

9. 2016 թ.-ի փետրվարի 12-ին Մոսկվայի «Արմենիա» տաղավարում բացվել է Արցախում արտադրվող տարբեր ապրանքատեսակների մշտական գործող խանութ-տաղավար: Խանութում ներկայացված են «Ղարաբաղ կարպետ», «Արցախբիո», «Արցախֆրուտ», «Արցախբերի», «Էլիտ», «Ռեյֆսիդ» և «Կատարո» ընկերությունների արտադրատեսակները: Ծրագիրն իրականություն է դարձել պետական աջակցության շնորհիվ: Նախաձեռնությունը ԼՂՀ կառավարությանն է:

10. 2016 թ.-ի մարտի 9-13-ը Արցախի պատվիրակությունը առանձին տաղավարով ներկայացել է ԼՂՀ-ն ITB Berlin 2016 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին: ITB Berlin-ը հանդիսանում է Եվրոպայում խոշորագույն զբոսաշրջային ցուցահանդեսը, որը հյուրընկալում է գրեթե երկու հարյուր հազար այցելուի աշխարհի 185 երկրներից:

11. Արցախի զբոսաշրջային ներուժը ներկայացվել է 2017 թ.-ի հունվարի 18-22-ը տեղի ունեցող Իսպանիայի «Ֆիտուր Մադրիդ 2017» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսում: ԼՂՀ պատվիրակության ղեկավարն էր ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Շահվերդյանը: Եվրոպայի խոշորագույն զբոսաշրջային ցուցահանդեսներից մեկում ավանդական ոճով ձևավորված Արցախի Հանրապետության տաղավարը մեծ հետաքրքրություն է առաջացրել ցուցահանդեսի այցելուների և մասնակիցների համար:

Տաղավարի այցելուներին տրամադրվել է համապարփակ տեղեկատվություն ԼՂՀ զբոսաշրջային արդյունքի մասին թե՛ զբոսաշրջային գրականության, թե՛ տեղում տաղավարի աշխատակիցների միջոցով:

Զբոսաշրջային միջոցառումներից բացի, Արցախը հաճախ ՀՀ աջակցությամբ նաև ներկայանում է միջազգային այլ մրցույթների ու փառատոների: 2010 թ.-ի հոկտեմբերին Իրանում տեղի ունեցած մամուլի և տեղեկատվական գործակալությունների 17-րդ միջազգային ցուցահանդես-փառատոնում Հայաստանը, որը ներկայացնում էին PanARMENIAN.Net գործակալությունը և «Ազգ» օրաթերթը, մյուս մասնակից երկրների նման ներկայացված էր առանձին տաղավարով, որտեղ վահանակի վրա տեղադրված էր նաև Արցախի խորհրդանիշի՝ «Մենք ենք մեր սարերը» հուշահամալիրի լուսանկարը՝ որպես Հայաստանի գեղատեսիլ վայրերից մեկը:

Հատկանշական է, որ Արցախի մշակութային դիվանագիտության հարցում կարևորվում է նաև ՀՀ դերակատարությունը: Օրինակ, 2010 թ.-ի հոկտեմբերի 6-10-ը Մայնի Ֆրանկֆուրտում տեղի ունեցած Գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառին, որին մասնակցել են աշխարհի 100-ից ավելի երկրների գրահրատարակչական ու գրավաճառ ընկերություններ, Հայաստանը ներկայացվել է վերջին երկու տարվա գրահրատարակչական արտադրանքի լավագույն նմուշներով՝ իր տաղավարում ցուցադրելով հայերեն և տարբեր օտար լեզուներով այլոմային, հանրագիտարանային, գիտահանրամատչելի, մշակութային ժառանգությունն արտացոլող, հասարակական-քաղաքական, մանկական, գեղարվեստական, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին և հայոց ցեղասպանությանը նվիրված գրքեր, քարտեզներ և այլ նյութեր: Մեկ այլ օրինակ. 2019 թվականի հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, Երևանի Կամերային երաժշտության տանը տեղի ունեցած պատանի երաժիշտ-կատարողների «Նոր անուններ» միջազգային 9-րդ փառատոնին 5 տասնյակ պատանի երաժիշտների հետ մասնակցել են նաև արցախցի պատանի կատարողները:

Ի մի բերելով վերը նշվածը՝ Արցախի մշակութային դիվանագիտության մոդելի մրցակցային առավելություններն ու պորբլեմային գոտիները կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակում.

Արցախի մշակութային դիվանագիտության SWOT վերլուծությունը

Strengths - ուժեղ կողմեր	Weaknesses - թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> - մշակութային հարուստ ժառանգություն, - մշակութային զբոսաշրջության աճ, 	<ul style="list-style-type: none"> - պետության կողմից երկրի մշակութային հարուստ ժառանգության անբավարար գնահատում, - մշակույթի պետական ֆինանսավորման ցածր մակարդակ, - պատերազմական գոտի, հարևան երկրի ռազմական հռետորաբանություն
Opportunities - հնարավորություններ	Threats - սպառնալիքներ
<p>համաշխարհային EXPO ցուցահանդեսների մասնակցություն, ինչը կարող է դառնալ միջազգային մշակութային փոխանակման հարթակ</p>	<p>պետական մակարդակով մշակութային դիվանագիտության և «փափուկ ուժի» հանդեպ ռազմավարական մոտեցման բացակայություն</p>

Արցախի մշակութային դիվանագիտության գերակա ուղղությունների, ինչպես նաև մշակութային քաղաքականության ոլորտում կատարվող գործունեության վերլուծությունը թույլ է տալիս ներկայացնելու հետևյալ առաջարկությունները.

- ձևակերպել «փափուկ ուժի» պետական երկարաժամկետ ռազմավարություն, սահմանել այդ ոլորտի հիմնական նպատակներն ու խնդիրները,
- «փափուկ ուժի» քաղաքականության և մշակութային դիվանագիտության քննարկման ու մշակման գործում ներգրավել լայն հասարակայնությանը,
- «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ԼՂՅ օրենքի 4-րդ («Պետական մշակութային քաղաքականության նպատակները») հոդվածում ավելացնել դրույթ՝ «Նպաստել Արցախի միջազգային ճանաչմանը»,
- գիտական հետազոտությունների արդյունքները օգտագործել «փափուկ ուժի» ռազմավարության մշակման գործընթացում,
- ներգործության ավելի մեծ արդյունավետության նպատակով ապահովել ինչպես արտերկրյա, այնպես էլ արցախյան փառատոների, մրցույթների, շնորհանդեսների շարունակականությունը և Արցախի ներկայացուցիչների ու պատվիրակությունների մշտական մասնակցությունը:

Այս խնդիրներով կարող է զբաղվել վերակազմակերպված Կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը, որը, օգտագործելով այս ոլորտում աշխարհի առաջատար երկրների փորձը (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա), փոխկապվածություն պահպանելով այլ գերատեսչությունների (արտաքին գործերի նախարարություն, կրթության, գիտության և մշակույթի նախարարություն, ռազմաօդային ուժերի, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարություն) հետ, իր գործառույթների շրջանակներում պետք է իրականացնի Արցախի մշակութային դիվանագիտության իրականացման արդյունավետության վերլուծություն ազգային շահերի առաջնության և երկրի միջազգային վարկանիշի բարձրացման համատեքստում, զբաղվի մշակութային դիվանագիտությամբ՝ ուղղված բազմակողմ ու երկկողմ մշակութային, գիտատեխնիկական, կրթական և հումանիտար մյուս ոլորտներում կապերի հաստատմանը և համագործակցության զարգացմանն ու խորացմանը նպաստող քաղաքականություն ձևավորելուն, նպաստի միջազգային ասպարեզում համապատասխան բնագավառների վերաբերյալ Արցախի Հանրապետության պաշտոնական ռազմավարության ու հայեցակարգի ներկայացմանը, հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության, Արցախի գիտատեխնիկական զարգացման և հումանիտար հարցերի մասին տեղեկատվության պատշաճ մատուցմանը՝

- համագործակցելով ոլորտի այլ կառույցների (օրինակ՝ ԱՀ Էկոնոմիկայի նախարարության տուրիզմի վարչություն, Հայաստանի և Սփյուռքի հետ ինտեգրման կոմիտե, բնապահպանության կոմիտե, հասարակական կազմակերպություններ, հետազոտական կենտրոններ, խորհուրդներ) հետ,
- ստեղծելով և կառավարելով հիմնադրամներ՝ դրանց աշխատանքներում ներգրավելով արտերկրի հայ մեծահարուստներին,
- վերահսկելով Արցախի պատմամշակութային ժառանգության լիարժեք ներկայացվածությունը համացանցում,
- արտերկրում կազմակերպելով ցուցահանդեսներ, մշակութային օրեր և այլն,
- անցկացնելով մրցույթներ և շնորհելով մրցանակներ,
- հովանավորելով արտերկրի ուսումնական հաստատություններում սովորող հայ և օտարազգի պատանիներին,
- իրականացնելով նախագծեր արվեստի և սպորտի բնագավառներում:

Այսպիսով՝ կոնֆլիկտների ու միջազգային անկայունության դարաշրջանում մշակույթի՝ որպես դիվանագիտության մեջ «փափուկ ուժի» գործիքի դերը անհնար և պարզապես վտանգավոր է թերազնահատել: Այնուամենայնիվ, Արցախը դեռ

անբավարար չափով է գործածում մշակույթի մեծ ներուժը պետության գրավիչ կերպարի ձևավորման համար: Ե՛վ պետությունը, և՛ փոքրաթիվ մշակութային հիմնադրամները մշակութային քաղաքականության զարգացման մեջ քիչ միջոցներ են ներդնում: Սակայն պատմության ծայրահեղ պահերին, կոնֆլիկտների ու դիմակայությունների շրջաններում հատկապես մշակույթը կարող է դառնալ օտարերկրյա լսարանի համար մեր երկրի գրավչության աղբյուրը: Այսօր Արցախի արժանավոր վարկանիշի ստեղծման ու արտերկրյա լսարանի ներգրավման համար մեր առջև խնդիր է դրված՝ գտնելու մշակութային նոր կերպարներ ու խորհրդանշաններ կամ ստեղծագործաբար վերաիմաստավորելու մշակութային ավանդական, արբետիպային կերպարներն ու խորհրդանշանները, քանզի դրանց ներուժն իրապես անսպառ է:

THE NECESSITY OF CULTURAL DIPLOMACY OF ARTSAKH AS A WAY OF COUNTRY'S INTERNATIONAL RECOGNITION

SOFYA OHANYAN

*ASUE, Chair of Philosophy and Armenian History,
Ph.D in Philosophy, Associate Professor; UYSSA, Member;
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to bring forward and support the idea that under interconnected world's globalising condition when the expansion of mass communication technologies promotes the citizens' contact of different countries, cultural diplomacy has become an exceptionally important factor of maintaining international stability. The main task of the research is to represent cultural diplomacy as a type of public diplomacy and 'soft power' as a way of exchanging thoughts, information, culture, which aims not only at strengthening mutual understanding of nations, but also at explaining the fact that more and more countries nowadays are trying to include cultural diplomacy in their foreign political strategies.

During the research general-attitudinal dialectical method, general-scientific (analogical, comparing, analytical, synthetical) and specific-scientific (descriptive, statistical) methods were used.

The research resulted into the conclusions that some productive methods and techniques have been developed during the application of the cultural tools included in foreign diplomacy. Also, the cultural influential borders of foreign participants of international relationships are clarified. In this context, the author confirms that culture cannot replace the military tools of foreign diplomacy; moreover, it does not wholly compensate the lack of international economic resources. Though, the countries that do not have higher position in the world political and economic field should cope with the problem of popularisation of national culture in abroad to some extent.

Thus, cultural diplomacy can have an essential contribution to the problems of the main achievements of Artsakh's aims, of increasing productivity of foreign policy and of making the country recognisable in the international cultural sphere.

Keywords: «soft power», public diplomacy, culture, cultural diplomacy, foreign cultural policy, tourism, cultural exchange.

КУЛЬТУРНАЯ ДИПЛОМАТИЯ АРЦАХА КАК СПОСОБ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ СТРАНЫ

СОФЬЯ ОГАНЯН

*исполняющая обязанности заведующего кафедрой
философии и армянской истории АГЭУ; член ОМУСА;
кандидат философских наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – предложить и обосновать идею, согласно которой в условиях глобализации взаимосвязанного мира, когда распространение технологий массовых коммуникаций способствует общению граждан разных стран, культурная дипломатия превращается в исключительно важный фактор сохранения международной стабильности. Наша задача – представить культурную дипломатию как один из видов публичной дипломатии и «мягкой силы», которая реализуется посредством обмена мыслями, информацией, культурой и целью которой является сближение и взаимопонимание между народами; кроме того, мы попытаемся разъяснить тот факт, почему в настоящее время все больше и больше стран стремится включить культурную дипломатию в свои внешнеполитические стратегии.

В процессе исследования, кроме принятого диалектического метода, используются также общенаучные (аналогия, сравнение, анализ, синтез) и частно-научные (описательные, статистические) методы.

В результате исследования мы пришли к выводу, что в процессе использования включенных в состав внешней политики культурных инструментов разработаны эффективные методы и стали понятны границы воздействия культуры на зарубежных участников международных отношений. В этом контексте автор обосновывает факт, что культура не может заменить внешнеполитические военные инструменты, а также полностью не компенсирует недостаток международных экономических ресурсов. Но страны, не занимающие высокие позиции на всемирной политической и экономической арене, должны так или иначе заниматься популяризацией зарубежом своей национальной культуры. Следовательно, культурная дипломатия может внести существенный вклад в вопрос достижения фундаментальных целей Арцаха, усиления эффективности его внешней политики и признания на международной культурной арене.

Ключевые слова: *«мягкая сила», публичная дипломатия, культура, культурная дипломатия, внешняя культурная дипломатия, туризм, культурный обмен.*



**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՉՃԱՆԱԶԿԱԾ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏԱՅՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ***

ՀՏԴ 341.1/8

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Արցախի պետական համալսարանի ասպիրանտ, ԱԵԳՄՄ անդամ,
ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն,
mariamgrigoryan93@yandex.ru*

Մարդու հիմնարար իրավունքների ու պատությունների իրավաչափ սահմանափակման ինստիտուտն այն հիմնաբարն է, առանց որի անհնար է մեր հասարակության գոյությունը, նրա անվտանգության, քաղաքացիների իրավունքների ու պատությունների և այլ սոցիալական կարևոր նպատակների ապահովումը:

Հողվածի նպատակն է հետապնդել այդ ինստիտուտի դերը միջազգային իրավունքում և պարզել, թե ինչպես է այն դրսևորվում չճանաչված պետություններում: Այդ նպատակով ուսումնասիրվել են համապատասխան միջազգային իրավական ակտեր և տեսական գրականություն: Դրանց համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել սահմանելու այն պահանջները, որոնց առկայության դեպքում կարող են սահմանափակվել մարդու հիմնարար իրավունքներն ու պատությունները:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառել ենք ինչպես համագիտական (անալիզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (համեմատական-իրավական) մեթոդներ:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված իրավունքների նկատմամբ սահմանափակումներն ու շեղումները պետք է լինեն ոչ խտրական, համաչափ իրավունքի բնությանը և ուղղված լինեն համընդհանուր քարոքության ապահովմանը:

Հիմնաբառեր՝ մարդու իրավունքներ, պատություններ, սահմանափակումներ, դերոգացիա, չճանաչված պետություններ, համաչափություն, արտակարգ իրավիճակ, Սահմանադրություն:

* Հողվածը ներկայացվել է 14.05.2020թ., գրախոսվել՝ 20.05.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

Ներածություն

Մարդն օժտված է բնական և անօտարելի իրավունքներով՝ անկախ ազգությունից, սեռից, էթնիկ պատկանելիությունից, մաշկի գույնից, դավանանքից, ինչպես նաև քաղաքացիության պատկանելիությունից կամ բնակության վայրից:

Մարդու իրավունքները ներկայացնում են համալիր համակարգ, ինչի մասին են վկայում 1993թ.-ին Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովում ընդունված Վիեննայի հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը: Դրանում նշվում է. «Մարդու բոլոր իրավունքները համընդհանուր են, անբաժանելի ու փոխադարձաբար կախված և փոխկապակցված: Միջազգային հանրությունը պետք է համաշխարհային մակարդակում մարդու իրավունքներին վերաբերվի արդարացի և հավասար կերպով, հավասար հիմունքներով և միևնույն շեշտադրմամբ: Թեպետ պետք է նկատի առնել ազգային և տարածաշրջանային առանձնահատկությունները և տարբեր պատմական, մշակութային և կրոնական հիմքերը, պետությունների պարտականությունն է, անկախ քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգերից, խթանել և պաշտպանել մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները» (կետ 5)⁸⁶:

Վերոգրյալն ուղղակիորեն բխում է միջազգային իրավունքի *jus cogens* սկզբունք հանդիսացող՝ մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքից, որը, որպես մարդու իրավունքների հարգման պաշտպանության հիմք, հստակորեն ձևավորվեց 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում:

Հռչակագրի ընդունումից հետո այս սկզբունքն ամրագրվեց նաև մարդու իրավունքներին նվիրված բազմաթիվ այլ միջազգային իրավական փաստաթղթերում:

Չնայած մարդու իրավունքներն անօտարելի են, սակայն դրանք որոշ դեպքերում, բացառապես միջազգային իրավական ակտերում սահմանված հիմքերի առկայության պարագայում կարող են սահմանափակվել կամ շեղվել այդ իրավունքներից:

Մեր կարծիքով, ինչպես արդարացիորեն նշում է Ա.Վ.Մալկոնը՝ «Այնպես ինչպես գոյություն ունեն համընդհանուր իրավունքների միջազգային չափորոշիչներ, այնպես էլ պետք է գոյություն ունենան դրանց սահմանափակման չափորոշիչներ»⁸⁷: Հարցն այն է, որ նման սահմանափակումները կամ շեղումներն ինքնանպատակ չպետք է լինեն: Սահմանափակման միջոցով որոշակի խնդիր լուծելով հանդերձ՝ չպետք է աղավաղվի կամ նենգափոխվի մարդու կոնկրետ իրավունքի բուն նպատակը, իմաստն ու էությունը: Հետևաբար այս հիմնախնդիրն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրավունքում պետք է լուծվի ողջամիտ և իրավաչափ իրավակարգավումների շրջանակում:

Մարդու իրավունքների ու հիմնարար ազատություններից հնարավոր շեղումների (կամ դերոզացիա) և սահմանափակումների ձևակերպումը, դրանց քննարկումը պատմական բոլոր ժամանակահատվածներում եղել է իրավունքի փիլիսոփայության կարևոր հարցերից մեկը: Այսպես, Թ.Հոբսը որպես իրավունքների սահմանափակման հիմնական նպատակ անվանում էր անվտանգության ապահովումը, իսկ Չ.Լոկը՝ խաղաղության, անվտանգության և հասարակական բարեկեցության ապահովումը: Համընդհանուր բարօրության գաղափարները հետագայում զարգացում ապրեցին նաև Ժ.ժ.Ռուսոյի և Լուսավորության ժամանակաշրջանի այլ փիլիսոփաների աշխատություններում: Այդ հարցի հետ կապված հետագա ուսումնասիրություններում, որպես մարդու իրավունքների սահմանափակման նպատակներ, նշվեցին նաև

⁸⁶ Վիեննայի Հռչակագիր և գործողությունների ծրագիր՝ ընդունված Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողովի կողմից 1993թ. հունիսի 25-ին:

⁸⁷ Подмарев А.А. Ограничение прав и свобод личности: Конституция РФ 1993г. и основные международные акты о правах человека //Вестник Санкт-Петербургского университета МВД России, 2017, № 2 (73), С. 79.

հասարակությունում համաձայնության ապահովումը (Ի.Գ.Ֆիխտե) և բարոյականության պահանջը (Վ.Ս.Սոլովյով)⁸⁸:

Ժամանակակից գիտական գրականության մեջ մարդու իրավունքների սահմանափակումները բնորոշվում են տարբեր կերպ: Մասնավորապես Ա. Վ. Մալկոն կարծում է, որ սահմանափակումները հանդիսանում են հակաօրինական գործունեության զսպում՝ հասարակական հարաբերությունները պաշտպանելու նպատակով⁸⁹: Իսկ Վ.Ա.Չետվերնիի կարծիքով՝ մարդու իրավունքների սահմանափակումները հասարակության համար վտանգի արգելք են և բացառում են ազատության շահագործումը⁹⁰: Մասնագետների մեկ այլ խումբ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակումները բնորոշում է որպես հասարակության, այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանություն իրավունքի օգտագործման կամայական չարաշահումներից (Վ.Ի.Գոյման), այլ անձանց իրավունքների ու ազատությունների հարգման անհրաժեշտություն և հասարակության ու պետության նորմալ գործունեություն (Վ.Վ.Սակյակով, Բ.Ա.Ստրաշուն), իրավակարգի պահպանություն, անձնական անվտանգության ապահովում, հասարակության և պետության արտաքին ու ներքին անվտանգության ապահովում, բարենպաստ պայմանների ստեղծում տնտեսական գործունեության և սեփականության բոլոր ձևերի պաշտպանության համար (Ա.Ս.Մորդովեց)⁹¹ և այլն:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման ինստիտուտը միջազգային իրավունքում

Մարդու հիմնարար իրավունքներից և ազատություններից շեղում կատարելու և հնարավոր սահմանափակումների վերաբերյալ դրոյթներ պարունակում են այնպիսի կարևորագույն միջազգային իրավական փաստաթղթեր, ինչպիսիք են՝ 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966թ. Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակման հնարավորություն են պարունակում նաև տարածաշրջանային միջազգային իրավական փաստաթղթերը: Դրանցից կարելի է հիշատակել 1948թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, 1979թ. Մարդու իրավունքների միջամերիկյան կոնվենցիան, ինչպես նաև 1981թ. Մարդու և ժողովուրդների աֆրիկյան խարտիան:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակման հնարավորություն նախատեսում են նաև ազգային սահմանադրությունները: Ընդ որում, դրանք, որպես միջազգային իրավունքով թույլատրելի շեղում, տեղ են գտել ինչպես ճանաչված, այնպես էլ չճանաչված պետությունների սահմանադրություններում:

Մարդու իրավունքների թույլատրելի սահմանափակման վերաբերյալ միջազգային իրավադրոյթների էության բացահայտումը կարևոր է հատկապես պատասխանելու համար այն հարցին, թե որոնք են այս հարցում պետությունների հայեցողական ազատության սահմանները:

⁸⁸ Ромашев Ю.С. Ограничения прав и свобод человека в международного праве и новации в российском уголовном законодательстве // Журнал Российского права, 2013, № 11, С. 8.

⁸⁹ Малько А.В. Теория государства и права, М., 2000, С. 7.

⁹⁰ Конституция Российской Федерации: проблемный комментарий/ отв. ред. В.А.Четвернин. М., 1997, С. 30.

⁹¹ Мордовец А.С. Социально- юридический механизм обеспечения прав человека и гражданина. Саратов, 1996, С. 32.

Այսպես՝ համաձայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 29-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի այն համայնքի առջև, որտեղ և միայն հնարավոր է նրա անձի ազատ ու լիարժեք զարգացումը: Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով՝ բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն երաշխավորելու և ժողովրդավարական հասարակությունում բարոյականության, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջներն ապահովելու նպատակով: Այս իրավունքների և ազատությունների իրականացումն ոչ մի դեպքում չպետք է հակասի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին»:

Տվյալ հոդվածի բովանդակությունից դժվար չէ ենթադրել, որ վերոնշյալ նորմն ունի ընդհանուր բնույթ, որը ցայսօր բազում քննարկումների ու վեճերի տեղիք է տալիս: Ռ.Ա.Սյուվերտոնի կարծիքով՝ այս դրույթը կարող է վտանգ պարունակել եթե ոչ չարաշահումների, ապա ամեն դեպքում ոչ հավասարաչափ պահպանվող հասարակական շահերին ուղղված սահմանափակումների համար⁹²:

Իրավունքների և ազատությունների սահմանափակումը կարող է թույլատրվել միայն «օրենքին համապատասխան»: Եթե միջամտությունն իրականացվել է օրինական հիմքերով, առաջանում է հետևյալ հարցը՝ ինչքանով է այն անհրաժեշտ եղել ժողովրդավարական հասարակությանը՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում սահմանված նպատակներին հասնելու համար⁹³:

Մարդու իրավունքների վերաբերյալ հաջորդ միջազգային իրավական ակտը, որը թույլատրում է սահմանափակել մարդու իրավունքները, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն է: Այդ փաստաթուղթը նախատեսում է, որ որոշ բացառիկ հանգամանքներում պետություններն իրավունք ունեն շեղվել մարդու իրավունքների վերաբերյալ իրենց ստանձնած պարտավորություններից: Այս կապակցությամբ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածը սահմանում է. «Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների՝ միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ և չեն հանդիսանում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով»:

Հարկ է նշել, որ շեղումները պետք է խստորեն համապատասխանեն հետևյալ պայմաններին՝

- Արտակարգ իրավիճակների առկայությանը: Այս առնչությամբ Մարդու իրավունքների կոմիտեն հայտարարել է. «Ոչ բոլոր զինված հակամարտություններն են որակվում որպես արտակարգ իրավիճակ»: Մարդու իրավունքների կոմիտեն մասնավորապես նշել է. «Դաշնագիրը պահանջում է, որ անգամ զինված հակամարտության ժամանակ Դաշնագրից բխող շեղումները թույլատրվում են միայն այն դեպքում, երբ իրավիճակը սպառնալիք է ազգի կյանքի համար: Եթե մասնակից պետությունները Դաշնագրի 4-րդ հոդվածը օգտագործեն այլ իրավիճակներում, քան զինված հակամարտությունն է, ապա նրանք պետք է մանրամասն հաշվի առնեն

⁹² Мюллерсон Р.А. Права человека: идеи, нормы, реальность. – М.: Юрид. Лит., 1991, С. 86.

⁹³ Умарова А.А. Стандарты ограничений прав и свобод в актах современного международного права // Проблемы в российском законодательстве, 2011, № 2, С. 41:

արդարացումը և թե ինչու է այդպիսի միջոցը անհրաժեշտ և օրինական տվյալ հանգամանքներում»⁹⁴:

- Այդ միջոցների ժամանակավոր բնույթը: Շեղման միջոցները պետք է ժամանակավոր լինեն և պետք է վերացվեն, երբ արտակարգ իրավիճակը կամ զինված հակամարտությունն ընդհատվի:

- Այդ շեղումները պետք է լինեն անհրաժեշտ ու համաչափ: Շեղման միջոցները պետք է խստորեն համապատասխանեն արտակարգ իրավիճակներին: Ավելին՝ շեղումները չեն կարող արդարացվել, եթե նույն նպատակին կարելի է հասնել ավելի մեղմ միջոցներով:

- Այդ շեղումները պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի և մարդու իրավունքների վերաբերյալ պետությունների ստանձնած պարտավորություններին: Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4.1-րդ հոդվածում նշված է. «Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել՝ ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ»: Մարդու իրավունքների Կոմիտեն այս հարցի կապակցությամբ նշել է. «Չինված հակամարտության ժամանակ միջազգային կամ ոչ միջազգային, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքի կանոնները կիրառելի են և Դաշնագրի 4-րդ և 5-րդ կետերի հետ համատեղ օգնում են՝ կանխարգելելու պետություններին պատկանող արտակարգ լիազորությունների չարաշահումները»:

- Գործընթացային երաշխիքներ: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների կոմիտեն նշում է. «Դաշնագրի դրույթները, որոնք նվիրված են ընթացակարգային երաշխիքներին, երբեք չեն կարող ենթարկվել այնպիսի միջոցների, որոնք շրջանցում են չկարգավորվող իրավունքների պաշտպանությունը»⁹⁵:

Մարդու իրավունքների վերաբերյալ առանձին միջազգային փաստաթղթեր բացահայտ կերպով արգելում են որոշակի դրույթներից շեղում: Օրինակ՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Ոչ մի բացառիկ հանգամանք, ինչպիսին էլ այն լինի՝ պատերազմական դրություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող վկայակոչվել որպես խոշտանգումների արդարացում»: Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն ակնհայտորեն սահմանում է, որ կյանքի իրավունքի, խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ բժշկական կամ գիտական փորձերի, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրավասուբյեկտության ճանաչման իրավունքի շեղում չի թույլատրվում⁹⁶: Թվարկված իրավունքները հաճախ անվանում են *nonstandfest*. վերջինս գերմանական բառ է, որը ներառում է վերը թվարկված իրավունքները⁹⁷:

Մարդու իրավունքների կոմիտեն վերահաստատել է, որ ընթացակարգային երաշխիքներին վերաբերող Դաշնագրի դրույթները երբեք չեն կարող ենթարկվել

⁹⁴ **International covenant on civil and political rights , General Comment NO. 29 States of Emergency (article 4)**, https://www.nichibenren.or.jp/library/ja/kokusai/humanrights_library/treaty/data/HRC_GC_29e.pdf, կետ 3:

⁹⁵ International legal protection of human rights in armed conflict; United Nations Human rights office of the High Commissioner, New York and Geneva; 2011 էջ 47-48:

⁹⁶ Նույն տեղում, էջ 48-49:

⁹⁷ Human rights law, teaching material; prepared by D.Shiferaw and Y.Teska 2009, էջ 54:

այնպիսի շեղումների, որոնք հնարավորություն կտան շրջանցել սահմանափակման ոչ ենթակա իրավունքների պաշտպանությունը: Մասնավորապես 4-րդ հոդվածը չի կարող կիրառվել այնպիսի ձևերով, որոնք կհանգեցնեն անշեղելի իրավունքներից շեղման: Օրինակ՝ Դաշնագրի 6-րդ հոդվածն ամբողջությամբ անշեղելի հոդված է, քանի որ սահմանում է արտակարգ դրության ժամանակ մահապատժի ենթարկելու ցանկացած փորձ, պետք է համապատասխանի Դաշնագրի դրույթներին, այդ թվում՝ Դաշնագրի 14-րդ և 15-րդ հոդվածների պահանջներին⁹⁸:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 5-րդ հոդվածը սահմանում է. «Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այն նշանակությամբ, թե որևէ պետություն, խումբ կամ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված լինի սույն Դաշնագրով ճանաչված ցանկացած իրավունքի կամ ազատության վերացմանը կամ սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն Դաշնագրով»:

Պետք է նշել, որ Դաշնագրի մի շարք դրույթներում սահմանափակումները թույլատրվում են կոնկրետ իրավունքի կապակցությամբ՝ դրա իրագործման սահմանները սահմանելով: Դա վերաբերում է մասնավորապես ազատ տեղաշարժվելու իրավունքին և բնակության վայր ընտրելու ազատությանը, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքին, ազատ արտահայտվելու իրավունքին:

Դաշնագրի 12-րդ հոդվածում սահմանված է, որ սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն՝

1. պետական անվտանգության,
2. հասարակական կարգի,
3. բնակչության առողջության կամ բարոյականության,
4. այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Բացի այդ, սահմանափակումները պետք է համատեղելի լինեն Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում հստակ տարբերակում կա առկա «իրավունքների սահմանափակում» և «ստանձնած պարտավորություններից շեղում» հասկացությունների միջև:

Տևտեսական, սոցիալական ու մշակույթային իրավունքների սահմանափակման վերաբերյալ դրույթներ ամրագրված են Տևտեսական, սոցիալական և մշակույթային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածում, ըստ որի՝ Դաշնագրում սահմանված իրավունքների իրականացումը հնարավոր է ենթարկել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք

1. սահմանվում են օրենքով, որն ընդունվել է պետության ներսում և համապատասխանում է միջազգային իրավունքի համընդհանուր Նորմերին ու սկզբունքներին,
2. այնքանով, որքանով համատեղելի են իրավունքների բնույթի հետ,
3. բացառապես ժողովրդավարական հասարակությունում ընդհանուր բարեկեցությանը նպաստելու նպատակով:

Պետք է նշել, որ Դաշնագրի 5-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվում է, որ չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների հիման վրա ցանկացած երկրում ճանաչված կամ գոյություն ունեցող հիմնարար իրավունքների որևէ սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմամբ,

⁹⁸ International covenant on civil and political rights , General Comment NO. 29 States of Emergency (article 4), https://www.nichibenren.or.jp/library/ja/kokusai/humanrights_library/treaty/data/HRC_GC_29e.pdf, կետ 15:

թե Դաշնագիրը նման իրավունքներ չի ճանաչում կամ ճանաչում է նվազ ծավալով: Սակայն Դաշնագրի 8-րդ հոդվածով սահմանված տնտեսական ու սոցիալական շահերի ներկայացման և պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և իր ընտրությամբ արհեստակցական միության անդամակցելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում, և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական կարգի, կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության:

Վերոնշյալ երկու միջազգային իրավական դաշնագրերում ամրագրված սահմանափակումները կարող են կիրառվել ինչպես զինված հակամարտությունների ժամանակ, այնպես էլ խաղաղ ժամանակներում, սակայն այդ սահմանափակումները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

- այդ սահմանափակումները պետք է լինեն անհրաժեշտ և սահմանված լինեն օրենքով: Պետությունները սահմանափակվում են պայմանագրի դրույթների լեզվով: Օրինակ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 18-րդ հոդված 3-րդ կետը սահմանում է. «Կրոնի կամ համոզմունքի արտահայտման ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, կարգի, առողջության և բարոյականության, ինչպես նաև այլ անձանց հիմնարար իրավունքների և ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների»: Նույն Դաշնագրի 12-րդ հոդվածի 3-րդ կետը ևս պարունակում է նմանատիպ դրույթ. «Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած ժամանակ, ներառյալ իր սեփական երկրից մեկնելու իրավունք»:

- Համաչափությունը և միջամտությունը: Միջազգային արդարադատությունը և պրակտիկան հաստատում են այն փաստը, որ մարդու իրավունքների սահմանափակումները պետք է խստորեն համապատասխանեն համաչափության սկզբունքին: Արդարադատության միջազգային դատարանը հղում է կատարում Մարդու իրավունքների կոմիտեի՝ ազատ տեղաշարժվելու մասին 1999թ. թիվ 27 Ընդհանուր մեկնաբանությանը, ըստ որի՝ մարդու իրավունքների սահմանափակումները պետք է համահունչ լինեն համաչափության սկզբունքին և պետք է լինեն նվազագույն միջամտող գործիք, որը կարող է հանգեցնել ցանկալի արդյունքի: Նա կիրառեց նմանատիպ պայմաններ տնտեսական, սոցիալական ու մշակույթային իրավունքների նկատմամբ սահմանափակումների օգտագործման ժամանակ: Միջազգային մարդասիրական իրավունքի առնչությամբ որոշակի անհատական նորմեր հնարավորություն են տալիս ստանձնած պարտավորություններից կատարել բացառություններ: Երբեմն միջոցը թույլատրում է, եթե դա անհրաժեշտ է՝ ելնելով անվտանգության նկատառումներից կամ երբ արտակարգ իրավիճակն իրենից ներկայացնում է կազմակերպված սպառնալիք օկուպացիոն ուժի անվտանգության համար: Մինչդեռ քաղաքացիական անձինք, ի տարբերություն կոմբատանտների, սովորաբար չեն կարող ներթափանցել: Չինձառայողը կարող է պաշտպանել քաղաքացիական անձանց, երբ նրանց անվտանգության ապահովումը դառնում է բացարձակ անհրաժեշտություն, և գրավող ուժը կարող է դա անել անվտանգության իմպերատիվ պատճառներից ելնելով: Պետությունը կարող է հրաժարվել անհատական օգնություն ցուցաբերելու բեռից՝ անվտանգության իմպերատիվ պատճառներով պայմանավորված:

Պետությունները կարող են օգնել այն կազմակերպություններին, որոնց գործունեությունն ուղղված է հենց իրենց անվտանգության ապահովմանը: Այլ պարտականություններից կարող են շեղվել իմպերատիվ ռազմական պատճառներից

ելնելով, երբ այն անհրաժեշտ է ռազմական գործողություններով կամ գոյություն ունեցող անխուսափելի ռազմական անհրաժեշտությամբ⁹⁹:

Մարդու իրավունքների վերաբերյալ հաջորդ միջազգային իրավական ակտը, որում թույլատրվում են սահմանափակումներ կամ ստանձնած պարտավորություններից շեղումներ, ընդգրկում է Եվրոպա աշխարհամասը: Դա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան է (այսուհետ՝ Կոնվենցիա): Վերջինիս 15-րդ հոդվածը նվիրված է արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղման ինստիտուտին: Յոդվածում մասնավորապես սահմանվում է.

1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթների:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

Ինչպես արդեն նշել ենք, դերոգացիայի ինստիտուտը կամ ստանձնած պարտավորություններից շեղումները ամրագրված են համընդհանուր միջազգային իրավական փաստաթղթերում, հետևաբար Կոնվենցիայում նման դրույթի առկայությունը որևէ առանձնահատկություն իրենից չի ներկայացնում:

Կոնվենցիայում ամրագրված արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղումները պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին:

Առաջին հերթին՝ միջոցները, որոնք մասնակից պետությունները ձեռնարկում են իրենց պարտավորություններից շեղվելու համար, պետք է խստորեն համապատասխանեն արտակարգ իրավիճակին, հակառակ դեպքում հնարավոր է երկրում կամ դրա մի մասում Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և պարտավորությունների կրճատում:

Երկրորդ՝ պարտավորություններից շեղումը չի տարածվում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի՝ կյանքի իրավունք (բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ), 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելում. ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, 7-րդ հոդվածի՝ պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա: Այս հոդվածների կապակցությամբ պետությունների ստանձնած պարտավորություններից շեղումը ըստ էության անհնար է:

Երրորդ՝ այդ միջոցները չպետք է հակասեն կոնկրետ պետության այն պարտավորություններին, որոնք համապատասխանում են միջազգային իրավունքին:

⁹⁹ International legal protection of human rights in armed conflict; United Nations Human rights office of the High Commissioner, New York and Geneva; 2011 էջ 51-52:

Չորրորդ՝ այդ միջոցառումները պետք է ունենան ժամանակավոր բնույթ, չնայած 15-րդ հոդվածում դա ուղղակիորեն ամրագրված չէ, սակայն բխում է 15-րդ հոդվածի 1-ին կետից. «Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ կամ 3-րդ կետում ամրագրված Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարն ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին»¹⁰⁰:

Կոնվենցիայի 15-րդ հոդվածի և Եվրոպական դատարանի համապատասխան վճիռների վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ մասնակից պետություններն արտակարգ իրավիճակներում իրենց պարտավորություններից շեղվելու իրավունքից կարող են օգտվել հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1. արտակարգ իրավիճակը պետք է պայմանավորված լինի պատերազմի կամ ազգի կյանքի սպառնալիքով,
2. պետության կողմից ձեռնարկվող շեղման միջոցառումները, որոնք ամրագրված են Կոնվենցիայում, պետք է պայմանավորված լինեն արտակարգ դրությամբ,
3. նման միջոցառումները չպետք է անհամատեղելի լինեն պետության այլ պարտավորություններին, որոնք համապատասխանում են միջազգային իրավունքին:

Տվյալ հոդվածի կիրառման կապակցությամբ Դատարանը ընդունել է բազմաթիվ վճիռներ, որոնցում ամրագրել է իր դիրքորոշումն արտակարգ իրավիճակներում ստանձնած պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ու ձևավորել է որոշակի հայեցակարգ, որը ներկայումս պետությունների համար ունի կարևոր նախադեպային նշանակություն¹⁰¹: Որպես օրինակ կարող են ծառայել Լոուլեսն ընդդեմ Իռլանդիայի, Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության, Յունաստանն ընդդեմ Միացյալ Թագավորության, Բրուուզանն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության գործերը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակման վերաբերյալ Նորմն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի «Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները» վերտառությամբ 18-րդ հոդվածում, որում սահմանվում է. «Նշված իրավունքների և ազատությունների՝ սույն Կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են»:

Կոնվենցիայի 18-րդ հոդվածի գլխավոր նպատակն է թույլ չտալ Կոնվենցիայի դրույթների խախտումներ առանձին իրավունքների և ազատությունների սահմանափակումների ձևով, որոնց կիրառման հնարավորությունը մասնակից պետությունների կողմից նախատեսված է հենց Կոնվենցիայով: Նման սահմանափակումներ ամրագրված են Կոնվենցիայի 8-1 1-րդ հոդվածի 2-րդ մասով և 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածով:

Ըստ Կոնվենցիայի տրամաբանության՝ ազգային օրենսդրություններն այդպիսի սահմանափակումներ պետք է նախատեսեն, եթե դրանք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգության նպատակների համար, ինչպես նաև ելնելով հասարակական կարգի պահպանման, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, բարոյականության ու առողջության

¹⁰⁰ Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения/Под общ.ред.д.ю.н., проф. В.А.Туманова и д.ю.н., проф. Л.М.Этнина. – М.: Издательство норма, 2002. С. 221.

Стремление установить монополию на определенный вид продукции/деятельности или устранить конкуренцию приводит к соглашениям о совместной политике, которые получили название картельных сговоров.

Картели являются монополистическими объединениями, которые осуществляют свою деятельность в рамках одного товарного рынка среди юридически самостоятельных субъектов предпринимательства, целью которых является устранение конкуренции между указанными субъектами для снижения расходов и получения максимальной прибыли. Действия осуществляются сообща в целях координации существенных параметров рынка.

Картельные сговоры оказывают существенное негативное влияние на экономическую безопасность, что требует от государства решительного противодействия, в основу которого должна быть положена непротиворечивая правовая база.

По данным начальника управления по борьбе с картелями Федеральной антимонопольной службы России Тенишева А.П., по результатам деятельности за 2019 год антимонопольные органы возбудили 926 дел о картелях и иных антиконкурентных соглашениях. Около 10 дел приходится в среднем на каждый субъект РФ, из которых примерно половина дел – о картельных сговорах. Из дел о картелях практически все (около 86 %) приходится на нарушения на торгах. Примечательным также является то, что около 25% ВВП РФ в 2019 году было распределено через систему государственных закупок, что неизбежно привлекает желающих незаконно обогатиться. Около трети дел возбуждены по сговорам, целью которых было ограничение конкуренции, сопряженных с противоправными отношениями с органами власти и государственными заказчиками¹³⁹.

Сговоры, в частности, картельного характера, влияют существенно на цену контракта: проведение торгов в условиях конкуренции приводит к снижению цены на 20-30%, в то время, как в условиях сговоров, снижение начальной (максимальной) цены контракта едва ли достигает 1%¹⁴⁰.

Все указанное обуславливает необходимость разработки действенного и эффективного противодействия в правовом поле.

Картельные сговоры на торгах как вид картельного сговора в целом являются одним из наиболее часто встречаемых нарушений антимонопольного законодательства.

Изучению данного негативного явления посвящены работы специалистов различных научных специальностей в области юриспруденции; в частности, это ученые в области теории права – Е.А. Исайчева, З.М. Казачкова, В.В. Мехедова, Т.В. Темякова, А.Г. Супрунов и другие.

Ученые-административисты А.Б. Агапова, А.С. Дугенца, И.М. Колодкина, П.И. Кононова, Ю.И. Мигачева, А.Ф. Ноздрачева, А.В. Разгильдеева, П.П. Серкова посвятили свои исследования вопросам административно-правового противодействия картельным сговорам.

Среди трудов представителей уголовного права и криминологии стоит указать труды А.Н. Бойцова, Е.В. Жукова, В.Т. Корниенко, С.А. Кузнецова, Е.Е. Петрова, П.Н. Репина и других.

Большое количество трудов, посвященных проблемам защиты конкуренции, относится к цивилистической науке, среди представителей которой – А.Ю. Алимов, А.Н.

¹³⁹ Интервью Андрея Тенишева изданию «ФедералПресс» 20.02.2020. [Электронный ресурс]. – Режим доступа: <https://fas.gov.ru/p/contents/2419>(Дата обращения: 15.05.2020).

¹⁴⁰ Даниловская А. В., Тенишев А. П., Об уголовной ответственности за сговоры на торгах // Актуальные проблемы российского права, № 1 (98), 2019, С. 119-131.

Несмотря на такое довольно пристальное внимание ученых-правоведов к проблеме изучения картельных сговоров, остается малоизученной проблематика соотношения различных видов юридической ответственности в вопросах противодействия правовыми средствами картельным сговорам, а также проблема изучения эффективности каждого из видов ответственности в изучаемой сфере.

Более того, на сегодняшний день отсутствует единое понимание термина «картельный сговор», и в статье делается попытка обобщить существующие мнения относительно данного негативного явления.

Есть ряд мнений относительно сущности анализируемого понятия, которые, в целом, можно обобщить в следующие:

1. картель представляет собой форму монополии как объединения некоторых крупных предприятий в какой-либо отрасли хозяйствования, которые по отдельности сохраняют свою коммерческую и производственную самостоятельность, однако осуществляют организованную совместную деятельность для регулирования производственных процессов, дающих обеспечение господствующего положения на рынке, контролирование ценовой политики и получение монопольной максимальной прибыли;
2. картель является формой монополистического соглашения между отдельными капиталистическими формами некоторой производственной отрасли, целью которой является извлечения монопольной максимальной прибыли путем регулирования объемов выпускаемой продукции и сбыта такой продукции среди участников картеля¹⁴¹;
3. картель представляет собой соглашение, которое заключается между хозяйствующими субъектами, являющимися друг для друга конкурентами ввиду осуществления продаж товаров на одном товарном рынке, или между хозяйствующими субъектами, которые приобретают товары на одном товарном рынке¹⁴².

Такие картельные соглашения заключаются как в письменной, так и в устной форме.

Есть мнение, что описанные выше положения о картелях могут распространяться на соглашения, которые заключаются и между некоммерческими организациями, но только при условии, если они осуществляют деятельность, которая приносит доход.

К признакам картельных сговоров относят такие, как сговор о цене, сговор о разделе клиентов, сговор о разделении рынков, в частности, по территориальному признаку, сговор при осуществлении торгов при размещении госзаказа.

В литературе отмечается, что картель как неправомерное соглашение между хозяйствующими субъектами друг с другом представляет собой соглашение так называемого «горизонтального типа», в то время, как сговор имеет более широкое содержание¹⁴³.

Под сговором чаще всего понимается предварительная договорённость среди нескольких участников о действиях некоторым путем в интересах данной группы против интересов иных субъектов хозяйствования.

Зачастую такой сговор имеет противоправный характер, рассматривается как носящий противозаконный характер, ущемляющий интересы как государства, так и иных лиц.

¹⁴¹ **Yakovlev A., Tkachenko A., Rodionova Y.**, Who Is Inclined to Hide the Truth: Evidence from Public Procurement // International Journal of Public Administration, pp. 1-12, 2019.

¹⁴² **Игонина Н. А.**, Противодействие сговорам на рынке закупок товаров (работ, услуг) для государственных и муниципальных нужд // Законность, № 9, 2011, С. 7-11.

¹⁴³ **Астанин А.**, Доказывание картелей. Актуальная практика антимонопольных органов // Юрист компании, 2014, № 9, С. 46-51.

Таким образом, если говорить о возможности применения описанного для антиконкурентных сговоров, то важно отметить, что к сговорам относятся не только картели, но и соглашения коррупционной направленности (направленные на согласованные действия, в основе которых лежит коррупционная договоренность) между, с одной стороны, хозяйствующими субъектами, а с другой - органами государственной власти или местного самоуправления.

Также второй стороной могут выступать государственные, муниципальные заказчики. Последний вариант сговоров получил название «по вертикали».

Для выявления, пресечения и расследования сговоров важно понимать, какие признаки могут свидетельствовать о наличии такого антиконкурентного соглашения.

Далее речь пойдет о характерных признаках сговоров в процессе размещения государственных заказов. Заметим, что перечисленные признаки могут встречаться или единично, или в совокупности, или в разных совокупных вариациях.

Итак, признаки, характеризующие сговоры «по вертикали», а именно между заказчиком и поставщиком:

- государственный заказ находится на стадии планирования, однако по нему уже есть подтвержденные факты о том, что начаты работы, то есть до начала проведения самих торгов;

- наличие очевидных нарушений, которые явно свидетельствуют о вытеснении с рынка одних участников в пользу других, а также создание для последних таких благоприятных условий, которые бы обеспечили их допуск для участия в государственных закупках;

- создание юридических лиц для участия в конкретном государственном заказе, которые, как правило, после его завершения ликвидируются (так называемые «фирмы-однодневки»);

- включение таких детальных условий в конкурсную документацию, которым соответствует только одно конкретное юридическое лицо-поставщик;

- существование таких отношений между государственным заказчиком и участником, который подает заявку на участие в торгах, свидетельствующих о связанности (аффилированности) между ними;

- внесение изменений в условия условия контракта (как государственного, так и муниципального) после уже их заключения в нарушение законодательства о закупках;

- данный признак несколько схож с указанным выше и заключается в том, что в конкурсную документацию включаются дополнительные, не предусмотренных законодательством, требования, которые касаются участников размещения заказа¹⁴⁴.

Не менее важно знать о признаках картельных сговоров, или сговоров «по горизонтали».

Их выявление характеризуется повышенной сложностью.

Как уже было отмечено выше, картельные сговоры заключаются как устно, так и письменно между хозяйствующими субъектами.

Зачастую это устные формы соглашений, потому их установление вызывает огромные сложности для правоохранительных и антимонопольных органов¹⁴⁵.

Однако, все же есть ряд признаков, по которым прямо или косвенно можно установить наличие такого сговора при запросе котировок и при проведении торгов:

¹⁴⁴ **Lorentziadis P. L.**, Competitive bidding in asymmetric multidimensional public procurement // European Journal of Operational Research, vol. 282 (1), 2020, pp. 211-220.

¹⁴⁵ **Ottou J. A., Baiden B. K., Nani G.**, Gaps in public procurement records management // International Journal of Procurement Management, vol. 12(5), pp. 493-517, 2019.

– осуществление подкупа претендентов, направленный на отказ от участия/победы в государственных закупках – таким образом, обеспечивается формальное присутствие других участников, однако они ведут себя пассивно, чем и обеспечивается победа недобросовестного участника;

– создание юридического лица, которое в действительности не осуществляет никакой хозяйственной деятельности и которое ликвидируется вскоре после достижения цели его создания, то есть участия в торгах и победы на них.

Таким образом создается видимость конкуренции.

В числе признаков, свидетельствующих о наличии в действиях участников торгов антиконкурентного соглашения, называются:

причинная связь между поведением сбрасывающих цену хозяйствующих субъектов и неучастием в торгах отдельных претендентов;

жалобы от участников торгов на действия членов предполагаемого картеля;

умысел в действиях по непредставлению полного пакета документов, рассматриваемых на втором этапе аукциона;

бездействие других участников торгов и заключение субподрядных договоров с отказавшимися участниками¹⁴⁶.

Картельные сговоры имеют такие негативные последствия, как непоступление новых и более качественных товаров; уменьшение ассортимента товаров; негативное влияние на развитие предприятий, отсутствие новых компаний на рынке, недоверие общественности к рыночной экономике и государственным институтам, призванным регулировать деятельность в сфере обеспечения конкуренции.

Также среди негативных последствий отмечают повышенные цены на товары и услуги, уменьшение объема сделок, уменьшение общего выигрыша покупателей, понижение благосостояния в общем.

Отдельно стоит сказать об уничтожении соревновательного конкурентного здорового духа между хозяйствующими субъектами, что приводит к сверхприбылям отдельных участников картелей, а также ущемляет интересы потребителей в частности.

Система юридической ответственности за картели в сфере государственных закупок.

Выявление и пресечение деятельности предприятий, участвующих в картельных соглашениях, является первоочередной задачей антимонопольных и правоохранительных органов любого государства.

Каждое государство осуществляет такую деятельность исходя из собственной внутренней политики противодействия анализируемым видам нарушений в зависимости от регулирования экономических и рыночных процессов по защите от картелей. Указанными факторами определяются и правовые средства борьбы с картельными антиконкурентными соглашениями.

Например, в странах ЕС предпочтение отдается более широкому применению мер административно-правового характера в борьбе с картелями. В то время, как в США решающая роль отведена уголовно-правовому воздействию и судебным органам.

В Российской Федерации законодательство предусматривает такие виды юридической ответственности за картельные соглашения, как гражданско-правовая, административная и уголовная.

Гражданско-правовая ответственность. Данный вид ответственности предполагает возможность возмещения в частном порядке ущерба и убытков, которые были причинены

¹⁴⁶ **Малютин О. А.**, Признаки картельных соглашений при заключении контрактов для государственных и муниципальных нужд // Вестник Нижегородской правовой академии, №11, 2016, С. 68-71.

или наступили в результате картельного сговора путем предъявления к участникам картелей гражданских исков.

На наш взгляд, сложность при возмещении такого ущерба будет состоять в необходимости доказывания связи между тем, что был картельный сговор и что именно в его результате был причинен вред или упущена выгода.

Еще одним сложным вопросом по таким делам является доказывание суммы ущерба и правила его расчета.

Административная ответственность. Административная ответственность по российскому законодательству за картельные антиконкурентные соглашения установлена в виде штрафов для юридических лиц, а также в виде штрафов и дисквалификации для физических лиц.

Считаем положительным аспект, когда административная ответственность становится более персонализированной. Наложение больших штрафов на юридических лиц, конечно же, имеет важное значение, однако все решения принимаются конкретными должностными лицами, потому и перспективы быть лично привлеченными к ответственности, на наш взгляд, имеют важное значение для борьбы с картельными сговорами.

Также отметим положительный фактор в борьбе с картельными сговорами наличие в административном законодательстве положения об освобождении от ответственности лица, которое первым выполнит требования:

- на момент обращения антимонопольные органы не были информированы о нарушениях и не обладали документами, это подтверждающими;
- непосредственно заявитель отказался от принятия участия или от продолжения участия в картельном сговоре;
- представленные заявителем данные и документы достаточны для установления и подтверждения факта антиконкурентного нарушения.

Однако, по мнению Тенишева А.П., административная ответственность с многомиллионными штрафами не является эффективным механизмом противодействия картельным сговорам, поскольку «...штрафы провоцируют компании на новые сговоры. Мы поймали картель на торгах, оштрафовали участников на сумму более 15 млн рублей. Через два года ловим опять их же, но масштабы уже больше. Что их в прошлый раз не остановило? Нарушители говорят: а ваши штрафы отрабатывать надо»¹⁴⁷. Поэтому противозаконная деятельность приобрела большие размах в сравнении с первоначально выявленными нарушениями.

Уголовная ответственность является наиболее суровым видом юридической ответственности.

В соответствии с российским уголовным законодательством ответственность наступает за ограничение конкуренции, под которым понимается заключение между хозяйствующими субъектами-конкурентами ограничивающего конкуренцию соглашения (картеля), запрещенного в соответствии с антимонопольным законодательством Российской Федерации.

Деяние для наступления уголовной ответственности должно причинить крупный ущерб гражданам, организациям или государству либо повлечь извлечение дохода в крупном размере. Доходом в крупном размере понимается доход, сумма которого превышает пятьдесят миллионов рублей, под крупным ущербом понимается ущерб, превышающий десять миллионов рублей.

¹⁴⁷ Интервью Андрея Тенишева изданию «ФедералПресс» 20.02.2020. [Электронный ресурс]. – Режим доступа: <https://fas.gov.ru/p/contents/2419> (Дата обращения: 15.05.2020).

Авторов несколько удивляет несистемный подход законодателя, поскольку такие деяния наказываются штрафом в размере от трехсот тысяч до пятисот тысяч рублей или в размере заработной платы или иного дохода осужденного за период от одного года до двух лет (или альтернативно принудительными работами на срок до трех лет с лишением права занимать определенные должности или заниматься определенной деятельностью на срок до одного года или без такового, либо лишением свободы на срок до трех лет с лишением права занимать определенные должности или заниматься определенной деятельностью до одного года либо без такового)¹⁴⁸.

Подчеркнем, что за деяния, повлекшие ущерб на сумму более 10 миллионов рублей (извлечение дохода свыше 50 миллионов рублей), может быть назначено наказание в виде штрафа на сумму до полумиллиона рублей. Очевидно, такая ситуация требует законодательной коррекции в сторону ужесточения санкции.

О нарушении принципа системности в борьбе с картельными сговорами, на наш взгляд, свидетельствует и тот факт, что в рамках административной ответственности на виновных лиц налагаются намного более суровые штрафы, нежели предусмотренные уголовным законом.

Отягчающими ответственность за картельный сговор являются такие признаки: совершенные лицом с использованием своего служебного положения; сопряженные с уничтожением или повреждением чужого имущества либо с угрозой его уничтожения или повреждения, при отсутствии признаков вымогательства; причинившие особо крупный ущерб либо повлекшие извлечение дохода в особо крупном размере.

Под доходом в особо крупном размере подразумевается сумма, превышающая двести пятьдесят миллионов рублей, особо крупным ущербом – превышающий тридцать миллионов рублей.

Особо квалифицированным признаком является применение насилия или угроза его применения.

Считаем положительным для выявления и раскрытия картельных уголовно-наказуемых сговоров наличие в законодательстве нормы об освобождении от уголовной ответственности лица, которое является участником картеля.

Освобождение от уголовной ответственности возможно при выполнении таких условий совокупно: способствование раскрытию преступления; возмещение причиненного ущерба гражданам, организациям или государству или перечисление в федеральный бюджет дохода, который был получен в результате преступных действий; отсутствие в деянии признаков иного состава преступления.

Подводя промежуточные итоги, отметим, что законодательство, направленное на борьбу с картелями, несовершенно.

На наш взгляд, совершенствование антимонопольного законодательства и законодательства о контрактной системе в целях противодействия картелям должно быть синхронизировано, что позволит избежать неоднозначности в токовании и применении норм права¹⁴⁹.

Отметим, что споры об эффективности норм законодательства, направленных на борьбу с картелями, ведутся до сих пор.

Важная роль в определении признаков картелей при заключении государственных контрактов отводится судебной практике, которая на сегодняшний день только формируется, вырабатывая подходы к определению признаков картельных соглашений.

¹⁴⁸ **Хлыстова Н. Б.**, Эффективность уголовно-правовых санкций и сингулярность уголовного права // Вестник Костромского государственного университета, № 26 (1), 2020, С. 195-198.

¹⁴⁹ **Хлыстова Н. Б.**, Поощрительные санкции в механизме уголовно-правового воздействия: анализ судебной практики // Образование и право, 2019, № 12, С. 241-246.

Процедура доказывания картельного соглашения нуждается в дальнейшем совершенствовании, поскольку для установления антиконкурентного соглашения важно провести ряд, как правило, косвенных доказательств, проводя сопоставление каждого с другими, не осуществляя поиск прямого доказательства, поскольку зачастую этого просто невозможно сделать.

Антимонопольные органы разясняют важные особенности выявления и доказывания картельных соглашений и согласованных действий на товарных рынках, в том числе на торгах.

Отмечается, что доказывание, в том числе и картелей на торгах, основывается не только на прямых, но и на совокупности косвенных доказательств.

Результатом доказывания может стать совокупность косвенных признаков соглашения (согласованных действий), что может определить исход дела.

Однако судебское усмотрение остается на сегодняшний день решающим фактором при оценке доказательств, когда акцентируется внимание на необходимости поиска прямых доказательств и непринятие косвенных.

Подводя итоги вышесказанному отметим, что картели продолжают существовать и затрагивают практически все сферы экономики, в том числе и систему контрактных закупок для государственных и муниципальных нужд. Указанное обстоятельство, с одной стороны, логичная закономерность, с другой – нарушение, затрагивающее в первую очередь бюджетную сферу, где денежные средства распределяются, как правило, через торги.

Основными направлениями правового регулирования в настоящее время можно выделить следующие: смягчение уголовного преследования, повышение минимального порога ущерба как основания криминализации, что положительно может отразиться особенно на развитии малого бизнеса с учетом рисков; более широкое применение норм административно-правового воздействия как на юридических лиц, так и в отношении конкретных должностных лиц; законодательное закрепление стимулирования позитивного поведения лица, которое стало участником картельного сговора при условии выполнения им ряда обязательных требований.

Установлены случаи законодательного просчета при формулировании санкции за уголовно-наказуемое ограничение конкуренции, поскольку сумма ущерба и полученного дохода в десятки раз превышает сумму штрафа как уголовного наказания за его совершение.

Ситуация, которая сложилась, требует скорейшего решения путем внесения в уголовное законодательство изменений в части адекватного отражения степени общественной опасности ограничения конкуренции, что в целом, на наш взгляд, будет только способствовать системной борьбе с картелями. В том числе и в сфере государственных закупок.

ՆԱԴԵԺԴԱ ԽԼԻՍՏՈՎԱ

Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության Դոնեցկի ներքին գործերի ակադեմիայի ՆԳՆ քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի վարիչ, Արդարադատության Համառոտաստանյան պետական համալսարանի (Դուսաստանի արդարադատության նախարարության ՀՀԿ) քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ղեկավար, իրավաբանական գիտությունների թեկնածու, ք. Դոնեցկ, Դոնեցկի Ժողովրդական Հանրապետություն

Հոդվածի նպատակն է վերլուծել «կարտելային համաձայնությունների» հասկացությունը, որի էությունն է կազմում մենաշնորհի և մրցակցության սահմանափակմանն ուղղված համատեղ հակաիրավական գործողությունների մասին համաձայնագիրը: Նաև որպես նպատակ է դրվում կարտելային համաձայնությունների համար իրավական պատասխանատվության ուսումնասիրությունը: Ներկայացվում է գրականության մեջ ամկա կարծիքների վերլուծությունը, ինչպես նաև տրվում է կարտելային համաձայնությունների դասակարգումը: Ուշադրություն է դարձվում համաձայնությունների «հորիզոնական» և «ուղղահայաց» բաժանման լայն տարածմանը: Տրվում են համաձայնությունների յուրաքանչյուր տեսակին բնորոշ հատկանիշերը: Նշվում են «հորիզոնական» համաձայնությունների բացահայտման, հետաքննության և ապացուցման հատուկ բարդությունը, որոնք կնքվում են սակարկությունների մասնակիցների միջև, այդ թվում՝ պետական գնումների ոլորտում:

Հետազոտության մեջ կիրառվել են վերլուծության մեթոդները (պետական գնումների ոլորտում կարտելային համաձայնությունների՝ որպես մրցակցության սահմանափակմանն ուղղված հանցագործության ընդհանուր հատկությունների ուսումնասիրման ժամանակ), սինթեզը (մեկ ամբողջության մեջ մասերի, հատկությունների միավորման դեպքում, հարաբերությունները, որոնք արդեն ընդգրկված և ուսումնասիրված են կարտելային համաձայնությունների վերլուծության գործընթացում), համեմատական-իրավական հետազոտության մեթոդը (կարտելային համաձայնությունների համար իրավաբանական պատասխանատվության տեսակների համեմատական-իրավական վերլուծություն իրականացնելիս), ինչպես նաև նորմատիվ-դոգմատիկ մեթոդը (օգտագործվել է նորմատիվ-իրավական նյութի ուսումնասիրման ժամանակ):

Վերլուծության արդյունքներով եզրակացություն է արվել կարտելային համաձայնությունների վրա անհամակարգային ու անհետևողական իրավական ազդեցության, ժամանակակից իրավաբանական գործիքակազմում ներքին հակասությունների վերաբերյալ, որոնք բացասական ազդեցություն ունեն պետական գնումների իրականացման ժամանակ կարտելների դեմ պայքարում: Նշվում է այն իրավիճակը, երբ վարչաիրավական ազդեցության միջոցներն ավելի խիստ են, քան քրեական պատիժը՝ մասնավորապես տուգանքի տեսքով: Եզրակացություն է արվում մրցակցության սահմանափակման մեջ մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին:

Հիմնաբառեր՝ *կարտելային համաձայնություն, հակամենաշնորհային օրենսդրություն, պետական գնումներ, գործարք, կարտելների դեմ պայքար, անբարեխիղճ մրցակցություն, մրցակցության սահմանափակում, պայմանագիր, կարտել, առևտուր:*

NADEZHDA KHLYSTOVA

*Ministry of Internal Affairs of the Donetsk People's Republic, Donetsk Academy of Internal Affairs, Department of Criminal Law and Criminology, Head,
Department of Criminal Law and Criminology, Doctoral Student;
All-Russian State University of Justice,
(RPA of the Ministry of Justice of Russia), Ph.D in law,
Donetsk, Donetsk People's Republic*

The purpose of the article is to analyze the concept of "cartel agreements", the essence of which is an agreement on joint illegal actions aimed at monopolization and restricting competition. Also, the goal is to study the legal responsibility for cartel agreements. An analysis of opinions in the literature and a classification of cartel agreements are given. Attention is focused on the widespread division of "horizontal" and "vertical" collusion. Signs of each type of collusion are given. It is particularly difficult to detect, investigate and prove horizontal collusion between bidders, including in the field of public procurement.

The study used methods of analysis (when studying the general properties of cartel collusions in the field of public procurement as a crime aimed at restricting competition), synthesis (when combining parts, properties, relationships already identified and studied in the analysis of cartel collusions), comparative legal research (when conducting a comparative legal analysis of types of legal liability for cartel collusions), as well as the normative-dogmatic method (used in the study of regulatory material).

Based on the results of the analysis, it is concluded that the legal impact on cartels is unsystematic and inconsistent, and that there are internal contradictions in the modern legal tools that negatively affect the fight against cartels in public procurement. A situation is indicated in which administrative and legal measures are more severe than criminal punishment, in particular, in the form of a fine. It is concluded that there is very little criminal prosecution of those responsible for restricting competition.

Keywords: *cartel conspiracy, antitrust laws, government procurement, transaction, fight against cartels, unfair competition, restriction of competition, contract, cartel, bidding.*



ՄԱՔՐԱՎԱՆՔԻ՝ 1259 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՀՏԴ 7.033

ԳԵՂԱՄ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և հաղորդակցության մեդիայի վերլուծաբան,
ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայ արվեստի պատմության և
տեսության ամբիոնի ասպիրանտ,
ք.Յրավդան, Հայաստանի Հանրապետություն
gegham.asatryan@parliament.am

Հոդվածի հիմնական նպատակն է ցույց տալ Մաքրավանքի՝ 1259 թ-ի երկու խաչքարերի եզակիությունը, որոնք, ստեղծված լինելով միևնույն թվականին նույն պատվիրատուի պատվերով, կողք կողքի կանգնեցված լինելով մեկ պատվանդանի վրա և ունենալով շարունակական արձանագրություն, իրենց վրա կրում են պատկերագրական եզակի երևույթ՝ խաչատակի աստիճանների ու վարդյակի միաժամանակյա առկայությունը:

Մեր խնդիրն է ցույց տալ խաչատակի աստիճանների և վարդյակի՝ իբրև խաչքարային հորինվածքի բաղադրիչների ի հայտ գալու շրջանը խաչքարային արվեստում, դրանց կիրառությունները և իրար բացառող բաղադրիչներ լինելը:

Հետապոտությունը հիմնականում իրականացվել է վերլուծական-համադրական մեթոդի կիրառմամբ՝ փաստերի վերհանում ու հավաքագրում, վերլուծում ու ամփոփում:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ թեև 9-11-րդ դդ. որոշ անցումային տարբերակներում ականատես ենք լինում միևնույն խաչքարի վրա նշված երկու բաղադրիչների առկայությանը, այդուամենայնիվ, սկսած 12-րդ դարից՝ դրանց տեղը հստակորեն ճշգրտվում է. որտեղ պատկերվում է վարդյակ, բացակայում են աստիճանները, և հակառակը, սակայն այլ է խնդրո առարկա խաչքարերի դեպքում, ինչը վկայում է Մաքրավանքի վարպետների կատարողական բարձր վարպետության մասին:

Հիմնաբառեր՝ Մաքրավանք, 1259 թ. խաչքարեր, խաչատակի վարդեր, վարդյակի առաջին պատկերում, աստիճաններ, խաչքարային հորինվածքի՝ իրար բացառող բաղադրիչներ:

Մուտք

ՀՀ Կոտայքի մարզկենտրոն Յրավդան քաղաքի հյուսիս-արևմուտքում գտնվող Մաքրավանքի համալիրի ողջ տարածքում կան տարբեր դարերի և պահպանվածության տարբեր աստիճան ունեցող բազմաթիվ խաչքարեր: Դրանցից վաղ շրջանի՝ 9-11-րդ դդ.

* Հոդվածը ներկայացվել է 28.04.2020թ., գրախոսվել՝ 07.05.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

խաչքարերին արդեն անդրադարձել ենք հրատարակված ուսումնասիրությամբ¹⁵⁰: Այդ աշխատանքում մասամբ անդրադարձել ենք խաչքարային հորինվածքի կարևոր բաղադրիչներ վարդյակի ու խաչատակի աստիճանների հարցին՝ խոսելով այն մասին, թե որքանով էր 11-րդ դարում Մաքրավանքում վարդյակի պատկերման ավանդույթը ձևավորված¹⁵¹: Իսկ սույն հետազոտության գլխավոր նպատակը դրան հաջորդող շրջանի՝ 1259 թ.-ի երկու խաչքարերի հորինվածքային առանձնահատկություններին անդրադառնալն է: Նշված խաչքարերի օրինակով կխոսենք մի յուրահատուկ դեպքի մասին՝ քննարկման առարկա դարձնելով դրանց խաչատակի զարդերը՝ վարդյակն ու աստիճանները: Կողք կողքի դրված այս խաչքարերը կանգնեցված են բարձր պատվանդանի վրա՝ համալիրի վաղ շրջանի կառույցի՝ փոքրիկ միանավ եկեղեցու դիմաց: Խաչքարերը թվակիր են, ինչի մասին իմանում ենք արձանագրությունից: Խաչքարերի շարունակական արձանագրությունը հետևյալն է՝ «Թ Վ Ի Ս Չ Ը Ե Ս Ա Ն Դ Ը Ի Ա Ս Յ Ա Յ Ը Ը Ր Ս Ո Ր Կ Ա Ն Կ Ն Ե Յ Ի Զ Խ Ա Չ Ս Ի Բ Ա Ր Ե Խ Ո Ս Ո Ի Թ Ե Ն Յ Ո Գ Ո Յ Ի Ս Ո Ե Ե Դ Բ Ո Ր Դ...»: Դրանցից երևում է, որ աշխատանքները կանգնեցվել են միևնույն թվականին հայր Անդրեասի կողմից: Արձանագրությունը սկսում է ծախակողմյան խաչքարի խաչատակի աստիճանների ստորին հատվածից, իջնում է ստորին եզրագոտի և շարունակվում մյուս խաչքարի նույն եզրագոտու հատվածում (սկ. 1): Խաչատակի հատվածից բացի մնացածը բավականին նման են երկու հորինվածքներում էլ: Երկու դեպքում էլ արմավազարդերը պսակվում են խաչակիր ձեռքերով: Խաչի վերնամասում նռներ են, որոնք երկրորդ խաչքարում կտրված են: Զիվերը փոքր-ինչ առաջ եկած են և զարդարված հյուսածո քանդակներով: Այս ստեղծագործությունները հետաքրքրական են նրանով, որ կանգնեցված լինելով նույն թվականին, միևնույն պատվիրատուի պատվերով և, ըստ ամենայնի, նույն վարպետի ձեռամբ, ունենալով շարունակական արձանագրություն՝ կրում են խաչքարային հորինվածքի՝ կարելի է ասել միմյանց բացառող երկու այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ աստիճաններն ու վարդյակը (սկ. 1ա): Ճիշտ է, աստիճանները ծախ, իսկ վարդյակը աջ կողմի խաչքարի բաղադրիչ մասերն են, այդուամենայնիվ կարծում ենք՝ դրանք կարելի է դիտարկել իբրև արվեստի մեկ ստեղծագործություն, որի ոչ միայն տեխնիկական, այլև իմաստաբանական ու պատկերագրական ամբողջականության մասին կխոսենք ստորև: Ուստի սույն աշխատանքում կխոսենք խաչատակի զարդեր աստիճանների ու վարդյակի՝ իբրև խաչային հորինվածքի կարևորագույն բաղադրիչների երևան գալու, զարգացման և իրենց կայուն տեղը զբաղեցնելու մասին՝ փորձելով այլ օրինակներով ցույց տալ, որ Մաքրավանքում հանդիպող երևույթը բավականին եզակի դեպք է խաչքարային արվեստի զարգացման համատեքստում:

**1.Վարդյակը և աստիճանները.
ծագումը, առաջին պատկերումները, հետագա զարգացումը**

Իբրև կենտրոնական խաչի հենարաններ՝ աստիճանները, խաչատակի եռանկյունին և որոշ այլ զարդեր պատկերվում են դեռ 9-10-րդ դարերից: Այդ դարերի որոշ օրինակներում առկա է խաչատակի եռանկյունին, չնայած հարկ է արձանագրել, որ այն հետագայում լայն տարածում չգտավ: Այդպես է նաև խաչատակի աստիճանների պարագայում: Դրանց վաղ պատկերումները ևս վերաբերում են 9-10-րդ դարերին: Այդպիսիներից են, օրինակ, Մուղղու 986 թ. (սկ. 2), Վարսերի 995 թ. (սկ. 3) և մի քանի

¹⁵⁰ Տե՛ս Ասատրյան Գ., 9-11-րդ դդ. խաչքարերը Մաքրավանքում, «ԷԿ» հանդես, N 2 (62), ապրիլ-հունիս, Ե., 2018, էջ 155-164:
¹⁵¹ Նույն տեղում, էջ 160:

այլ խաչքարեր¹⁵², որտեղ աստիճանները կարծես բավականին կայուն տեղ են զբաղեցնում՝ առաջին դեպքում անգամ սփռվելով բավականին լայնությամբ:

Խաչատակի զարդերից վարդյակը բավականին ուշ է կայուն տեղ զբաղեցնում խաչքարային հորինվածքում: Դրա առաջին լիարժեք պատկերումները Խծկոնքի 1031 թ.-ի (Նկ. 4) և Ցաղաց Զարի 1041 թ.-ի խաչքարերում են հանդիպում (Նկ. 5, 6): Մինչ այդ՝ 9-10-րդ դդ. որոշ հորինվածքներում, վարպետները կարծես դեռ ճշգրտում էին խաչատակի զարդերի՝ վարդյակի, աստիճանաձև պատվանդանի և ուղղաձիգ արմավազարդի պատկերագրական փոխահարաբերությունների հարցը: Եթե առաջին վարդյակները դեռ պարզապես հյուսածո երկրաչափական զարդերով էին կազմված, ապա 13-րդ դ. կեսերից ի հայտ է գալիս բուսական մոտիվներով կազմված վարդյակը: Հորինվածքում վարդյակը բոլորովին ինքնուրունություն զրուսորում է միայն 13-րդ դ. վերջից, երբ ելնդավոր գլանիկով անջատվում է խորանից և արմավազարդից: Նույն ժամանակահատվածում այն ստանում է նաև որոշակի ուռուցիկություն¹⁵³:

Խաչքարային հորինվածքներում բավականին հետաքրքրական է աստիճանաձև պատվանդանի և հետագայում դրանից դեպի վարդյակ անցումային պատկերների տարբերակման հարցը: Նախ, ինչպես եզակի են այն օրինակները, որտեղ կեստորոնական խաչը չի հենվում որևէ հիմքի կամ հենարանի վրա¹⁵⁴, այնպես էլ եզակի են դեպքերը, երբ միևնույն աշխատանքի վրա լինում են և՛ աստիճան, և՛ վարդյակ: Եղած օրինակներից յուրաքանչյուրն էլ կարծես ունի իր յուրօրինակ «բացատրությունը»:

Ուսումնասիրող Յ. Պետրոսյանը, խոսելով խաչքարային հորինվածքում վարդյակի և աստիճանների մասին, նշում է, որ Գեղարքունիքում փաստված անցումային մի քանի խաչքարերում է միայն, որ վարդյակը, հետևելով վաղմիջնադարյան որոշ հորինվածքների, դրվում է հենց աստիճանաձև պատվանդանի վրա: Սակայն վարդյակի չափերի մեծացմանը զուգահեռ դրանք դառնում են գրեթե իրար բացառող զարդեր: «Սովորաբար, որտեղ պատկերվում է աստիճանաձև պատվանդանը, բացակայում է վարդյակը և ընդհակառակը», ընդգծում է Յ. Պետրոսյանը¹⁵⁵: Խոսելով դրանց խորհրդաբանության մասին՝ վերջինս նշում է, որ չի բացառվում այդ երկուսն էլ սկզբնապես գտնվել են Գողգոթայի խորհրդաբանությանն առնչվող դաշտում: Չնայած ավելի հավանական է, որ իբրև պատկերագրական անմիջական աղբյուր՝ աստիճաններն ունեցել են նախևառաջ վաղմիջնադարյան կոթողների աստիճանաձև խարիսխները¹⁵⁶:

Նշված երկու բաղադրիչների համատեղ առկայությամբ որոշ օրինակներ վաղ շրջանի խաչքարերում կան, որոնց մասին առանձին կիսոսենք ստորև, սակայն վարդյակի առաջին լիարժեք պատկերումներին հաջորդող շրջանից՝ 11-12-րդ դարերից, ըստ զարգացման ընդհանուր տրամաբանության՝ դրանք պետք է բացակայեին: Նույն օրինաչափությամբ այն պետք է տևեր նվազագույնը 12-14-րդ դդ. ընթացքում, քանի որ նշված ժամանակահատվածը խաչքարային արվեստի զարգացման մի յուրահատուկ շրջափուլ է, երբ ստեղծագործությունների մեծ քանակին զուգահեռ գրեթե չեն նկատվում կրկնություններ, իսկ խաչքարերը առավել անհատականացված են հանդես գալիս: Պատահական չէ, որ խոսելով այդ շրջանի մասին՝ Յ. Պետրոսյանը նշում է, որ նշյալ ժամանակահատվածի ամենամեծ ձեռքբերումը խաչքարերի բազմագործառնությունն ու անհատականացումն է, ինչը խթանեց արվեստի հոյակերտ օրինակների ընդարձակ

¹⁵² Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի հուշարձանները, Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, էջ 31:

¹⁵³ **Պետրոսյան Յ.**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Ե., «Փրինթինգո», 2008, 278-280:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 277:

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 279:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 279:

շարքի ստեղծմանը մինչև 14-րդ դարի երկրորդ քառորդը¹⁵⁷: Դատելով շարադրյալից՝ կարելի է եզրակացնել, որ նվազագույնը զարգացման այս յուրահատուկ շրջանում՝ 12-14-րդ դարերում, երբ խաչքարերի անհատականացմանը զուգահեռ առաջանում են նաև գեղարվեստական դպրոցներ¹⁵⁸, իսկ վարդյակն արդեն դրևստորվում է իբրև ինքնուրույն բաղադրիչ, զարգացման ընդհանուր օրինաչափությունից դուրս օրինակներ չպետք է պատահեին: Մասնագիտական գրականության մեջ այդ դպրոցներից Արագածոտն-Կոտայքի խաչքարերի «հրազդակյան» տիպի աշխատանքները Նշված ժամանակահատվածում բաժանվում են երկու տեսակի: Առաջին տեսակի խաչքարերին բնորոշ են առավել կոթողայնությունը և հնարավորինս պարզ հորինվածքները, երկրորդին՝ հարուստ կառուցվածքը, դեկորատիվ մոտիվները: Վերջիններս արված են կատարողական բարձր վարպետությամբ: Երկրորդ տեսակի ստեղծագործությունները, որպես կանոն, կանգնեցված են եղել ժամանակի հզոր հոգևոր կենտրոններում: Դրանցից են նաև Կոտայքում գտնվող Բջին ու Մաքրավանքը¹⁵⁹: Խնդրո առարկա խաչքարերը ևս պետք է դասել երկրորդ տեսակին: Սակայն մի փոքր այլ է այս խաչքարերի դեպքը: Մաքրավանքում վարպետները բավականին հետաքրքրական լուծում են տվել վարդյակ-աստիճաններ «հականարտությունը»՝ շարունակական արձանագրությամբ խաչքարերից մեկի վրա պատկերելով առաջինը, մյուսի վրա՝ երկրորդը: Միաժամանակ վարպետները ճշգրիտ նրբությամբ շրջանցել են աստիճանների՝ խաչքարային հորինվածքներից հետզհետե դուրս մղվելու միտումը՝ դրանց հատկացնելով բավականին աննշան տեղ: Դրանով հանդերձ՝ այս փոքրիկ նրբությունը չպետք է վրիպի հետազոտողների աչքից:

2. Նմանօրինակ այլ խաչքարերը և դրանց «հիմնավորումները»

Ինչպես նշեցինք, այնպես չէ, որ Հայաստանի տարածքում Մաքրավանքի՝ 1259 թ.-ի երկու խաչքարերը միակն են, որ ներառում են խաչքարային հորինվածքում զրեթե իրար բացառող Նշված երկու բաղադրիչները: Սակայն մասնագիտական դաշտում եղած զրեթե բոլոր օրինակները, բացառությամբ այդ երկուսի, ունեն հիմնավորման աղբյուր և ոչ թե նույնպիսի, այլ նմանօրինակ դեպքեր են: Այժմ անդրադառնանք դրանց:

Արձանագրեցինք, որ միևնույն խաչքարում աստիճանների և վարդյակի միատեղ պատկերումով սակավ օրինակներ վաղ շրջանում այդուամենայնիվ կան: Նշվեց, որ Գեղարքունիքում առկա անցումային մի քանի տարբերակներում կան դեպքեր, երբ վարդյակը վաղմիջնադարյան որոշ օրինակների նման դրվում է աստիճանների վրա: Խոսքը մասնավորապես Մաքենյաց վանքից գտնված 9-10-րդ դդ. խաչքարի մասին է, որն այժմ գտնվում է Էջմիածնում (Նկ.7): Անցումային այս տարբերակում դեռ նոր-նոր ձևավորվող փոքրիկ վարդյակը դրված է աստիճանաձև պատվանդանի վրա: Կարծում ենք՝ այս պարագայում անգամ խոսելը կայացած և ինքնուրույն ձևավորված վարդյակի մասին ավելորդ է: Նշված ժամանակաշրջանում այլ վայրերում ևս կան նմանատիպ սակավ օրինակներ: Սակայն այդ օրինակներում ոչ թե վարդյակն է դրված աստիճանների վրա, այլ աստիճանները անմիջապես խաչի հենարանն են, իսկ վարդյակը ստորին հատվածում է: Մասնավորապես խոսքը Տաթևի վանքի խաչքարերից մեկի մասին է (Նկ. 8): Քանի որ մենք եղած բոլոր օրինակները դիտարկում ենք խաչքարերի զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում, չենք կարող շրջանցել որևէ դետալ,

¹⁵⁷ Տե՛ս Պետրոսյան Յ., Խաչքար, Ե., «Չանգակ», 2015, էջ 22-23:

¹⁵⁸ Խաչքարային մշակույթում դպրոցների մասին առավել մանրամասն տե՛ս К вопросу об определении «художественной школы» в культуре хачкаров, «Հայագիտության հարցեր», Варданесова Т., Ե., 2014, N 3, էջ 126-133:

¹⁵⁹ Տե՛ս Варданесова Т., Культура Хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв., Ер., «Издельство ЕГУ», 2016, С. 115-116.

որը կարող է անգամ չնչին չափով լույս սփռել առաջ քաշված խնդրի վրա: Հետևաբար հարկ է նշել, որ այսօրինակ խաչքարերի մասին խոսելիս չենք կարող և չպետք է շրջանցել «անցումային» եզրույթը: Այդ պարագայում գործ կունենանք խաչքարերի ձևավորման վաղ շրջանի հետ, երբ վարդակը, որպես ինքնուրույն բաղադրիչ, ձևավորված չէր ու դեռևս բավականին հեռու էր իր լավագույն պատկերումների ժամանակներից: Իսկ նշված՝ «խաչատակի աստիճաններն ու վարդակը հետզհետե դարձան իրար բացառող զարդեր» միտքը բացառապես վերաբերում է այն օրինակներին, երբ վարդակի չափերը հետզհետե մեծանում են, և վերջինս դառնում է ինքնուրույն միավոր: Ուստի այս պարագայում գործ ունենք բացառապես տարբեր դեպքերի հետ:

Կան օրինակներ, որ մեկ ընդհանուր պատվանդանի վրա դրված են երկու և ավելի խաչքարեր, իսկ պատվանդանին երբեմն լինում է ընդհանուր արձանագրություն, երբեմն՝ ոչ: Նման օրինակների դեպքում տվյալ խաչքարերի մասին տեղեկություն ստանում ենք պատվանդանի արձանագրությունից: Սակայն այդ դեպքում գործ կունենանք մեկ ընդհանուր պատվանդանի վրա արված արձանագրության հետ: Պատվանդանին դրված առանձին խաչքարերի՝ ի սկզբանե այդտեղ լինելու և միևնույն վարպետի կողմից կամ պատվիրատուի պատվերով ստեղծված լինելու մասին էլ կարող ենք միայն ենթադրել: Իսկ տվյալ խաչքարերի ստեղծման ժամանակաշրջանի մասին արձանագրության բացակայության պայմաններում պատկերացում կազմում ենք միայն հորինվածքային լուծումներից: Գրեթե նման դեպք արձանագրում ենք Ծաղկաձորում: Խոսքը Կեչառիսի վանական համալիրի՝ 13-րդ դ. խաչքարերի մասին է: Այս դեպքում պատվանդանին կանգնեցված են երեք խաչքարեր (սկ. 9): Դրանցից առաջինը հորինվածքային լուծումներով հիշեցնում է Բջնիի, Մաթրավանքի և Կոտայքի մյուս շրջանների՝ խաչքարերի լիարժեք զարգացման այս փուլում կանգնեցված աշխատանքները: Այդ հորինվածքային լուծումների մեջ մտնում է նաև բավականին զարգացած և կայուն տեղ զբաղեցնող հյուսածո վարդակը: Խաչքարն արձանագրված է 1251 թվագրումով: Մյուս երկու խաչքարերը տարբերվում են սրանից և միառժամ է: Դրանց վրա բացակայում է վարդակը, և վերջինիս փոխարեն երկրորդ խաչքարում բավականին բարձր, երրորդում՝ համեմատաբար փոքր աստիճաններ են: Վերջին երկու խաչքարերի հորինվածքային լուծումներով այլ աշխատանքներ Կոտայքի տարածաշրջանում այլևս չենք տեսնում¹⁶⁰: Պատվանդանին չկա որևէ արձանագրություն:

Նշված օրինակով խաչքարերի դեպքում, եթե անգամ դրանց ստեղծման տարեթվերը համընկնեն, արձանագրությունն էլ վկայի միևնույն վարպետի ձեռքով պատրաստված լինելը, իսկ կողք կողքի դրված խաչքարերից մեկն ունենա խաչատակի աստիճան, մյուսը՝ վարդակ (սա միայն տեսականորեն ենթադրելի է, որովհետև նման համընկումներով օրինակներ համեմատյալ դեպք մեզ հայտնի չեն), անգամ համեմատական անցկացնելը հողվածում քննվող խաչքարերի հետ անհարկի է և ոչ մասնագիտական: Անգամ նման համընկումներով օրինակի առկայության դեպքում (իսկ Ծաղկաձորի խաչքարերի բերված օրինակը ցույց տվեց, որ նման համընկումները գործնականում անհնար են) գործ կունենանք երկու տարբեր իրողությունների հետ: Առաջին դեպքում կլինեն խաչքարեր, որոնցից մեկը ունի վարդակ, մյուսը՝ խաչատակի աստիճան, և կլինի կամ չի լինի ընդհանուր արձանագրություն, որը գուցե կվկայի դրանց ստեղծման շրջանի և ընդհանուր վարպետի մասին: Երկրորդ դեպքում հստակորեն կա երկու խաչքար՝ վարդակի և աստիճանի պատկերումներով, և կա մի խաչքարի վրա սկսող ու մյուսի վրա ավարտվող արձանագրություն: Հետևաբար կարծում ենք՝ նշված դեպքերը կարող են նմանության եզրեր ունենալ միայն որևէ զբոսաշրջիկի աչքին, բայց ոչ մասնագիտական դաշտում:

¹⁶⁰ Ваданесова Т., Культура Хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв., С. 117.

Նշված խաչքարերը միայն տեխնիկապես չեն մեկ ընդհանրական ստեղծագործություն. դրանց կապում է նաև պատկերագրական ու իմաստաբանական ամբողջականությունը: Կարո՞ղ է արդյոք այս խաչքարերի միայն արձանագրության շարունակականությունը վկայել նույն վարպետի ձեռքի աշխատանք կամ գաղափարապես մեկ ստեղծագործություն լինելու մասին: Կարծում ենք՝ մասամբ այո, բայց դա բավարար հիմնավորում չէ: Յետևաբար պետք է զննենք այլ մանրամասնություններ ևս: Արդեն նշեցինք, որ բացառյալ նշված խաչքարերի ստորին հատվածի՝ մյուս բոլոր պատկերագրական լուծումները երկու ստեղծագործություններում բավականին նման են: Եզրագոտիների, քիվերի, հիմնախաչի և խորանի կառուցվածքային ու ոճական-պատկերագրական նմանություններից զատ պետք է ուշադրություն դարձնել նաև խաչքարերի ընդհանուր կառուցվածքին և քարի մշակման տեխնիկային, որն այս դեպքում ևս համընկնում է: 13-րդ դ. առաջին քառորդից հետո Մաքրավանքում նկատելի են ստեղծագործություններ, որոնց խորանը կարծես միտումնավոր համեմատաբար ազատ ու անմշակ է թողնված, ինչը, սակայն, բնավ չի անդրադառնում դրանց՝ մանրանկարչական ճշգրտությամբ արված կատարողական բարձր վարպետության և այդ ստեղծագործությունների՝ վերը առանձնացված «հրազդանյան» տիպի խաչքարերի երկրորդ շարքին դասելու վրա, այն է՝ հարուստ կառուցվածք, դեկորատիվ մոտիվներ: Մաքրավանքի՝ նշված ժամանակահատվածի մի քանի ստեղծագործություններ այդ առումով կրում են ձեռագրային միևնույն կնիքը:

Մեկ այլ դեպք է ամբողջական խաչքարի կառուցվածքը: Խնդրո առարկա տարածաշրջանում նշված ժամանակահատվածի ստեղծագործություններում վարպետները խաչքարերի ստորին հատվածը ամեն կերպ փորձում են «զցնել»: Հաշվի առնելով վարդյակի լիովին ձևավորված լինելը՝ դա հիմնականում լինում է հենց վարդյակի տեսքով: 1259 թ.-ի խաչքարերի դեպքում էլ այդպես է, սակայն նկատի ունենալով արձանագրական տեքստի երկար լինելը՝ խնդիր է առաջացել այն տեղավորելու, ինչը արվել է խաչքարերից մեկի վարդյակի տեղում: Եվ որպեսզի հիմնախաչը որևէ կերպ հենարան ունենա, վարպետը տվել է հենց աստիճանների լուծումը: Հակառակ պարագայում ենթադրելի է, որ այդ դեպքում ևս կլիներ վարդյակի պատկերում:

Ուշադրություն պետք է դարձնել նաև խաչքարերի հսկայական չափերին: Ակնհայտ է, որ հատկապես խաչքարերի ծաղկման շրջանում՝ 12-14-րդ դդ., պայմանավորված տարբեր, այդ թվում՝ խաչքարն ամենայն մանրամասնությամբ հարդարելու հանգամանքով, աշխատանքների չափերը հետզհետե մեծանում են: Այն գերարտահայտվել է նշված խաչքարերի, ինչպես նաև դրանց առանձին դետալների (օրինակ՝ ընդգծված մեծ վարդյակի) դեպքում: Մի կողմից՝ այդ, մյուս կողմից՝ մեկի փոխարեն երկու առանձին խաչքարի կանգնեցումը (որքան էլ դրանք տեխնիկապես և իմաստաբանական առումով մեկ ստեղծագործություն լինեն) խոսում են նվազագույնը հույժ կարևոր պատվերի և իրադարձության մասին առնվազն այդ շրջանում պատվիրատուի և խաչագործ վարպետի համար, ինչով էլ գաղափարապես արտահայտվել է երկու խաչքարով մեկ ամբողջական ստեղծագործություն ստանալու միտքը:

Նշված ժամանակահատվածից միայն երեք-չորս դար անց նման հորինվածքի կրկնության ականատես ենք դառնում Ջուղայի խաչքարերում: Խաչատակի աստիճանների և վարդյակի միաժամանակյա պատկերումը Ջուղայի խաչքարերում դառնում է ընդգծված բնորոշ երևույթ, սակայն մեկ տարբերությամբ: Այդտեղ խոսքը ոչ թե շարունակական արձանագրություն կրող խաչքարերի և դրանց վրա նշված երկու բաղադրիչների առկայության, այլ մեկ խաչքարի վրա վարդյակի և աստիճանների

միաժամանակյա պատկերման մասին է¹⁶¹: Այդուհանդերձ, ներկա ուսումնասիրության գլխավոր նպատակը Ջուղայի խաչքարերի մասին խոսելը չէ: Ուստի Ջուղայի այդօրինակ խաչքարերին չենք անդրադառնա առանձին-առանձին՝ հաշվի առնելով թե՛ այն հանգամանքը, որ դրանք ժամանակագրորեն չեն համընկնում խնդրո առարկա խաչքարերի հետ, թե՛ այն փաստը, որ մասնագետները Ջուղայի խաչքարերը չեն դիտարկում խաչքարերի զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում:

Եզրակացություններ

Արձանագրենք, որ խաչատակի աստիճանների և վարդյակի միաժամանակյա պատկերում վաղ շրջանի խաչքարերում հանդիպում ենք, թեև ոչ մեծ քանակությամբ: Դրանք անցումային որոշ տարբերակներ են, որոնք վերաբերում են 9-11-րդ դարերին և մեծ հաշվով աղերսներ չունեն հողվածում բարձրացված հարցի հետ: Պատվանդանով և պատվանդանի վրա մեկ ընդհանուր արձանագրությամբ օրինակների դեպքում միայն տեսական հնարավորությամբ կարող է պատահել խնդրո առարկա խաչքարերի հորինվածքային առանձնահատկությունների կրկնություն, սակայն անգամ այդ պարագայում գործ կունենանք երկու տարբեր յուրահատկությունների հետ: Նվազագույնը 12-14-րդ դարերից նման հորինվածքային առանձնահատկություններով խաչքարերի մեկ այլ օրինակ մեր հետազոտության ընթացքում չկարողացանք գտնել, թեև որպես քննարկման առանցք վերցրել էինք ոչ թե նշված, այլ խաչքարերի ստեղծման ողջ՝ 9-17-րդ դարերն ընդգրկող ժամանակահատվածը:

Այսպիսով՝ պետք է արձանագրել, որ խաչքարերի զարգացման ուրույն և անհատականացված ժամանակաշրջանում՝ 13-րդ դարի կեսին, Մաթրավանքի վարպետները իրավամբ փորձել են անհատականացնել 1259 թ.-ի այս երկու հոյակերտ նմուշները՝ ընդգծված առավելություն չտալով վարդյակին կամ աստիճաններին և պարզապես մեկի վրա պատկերելով վարդյակը, մյուսի վրա՝ աստիճանները:

DISTINCTIVE FEATURES OF TWO MAKRAVANK KHACHKARS OF 1259

GEGHAM ASATRYAN

*RA National Assembly Staff, Public Relations and Communication Department,
Media Analyst; Yerevan State University, Faculty of History,
Chair of History and Theory of Armenian Art, Ph.D Student,
Hrazdan, Republic of Armenia*

The main purpose of the article is to show the uniqueness of the two khachkars of Makravank. Being created in the same year of 1259, by the order of the same customer, standing side by side on one pedestal and bearing a continuous record, they feature a unique pictorial image on them: the simultaneous presence of the stairs and the rosette.

Our task is to show the period the components of the stairs and the rosette emerged as khachkar compositions in the art of khachkar, as well as to pinpoint their application and the fact that they are mutually exclusive components.

¹⁶¹ Տե՛ս, օրինակ, **Հրայր Բազե Խաչերեան**, Խաչքար, Էջ 492, 496, 498 և այլն: Տե՛ս նաև **Ավագյան Ա.**, Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, Հատոր Ա, Ջուղա, Ե., «Գասպրինտ», 2004, նկ. 88, 89, 93, 94 և այլն:

The research was mainly carried out by the analytical-comparative method: revealing, collecting, analyzing and summarizing the facts.

The study resulted in conclusion that though we witness the existence of these two components on the same khachkar in some transitional versions of the 9-11th centuries, since the 12th century their location has been clearly adjusted, so, where the rosette is depicted, there are no stairs under the cross and vice versa. However, the example of Makravank khachkars is different. This testifies to the high performance skills of Makravank masters.

Key words: *Makravank, khackars of 1259, the decors under the cross, the first depiction of the rosette, stairs, components rejecting each other of the khachkar composition.*

КОМПОЗИЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ ДВУХ ХАЧКАРОВ МАКАРАВАНКА 1259 г.

ГЕГАМ АСАТРЯН

медиа-аналитик управления по связям с общественностью и коммуникациям аппарата Национального собрания РА; аспирант кафедры истории и теории армянского искусства факультета истории ЕГУ, г. Раздан, Республика Армения

Obviously, many Yezidis who adopted Christianity have been dissatisfied with the attitude of Yezidi priests, their mistakes, their attitude towards their responsibilities and the community of believers. Many priests failed to properly fulfill their responsibilities as religious and spiritual teachers. One of our informants pointed out: “In the Yezidi religion, people do not communicate with God and his miracles. We are closer to God in Christianity²³³.” Another informant said: “There is a principle ‘you give something to me, then I will give something to you’ in Yezidi religion, but there is another principle in Christianity. There is the principle of taking care of each other’s souls in Christianity. The spiritual sisters and brothers of our church fasted, prayed for my soul to be revived: they suffered for my soul like a mother who suffers before her child is born. I accepted Jesus to be saved. But there was no such thing in Yezidi religion, sheikhs or pir were not careful²³⁴...” Another informant mentioned: “I remember when I was a child, the pir used to come

²²³ Joseph I., Devil Worship: The Sacred Books and Traditions of the Yezidiz, Boston, R.G. Badger, 1919, pp. 153-154:

²²⁴ Açıkyıldız B., The Yezidis. The History of a Community, Culture and Religion, London, I.B.Tauris, 2010, pp. 74- 75:

²²⁵ Աբովյան Խ., Եզդիիներ // Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1958, էջ 410:

²²⁶ Ամրյան Թ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016, էջ 37:

²²⁷ Минорский В., Курды. Заметки и впечатления, Петроград, Типография В. Ф. Киршбаума, 1915, с. 24.

²²⁸ Woman, 53 years old.

²²⁹ Woman, 47 years old.

²³⁰ Yezidi religion has an oral nature, and traditionally Yezidi priests were main teachers of religion.

²³¹ Man, 42 years old.

²³² Асатрян Г., О «брате и сестре загробной жизни» в религиозных верованиях езидов // Страны и народы Ближнего и Среднего Востока, № 13, 1985, С. 262; Asatrian G., The Holy Brotherhood: The Yezidi Religious Institution of the “Brother” and the “Sister” of the Next World // Iran and the Caucasus, Vols. 3-4, 1999-2000, p. 79:

²³³ Man, 40 years old.

²³⁴ Man, 47 years old.

to our home every Spring and say: ‘Give me money and butter’. He did not tell us anything about the salvation of the soul or faith - he just came and made money for himself²³⁵.’ Every Yezidi layman family is linked to a proper family of Yezidi pirs. Those pirs are called *p’irē zik’ātē* (lit: “pir of donation” Arab. zak’āt, “donation”). They visit the homes of laymen every Spring, pray, bless the salt and are given money and gifts²³⁶.

One converted Yezidi spoke about Yezidi priests in the following way: “There were shaykhs in our village who remembered us only when somebody died or when a boy was born in somebody’s family. The sheikhs organized some rituals during burials and read prayers. After a boy was born in somebody’s family, the sheykh organized a ritual called *bisk bir’in* (lit: “to cut a bunch of hair”). Only in these cases did priests remember us²³⁷. The ritual *bisk bir’in* is held only for boys²³⁸. Family members do not cut the hair of the child till the day of the ritual. Then *the brother of hereafter* visits the family, prays and cuts a bunch of hair from the head of the child²³⁹. Family members give money and presents to the brother of hereafter. This simple ceremony symbolizes the boy’s entry into the Yezidi brotherhood²⁴⁰. Additionally, it is the duty of the brother of hereafter to read religious hymns and to hold proper rituals during burial²⁴¹.

Some Yezidis do not know about proper religious traditions, because their priests hardly talk about them. For example, one of our informants said: “I had faith in God, I believed, but I did not even know what to do, what path to follow when I have sincere faith... Christianity gave me the right path²⁴².” Another informant mentioned: “There is no idea about salvation of human soul in Yezidi religion... After I became Christian, I am convinced that Christ will forgive my sins and will save my soul on the Day of Judgment²⁴³.” As in many religions, there is the idea of the salvation of the soul, the paradise and the hell in Yezidism²⁴⁴. Many priests do not talk about this with the laymen. Thus, many people have no information about it and try to find it in other religions. There are many tales about the Day of Judgment, the savior, and the hereafter both in Yezidi oral tradition and religious hymns. One of the saints, Sharfadin (*Šarfadīn*) is considered to be the Messiah (*mahdī*) in the Yezidi religion. According to Yezidi beliefs, *Mahdi Sharfadin* will save pious people on the Day of Judgment²⁴⁵. It is mentioned in one of Yezidi religious hymns:

Awē rōžē Šarfadīn dē bita *mahdī*

Čil sālī mīh ži gurgī nātirsī. (Qawlē Šarfadīn)²⁴⁶

When Sharfadin comes as a Messiah,

The lamb will not be afraid of the wolf for forty years.

²³⁵ Woman, 75 years old.

²³⁶ Ամրյան Թ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016, էջ 78:

²³⁷ Woman, 40 years old.

²³⁸ Ամրյան Թ., Կնքելու և ձեռնադրելու ծեսերը եզդիականության մեջ // ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, № 3 (19), 2013, էջ 214:

²³⁹ Асатрян Г. О «брате и сестре загробной жизни» в религиозных верованиях езидов // Страны и народы Ближнего и Среднего Востока, № 13, 1985, С. 262-272.

²⁴⁰ Ամրյան Թ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016, էջ 184:

²⁴¹ Ամրյան Թ., նշվ. աշխ., էջ 203-210:

²⁴² Woman, 49 years old.

²⁴³ Man, 40 years old.

²⁴⁴ Arakelova V., Amrian T., The Hereafter in the Yezidi Beliefs // Iran and the Caucasus, Vol. 16.3, 2012, pp. 169-178:

²⁴⁵ Ամրյան Թ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016, էջ 226-232:

²⁴⁶ Bedelē Feqīr Hecī, Bawerī û Mîtologīya Êzdīyan, Çendeha tēkst û Vekolîn, Dihok, Hewlêr, 2002, rûp. 109.

In Armenia, many Yezidi laymen know nothing about the concept of the Day Judgment in the Yezidi religion. So it is not surprising that Yezidis who adopt Christianity are very often attracted by the image of the Messiah in the new religion.

Thus, the Yezidis who have adopted Christianity have a vague conceptualization of the Yezidi religion. Before adopting Christianity, those people lived according to the traditions and so-called unwritten rules. Their perception (պատկերացումները) of the Yezidi religion was spoiled and depreciated due to the shortcomings of some Yezidi priests. As a result, people became disappointed with the Yezidi religion. It is, therefore, not surprising that converted Yezidis have a critical attitude towards their former religion and priests.

Conclusion

Based on the study, we can conclude that the reason conversions in the Yezidi community of Armenia occur is not only the oral and non-written nature of the Yezidi religion and the active propagandistic activity of some Christian churches, but also the inconsistent and irresponsible attitude of some Yezidi priests towards the flock of Yezidi believers. It can be said that Yezidi religion in the form practiced in Armenia sometimes does not satisfy the spiritual needs of community members. Some people try to find answers to their questions in other religions. Such conversions, however, can not change the religious perception of the Yezidis who are loyal to the Yezidi religion. Converted people do not add a new element to the religious perceptions of the community, they just stop being carriers of that religious world outlook. Nevertheless, **among converted** Yezidis another kind of identity can be formed where national self-consciousness becomes more important than Yezidi religious self-identification.

ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԶԻԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԹԵՐԵԶԱ ԱՄՐՅԱԼ

*Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի
իրանագիտության ամբիոնի դասախոս,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի եզդիների շրջանում տարածվող կրոնափոխությունը: Հոդվածում ներկայացվում են Հայաստանի եզդիների շրջանում կրոնափոխությանը նպաստող հիմնական գործոնները և կրոնափոխության հետևանքները: Չնայած այն հանգամանքին, որ ավանդաբար կրոնափոխությունը բնորոշ չի եղել եզդիական համայնքին, վերջին տասնամյակներին որոշ եզդիներ հրաժարվում են իրենց կրոնից և ընդունում են քրիստոնեություն: Կրոնափոխվածները հիմնականում հոգեգալստականներ են, Ավետարանական և Մկրտական եկեղեցիների հարանվանությունների հետևորդներ, կան նաև Եհովայի վկաներ:

Հոդվածը հիմնված է եզդիական կրոնական աշխարհայացքի համապարփակ ուսումնասիրության և կրոնափոխ եղած եզդիների շրջանում անցկացված անանուն հարցումների վրա: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են որակական հետազոտությունների և համեմատական մեթոդները:

Հայաստանում եզդիների շրջանում կրոնափոխության երևույթի ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ ժամանակակից եզդիներից շատերը գաղափար չունեն իրենց կրոնի մասին: Դրա պատճառը ոչ միայն եզդիականության բանավոր, ոչ կանոնիկ բնույթն է, այլև որոշ հոգևորականների անտարբեր և չհամակարգված վերաբերմունքն իրենց կրոնական պարտականությունների ու

համայնքի նկատմամբ: Թեև կրոնափոխությունը չի ազդում եզդիական կրոնիս հավատարիմ եզդիների կրոնական աշխարհայացքի վրա, այնուամենայնիվ կարող է կրոնափոխվածների շրջանում ձևավորել նոր տիպի ինքնություն:

Հիմնաբառեր՝ *եզդի, կրոն, եկեղեցի, հոգևորական, կրոնափոխություն, դավանափոխ, եզդիականություն, քրիստոնեություն:*

ПРОЗЕЛИТИЗМ СРЕДИ ЕЗИДОВ АРМЕНИИ

ТЕРЕЗА АМРЯН

*преподаватель кафедры иранистики факультета востоковедения
Ереванского государственного университета,
кандидат исторических наук, доцент,
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение прозелитизма среди езидов Армении. В статье представлены факторы, способствовавшие смене вероисповедания езидов Армении и последствия этого процесса. Хотя, как правило, прозелитизм не был характерен для езидской общины, тем не менее, на протяжении последних десятилетий некоторые езиды отказались от своей религии и приняли христианство. Новообращенные становятся в основном пятидесятниками, последователями разных конфессий евангелистских и баптистских общин, а некоторые из них – Свидетелями Иеговы.

Статья основана на всестороннем исследовании религиозного мировоззрения езидов и на анонимном опросе среди неофитов. В ходе исследования были использованы качественные и сравнительные методы анализа.

Изучение феномена прозелитизма среди езидов в Армении ясно показывает, что многие современные езиды не имеют представления о своей религии из-за устного, неканонического характера езидизма, а также непоследовательного и несистематического отношения некоторых священников к своим религиозным обязанностям и к общине. Хотя прозелитизм не влияет на религиозное мировоззрение езидов – последователей езидизма, однако он может создать новый тип идентичности среди новообращенных.

Ключевые слова: *езид, религия, церковь, священник, прозелитизм, новообращенный, езидизм, христианство.*



**ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ***

ՅՏԴ 811.112.2

ԼՈՒՍԻՆԵ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

*Երևանի Բրյուսովի անվան պետական համալսարանի
մանկավարժության և լեզուների մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ,
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
Isoghomyan@mail.ru*

Հոդվածի նպատակն է քննության առնել գերմաներեն երկխոսությունների գործաբանական առանձնահատկությունները հաղորդակցային իրադրություններում՝ «Գերմաներենը որպես օտար լեզու» դասագրքերի (Beste Freunde A2. 1/A2.2, Schritte Plus neu A2) երկխոսությունների հաշվառմամբ:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել հիմնախնդրի դրվածքը մեթոդական գրականությունում, վերլուծել դասագրքերում առկա երկխոսությունները տեսական դրույթների հիման վրա, ներկայացնել գերմաներեն երկխոսությունների հաղորդակցական-գործաբանական ռապմավարությունները:

Կիրառված մեթոդներն են՝ վերացարկում, համեմատություն, վերլուծություն, դեդուկցիա:

Հոդվածում ներկայացվում են գերմաներեն երկխոսություններին ներունակ խոսքային ակտերի գործառական առանձնահատկությունները խոսության կապակցվածության, հասցեատեր-հասցեագրող փոխապդեցության, թեմայի պարզացման տեսանկյունից:

Հաղորդակցական-գործաբանական կոմպետենցիայի շրջանակներում քննարկվում են երկխոսության մասնակիցների խոսքի փոխանակման ռապմավարությունները՝ վեր հանելով ակտիվ ու պասսիվ ունկնդիրների գործողությունները: Երկխոսությունների կառուցվածքային վերլուծության արդյունքում վերհանվում ու համակարգվում են նաև ապդակ-արծագանք հարաբերակցության տարաբնույթ դրսևորումները, ընդգծվում տարբեր հաղորդակցային նպատակներ արտահայտող նշույթների՝ որպես պրուցակապմ գործիքակապմ գործառույթները:

Հիմնաբառեր՝ հաղորդակցական-գործաբանական կոմպետենցիա, երկխոսության կառուցվածք, խոսույթ, խոսության նշույթ, խոսքային ակտ, ունկնդրման ռապմավարություն:

Օտար լեզվի ժամանակակից դասին առօրյա իրավիճակներում պատշաճ, հնարավորինս ճշգրիտ հաղորդակցվելու և խոսքը հասկանալու կարողությունը

* Հոդվածը ներկայացվել է 04.03.2020թ., գրախոսվել՝ 12.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

ժամանակի հրամայականն է: Ինչպես Ֆորսթերն է նշում, օտար լեզվի ուսումնառության ժամանակ սովորողները պետք է զարգացնեն բանավոր հաղորդակցության այնպիսի հմտություններ, որպեսզի զրուցակցից, զրույցի վայրից և ժամանակից կախյալ կարողանան հաղորդակցվել օտար լեզվով, այն է՝ օտար լեզվով զրույց վարել²⁴⁷: Երկխոսնի պնդմամբ՝ երկխոսությունը բոլոր տեսակի հաղորդակցությունների հիմքն է, քանի որ երկխոսությունում ընկալողական ու վերարտադրողական իրազեկությունները միահյուսվում են²⁴⁸:

Ակներև է, որ երկխոսության արդյունավետ իրագործումը պայմանավորված է լեզվական կոմպետենցիայի առանձին ասպեկտների (քերականություն, բառապաշար, հնչյունաբանություն) և հարալեզվական գիտելիքների (թեմայի վերաբերյալ գիտելիքներ, խոսության գիտելիքներ) համակցված ուսուցմամբ:

Օտարալեզու ուսումնասիրություններն այդուհանդերձ ցույց են տալիս, որ բանավոր խոսքը ստուգելիս ու գնահատելիս մեծամասամբ առաջնահերթությունը տրվում է լեզվական գիտելիքին (հստակ ու ճշգրիտ արտահայտվել՝ ամբողջ նախադասությամբ, լեզվակրի արտասանությամբ), մինչդեռ երկխոսության ավելի բնորոշ հատկանիշները, ինչպես խոսքի հասցեագրումը, թեմայի զարգացումը, իրադրային իրավիճակներում խոսքային նմուշների կիրառումը դուրս են մղվում²⁴⁹: Այս առումով հատկանշական է Շրայթերի դիտարկումը, ըստ որի՝ լիարժեք ճշգրտությունը նախապայման չէ հաջող հաղորդակցության համար, այլ ավելի կարևոր է, որ հաղորդակցությունն ընդհանրապես տեղի է ունենում²⁵⁰: Շվիթալան ևս ընդգծում է, որ երկխոսության ստուգման, գնահատման համար կարևոր են ոչ միայն բուն լեզվական կոմպետենցիաները, այլև երկխոսություն սկսելու և ավարտելու ռազմավարությունները, խոսքի բաժանումը, փոխանակումը խոսակիցների միջև, տեղեկատվության գնահատումը, խոսքային նշույթները (Diskursmarker), ունկնդրի արձագանքը, ընկալածի հաստատումը, միմիկան²⁵¹:

Գերմաներեն դիպլոմ (DSD I) ծրագրի²⁵² A2/B1 մակարդակի բանավոր քննության (երկխոսության) գնահատման չափանիշների ուսումնասիրությունը ևս վկայում է, որ առաջին պլան են մղվում խոսքային միջոցները՝ բառապաշար, կառույցներ, քերականություն, արտասանություն, այնինչ երկխոսության գործաբանական, մշակութային և հաղորդակցային կոնցեպտների ճշգրտությունն անուշադրության է մատնվում:

Գաղտնիք չէ, որ օտար լեզվի ուսումնառության գործընթացում հաղորդակցային տարբեր խնդիրների լուծումները պահանջում են գործաբանական, հանրալեզվական գիտելիքների համակցված կիրառում:

Մեթոդական գրականության մեջ գործաբանական կոմպետենցիան բնորոշվում է որպես լեզվական պաշարների գործառական կիրառում հաղորդակցման

²⁴⁷ **Forster R.**, Mündliche Kommunikation in Deutsch als Fremdsprache: Gespräch und Rede (Sprechen und Verstehen/Schriften zur Sprechwissenschaft und Sprecherziehung), Röhrig Universitätsverlag, 1997, S.13.

²⁴⁸ **Eriksson-Hotz B.**, Praxishandbuch für den Kompetenzbereich „Sprechen“ Deutsch Sekundarstufe I, Graz: Leykam, 2017, S. 17.

²⁴⁹ **McNamara T.F.**, Measuring Second Language Performance, Longman, 1996, 215, **Luoma S.**, Assessing speaking. Cambridge: Cambridge University Press. 2004, S. 92.

²⁵⁰ **Schreier I.** Mündliche Sprachproduktion. In: Helbig, Gerhard/ Götze, Lutz/ Henrici, Gert/ Krumm, Hans-Jürgen (Hrsg.): Deutsch als Fremdsprache. Ein internationales Handbuch. 2. Halbband. Berlin: De Gruyter Mouton, 2001, S. 911.

²⁵¹ **Schwitalla J.**, Das Verhältnis zwischen gesprochener und geschriebener Sprache. In: Krumm et. al. (s.o.), 2010, S. 429.

²⁵² Գերմաներեն լեզվի դիպլոմ (DSD) ծրագիրը գործում է Երևանի չորս դպրոցներում և Արմավիրի մարզի մեկ դպրոցում:

փոխներգործուն մեխանիզմներին համապատասխան՝ առնչվելով խոսույթի ստեղծման, իմաստային կապակցվածության հետ²⁵³:

Գործաբանական-խոսության կոմպետենցիայի միջոցով իրականացվում են հաղորդակցային նպատակներ խոսքային նշույթների կամ ավելի մեծ խոսության համատեքստերի շրջանակներում գրուցակցի հետ համագործակցությամբ սեփական արտահայտությունների միջոցով²⁵⁴: Երկխոսությունն այսպիսով գործաբանական հայեցակետից հատկանշվում է որպես երկկողմ հաղորդակցական փոխներգործություն՝ ապահովելով խթան-արձագանք հարաբերակցության հերթագայող, տրամաբանական երկմիասնությունը, հաղորդակցության արդյունավետությանն ուղղված խոսքային մարտավարական գործողությունների մշակումն ու իրագործումը: Եթե ի մի բերենք մեթոդական գրականությունում արծարծված երկխոսությունների գործառնությունները տարաբնույթ տիրույթներում, ապա վերջիններս հաղորդակցական-գործաբանական հայեցակետի տեսանկյունից կարող են բնութագրվել հետևյալ առանձնահատկությունների համալիր մոտեցմամբ.

- երկխոսության կառուցման ռազմավարություններ. երկխոսության փուլեր՝ սկիզբ, ընթացք, ավարտ,
- հասցեագրող-հասցեատեր ակտիվ փոխգործունեություն. ակտիվ ունկդիր,
- երկխոսության կապակցվածություն. խոսքի փոխանակման, թեմայի զարգացման կամ փոփոխության մեխանիզմների կիրառում համապատասխան խոսքային ակտերի ու նշույթների կիրառմամբ,
- ոչ խոսքային տարրերի ընկալում ու կիրառում,
- հասարակական նորմերի պահպանում. համապատասխան ռեգիստրների կիրառում:

Ավաճի լույսի ներքո սովորողները պետք է տիրապետեն գիտելիքների ու հմտությունների, համապատասխան արտահայտչամիջոցների, որոնց միջոցով կարող են սկսել զրույց, խոսք վերցնել, փոխանակել, ավարտել զրույցը, թեման փոխել, նաև հին թեմային անդրադառնալ²⁵⁵: Այս համատեքստում որոշիչ է հաղորդակցական տիպական իրադրություններում երկխոսության փուլերի և տևողության, զրուցակիցների փոխհարաբերությունների մակարդակի (քաղաքավարության նորմեր, հաղորդակցական ռեգիստրներ) և թեմայի վրա կենտրոնանալու ռազմավարության պահպանումը:

Հարկ է նշել, որ վերը նշված գերմաներեն ծրագիրն ուսումնասիրող դպրոցներում գործող «Գերմաներենը որպես օտար լեզու» դասագրքերի երկխոսական առաջադրանքները թույլ են տալիս սովորողներին ձեռք բերելու կարողություններ ու հմտություններ հաղորդակցական գործունեության իրագործելի իրադրությունների հաղթահարման համար՝ առաջարկություն անել, քաղաքավարի ինչ-որ բան խնդրել, ճանապարհը հարցնել, ինչ-որ բան պատվիրել և այլն (Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2):

Ստորև քննության առնենք գերմաներեն երկխոսության հաղորդակցական-գործաբանական գործառնությունները երկխոսության կառուցվածքի, հասցեատեր-հասցեագրող փոխազդեցության, ունկնդրի ռազմավարության (Hörerstrategie),

²⁵³ Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Ստրասբուրգ, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Թարգմանություն, խմբագրությամբ՝ **Ս. Չոյան, Ս. Աստվածատրյան և ուրիշներ**, Երևան, 2005, էջ 16:

²⁵⁴ **Becker –Mrotzek M.**, Gesprächskompetenz vermitteln und ermitteln: Gute Aufgaben im Bereich Sprechen und Zuhören. In: A. Bremsch-Vos, G. Granzer, O. Köller (Hrsg.): Lernstandsbestimmung im Fach Deutsch. Gute Aufgaben für den Unterricht, Weinheim und Basel, 2008 (Beltz), S. 59.

²⁵⁵ **Knapp-Potthoff A.**, Fremdsprachenunterricht in Knapp et al: Angewandte Linguistik, Tübingen: Francke, 2004, S. 375.

խոսութային կապակցվածության (Diskurskohärenz) դիտանկյունից խոսութային նշույթների (Diskursmarker), խոսքային ակտերի (Sprechakte)²⁵⁶ տարաբնույթ դրսևորումների հաշվառմամբ:

Երկխոսության կառուցում

Գերմաներեն երկխոսություններում խոսողները կիրառում են զրույցը սկսելու, ավարտելու, ընթացքը կառավարելու ռազմավարություններ, որոնք նախանշում են հաղորդակցային իրավիճակում համապատասխան ինտերակտիվ նորմերի իմացություն: Ըստ այդմ, ներկայացնենք տարբեր հաղորդակցական մտադրություններ արտահայտող առավել հաճախակի գործածվող խոսքային ակտեր, նշույթներ, որոնք ապահովում են երկխոսության տարբեր փուլերի հաղթահարման համար խոսքային փոխգործունեության գործառնական կիրառումը:

Երկխոսություն սկսելու ռազմավարություններ

- Ողջույն՝ արտահայտված նաև զգացական ծայնարկություններով.
Hy, he, Hallo(ողջույն), Oje, Ey, Hey (Է՛յ,հե՛յ), Boah(պահ), Mann (զարմանք կամ բարկություն արտահայտող ձայնարկություն)
- դիմում-հաղորդում (ծայնարկությամբ սկսվող)
Wow, Du, das ist ja eine tolle Wohnung! Վառւ, Դու, ի՛նչ հիանալի բնակարան է:
- Հարց (դիմում-հարց, հարց ծայնարկությամբ)
Elina, gefällt dir...? Էլինա՛, թե՛վ դու՞՞ր է գալիս...
Na, wie schmeckt der Kaffee? Դե, ինչպե՞ս է սուրճը:
- Ներողություն-հարց
Entschuldigung? Gehört dir das Handy? Ներողություն: Թե՛՛վ է պատկանում հեռախոսը:
- Հորդոր *mal* եղանակավորող մասնիկով
Schau mal hier... Նայի՛ր այստեղ...Sag mal...Ասա՛ (խնդրել)...
- Սողալ բայերով արտահայտված խոսքային ակտեր
Sollen (Wollen) wir in den Park gehen? Գնա՞նք այգի: (Առաջարկություն)
Können wir bestellen bitte? Կարո՞ղ ենք պատվիրել: (Հարց-խնդրանք)
- Կարծիք
*Ich glaube, dass... Կարծում եմ, որ...*²⁵⁷

Վերոբերյալ դասակարգման համաձայն՝ կարող ենք պնդել, որ գերմաներեն երկխոսության կառուցմանը բնորոշ են տարբեր զգացական ծայնարկություններ՝ միաժամանակ ապահովելով արտահայտչականություն և կառուցողականություն: Առանձնացնենք նաև այս փուլին ներուկակ *Entschuldigung! Ներողություն* խոսքային ակտը, որի միջոցով խոսողը արտահայտվելուց առաջ քաղաքավարությամբ ըմբռնում է հայցում խոսակցից՝ հարցին հաղորդելով մեղմացուցիչ երանգավորում:

Գերակայում են նաև *mal* եղանակավորող նշույթով հորդոր արտահայտող խոսքային նշույթները (*Erzähl mal...*), որոնք գլխավորապես ներկայացվելիք նյութի վրա դիմացինի ուշադրությունն ուղղելու գործառնույթ ունեն: Ընդամին, մեթոդական գրականության մեջ սույն կառույցները *he, hallo, Mensch* ողջույն արտահայտող նշույթների հետ միասին ստանձնում են միջանձնային հարաբերություններն

²⁵⁶ խոսքային ակտերի տեսությունը մշակվել է **Ջ.Օստինի** կողմից (“How to Do Things with Words”, 1962), ապա վերամշակվել **Ջ. Սեռլի** կողմից (“Speech acts”, 1969)

²⁵⁷ Օրինակները վերցված են Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2 դասագրքերից **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, 2014, **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, 2014, **Hilpert S., Niebisch D., u.a.**, Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017.

արտահայտող նշույթների գործառույթ (Interpersonalitätsmarker)՝ ընդգծելով հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունների մակարդակը²⁵⁸ :

Երկխոսության բացման տեսանկյունից պակաս կարևոր չեն նաև խնդրանք (*Können wir...?*), առաջարկ (*Sollen wir...? Wollen wir...?*) արտահայտող մոդալ բայերով ոչ ուղղակի խոսքային ակտերը (indirekte Sprechakte): Հատկանշական է նաև կարծիք արտահայտող այնպիսի կառույցների կիրառումը, ինչպես *ich glaube, dass....*, որոնք, ապահովելով խոսքի կապակցվածությունը, տրամադրում են լրացուցիչ տեղեկություն:

Թեպետ նմանօրինակ արտահայտությունների կիրառումը, ինչ խոսք, պայմանավորված է երկխոսության թեմայով, նպատակով, իրավիճակով, բայց և այնպես փաստենք, որ դրանք, որոշակի բովանդակային փոփոխությունների ենթարկվելով, կարող են կիրառվել տարաբնույթ իրադրություններում՝ պահպանելով կուռ կառուցվածքը և ստանձնելով զրուցակազմ գործառույթի դեր:

Երկխոսության ընթացք. թեմայի պարզացում

Հարկ է նշել, որ երկխոսության այս փուլը համեմատաբար քիչ հետազոտվածներից է՝ ելնելով կառուցվածքային բարդության աստիճանից, ոչ ստանդարտ բնույթից: Այս փուլում վճռորոշ է լեզուն կիրառողների խոսքի փոխանակման մարտավարությունը (Sprecherwechsel), ինչն էլ կարգաբերում է խոսույթի կապակցվածությունը, թեմայի զարգացումը (Themenentwicklung) կամ թեմայի փոփոխումը (Thementwechsel): Հետազոտողների կողմից խոսքի փոխանակման երկու ձև է առանձնացվում²⁵⁹ :

1. Խոսողը խոսքը փոխանցում է ունկնդրին (Fremdwahl)

Fabio, hey, du sollst hier mit uns Hausaufgaben machen!

Und du? Wie oft ärgerst du dich?

*Ey, hallo, sag mal, ist das mein Handy?*²⁶⁰

Ուսումնասիրությունից հետևում է, որ խոսքի ուղղակի փոխանցումը տեղի է ունենում հիմնականում մասնակիցների՝ միջանձնային հարաբերություններն արտահայտող նշույթներով (*hey, Ey, Und du?, Sag mal*)՝ միաժամանակ խթանելով խոսքի կապակցվածությունն ու արտահայտչականությունը:

Խոսքի փոխանակման այս փուլում կարևոր ենք համարում վկայակոչել ունկնդրի՝ երկար դադարով խոսք վերցնելու ռազմավարությունը:

Reiter: Und was möchtest du machen? Hast du schon eine Idee?

*Jonas: Hmm. Ich weiß nicht, es gibt ja so viel ...*²⁶¹

Սույն օրինակներում *hm, ich weiß nicht* նշույթները վարանման ազդանշան են (Verzögerungssignal) և արտահայտում են խոսակցի մտորումը:

Ընդ որում, բովանդակային կողմից զատ խոսքի փոխանցումը կարող է նաև ոչ խոսքային միջոցներով տեղի ունենալ, օրինակ՝ գլխի շարժումով, ժեստով, հայացքով²⁶²:

2. Ունկնդիրը սկսում է խոսել սեփական նախաձեռնությամբ (Selbstwahl)

²⁵⁸ Blühdorn H., Föhlen A., Loureda Ó., Diskursmarker: Begriffsgeschichte – Theorie – Beschreibung. Ein bibliographischer Überblick. In: Blühdorn H., Deppermann A., Helmer H., Spranz-Fogasy Th. (Hg.): Diskursmarker im Deutschen. Reflexionen und Analysen. Göttingen: Verlag für Gesprächsforschung, 2017, S.7-48, S.24.

²⁵⁹ Brinker K., Sager S. F., Linguistische Gesprächsanalyse: Eine Einführung, Berlin, Erich Schmidt Verlag GmbH & Co., 2010, S.62.

²⁶⁰ Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.2, Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015.

²⁶¹ Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2015, S.17

²⁶² J. Ossner, Sprachdidaktik Deutsch. Eine Einführung, 2. Auflage. utb Schöningh, Paderborn 2008, S.76.

Եթե համակարգենք մեթոդական գրականության մեջ այս փուլի ենթատեսակները՝ դասագրքերում առկա երկխոսությունների հաշվառմամբ, ապա այս դեպքում երևան կգան խոսք վերցնելու հետևյալ դրսևորումները.

- խոսք վերցնել *առանց ընդհատման*

>Ich denke gern an die Ferien.

<Daran denke ich auch gern.²⁶³

- խոսք վերցնել *ընդհատումով* (ունկնդիրը սկսում է խոսել, երբ դեռ խոսողը միտքը չի ավարտել կամ մի փոքր դադար է տալիս)

F. Wir können ihr alles zeigen, den Rhein, die Brücken, den Kölner Dom...

L. ...die Stadtfeste...

F. Genau, und den Kölner Dom²⁶⁴

Այսպիսի իրավիճակներ ի հայտ են գալիս, երբ խոսողը ընթացքում մտորում է, ինչպես վերոբերյալ օրինակում՝ թվարկելիս:

- խոսք վերցնել *երկար դադարով կամ լռությամբ*

A. In Köln haben wir gar nichts gesehen. Das Wetter war viel zu schlecht.

T. Oh, das ist doof!²⁶⁵

Այստեղ *oh* զգացական նշույթը դադարի նշան է:

Այսպես, երկխոսությունների՝ խոսքի փոխանակման հայեցակերպից ուսումնասիրությունը մատնանշում է, որ վարանում արտահայտող ազդանշանների շարքին են դասվում *hm, aha, weißt du, äh (ja), öh, oh ja, tja, also, na ja, na, Moment (mal), ich weiß nicht, ich glaube, warte mal, ach so, ach ja, boah* նշույթները²⁶⁶: Շթայնի հավաստմամբ՝ այս նշույթները, արտահայտելով վարանման իմաստ, մյուս կողմից նպաստում են թեմատիկ պլանավորմանը²⁶⁷: Մենք ևս հակված ենք հեղինակի կարծիքին, քանի որ երկխոսությունները դիտարկելիս ի հայտ են գալիս վերոբերյալ նշույթների՝ տեքստակազմիչ գործառնույթների դերը:

*Na, wie schmeckt der Eiskaffee?*²⁶⁸

Օրինակում *na* նշույթը զրոյցը կառուցելու դեր է ստանձնում:

Այս փուլում հարկ ենք համարում անդրադառնալ նաև խոսողի ինքնաուղղման մեխանիզմների առանձնահատկություններին: Այս դեպքում երկար դադարից խուսափելու, իր խոսքը երկարաձգելու համար խոսողը կարող է կիրառել վերաձևակերպման կամ (ինքնա)ուղղման նշույթներ (Reformulierungsmarker, (Selbst)Reparaturmarker)²⁶⁹:

*Op. Und was machen Sie am Nachmittag, ich meine, außer im Fluss zu schwimmen?*²⁷⁰

²⁶³ Hilpert S., Niebisch u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S. 62

²⁶⁴ Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2014, S.7

²⁶⁵ Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2015, S.47

²⁶⁶ Georgiakaki M., Seuthe Ch. u.a., Beste Freunde: Kursbuch A2.1, Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2014, Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015, Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, (1) 2017

²⁶⁷ Stein St., „o leck! ich wä:ß nimme: wie das heißt“ Formulierungsflauten in der Zweitsprache. In: Beiträge zur Fremdsprachenvermittlung 31, 1997, S. 33–77, S.58

²⁶⁸ Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, (1)Hueber, 2017, S.44

²⁶⁹ Հասկացության վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Pfeiffer M. Über die Funktion der Reparaturmarker im Deutschen In: Blühdorn H., Deppermann A., Helmer H., Spranz-Fogasy Th. (Hg.): Diskursmarker im Deutschen. Reflexionen und Analysen. Göttingen: Verlag für Gesprächsforschung, 2017, S.259–285

²⁷⁰ Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, (1)Hueber, 2017, S.98

Օրինակում *ich meine (նկատի ունես)* նշույթի միջոցով խոսողը հստակեցնում է ասածը: Այս նշույթներից են *also, eben, ich meinte, man sollte, nee, ach, oder, also, na*.²⁷¹:

Վերորբերյալ նշույթների (վարանում և մտքի վերաձևակերպում արտահայտող) կիրառման առանձնահատկությունների ուսումնասիրությամբ կարող ենք պնդել, որ թեպետ դրանց՝ առանձին տեսակների դասակարգմանը, վերջիններս նույնականացվում են՝ արտացոլելով դադարի իմաստ:

Այսպես, պարզ է դառնում, որ երկխոսությունն ընթացքի մեջ պահելու հմտությունը կախված է խոսող-խոսակից փոխազդեցությունն ապահովող ռազմավարությունների ճշգրիտ կիրառումից, որտեղ վճռորոշ է ունկնդրի ներգրավվածությունը: Հատկանշական է, որ վերջին տարիներին մեթոդիստների կողմից մեծ ուշադրության է արժանանում ակտիվ ունկնդրի դերը երկխոսության ընթացքում ²⁷²: Սակայն ոչ միայն ակտիվ ունկնդրին է բնորոշ որոշակի դեր, այլև պասսիվ ունկնդիրն է պահանջում տիպիկ երկխոսական գործողություններ: Այս դեպքում պասսիվ ունկնդրի ռազմավարություններին բնորոշ է որոշակի հետադարձ կապ, որը կարող է արտահայտվել խոսողի խոսքին զուգահեռ՝ առանց իրեն խանգարելու: Այստեղ տարբերակվում են ²⁷³:

- ուշադրություն առաջացնող ազդանշաններ, (*aufmerksamkeitsbezeugende Signale*), որոնք ցույց են տալիս, որ ունկնդիրը ուշադիր լսում է, օրինակ *hm, ja, nicht, jaja, ach ja, genau, eben, tja*,
- մեկնաբանող ազդանշաններ(*kommentierende Signale*), որոնք մատնանշում են ունկնդրի վերաբերմունքը ասվածին՝ որպես համաձայնություն(*Einverstanden*), կասկած(*Wirklich?*):

Ասվածի համաձայն՝ երկխոսությունն ընդգրկում է ոչ միայն վերարտադրողական հմտություններ, այլ նաև լսածին տարաբնույթ հաղորդակցային նպատակներով արձագանքելու հմտություններ: Քննության առնելով *Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2* դասագրքերում առկա երկխոսությունները՝ ներկայացնենք և համակարգենք ազդակ-արձագանք փոխկապակցման հետևյալ տեսակները.

1. Ազդակ-արձագանք փոխազդեցության դասակարգում²⁷⁴

Հարց-համաձայնեցում	
Ist Bäcker dein Traumberuf? Ja, genau.	Հացթուխը քո երազած մասնագիտությունն է: Այո՛, ճիշտ է:
Կարծիք- համաձայնեցում	
Ich finde, das sieht schön aus.	Կարծում եմ՝ զեղեցիկ տեսք ունի:

²⁷¹ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2014, **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber(1), 2015, **Hilpert S.,Niebisch D.**, u.a.,Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber(1), 2017

²⁷² **Wagner R. W.**, Mündliche Kommunikation in der Schule.Paderborn Schöningh, 2006,S.197, **Spiegel C., Berkemeier A.**,In der Schule Gesprächsfähigkeit fördern und fördern: Moderieren-Argumentieren-Zuhören, Bern, 2014,S. 126

²⁷³ **Linke A., Nussbaumer M., Portman R.P.**, Reihe Germanistische Linguistik (Book 121), Max Niemeyer Verlag, Tübingen, 2004,S. 305

²⁷⁴ Օրինակները՝ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber,(1) 2014, **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber,(1) 2015, **Hilpert S.,Niebisch D.** u.a.,Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber,(1) 2017

Ja, das finde ich auch.	Այո՛, ես էլ եմ այդպես կարծում:
Հարց-պատասխան- վերաբերմունք	
Oh, was ist das denn? <i>Ein Zelt.</i> <i>Das ist aber gross!</i>	Օհ, ի՞նչ է սա: <i>Կրակ:</i> <i>Ի՞նչ մեծ է:</i>
Խթան-հարց (պարզաբանելու համար)	
Aber ich will doch zum Casting! Wie bitte? Casting?	Բայց ես ուզում եմ Քասթինգի: Ինչպե՞ս: Քասթինգի՞:
Առաջարկ-գարմանք/համաձայնեցում	
Dann komm doch nächstes Jahr mit! Echt? Gern.	Ուրեմն մյուս տարի արի ինձ հետ: Իսկապե՞ս: Սիրով:
Առաջարկ-մերժում	
Gehen wir schwimmen? Nein, es ist zu kalt.	Գնա՞նք լողալու: Ո՛չ, ցուրտ է:
Պնդում- ժխտում /համաձայնում	
Du singst so gut wie Celine Dion. Nein! Ich singe sogar besser als Celine Dion. Sie mag am liebsten Hip-Hop. Ja, genau.	Դու երգում ես այնպես լավ, ինչպես Սելին Դիոնը: Ո՛չ: Ես նույնիսկ ավելի լավ եմ երգում, քան Սելին Դիոնը: Նա ամենից շատ հիփ-հոփ է սիրում: Այո՛, ճիշտ է:
Խթան-ներողություն- դրական/բացասական արձագանք	
Entschuldige, dass ich zu spät komme! Kein Problem!/Das macht nichts. Das finde ich nicht so gut.	Ներողություն, որ ես այսքան ուշ եմ գալիս: Ոչ մի խնդիր: Ոչինչ: Այդքան էլ լավ չէ:
Հարց-հարց	
Aber ist es nicht 'n bisschen eng? Wieso denn eng?	Բայց սա մի փոքր նեղ չէ՞: Ինչպե՞ս թե նեղ:

Ուսումնասիրությունից հետևում է, որ երկխոսությունները հաղորդակցային իրադրությունում միայն հարց ու պատասխանով չեն սահմանագծվում: Ավելին, երկխոսությունում խոսության կապակցվածության նախադրյալ են տարաբնույթ մտադրություն պարունակող ասույթներին (առաջարկություն, կարծիք և այլն) հաստատում, որգևորություն և այլ վերաբերմունք արտահայտող արձագանքները: Ընդ որում, խթան-պատասխան հարաբերակցումը մեծապես խթանում են տարբեր արձագանքներ հաղորդող խոսության նշույթները (*Ja, genau, Echt?, Schon okay*): Ինչպես նաև առանձնակի կարևորվում է եղանակավորող նշույթների (Modalpartikel)²⁷⁵ (ինչպես օրինակներում *mal, aber, denn*)՝ որպես գրուցակազմ գործիքների դերը երկխոսության կապակցվածության, թեման զարգացնելու, հասցեագրողի հաղորդակցական-

275

Գերմաներենի եղանակավորող մասնիկների տիպաբանական առանձնահատկությունները գործաբանական բնութագրերի հաշվառումով հանգամանալից քննել է Կ. Հովհաննիսյանը՝ «Գերմաներենի եղանակավորող մասնիկների տիպաբանական առանձնահատկությունները», ատենախոսություն՝ Ժ.02.07-«Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Կ.Մ.Հովհաննիսյան, Երևան 2013, 151 էջ:

գործաբանական նպատակների համար: Վերը քննարկված *mal (Sag mal)* եղանակավոր նշույթը, հորդոր արտահայտող նախադասություններին հաղորդելով մեղմացնող, խնդրանք պարունակող իմաստ, կատարում է գրույցը սկելու գործառույթ:

Ընդգծենք, որ ազդակ-արձագանք տարաբնույթ խոսքային ակտերը հիմք են նաև թեմայի փոփոխության համար: Ներքենշյալ օրինակում արտացոլված է թեմայի փոփոխության ռազմավարության մի ձև.

Reiter: Aha ... Ja, weißt du, Jonas, ich denke, es ist auf jeden Fall sehr wichtig, dass du zuerst einmal die Schule zu Ende machst. Nur so kannst du später auch einen guten Beruf lernen.

Jonas: Ja, ja, ich weiß schon. Das sagen meine Eltern auch immer. Aber ...

*Reiter: Pass auf, ich habe da eine Idee. Warum machst du nicht einfach ein Praktikum in den Sommerferien? So kannst du verschiedene Berufe kennenlernen. Was meinst du?*²⁷⁶

Նշված օրինակում *Pass auf*²⁷⁷, *ich habe da eine Idee* կառույցները հող են նախապատրաստում նոր ենթաթեմայի անցման համար, իսկ *Warum machst du nicht einfach ein Praktikum in den Sommerferien?* հարց-առաջարկությունը փոխում է թեման՝ շարունակելով զարգացնել և ուժգնացնել սեփական պնդումը, ինչպես *So kannst du verschiedene Berufe kennenlernen.:* Ապա արդեն նոր թեման ընթացքի մեջ պահելու և այն ընդարձակելու համար տրվում է հարց խոսակցի կարծիքն իմանալու համար. *Was meinst du?*

Երկխոսության գործաբանական առանձնահատկությունները դրսևորվում են նաև ավարտուն խոսքում՝ արտացոլելով տվյալ մշակույթին բնորոշ հասարակական նորմերը: Բացի վերը քննարկված ազդակ-արձագանք արտահայտություններում առկա համաձայնություն (*richtig, Warum nicht?, In Ordnung*), դրական (*Kein Problem*), բացասական արձագանք (*Das finde ich nicht so toll*), շնորհակալություն (*Vielen Dank!*) մատնանշող խոսքային ակտերից, գերմաներեն երկխոսությունների ավարտուն խոսքին բնորոշ են.

- Բարեմաղթանք -*Alles Gute für dich! Ամենայն բարիք թեյ:*
- Հարց- *Hier ist es doch gut, oder? Այստեղ լավ է, թե՞: Na und? Դե, հեռո՞: Verstehst du? Հասկանո՞ւմ ես:*
- Կարեկցանք/հիասթափություն- *Das tut mir so leid. Ցավում եմ: Wie schade./Schade Ի՞նչ ափսոս:*
- Առաջարկության մերժում *Ich möchte lieber...Ես կցանկանայի ավելի շուտ...*
- Ժխտում/հակադրում- *Das stimmt nicht. Եիշտ չէ:*
- Հորդոր- *Komm bald mal wieder!Արի կրկին:*
- Ստադրություն- *Ich schau mal nach. Ես կնայեմ:*
- Չզացական վերաբերմունք- *Ich freu mich schon! Ես ուրախանում եմ արդեն: Das ist aber nett. Շատ սիրալիր է:*²⁷⁸

Սույն արտահայտություններից կարելի է եզրակացնել, որ երկխոսությունն ավարտելու տարբերակները գերմաներենում բազմապիսի են՝ տարաբնույթ հաղորդակցային նպատակներ, գնահատումներ արտահայտող անփոփոխ

²⁷⁶ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015, S.47

²⁷⁷ Pass auf-ը խոսքային նշույթի գործառույթ ունի, ավելի մանրամասն տես **Proske N.,** Zur Funktion und Klassifikation gesprächsorganisatorischer Imperative In: **Blühdorn H., Deppermann A., Helmer H., Spranz-Fogasy Th.** (Hg.): Diskursmarker im Deutschen. Reflexionen und Analysen. Göttingen: Verlag für Gesprächsforschung, 2017, S.73-101

²⁷⁸ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2014, **Georgiakaki M., Seuthe Ch. u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2015, **Hilpert S., Niebisch D. u.a.**, Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, (1)2017

արտահայտություններից (*Stimmt, tut mir leid...*) մինչև ապառնիի իմաստ՝ մտադրություն (*Ich schau mal nach*), և հարց, հորդոր պարունակող ասույթներ (*Cool, oder?, Traum weiter, Fabio!*): Պետք է նշել, որ *oder?* կառույցը, զրույցի ավարտի ազդանշան լինելով, միաժամանակ ունկնդրի համար խթան է խոսողի դերում հանդես գալու համար²⁷⁹, ինչը խոսքի փոխանակման է տանում:

Այսպիսով՝ հողվածում ներկայացրինք գերմաներեն երկխոսության կառուցման, վերջինիս ընթացքը կառավարելու գործում ուրույն տեղ զբաղեցնող գործոնները: Բայց և այնպես նշենք, որ հողվածում քննարկված բաղադրիչներից զատ երկխոսության հաղորդակցական-գործաբանական արժեքը պայմանավորված է նաև տարիքային, անձնային-հոգեբանական գործոնների հաշվառմամբ: Չէ՞ որ զրուցակիցների տրամադրվածությունը կարող է այս կամ այն կերպ ազդել զրույցի ընթացքի վրա:

Կարևոր է նաև արձանագրել, որ բերված երկխոսական նմուշները բնորոշ են առօրյա իրավիճակներին, հետևապես նշանակալից է նման խոսութային նշույթների, ակտերի ուսուցումն ու ուսումնառությունը իրադրային տարբեր իրավիճակներ հաղթահարելու, խոսույթի կապակցվածությունը, գաղափարական համագործակցությունն ապահովելու, խոսքին տարբեր եղանակավորումներ տալու, գնահատականներ տալու, մեկնաբանելու համար: Չէ՞ որ երկխոսության գործաբանական ասպեկտը հենց այս կոմպետենցիաների համալիր կիրառմամբ կարող է իրագործվել օտար լեզվով հաղորդակցման ժամանակ՝ պահանջելով համակարգված մոտեցում:

Գերմաներեն երկխոսության հաղորդակցական-գործաբանական հայեցակերպի այս վերլուծությունը կարող է հիմք լինել երկխոսության ռազմավարությունների ուսուցման նոր ուղիների մշակման, երկխոսության գնահատման չափանիշների լրամշակման համար, ասել է թե՛ երկխոսության հետ տարվող աշխատանքները, պայմանավորված արդի հաղորդակցական ուսուցման գերակայությամբ, նոր մոտեցումներով դիտարկելու համար:

CONCERNING THE PRAGMATIC PECULIARITIES OF GERMAN DIALOGUES

LUSINE SOGHOMONYAN

*Brusov State University, Pedagogy and Language Teaching Chair,
Ph.D student,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the current article is to study the pragmatic peculiarities of German dialogues in communicative situations (based on German textbooks *Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2*).

The objectives are as follows: to study the essence of the set problem in methodical literature, to analyze dialogues in textbooks based on theoretical theses, to identify the communicative-pragmatic strategies of German dialogues.

The study was carried out with the use of the following methods: abstraction, comparison, analysis, deduction.

The article presents the functional peculiarities of German speech acts from the point of view of discourse coherence, sender-receiver interaction, topic development. Within the

²⁷⁹ Weinrich H., Textgrammatik der deutschen Sprache, Hildesheim, Georg Olms Verlag, 2007, S.

framework of communicative-pragmatic competence, the strategies for turn-taking of dialogue participants are discussed, revealing the activities of active and passive listeners. As well as as a result of the structural analysis of the dialogues various manifestations of the stimulus-response relationship is singled out and coordinated, and the functions of discourse markers, as a tool for dialogue coherence are emphasized, expressing different communicative goals of speakers.

Keywords: *communicative-pragmatic competence, structure of dialogue, speech act, discourse marker, discourse, listening strategies.*

О ПРАГМАТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ДИАЛОГОВ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

ЛУСИНЕ СОГОМОНЯН

*аспирант кафедры педагогики и
методики преподавания языков ГУ им. В. Брюсова,
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение прагматических особенностей немецких диалогов в коммуникативных ситуациях (на материале учебников немецкого языка *Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2*).

В задачи исследования входит: изучение поставленных задач в теории, анализ диалогов в учебниках на основе теоретических тезисов, выявление коммуникативно-прагматической стратегии немецких диалогов.

Исследование проводилось с помощью следующих методов: абстрагирование, сравнение, анализ, дедукция.

В статье представлены свойственные немецким диалогам функциональные особенности речевых актов с точки зрения дискурсивной когерентности, адресантно-адресатного взаимодействия, развития темы. В рамках коммуникативно-прагматической компетенции обсуждаются стратегии смены ролей участников диалога, выявляя действия активных и пассивных слушателей.

В результате структурного анализа диалогов представлены и скоординированы различные проявления отношений стимул-реакция, подчеркиваются функции дискурсивных маркеров как инструментария для связности диалога, выражающих разные коммуникативные цели говорящих.

Ключевые слова: *коммуникативно-прагматическая компетенция, структура диалога, речевой акт, речевой маркер, дискурс, стратегии аудирования.*



**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՄԱՆ ՓՈՐՁԸ ՍԻՍՈՆ
ՍԻՍՈՆՅԱՆԻ «ԿԸ ԽՆՂՐՈՒԻ... ԽԱՀԱԾԵԼԵԼ»
ՍԵՆՇԵԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԵՉ***

ՀՏԴ 82-09

ԹԵՀՄԻՆԱ ՍԱՐՈՒԹՅԱՆ

*Գորիսի պետական համալսարանի պրոռեկտոր,
Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ)
անդամ, «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագրի տեղակալ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Գորիս, Հայաստանի Հանրապետություն
tmarutyan@mail.ru*

Վերջին տասնամյակներին հայ գրականագիտությունը թեև զգալի տեղ է հատկացրել սփյուռքահայ գրողների երկերի քննությանը, այդուհանդերձ ուսումնասիրության շրջանակից գրեթե դուրս է մնացել լիբանանահայ նշանավոր արձակագիր, հրապարակախոս, խմբագիր Սիմոն Սիմոնյանի գրական հարուստ ժառանգությունը, որը բավմապան է ոչ միայն ժանրային ու բովանդակային ընդգրկումով, այլև երգիծանքի դրսևորման տարատեսակ ձևերով:

Հոդվածի նպատակն է Սիմոնյանի գեղարվեստական մտածողության մեջ երգիծանքի դրսևորման ձևերի վերհանումով արժևորել «Կը խնդրուի... խաչածեւել» երկի ժանրային, կառուցվածքային, գաղափարագեղագիտական առանձնահատկությունները, որով էլ պայմանավորված է հոդվածի արդիականությունը:

Մեր խնդիրն է ներկայացնել ու վերլուծել Սիմոնյանի «Կը խնդրուի... խաչածեւել» երկը՝ հայոց պատմության երգիծական պատկերման գաղափարական շեշտադրումով:

Ուսումնասիրվող նյութի խնդրով ու նպատակով պայմանավորված՝ հոդվածում կիրառել ենք հերմենևտիկայի ու պատմական մեթոդները:

Թեմատիկ անդրադարձով, քննվող հարցերի համակարգով և քննության հիմնական արդյունքով աշխատանքը գիտական նորույթ է:

Հիմնաբառեր՝ Սիմոն Սիմոնյան, երգիծանքի գեղարվեստական միջոցներ, թատերգություն, հայոց պատմություն, պատմափիլիսոփայություն:

* Հոդվածը ներկայացվել է 08.06.2020թ., գրախոսվել՝ 16.06.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

Մուտք

Երգիծանքը Սիմոն Սիմոնյանի գեղարվեստական մտածողության էատարրերից է: Երգիծաբան չլինելով՝ նա գրեթե բոլոր ստեղծագործություններում, հրապարակախոսական հոդվածներում, խմբագրականներում, նամակներում մեծ հակում է ցուցաբերել դեպի երգիծանքի գեղարվեստական արտահայտման տարբեր միջոցներ՝ գրոտեսկը, այլաբանությունը, խոսքի ու դրության կոմիզմը, բառախաղը, ողբերգազավեշտական դրամատիզմը և այլն: Երգիծելու բնատուր կարողությունը, սուր դիտողականությունը օգնել են գրողին՝ գտնելու երևույթի բնութագրական հատկանիշը, բնորոշ մակդիրը, փոխաբերությունն ու համեմատությունը:

Պատահական չէ, որ Սիմոնյանի գեղարվեստական առաջին հայտը՝ «Կը ինդրուի... խաչածեւել. Յայ ժողովրդի ծննդյան 10000-ամյակի տոնակատարությունը (առաջին օր)» խորագրով, երգիծանքի նախասիրության յուրօրինակ դրսևորում էր: Երկը բնորոշվել է իբրև թատերգություն, բայց կառուցվածքը դասական իմաստով դրա հիմքը չի տալիս: Առհասարակ, պետք է նշել, որ Սիմոնյանի ստեղծագործական խառնվածքին բնորոշ են որոնողականությունը, ժանրային փոխաձևումները, ստեղծագործական փորձարարությունը: Նրա գրարվեստը շատ ավելի ինքնածին է, ներքին կուտակումների ինքնաարտահայտման միջոց, իր երևակայության մեջ արդեն ձև ու մարմին առած կառուցվածքի ինքնահնար թելադրանք:

Հղացումով ու կառուցվածքային տեսանկյունից յուրօրինակ ստեղծագործություն է «Կը ինդրուի... խաչածեւել»-ը՝ բնաբանված հայկական հայտնի առածով՝ «Չէ եղեր գիշեր, որ չի լուսցեր»: Վերնագրային կառուցում, որպես երկի ժանր, նշված է՝ «Յայոց երգիծական պատմություն»: Նախքան առանձին գրքով տպագրելը Սիմոնյանն այն մասմաս հրապարակել է իր խմբագրած «Սփիւռք» շաբաթաթերթում՝ «նկատի ունենալով, որ մեր պատմութեան գեղարուեստական քննութիւնն է, որ կկատարուի հոն: Այս շարքին նախապէս լոյս տեսած մասերը հրատարակուեցան եւ կը հրատարակուին ամբողջովին վերամշակուած կերպով»²⁸⁰: Գրողը, ցավոք, չի իրագործել գրական ծրագիրը և չի ամբողջացրել երգիծապատումը մեկ գրքով, որում պետք է ներառվեին նաև մյուս մասերը՝ համապատասխանաբար տոնակատարության երկրորդ ու երրորդ օրերի դիպաշարային ընթացքով՝ «Չուրջ հինգ հարիւր էջ կազմող եզակի գործ մը՝ թէ որպէս գրականութիւն, եւ թէ որպէս պատմական քննութիւն»²⁸¹: Սիմոնյանը, սակայն, երկրորդ ու երրորդ օրերի առանձին հատվածներ (օրինակ՝ բանախոս Վասակ Սյունի՝ «Ինչու՞ անցայ պարսիկների կողմը», «Կը վկայէ պատմաբան, պրոֆ. Նիկ. Ադոնց», որ «հայոց պատմափիլիսոփայության հոյակապ, թերեւս ամենէն գեղեցիկ էջն է»²⁸²) հրապարակել է «Սփիւռք»-ում²⁸³:

Մի անդրադարձում Սիմոնյանը տվել է երկի երեք մասերի հակիրճ նկարագրությունը. «ա - Չար եւ բարի ոյժեր(հայ եւ օտար),- ոգիներ եւ յատկութիւններ, որոնք *արգելք* կամ *խափան* եղած են հայ ժողովուրդի յաւերժութեան, կամ սատարած են անոր՝ հայ ժողովուրդի հրթիռը արձակելով դեպի յաւերժութեան (պատմութեան) երկինքը, եւ այդ հրթիռը Սասունցի Դաւիթի արձակած կամ շարտած կոտիլն պէս՝ դեռ կշարունակէ իր ուղին՝ երթը... բ - Յայ ժողովուրդին եւ անոր յաւերժութեան սատարող եւ *վնասող* քաղաքականութիւններ, այսինքն՝ արեւելումներ... Երկրորդ գիրքն ուրեմն պիտի տայ հետեւեալ դէմքերը, որոնք իմ ամենախոնարհ տեսակետով՝ քաղաքականութիւն ըրած են, քաղաքական ուղղութիւն ունեցած են եւ մեր *յաւերժութեան նաւը վարած են*, վարած են՝ լաւ կամ գէշ, ճիշդ կամ անճիշդ, բայց վարած են: գ - Վերջին հատորը պիտի

²⁸⁰ «Սփիւռք», 2 մարտի, 1965թ., թիվ 8, էջ 1:

²⁸¹ Նույն տեղում, էջ 1:

²⁸² «Սփիւռք», 7 հուլիսի, 1965թ., թիվ 26, էջ 1:

²⁸³ Տե՛ս «Սփիւռք», 1965, թիվ 21, 22, 23, 24, 25, 27:

պարունակել է *Հայ ժողովուրդին վերջին դատաստանը...* Սասունցի Դավիթը պիտի ըլլայ ահեղ դատաւորը, որ պիտի դատէ հայ ժողովուրդին յաւերժութեան սատարողներն ու խափանողները – անձեր, ոգիներ, շարժումներ՝ հին ու նոր, հայ թէ օտար...»²⁸⁴:

Կարապետ Փոլատյանի հետ «Չրոյց»-ում²⁸⁵ նույնպէս Սիմոնյանը վկայել է, որ պատերազմի ընթացքում (խոսքը Լիբանանի քաղաքացիական պատերազմի մասին է՝ Թ.Մ.) հիմնովին վերամշակել ու ամբողջացրել է երկը երեք մասերով և պատրաստվում է հրատարակել: «Հայ ժողովրդի ճակատագրի վերլուծում մըն է, երգիծանքով ու լացով, իմաստասիրութեամբ, մտածումով, պատմական ճշգրտութեամբ, - նշում է Սիմոնյանը: - Ինչու՞, ինչպէ՞ս տեսած է հայ ժողովուրդը, բայց ինչու՞ չէ մեծցած, ինչու՞ միշտ «փոքր անու» մնացած է. որո՞նք, ի՞նչ բաներ մեզ տեսել տուած են, եւ որո՞նք ու ի՞նչ բաներ մեզ մանրած են, փոշի ըրած ու ցրուած: <...> Տեսել ու չմեծնայ. ահա՛ հայ ժողովուրդը»²⁸⁶:

Պատմության գեղագիտական ընկալման ու յուրացման կերպը

Վստահաբար գնալով դէպի հայոց պատմության երգիծական պատկերման նորովի կերպի՝ Սիմոնյանը երգիծապատումի ընդգրկումն ու ճյուղավորումները, թեմատիկ-գաղափարական հարցադրումները փորձել է արտահայտել թատերգական կառուցի ձևով, ինչը պետք է դիտարկել փորձարարության մակարդակում՝ իբրև արձակի ու դրամայի յուրատեսակ համադրում, միջժանրային ստեղծագործություն: Այլ խոսքով՝ «Կը խնդրուի... խաչածեւել»-ը թատերգականացված պատմություն է՝ առանց ներքին ամբողջական հյուսվածքի: Լևոն Հախվերդյանի դիտարկումով՝ այն ավելի շատ «գրական, քան բեմական ստեղծագործություն»²⁸⁷ է: Հետաքրքիր է, որ Սասուն Գրիգորյանը երգիծապատումը համարում է «դրամատիկական մենախոսություն», որ հմուտ բեմադրիչը կարող է մատուցել որպէս պիես-մենաթատրոն²⁸⁸:

Պատմագիտության մեջ տարբեր են պատմական անցուղարձերի մեկնաբանությունները, հաճախ՝ իրարամերժ ու տարաբևեռ: Կոստան Չարյանի բանաձևումով՝ «Չափագանցություն պիտի չլինի ասել, որ հայոց պատմությունը դեռ չկարդացված գիրք է: Ամեն ինչ գաղտնիք է, առեղծված: Փակ պատուհան, որի ետև ինչ-որ լույսեր են թաքնված: Մեր պատմագիրներն իսկ ավելի շատ օգտագործած են ժողովրդական բանահյուսության աղբյուրները, քան իրական փաստերը»²⁸⁹:

«Հին հայ մատենագրութիւնը որպէս ենթահող արդի հայ գրականութեան մեջ» բանասիրական ուշագրավ ուսումնասիրության մեջ Սիմոնյանը, պարզաբանելով պատմության գեղարվեստական պատկերման իր ըմբռնումները, գրում է. «Ըստ մեր խոնարի կարծիքին՝ պատմական ստեղծագործությունները – վեպ, թատերգութիւն, պոեմ, պատմուածք, կամ պարզ քերթուած, անցեալի մը գեղարուեստական ներկայացումը ըլլալէ ետք կամ առաջ, պետք է փիլիսոփայութիւն մը ունենան, անսպասելի մտածում մը, ճշմարիտ գիտ մը: Մէկ խօսքով՝ «ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՒՏ»²⁹⁰: Փիլիսոփայական գյուտ, առանց որի «պատմական գործը մը պիտի ըլլար միայն անցյալի երևակայութեամբ ուռուցում կամ ընդլայնում»²⁹¹: Սիմոնյանը

²⁸⁴ «Սփիւռք», 25 հոկտեմբերի, 1965թ., էջ 2 («Պատասխան Գուրգեն Մահարիին»):

²⁸⁵ Կարապետ Փոլատյանի և Սիմոն Սիմոնյանի «Չրոյցը» տեղի է ունեցել 1968թ.-ի հուլիսի Բեյրութում, մի հատված հրապարակվել է «Սփիւռք»-ում (1985թ. թիվ 1, էջ 18-25), ապա լույս է տեսել առանձին գրքով՝ Չրոյց Սիմոն Սիմոնեանի հետ, հտ. 2 (Պեյրութ, «Սեան» տպ., 1988, 136 էջ):

²⁸⁶ «Սփիւռք», 1985, թիվ 1, էջ 25 (Կարապետ Փոլատյան, Չրոյց Սիմոն Սիմոնեանի հետ):

²⁸⁷ **Գրիգորյան Ս.**, Բազմատաղանդ երախտավորը, Ե., «Ուխտատուն» հրատ., 1999, էջ 25:

²⁸⁸ Նույն տեղում, էջ 26:

²⁸⁹ **Չարյան Կ.**, Դեպի Արարատ, Ե., «Սարգիս Խաչենց» հրատ., 2001, էջ 346:

²⁹⁰ «Սփիւռք», 23 մարտի 1975, թիվ 11, էջ 6:

²⁹¹ Նույն տեղում, էջ 5:

պատմական նյութով զրված հայ գրական ստեղծագործությունները, չհաշված մի քանի բացառություններ, հաջողված է համարում միայն անցյալը վերարտադրելու, հայրենասիրություն ներշնչելու, պատմության դասերով սերունդներին դաստիարակելու առաքելությամբ, որոնք, սակայն, զուրկ են «փիլիսոփայական նոր ու ինքնատիպ» գյուտերից:

Իր առաջին գեղարվեստական երկում դիմելով պատմական թեմատիկային՝ Սիմոնյանը փորձում է հենց պատմիչների հաղորդած տեղեկությունները, պատմագրության եզրահանգումները «սեպհական ու ինքնատիպ փիլիսոփայութեամբ», այսպես ասած «փիլիսոփայական գյուտերով» մեկնաբանել: Նա փորձել է նորովի վերարտադրել հայոց պատմությունը՝ որպես հետահայացի, ինքնասուզման, ինքնաճանաչման մի պատմություն, որ «մեզի մտածել կու տայ, եւ որ երբեմն լալու չափ կը հուզէ երգիծանքի տարագին տակ»²⁹²: Գաղափարական ուշագրավ գուգահեռներ կարելի է տանել «Կը խնդրուի... խաչածեւել»-ի և Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի միջև: Պատմության փիլիսոփայությունը արդիականության խնդիրներին ծառայեցնելու միտումը, ի դեմս Չարենցի, 1930-ականներին նոր սկիզբ էր նշանավորում պատմական նյութի գեղարվեստական յուրացման համապատկերում, ինչը «Գիրք ճանապարհի»-ում արտահայտվեց յուրատիպ լուծումներով: Ժողովրդի անցած ճանապարհին առասպելական Յայկից մինչև «այս հանճարեղ ներկան գալիքնափայլ» իմաստավորելու չարենցյան փորձը՝ պատմական իրականությանն առերեսվելու, «դարերի կորուստը» ժառանգելու, անցյալի նշանավոր դեմքերին դիմելու և նրանց հետ զրույցի միջոցով ազգային մտահոգություններ արտահայտելու մոտիվներով, ակնհայտ ընդհանրություններ է ձևավորում Սիմոնյանի «Կը խնդրուի... խաչածեւել» թատերգության պատմափիլիսոփայական հիմնաշերտի հետ:

Նյութի ընտրությունը, պատումի ու կերպարակերտման առանձնահատկությունները

Ուշագրավ է ինչպես գրանյութի ընտրությունը, այնպես էլ դրա գեղարվեստական յուրացումը: Յայ ժողովրդի 10000-ամյակի տոնակատարությունն է նշվում Յունեսկոյի սրահներում, ինչը նախածեւնել է ԲՅԺՄԿ-ն՝ Բովանդակ Յայ ժողովրդի Միացյալ կազմակերպությունը՝ տոմսակ-հայտագրով խնդրելով «հայկական կուսակցական, բարեսիրական, մարդական, դպրոցական, հայրենակցական, իգական, արական, երիտասարդական, ծերական, մանկանան բոլոր կազմակերպություններն *խաչածեւել*, Նոյն օրը, Նոյն ժամուն եւ Նոյն սրահներուն մէջ կազմակերպելով իրենց հանդիսութիւնները»²⁹³:

Սյուժեն ինքնին սիմվոլիկ-այլաբանական բնույթ ունի: Առաջին պլանում են հիպերբոլան, գրոտեսկն ու հեզնանքը: Երգիծանքի ձևերը պայմանավորված են դիպաշարի զարգացման առանձնահատկությամբ, նկարագրվող երևույթների բնույթով, կերպարների վարքագծով, ստեղծված իրադրությամբ և այլն: Չեղինակը միտումնաբար է ընտրում տոնակատարության և՛ տեղավայրը, և՛ ժամանակը, ինչը բխում է նրա պատմափիլիսոփայական ու սոցիալական կենսադիբորոշումների գլխավոր միտումներից: «Խաչածեւել» բառը Նոյնպես բխում է երկի ներքին զարգացումից:

Նշված է տոնակատարության կոնկրետ ժամանակ՝ 1965 թվական, որն, ի դեպ, նաև երգիծապատումի գրության թվականն է, այսինքն՝ հեղինակի կոնկրետ ժամանակը, որը նախ և առաջ կապվում է Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցի ոգեկոչման հետ, ինչը յուրատեսակ ուղերձ է համազգային ինքնագիտակցության վերարթնացման, պատմական ճշմարտության հետ առերեսման և հայ դատի հանրայնացման: Պետք է

²⁹² Կարենորեան Յ., «Սփյուռք», 1965, 12 նոյեմբերի, էջ 11:

²⁹³ Սիմոնյան Ս., Կը խնդրուի... խաչածեւել, «Սեւան» տպ., էջ 9:

Նկատել սակայն, որ ներքին իմաստային պլանում քրոնոտոպը բացակայում է, գործողությունները կատարվում են, այսպես ասած, ժամանակից դուրս, պատմություններն այլաբանական տարածությունում, որտեղ հայտնվում են հայ ժողովրդի բովանդակ պատմության գլխավոր դերակատարները՝ իրական, թե միջա-արթետիպային:

Սիմոնյանը «նույն օրվան, նույն վայրին ու նույն ժամուն» սահմաններում ժողովրդի պատմության գլխավոր դերակատարներին հանում է «բեմ»՝ դատելու նպատակով, երգիծական շղարշի տակ ցույց տալիս մեր բազմադարյա երթի «մութ, անհեթեթ, տարօրինակ» ընթացքը (Չարենցի խոսքով), պատմական անցքերի երգիծական ու դիպուկ մեկնաբանություններով ճշգրտում իր վերաբերմունքը պատմության հանդեպ: Բեմն այն կետն է, որտեղ հատվում-խաչաձևվում են ժամանակային շերտերը: Որպես այլաբանական տարածություն՝ այն մտնում է երկի մտահղացման ծրագրի ու կառուցվածքի մեջ: Տարբեր ժամանակաշրջաններն ու դրանց պատմական դեմքերին դիտելով մեկ ամբողջության մեջ՝ հեղինակը ստեղծում է, այսպես ասած, ժամանակային միասնություն (այդ միտումը առկա է նաև «Անժամանորոս» վեպում²⁹⁴): Ժամանակային այդ միասնությունը կամ *խաչաձևումը* օգնում է ճանաչելու պատմությունը, կամ ինչպես Կոստան Չարյանն է ասում, «պատմության պատմությունը»²⁹⁵:

Հանձն առնելով պատմության առեղծվածները բացահայտելու առաքելությունը՝ Սիմոնյանը փորձում է կերպարների ինքնախոստովանաբանական հնարքով «շրջել» պատմական ժամանակի դեմքերն ու դեպքերը, իրենց տեղը դնել դրանք և սթափ գնահատել պատմական եղելությունները: Նա չի խնայում ոչ՝ հայ թագավորին, ոչ՝ կաթողիկոսին, ոչ՝ գրողին, ոչ՝ կուսակցական գործչին ու մեծահարուստին: Հեղինակի հայացքը կենտրոնանում է պատմության այն հանգրվանների ու կենսահանգամանքների վրա, երբ հայ ժողովրդի տառապանքների, ողբերգությունների, հոգեկան ներքին ճգնաժամերի, քայքայումների, կորուստների պատճառները շատ դեպքերում չնչին ու ծիծաղելի շարժառիթներն են եղել, հաճախ՝ ներանձնական շահերը:

Սիմոնյանի մտքի թռիչքը, երևակայության համատեղումները սահմաններ չեն ճանաչում ոչ ժամանակի, ոչ տարածության իմաստով: Տոնակատարությանը ներկա են հայոց բոլոր մեծերը՝ Հայկ Նահապետը, Արա Գեղեցիկը, Գրիգոր Լուսավորիչը, Սասունցի Դավիթը, Մեծն Թեոդոս Ա-ն, Լևոն Մեծագործը, Տրդատ թագավորը, բանաստեղծներից Վահան Տերյանն ու Եղիշե Չարենցը, մեծահարուստներից Ալեքսանդր Մանթաշովն ու Գալուստ Գյուլպենկյանը, էլի ուրիշներ:

Տոնահանդեսի առաջին օրը պիտի նախագահեն Գրիգոր Լուսավորիչը, Սահակ Պարթևը և Աշոտ Ա. Բագրատունին: Պիտի բանախոսեն Հայկ Նահապետը՝ «Ինչու՞ Արարատի երկիրը փախայ», Տիգրան Մեծը՝ «Ինչու՞ Հայաստանի սահմաններն դուրս ելայ», Տրդատ Մեծը՝ «Ինչու՞ աղջկայ մը համար դավանափոխ եղայ և Ֆրեյտո», Վասակ Սյունին՝ «Ինչու՞ պարսիկների կողմը անցայ»: Պիտի արտասանեն Մեսրոպ Մաշտոցը՝ ԱԲԳ-ն, Սահակ Պարթևը՝ ՕՐՈՐԸ, Ղևոնդ Ալիշանը՝ ԼՈՒՄՆԿԱՆ: Պիտի մեներգեն Ղևոնդ Երեցը («Անգղ գիւղի երգը») և Կիրակոս Քահանան («Անիի բանալիները»): Օրակարգում երկու կենդանի պատկեր է ներառված՝ «Ա - Ժամանակն առաջ, Բ - Ըլլալն ետք», զուգերգ, ուղերձ՝ Աղաթի Խանջանից («Առ Լ.Բերիա» և փակման խոսք Կոմիտաս Վարդապետից («Անտունի» և «Կռունկ»)²⁹⁶:

Երգիծական այս հայտագիրն արտացոլված է երկում իբրև ծրագիր ու պատմական աշխարհայացք, որով հեղինակը փորձում է մոտենալ հայ ժողովրդի անցած ուղուն, դրա պարադոքսներին և նորովի մեկնաբանել: Նա նայում է սերունդների

²⁹⁴ Սիմոնյան Ս., Անժամանորոս, Բեյրութ, «Սեան» տպ., 1978թ., 515 էջ:

²⁹⁵ Չարյան Կ., Դեպի Արարատ, էջ 346:

²⁹⁶ Սիմոնյան Ս., Կը ինդրուի...խաչաձեւել, էջ 10:

հոգեհատակը՝ փորձելով ստագերծել առասպելներից հյուսված հայոց պատմությունը, գտնել այն «ճշմարտեալ» առասպելը, որ համահունչ է իրականությանը:

Երգծապատումի ամեն մի պատկեր ունի շատ ավելի խոր ենթատեքստ, քան կարող է թվալ առաջին հայացքից: Երկի հիմքում հայ ժողովրդի ճակատագիրն է: Ինչպես երգիծապատումի առաջին մեկնաբաններից Բեգլար Նավասարդյանն է նշել՝ «Մեծ խմորումներ ծայր առած են համամարդկային տարողությամբ»²⁹⁷:

Հանդիսությանը մասնակցում են միայն օտարները, բացակա են հայերը՝ «ցրված ըլլալով աշխարհի բոլոր վայրերը»²⁹⁸: Հրավիրված են նաև հայ ժողովրդի պատմական արայաններն ու բռնապետերը՝ Բաբելոնացի Բելը, Հայլե Սելասիև, Շամիրամը, Ներոնը, Սուլթան Համիդը, Բերիան, Ստալինը և այլք՝ հիմնական թեմա ունենալով հետևյալ կյուբերը՝ «Ի՛նչ ըրինք հայ ժողովուրդին, ինչպե՛ս չմեռավ հայ ժողովուրդը, ինչն՛ու պիտի չմեռնի հայ ժողովուրդը»²⁹⁹: Եվ որպեսզի ՀԲԺՄԿ-ի հանդիսությը կազմակերպված անցի, Սիմոնյանը մի «սպանիչ» նախապայման է դրել. «Կարգապահության պիտի հսկեն հայ կուսակցութիւնները. – Չանգակներու հսկողութիւնը յանձնուած է Հնչակեաններուն, զենքերու՝ Դաշնակցականներուն, լուռութան՝ Ռամկավարներուն, աղմուկի՝ Համայնավարներուն»³⁰⁰:

Առաջին բանախոսի՝ Հայկ Նահապետի թարգմանիչը Բելն է, որովհետև միայն նա էր հասկանում հայերեն, հետևաբար և իր հայեցակետից էլ մեկնաբանում է Հայկի՝ Արարատի երկրում հանգրվանելու դրդապատճառները՝ խորը դրամատիզմ հաղորդելով պատումին: Բելի համոզմունքով՝ եթե Հայկը չգործեր այդ խենթությունը, «Բաբելոնի մեջ կրնայինք ավարտել Աշտարակը եւ ապա այնտեղ հիմնել թագավորութիւն մը, մինչև հիմա տեւել»³⁰¹: Իր ժողովրդի մեջ պակասում էին տնելու հորմոնները, որոնցով միայն Հայկի տոհմն է օժտված, այդ պատճառով էլ իր ժողովուրդը անհետացավ, մինչդեռ Հայկի սերունդը շարունակվեց առ այսօր: Հպարտանալու առիթ, սակայն, Հայկ Նահապետը չունի, քանզի, ըստ Բելի, «գաղթականութեամբ կազմեց իր ժողովուրդը եւ գաղթականութեամբ ալ շարունակվեցաւ իր ժողովուրդը մինչև հիմա»³⁰²: Սիմոնյանն առասպելական պատումին հաղորդել է յուրատեսակ փիլիսոփայություն: Պաշարված լինելով առասպելներով՝ տասը հազար տարի հետո էլ չենք կարողանում ճեղքել հայ ժողովրդի գոյավորման իրական հիմքերը ցուցանող վարագույրը: Պատկերն ավարտվում է դրության կոմիզմի տեսարանով. Հայկը փորձում է երկրորդ նետն արձակել Բելի ուղղությամբ, սակայն «դաշնակցականները բռնեցին Հայկ Նահապետի ձեռքերեն, Հնչակեանները զարկին զանգակները, Ռամկավարները լուռօրն ազդարարեցին եւ Համայնաւարները աւելի աղմկեցին՝ պահանջելով որ Հայկ Նահապետը ազատ ձգուի իր ազատագրական կռիւը շարունակելու»³⁰³:

Ըստ գեղարվեստական կառուցվածքի՝ Սիմոնյանի երգիծապատումը միափյուսում է երեք շերտ՝ առասպելապատմական պատում, կյանքի իրապատում հոսք՝ պատմական կոնկրետ իրադարձությունների վկայակոչմամբ և գաղափարի պատմագիտական-փիլիսոփայական նորովի մեկնաբանություն: Ակնհայտ են նաև երգիծապատումի ոճի բանահյուսական երանգավորումները:

Երգիծական ուշագրավ ուղերձներով է հատկանշվում Շամիրամի խոսքը՝ ուղղված հայ ժողովրդին և մասնավորապես իր՝ թագուհիների թագուհու «իրավառ սիրահրավերը» մերժած Արա Գեղեցիկին: Կայծքարի պես կարծր ժողովուրդը թեև միշտ

²⁹⁷ «Սփիւռք», 1965, 28 հուլիսի, թիվ 29, էջ 3:

²⁹⁸ Սիմոնյան Ս., Կը խնդրուի... խաչածեւել, էջ 13:

²⁹⁹ Նույն տեղում, էջ 11:

³⁰⁰ Նույն տեղում, էջ 11:

³⁰¹ Նույն տեղում, էջ 15:

³⁰² Նույն տեղում, էջ 16:

³⁰³ Նույն տեղում, էջ 16:

մնաց «փոքր ածու» և չկարողացավ կայսրություն հիմնել, բայց կարողացավ ապրել, ինչը «կայսրություն հիմնելէ անելի գերազանց կարողություն մըն է»³⁰⁴: Հակառակ իր բազմաթիվ Հարալեզ աստվածների՝ Ասորեստանի հզորագոր ժողովուրդը անհետացավ պատմության թատերաբեմից: Պատճառը: «Մեր Յարալեզ աստվածները կ'ապրին մեզմէ, մեր մարմինէն, մեր արիւնէն, մեր մտածումներէն, մեր կիրքերէն, մեր շունչէն, մեր վիշտերէն դուրս»³⁰⁵, միևնույն ամեն հայ իր մարմնի, արյան, մտածումների, կրքերի, իր վշտերի մեջ ունի «Հարալեզ աստված մը՝ ինքզինք լիզող, ինքզինք կենդանացնող»³⁰⁶: Շամիրամի պնդմամբ՝ ինչ որ պակասեց հայ ժողովրդին, աննշան, բայց կարևոր բան էր: «Տեւելը հրաշալի բան է, բայց կարեւոր է աճիլն ու մեծնալը: ... Ատելութեամբ եւ ոխով ազգ մը կրնայ տեւել, բաց սիրով միայն կրնայ մեծնալ: ... Հայը հայ կապրի՝ վրեժ մը լուծելու համար, ոխով, ատելութեամբ, դառնութեամբ եւ մասամբ նորին: Մեծնալու համար անհրաժեշտ է սիրել: Եվ հայը անսեր ժողովուրդ մըն է եւ չի կրնար սիրել ու մեծնալ ու պիտի չմեծնայ...»³⁰⁷: Եթէ Արան չմերժեր իր սերը, պիտի լիներ արքան երկու երկրների՝ Հայաստանի ու Ասորեստանի: Արան իր Նուարդի համար «կորսնցուց կայսրություն մը»³⁰⁸: Ավելին՝ Արան իր Նուարդի պատճառով կորցրեց ոչ միայն երկու թագավորություն, այլև «Մուսուլի քարյուղի հանքերուն ամբողջությունը»³⁰⁹: Պատումն ուղեկցվում է խոսքի ու դրության կոմիզմի դիպուկ տեսարաններով:

Թատերգության մեջ երկու շերտ են կազմում կերպարները. մի կողմում հայ ժողովրդի պատմական պիտաններն են, մյուս կողմում՝ նրանց գոհերը: Պատմություններն զեղարվեստական տարածության մեջ ամեն մեկը հայտնվում է իր ժամանակին՝ բացելու հոգին, մտածումները. նրանք և՛ լուսաբանում են, և՛ լուսաբանվում: Սիմոնյանը նրանց տանում է դեպի հոգեբանական մերկացումները և պարտադրում խոսել: Երկու հստակ դրված է ինքնաբացահայտման ու ինքնաքննության գաղափարը, կարծես ամեն մի կերպարի մեջ դրված է երկրորդ ես-ը, որը ռեալությունն է և հակադրություն է գծում:

Տիգրան Մեծը ներկայանում է անձնական-ներհոգեկան ապրումների տանջալից վերապրումներով. «Ես Հայաստանի սահմաններէն դուրս եկայ, որովհետեւ ուզեցի փախչել կնիկիս ձեռքէն: Ով որ իր կնիկէն կփախչի, կայսրութիւն կրնայ հիմնել»³¹⁰ - այսպէս է հայոց արքայից արքան «տասը հազար տարի ետք» իր հոգեհատակը բացում սերունդների առջև՝ խոստովանելով ինքն իրենից հաղթված լինելու դառը ճշմարտությունը, որ անկյունադարձային եղավ հայ ժողովրդի պատմական ընթացքի համար: «Կայսրութիւն հիմնեցի, բայց կառավարուեցայ կնոջմէս... Երկու մեծագոյն յանցանքներ գործեցի կնոջս պատճառաւ, բազմաթիվ մեծ յանցանքներես ետք: *Առաջին՝* երբ աներհայրս Սիհրդատ Եւպատոր պարտուեցավ Լուկուլլոսէն, փախաւ եւ եկաւ Հայաստան, փոխանակ իր երկիրը կամ Կովկաս ապաստանելու: Փորձանք եղավ իր փեսային - այսինքն ի՛մ - գլխուս: Մերժելու էի: Կրնայի՞: Կնոջս հայրը կրնայի՞ մերժել: *Երկրորդ՝* երբ Լուկուլլոս Տիգրանակերտ մայրաքաղաքս պաշարեց, ես փոխանակ մայրաքաղաքս ազատագրելու, 6000 հայ երիտասարդ զինուորներ ղրկեցի եւ մայրաքաղաքէս Կոլեայատրան եւ իրենները ազատագրեցի»³¹¹: Եվ ապա՝ «Ինչու՞ մերժեցի Պոմպեոսի դէմ ճակատամարտի ելլել, եւ իմ այս ծիրուս վրայ հեծած՝ գլխիկոր յառաջացայ Պոմպեոսի զինուորներու մեջէն եւ հռոմայեցի զօրավարին ոտքերուն առջեւ դրի այս թագը... Ես Պոմպեոսի դէմ չպատերազմեցայ, վասնզի անոր բանակին մեջ տեսայ

³⁰⁴ Նույն տեղում, էջ 22:

³⁰⁵ Նույն տեղում, էջ 22:

³⁰⁶ Նույն տեղում, էջ 23:

³⁰⁷ Նույն տեղում, էջ 23:

³⁰⁸ Նույն տեղում, էջ 25:

³⁰⁹ Նույն տեղում, էջ 26:

³¹⁰ Նույն տեղում, էջ 40:

³¹¹ Նույն տեղում, էջ 45:

ի՛մ, ի՛մ որդիս՝ Կրտսերն կոչուած Տիգրանը, ի՛մ երակներուն ծնունդը... Երբ ինձի լուր բերին թէ իմ զաւակս կառաջնորդէ ինձի դէմ արշաւող հռոմէական բանակները, ձեռքերս թուլցան եւ պարպուեցայ ես ինձմէ»³¹²:

Հոգեկան ներքին փորձով Տիգրան Մեծը հայ ժողովրդին հղում է յուրօրինակ հոգևոր կտակը. հայը կենդանի ու կանգուն մնաց, որովհետև կայսրություն չիմսեց: «Բոլոր կայսրութիւն հիմնող ժողովուրդները մեռան ու անհետացան պատմութեան թատերաբեմէն, ու պիտի անհետանան նաեւ այս օրերու բոլոր կայսերական ժողովուրդները, կապիտալիստական թէ սոցիալիստական կայսրութիւնները: Հայո՛ց ժողովուրդ, դուն պիտի ապրիս ծնունդէդ մինչեւ հիմա կտրած ճամբուն տարիներուն չափ, այսինքն տասնազար տարիներ եւս, Եթէ ՀԱՐԱՉԱՍՏԵՐԴ ՉԴԱԲԱՃԱՆԵՆ, այսինքն՝ ԴՈՒՆ ԵԹԵ ԶԵՉԻ ՉԴԱԲԱՃԱՆԵՍ... Արեան դավաճանութիւնը միայն մահ պիտի բերէ հայ ժողովուրդի»³¹³:

Պատմության մի շարք ողբերգական իրադարձությունների՝ պատմագիտության լույսի ներքո դիտված պատճառները Սիմոնյանն ընդունում է ակնհայտ կասկածով, որն արտահայտվում է երգիծապատումի տարբեր շերտերում, պատմության տարբեր դերակատարների շուրթերով՝ հասնելով ողբերգագավեշտի: Սիմոնյանը ձգտում է մեզ արթնացնել ընդարմացումից, ոգեսթափության կոչ է անում: Այս մտտիվն առաջ է բերում յուրատեսակ գաղափարական ընդհանրացում. ետ նայիր ու գնա առաջ: Այդ «առաջն» արդեն ներկայացում չէ, սկիզբ է առնում պատմության իրական զգացողությունն ու ճանաչողությունը:

Հեղինակն աստիճանաբար լայնացնում է պատմության ընկալման ու երգիծական մեկնաբանության ներքին իմաստաբանական սահմանները:

Պատմության գլխավոր դերակատարներից Սիմոնյանին առանձնապես հետաքրքրել է Ներոնը, և պատահական չէ, որ նրա ողջույնի խոսքը երգիծապատումի գաղափարական-փիլիսոփայական խտացումներից է՝ պատմական Նոր հայեցակետի առաջջբաշման իմաստով:

Աղասի Հովհաննիսյանը Սիմոն Սիմոնյանին նվիրված մի հուշապատկերում («Սիմոն Սիմոնյանը Թեհրանի մեջ») հետաքրքիր դրվագ է երկրորդում: «Նոր հայտնություն մը ըրած եմ, որ պիտի զարմացնէ բոլորիդ:

- Ի՞նչ է այդ յայտնութիւնը. - հետաքրքրուած հարցրին սեղանակիցները:

- Ներոնը հայ ժողովրդի բարեկամ մըն էր...

- Ի՞նչ կ'ըսես սիրելի Սիմոնեան... ատ քո նկարագրած հայ երգիծական պատմութիւն մըն է. - միջամտեց Գարեգին Սրբազանը:

- Այո, Սրբազան Հայր, ատիկա երգիծական մասն է... Ես փաստեր կը ներկայացնեմ յոյն պատմագիրներէն, կենդանի եւ վավերական փաստեր, որ Ներոնը հայ ժողովրդի բարեկամ մըն էր՝ ան ալ աղուոր բարեկամ մը:

- Ի՞նչ էր Ներոնի հայասիրութեան դրդապատճառը. - հարցրեց ճարտ. Վ.Առաքելեանը:

- Ներոնը սիրահարուած էր հայոց թագաւորի գեղանի քրոջը եւ այդ իսկ պատճառով ալ վերաշինել տուեց մայրաքաղաքը եւ հարիւրավոր ուրիշ քաղաքներ ու ավաններ, ինչպէս նաեւ բազմաթիվ կամուրջներ ու ճանապարհներ՝ Հայաստան ուղարկելով հարիւրավոր ճարտարապետներ, քանդակագործներ, կամուրջ կապողներ ու հազարաւոր բանուորներ՝ հայոց արքունիքի գեղանի արքայադուստրին սիրտը շահելու համար: Սակայն հայոց արքայադուստրը չփոխադարձեց ժամանակի մեծագոյն կայսեր

³¹² Նույն տեղում, էջ 46:

³¹³ Նույն տեղում, էջ 47:

սիրոյն, զայն տագել ու աննորմալ համարելով... Այս բոլորը շուտով թղթին կը յանձնեն, որպէս պատմական իրողութիւն»³¹⁴:

Ներոնի կերպարը տնապէս հետաքրքրել է Սիմոնյանին և պատահական չէ, որ երգիծապատումում նա բավականին համաձայն դիտարկումներ է անում՝ վերաարժևորելով կայսեր պատմական դերակատարութիւնը:

Ներոնը հայ ժողովրդի ծննդյան տասնհազարամյակի տոնակատարութեանն է եկել՝ «ջնջելու պատմութեան եւ պատմագրութեան մեծագոյն անարդարութիւնը եւ ապա յայտարարելու ու հաստատելու մեծագոյն ճշմարտութիւն մը»³¹⁵, որ ինքը հայ ժողովրդի ամենամեծ, ամենամեծագոյն և թերևս միակ օտար բարեկամն ու բարերարն է եղել: «Միլիոններ ու միլիառներ ծախսեցի ձեզի համար: Ձեր ո՞ր իշխանն ու թագաւորը, կամ հայազգի ո՞ր բիւզանդական կայսրը ինձմէ անելի բարիք բերաւ Յայաստանին: Ձեզ չկտորեցի, չաքսորեցի, չջնջեցի ձեր անկախութիւնը, ընդհակառակն ձեզի երեքդարեան թագաւորութիւն տուի, վերակառուցի ձեր մայրաքաղաքը՝ Արտաշատը եւ շինել տուի ձեր ամենէն շքեղ տաճարը՝ Գառնին, եւ այս բոլորին փոխարեն՝ ձեր գիրքերուն ու յիշողութեան մէջ գիտ կը ճանչնաք Յռոմայեցիներու եւ Եւրոպացիներու պէս, իբրէն անգութ եւ մարդասպան»³¹⁶: Մինչդեռ ապերախտ ու անմիտ հայ ժողովուրդը, որ բարերարներին ասել գիտի և ոչնչացնողներին՝ օրհնաբանել, պաշտեց Թեոդոս թագավորներին ու Ստալին հայրիկներին: «Իմ միակ յիմարութիւնս եղաւ հայասիրութիւնը»³¹⁷, - դառնորէն եզրակացնում է կայսրը: Արտահայտութիւնը «երկու շրջումներով» («Յիմար էի, որովհետեւ հայասեր էի: Յայասեր էի, որովհետեւ յիմար էի») տարածվում է սրահում՝ առաջ բերելով տարակարծիք քննարկումներ, որոնք խոսքի ու դրոյթի ծաղրի տպավորիչ պատկերներ են՝ կոմիկականի կարևորագոյն հատկանիշի՝ հակադրութեան (հակասութիւն) հմուտ կիրառմամբ:

Այսպէս, ամեն մեկը ձգտում է արդարադատ ու պերճախոս երևալ: Առանձին պատկեր-իրադրութիւնների միջոցով Սիմոնյանը փորձում է տալ հայ ժողովրդի պատմութեան շարժման ու զարգացման ներքին փոփոխութիւնները՝ ինքնատիպ ու անսովոր իրավիճակների մէջ դնելով կերպարներին: Նրա թատերական ֆանտազիաները նոր գոյներ են բերում հայ երգիծաբանութիւնը: Քաղաքական սուր ենթատեքստ ունեն Փոթր Միերին ու Սասունցի Դավթին որոշակի պայմանադրումներով տոնահանդեսին հրավիրելու դրվագները, Ստալինի ու Բելի ճեպագրույցը հայ ժողովրդի ճակատագրի շուրջ, «Ժամանակէն առաջ» կենդանի պատկերը՝ հայ չորս կուսակցութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ, հայ ժողովրդին «հասցեագրված» բազմաթիվ հեռագրեր (Օշական գյուղի կոլխոզի բրիգադավար Եզնիկ Մաշտոցյանից, հայերի աստված, Յարդգող Վահագն Վահեվախյանից, Դազար Փարպեցուց, Վասակ Սյունուց, Անաստաս Միկոյանից, Դավթի որդի Միերից և այլն): Այդ ամենը հեղինակը փորձում է ներկայացնել հատկապէս հեզնանքի, զավեշտի, պարողիպի ու սատիրայի միջոցով: Ստալինն ակնհայտ ափսոսանքով է մասնակցում հայ ժողովրդի գոյատևման կենսահաստատ ուժը փաստող տոնահանդեսին. «Ախ, եթէ 1953 մարտի 5-ին սպանուած չըլլայի եւ երկու տարի եւս ապրած ըլլայի, Տասնհազարամեակ տօնելու այս յոգնութենէն ազատած կ'ըլլայի այս բազմութիւնը»³¹⁸: Յետևում է ծաղրը. իր հարյուր-հազարավոր արձանների մէջ, այդուհանդերձ, «ամենէն վիթխարին շինած էին հայերը»³¹⁹, իսկ ինքն այդ բարձունքից «նաբուզողոնսորեան ամեհի արձանիս մէջէն տիւ եւ գիշեր կը դիտէի Երեւանն ու բովանդակ Այրարատեան

³¹⁴ **Յովհաննիսյան Ա.**, Յուշապատկերներ, Ե., «Մ.Վարանդեան» հրատ., 1993, էջ 42:

³¹⁵ **Սիմոնյան Ս.**, Կը ինդրուի... խաչածնել, էջ 80:

³¹⁶ Նոյն տեղում, էջ 84:

³¹⁷ Նոյն տեղում, էջ 84:

³¹⁸ Նոյն տեղում, էջ 59:

³¹⁹ Նոյն տեղում, էջ 58:

դաշտը եւ ստալինեան (պողպատեայ) լռութեամբ կը խորհէի թէ ինչպէս պիտի մաշեցնեմ հայ ժողովուրդը...: Արդէն բաւական հալեցուցեր էի հայ ժողովուրդը եւ իր թիւը մէկ միլիոնէն վար բերեր էի»³²⁰:

Սիմոնյանը Նոր, ուշագրավ որակներ է փնտրում Տրդատ արքայի մարդկային ճակատագրում՝ այն հակադրելով պատմագիրների հաղորդած ծանոթ պատումներին: Սիմոնյանին հաջողվել է առաջ քաշել լուրջ կրոնաբանական հարցադրումներ և պատմության մեկնաբանությունը կասկածի տակ դնել: «Ինչու՞ դաւանափոխ եղայ... Ինչու՞ քանդեցի հին աստուածները եւ աներեցի անոնց մեհեանները»³²¹ - այս հարցին է կոչված պատասխանելու Խոսրովի սեգ որդին՝ ի ցույց դնելու պատմական ճշմարտությունը, թէ «Հայոց Քրիստոնեութիւնը սիրահարութիւն մըն է՝ խօյ ու խելագար», և «Եթէ Հռիփսիմէի քիթը քիչ մը երկար ըլլար կամ հասակը՝ կարճ, ես պիտի չսիրահարեի իրեն եւ քրիստոնեայ պիտի չդառնայի: Եւ եթէ ես քրիստոնեայ դարձած չըլլայի, հայ ժողովուրդը երբե՞ք քրիստոնեայ պիտի չդառնար եւ մտար հեթանոս...»³²²: «Իմ հավատքիս մէջ չգտայ իմ սիրածս: Ատոր համար դաւանափոխ եղայ: Եղայ քրիստոնեայ: ...Ես հասայ սիրածիս իր հաւատքով»: Սիմոնյանի Նորահայաց պատմափիլիսոփայությունը երկում իր բարձրագույն մարմնավորումը գտնում է Ներքին ուժեղ դրամատիզմով ու քնարականությամբ հագեցած այս խոհածությունների մեջ:

Դիմելով հիմնականում գրոտեսկային պարողիային՝ Սիմոնյանը փորձում է հաղթահարել անցյալի միֆականությունը, պատմականությունն ու կարծրատիպերը: «Հայ ժողովուրդը պիտի կարենա՞յ այրել *ամեն բան*, զոր պաշտած է, եւ պաշտել այն ամեն բան, զոր ատած ու Նզոված է, - Նշել է Սիմոնյանը Կ.Փոլստյանի հետ գրուցախոսելիս, - հրաշալի յետադարձ ակնարկի մը (մեր անցեալին վրայ) եւ հրաշալի հեռաւոր հայեացքի մը(մեր ապագայի վրայ) պէտք ունինք՝ իսկապէս փրկուելու համար»³²³: Երգիծական հնարներով վերաիմաստավորելով Տիգրան Մեծի, Տրդատի, Գրիգոր Լուսավորչի, Մեծն Թեոդոս Ա-ի, Ներոն կայսեր և այլոց դասական կերպարները՝ Սիմոնյանը հանգել է դրանց պատմական իմաստների քայքայմանը:

«Կը ինդրուի... խաչածնել»-ը թեև երգիծապատում է, բայց հայոց պատմության տոնահանդեսը բնավ էլ կատակերգական-գավեշտական գունավորում ձևավորելու նպատակով չի հղացված: Ինչպէս հեղինակն է նշել՝ «Գիրքին հիմնական խորքը հայ ժողովուրդին հավերժութեան տաճնապն է»³²⁴: Այն հայոց հազարամյա պատմության ինքնօրինակ դատաքնությունն է, ինչը հեղինակը զարգացրել է պատմության քարացածության, անշարժության, այսպէս ասած մեռած ձևերի ու մեկնությունների հետ ունեցած հակադրության տեսանկյունից: Այդ իմաստով երգիծապատումն ունի վերապատմական բնույթ:

«Կը ինդրուի... խաչածնել»-ը, որպէս Սիմոնյանի առաջին գեղարվեստական ստեղծագործություն, ջերմ ընդունելություն գտավ ժամանակի մամուլում, հատկապէս Սիմոնյանի խմբագրած «Սփյուռք» շաբաթաթերթի էջերում³²⁵: Անդրադարձները

³²⁰ Նույն տեղում, էջ 59:

³²¹ Նույն տեղում, էջ 130:

³²² Նույն տեղում, էջ 131:

³²³ «Սփիւռք», 1985, թիվ 1, էջ 25:

³²⁴ «Սփիւռք», 25 օգոստոսի, 1965թ., թիվ 33, էջ 3:

³²⁵ **Կարևորյան Յ.**, Նոր գրքեր(Ս.Ս.-ի «Կը ինդրուի... խաչածնել» գրքի մասին), «Սփիւռք», 12 նոյեմբերի, 1965թ., էջ 11-12, **Միքայելյան Գ.**, Սիմոն Սիմոնյան և Հինտու փիլիսոփայությունը («Կը ինդրուի... խաչածնել» գրքի մասին), «Սփիւռք», 25 օգոստոսի, 1965թ., էջ 3-4, **Նավասարդյան Բ.**, Արիամիտ հանդգնություն (Ս.Ս.-ի «Կը ինդրուի... խաչածնել» գրքի մասին), 28 հուլիսի, 1965, էջ 3-10, **Ֆրանգույան Ա.**, Գրախոսություն Ս.Ս.-ի «Կը ինդրուի... խաչածնել» գրքի մասին, «Սփիւռք», 18 օգոստոսի, 1965, էջ 3, **Էսմյուրյան Տ.**, Գրադատություն Ս.Ս.-ի «Կը ինդրուի... խաչածնել» գրքի մասին, «Սփիւռք», 6 ապրիլի, 1975թ. էջ 5 և այլն:

խորքային չէին և հիմնականում կրում էին դրվագային բնույթ: Գրախոսները շտապեցին արձանագրել Սիմոնյանի գեղարվեստական հաջողությունները, ծանոթացնող խոսք ասել հեղինակի մասին: Հայրենիքից արձագանքեց Նան Գուրգեն Մահարին, որ, ի դեպ, առանձնակի վերաբերմունք ուներ Սիմոնյանի հանդեպ: «Սրամտություն պյուս երևակայության ուժգնություն,- ահա թո գործի երկու ուժեղ թևերը, որոնք գրվածք դարձրել են իսկապես թևավոր: Անակնկալներ, ծիծաղելիորեն ողբերգական ու ողբերգական լինելու չափ ծիծաղելի դրություններ և բախումներ տվել են վարպետորեն, բանիմաց գրչով... Հիանալի է, ինքնատիպ, ... հանդուգն և համայնապատում, համայնապարփակ»³²⁶: Այդքանով հանդերձ՝ Մահարին նկատեց, որ չի երևում գործի «խարիսխը»՝ խորհուրդ տալով Սիմոնյանին կենտրոնանալ «այսօրուայ Հայաստանի» (իմա՝ խորհրդային) վրա: Սիմոնյանը պատասխանեց Մահարուն «Սփիւռք»-ի նույն թվականի հոկտեմբերի 15-ի, 22-ի, 29-ի համարներում՝ ուշագրավ պարզաբանումներ անելով երկի կառուցվածքի, գրության շարժառիթների, գաղափարական ընդհանրացումների շուրջ: «Յայտնեմ-ցաւով-որ այդ գործը գրուած է մաս առ մաս, ժամանակ առ ժամանակ, հաճախ տողաշարի արագութեամբ, ... երբ «ՍՓԻՒՐՔ»-ի մեջ նկատուած է պարսպ էջ մը, զոր հարկ եղած է լեցնել...»³²⁷: Հենց դա էլ Սիմոնյանը համարում է իր գործի ինչպես «մեղքը», այնպես էլ «առավելությունը»: «Մեղքը՝ հաճախ իր ստեղծած *ոճական եկուութեամբը*, առաւելութիւնը՝ իր ստեղծած զրգիռով, թափով ու արագութեամբ»³²⁸: Սիմոնյանը երկի միակ խարիսխը հայ ժողովրդի հավերժությունն է համարում, նրա հավերժության տաճակալը և հորդորում Մահարուն՝ փարատելու «նախաւոր երկիւղը» այդօրյա ապրող ու ստեղծագործող Հայաստանի ժխտումը տեսնելու Սասունցի Դավթի դատաստանի մեջ, քանզի «արդարները երկիւղ ունենալու պատճառ չունին»³²⁹, իսկ մեղաւորները «կրնան այժմէն տանիլ Հայոց վերջին դատաստանին սարսափը»³³⁰:

Ամփոփում

Սիմոն Սիմոնյանի «Կը խնդրուի...խաչածեւել» ստեղծագործության մեջ առանձնանում է մի կարևոր գիծ, որը կապվում է հայոց պատմության երգիծական պատկերման ու նորոպի մեկնաբանման հետ: Հանձն առնելով երգիծանքի այլևայլ միջոցներով պատմության մերժելի երևույթները ներկայացնելու, պարադոքսները բացահայտելու, միջականությունը բողազերծելու առաքելությունը՝ Սիմոնյանը փորձում է կերպարների ինքնախոստովանանքային հնարքով վերաիմաստավորել հայ ժողովրդի պատմական ընթացքը՝ «տեսելու եւ չմեծնալու» կանխասահմանվածությամբ: Այս առումով երկն ունի պատմափիլիսոփայական ներքին ուղղվածություն: Երգիծական միջոցների նորահնար կիրառությունները երևան են հանում Սիմոնյանի աշխարհընկալման ու լեզվամտածողության ինքնատիպությունը, տեսանելի դարձնում պատկերի կերտման գեղարվեստական յուրահատկությունները: Երկի ժանրային ու կառուցվածքային առանձնահատկությունները նույնպես Սիմոնյանի աշխարհայացքի արտահայտման դրսևորումն են: «Կը խնդրուի...խաչածեւել»-ն էականորեն տարբերվում է դասական թատերգությունից թե՛ կառուցվածքով, թե՛ ասելիքի ձևով, և իրականում գործ ունենք համադրական տեսակի հետ: Պատմության գլխավոր դերակատարներին (իրական ու միջա-արթետիպային) երգիծելիս Սիմոնյանի ծաղրը ձեռք է բերում

³²⁶ «Սփիւռք», 6 հոկտեմբերի, 1965, թիվ 39: Այնուհետև «Սփիւռք»-ի նույն թվականի 15-ի, 22-ի, 29-ի համարներում հետևում է Սիմոն Սիմոնյանի պատասխանը Գուրգեն Մահարուն:

³²⁷ «Սփիւռք», 15 հոկտեմբերի, 1965թ., էջ 1:

³²⁸ Նույն տեղում, էջ 1:

³²⁹ Նույն տեղում, էջ 2:

³³⁰ Նույն տեղում, էջ 2:

AN ATTEMPT OF SATIRICAL DEPICTION OF ARMENIAN HISTORY IN SIMON SIMONIAN'S BOOK «IT IS ASKED ... TO CROSS»

TEHMINA MARUTYAN

*Goris State University, Vice-rector,
Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA), Member,
The «Scientific Artsakh» Journal, Deputy Editor-in-Chief,
Ph.D in Philology, Associate Professor,
Goris, Republic of Armenia*

This article is devoted to the examination of famous Lebanese-Armenian writer Simon Simonian's book "It is Asked ... to Cross" with an ideological emphasis on the satirical depiction of Armenian history. By revealing the forms of satire in Simonian's artistic thinking, we have evaluated the genre, structural, ideological and artistic features of the work, which determines the relevance of the article. There is an important line in the work that is linked to the satirical depiction of Armenian history and its new interpretation. Taking the mission of presenting the reprehensible phenomena of history, revealing paradoxes, unveiling myth by other means of satire, Simonian made an attempt to give a new meaning to the course of Armenian history through the self-confession of the characters. In this regard, the book has historical and philosophical internal directions. While satirizing the main actors of history, Simonian's mockery acquires various nuances that are characterized by remarkable contextual emphasis, as well as serve to solve various aesthetic issues.

Based on the purpose and objectives of the research, hermeneutical and historical methods were applied in the article.

Key words: *Simon Simonian, artistic devices of satire, dramaturgy, Armenian history, philosophy of history.*

ԳՆՏԱԿԱԼ ԱՐՅԱԿ SCIENTIFIC ARTS AKH НАУЧНЫЙ АРЦАХ № 2(5), 2020

**ПОПЫТКА САТИРИЧЕСКОГО ИЗОБРАЖЕНИЯ АРМЯНСКОЙ
ИСТОРИИ В ПРОИЗВЕДЕНИИ СИМОНА СИМОНЯНА
«ПРОСИМ... СКРЕСТИТЬ»**

ТЕЙМИНА МАРУТЯН

*проректор Горисского государственного университета;
член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА);
заместитель главного редактора журнала «Научный Арцах»;
кандидат филологических наук, доцент,
г.Горис, Республика Армения*

В статье анализируется сочинение знаменитого ливанского прозаика армянского происхождения Симона Симоняна «Просим... скрестить» и акцентируется внимание на сатирическом воспроизведении истории Армении в этом произведении.

Актуальность статьи заключается в раскрытии сатирических форм, развернутых в художественном мышлении С. Симоняна, в оценке их жанровых, структурных и идейно-эстетических особенностей. Лейтмотивом произведения становится сатирическая проекция истории Армении и ее новая интерпретация.

С. Симонян предпринял попытку с помощью различных сатирических приемов представить отвергаемые исторические факты, раскрыть парадоксы, разоблачить мифы и с помощью приема исповеди персонажей произведения переосмыслить исторический путь армянского народа. С этой точки зрения сочинение имеет внутреннюю историко-философскую направленность. В случае, когда С. Симонян высмеивает главных действующих исторических лиц, его сатира приобретает различные оттенки, которые характеризуются многозначительной подтекстуальной акцентуализацией, а также служат решению различных эстетических задач.

Исходя из цели и задач исследования, в статье были применены герменевтические и исторические методы.

Ключевые слова: *Симон Симонян, художественные приемы сатиры, драматургия, история Армении, философия истории.*

ՀՏԴ 82.09

ԱՆՆԱ ՄԻԿՈՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
հայ բանասիրության ֆակուլտետի
հայ նորագույն գրականության ամբիոնի ասպիրանտ
«Չանգակ» հրատարակչության մեթոդիստ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն,
mikoyan.anna@mail.ru*

Հոդվածի նպատակն է առաջ քաշել այն մոտեցումը, ըստ որի՝ ֆրանսահայ գրող Չարեհ Որբունու պոետիկայի քննության և առհասարակ նրա երկերի գրականագիտական ընթերցման համար առանցքային է գրողի կերտած կերպարների անունների և ազգանունների ուսումնասիրությունը: Մեր խնդիրն է 2. Որբունու գեղարվեստական կերպարների անձնանունների օգնությամբ բացահայտել հեղինակային ասեյիքը, որը հմտորեն գաղտնագրված է կերպարների անուն-ազգանուններում:

Հետապոտության իրականացման ընթացքում հիմնականում կիրառվել է նշանագիտական մեթոդը, առանձին դեպքերում այն կուզորդվել է գրական տեքստի ընթերցման հերմենևտիկական-հոգեվերլուծական մոտեցումներով:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն ելրակացության, որ Չարեհ Որբունու կերպարների անունները պատահաբար չեն ընտրված. դրանք կամ համընկնում են կերպարների նախատիպերի անուն-ազգանունների հետ, կամ խորհրդանշական են տվյալ կերպարի կամ ստեղծագործության համար: Վերջին տարբերակը գերակշռում է գրողի երկերում: Կան հերոսի ծագումը, սեռային պատկանելությունը, կարգավիճակը, ազգությունը, բնավորությունը, արժեհամակարգը, գործունեությունը, հավվադեպ՝ նաև արտաքինը խորհրդանշող անուն-ազգանուններ, որոնցից յուրաքանչյուրը գեղարվեստական բանալի է՝ թափանցելու ստեղծագործության խորքը:

Հիմնաբառեր՝ սիյունքահայ գրականություն, 2. Որբունի, պոետիկա, նշանագիտություն, գեղարվեստական կերպարների անձնանուններ, խորհրդանիշներ, նախատիպեր:

Ֆրանսահայ գրող Չարեհ Որբունու իրական ազգանունը Էոքսյուզյան է (թուրք. նշ. Է «որբ»), որը ժամանակին գրողի ուսուցիչ Շ. Պերպերյանը, թարգմանելով հայերեն, առաջադրել է որպես իր ստեղծագործող աշակերտի գրական կեղծանուն³³¹: Ճակատագրի հեգնանքով Որբունին Եղեռնի տարիներին որբացավ, և ամբողջ կյանքում իր երկերում արտացոլեց ցեղասպանության ժամանակ որբացած սերնդի ճակատագիրն ու հոգեբանությունը: Ուշագրավ է, որ նրա՝ կոտորածի ժամանակ զոհված հոր անունը **Մարտիրոս** է: Ըստ ամենայնի, իր անձնական կենսափորձից ելնելով՝ հեղինակը

* Հոդվածը ներկայացվել է 13.03.2020թ., գրախոսվել՝ 23.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

³³¹ Միաձայն գրոյց Չարեհ Որբունիի հետ // «Բագին», Պեյրուք, 1980, թ. 10, էջ 58:

հավատացած է եղել, որ մարդկային անունները թելադրող են, ճակատագրորեն որոշիչ: Օրինակ՝ հեղինակի «Չի թո է կարողություն» վեպում **Մանուկ** անունով հերոսը կարծում է, որ իր մայրը նախապես մարգարեաբար կանխագուշակել է, որ որդին ամբողջ կյանքում մանուկ է մնալու, ուստի ժամանակին խիստ հատկանշական անուն է ընտրել որդու համար³³²: Ահա այս մտայնությամբ Որբունին իր հերոսների անուններն այնպես է ընտրել, որ դրանք իր և իր կերտած կերպարների փոխարեն խոսեն ու ներգործեն:

Հեղինակը վաղ շրջանի օրագրային նշումներից մեկում խոստովանում է, որ **Լիլի** և **Լուլու** անունով կանանցից մշտապես վտանգ է զգացել³³³, բայց ուշագրավ է, որ հետագայում ամուսնացել է Էլիզաբեթ անունով կնոջ հետ, որին մտերիմները Լիլի էին կոչում: Անվան պատճառով մարդկանց հանդեպ կանխակալ վերաբերմունք ունենալու մտայնությունը հատուկ է նաև գրողի ստեղծած կերպաներին: Օրինակ՝ «Հալածուածները» վիպաշարի գլխավոր հերոս Մինասը խոստովանում է, որ **Արշալույս Աղվորիկյանին** տակավին չտեսած՝ նրա անուն-ազգանվան ներգործությամբ սիրահարվել է աղջկան, քանի որ մտածել է, որ նա և՛ վեհաշուք արտաքինով, և՛ ազնիվ հոգով օրհորդ է: Բայց իրեն հակասելով՝ հետո հիշում է, որ արշալուսային գեղեցկությամբ ևս մեկ տիկնոջ է ճանաչում, որի ազգանունը բացարձակ համաատասիան չէ տիկնոջ կերպարին. տիկնոջ ազգանունը **Լըբեռֆ** է, որը թարգմանաբար նշանակում է «**տավարի միս**»³³⁴: Այնուամենայնիվ, Որբունու գիտակցության մեջ այնքան արմատացած է եղել անունների մոգական ուժի վերաբերյալ հավատը, որ իր կերպարներից մեկն անգամ կարծում է, թե մեռած կնոջ անունը գրելով՝ կարող է նրան կենդանության բերել³³⁵:

Զննելով Որբունու երկերի անձնանունների պոետիկան³³⁶՝ նկատել ենք, որ վերջինս կամ իր կերպարներին նախատիպերի իրական անուններով է ներկայացնում, կամ նրանց համար ընտրում է խորհրդանշական անուններ: Կարծում ենք, որ գրողը խորհրդանշական անունների ընտրության հարցում որոշակիորեն ազդվել է նաև իր սիրելի Ֆ. Դոստոևսկուց, որի երկերի անձնանունների պոետիկան մշտապես եղել է գրականագետների ուշադրության կենտրոնում³³⁷: Ուստի Որբունու պոետիկայի ուսումնասիրության մեջ կերպարների անձնանունների նշանագիտական քննությունն իսկապես անհրաժեշտ և անշրջանցելի է:

Այժմ դիտարկենք Որբունու արձակում հանդիպող անձնանունների պոետիկան հետևյալ դասակարգմամբ՝ **խորհրդանշական անուն-ազգանուններ, նախատիպերի անուն-ազգանունների հետ համընկնող գեղարվեստական անուն-ազգանուններ:**

³³² Տե՛ս **Որբունի 2.**, Չի թո է կարողություն // «Կամ», Պեյրուֆ, 1982, թ. 2, էջ 56:

³³³ Տե՛ս **Որբունի 2.**, Գրպանի տետրակներ // «Սենք» Բ Փուտիզ, 1931, էջ 74:

³³⁴ Տե՛ս **Որբունի 2.**, Հալածուածները. Թեկնածուն, Պեյրուֆ, «Սեան» տպարան., 1967, էջ

16:

³³⁵ Տե՛ս **Որբունի 2.**, Չի թո է կարողություն, էջ 70:

³³⁶ Տե՛ս գեղարվեստական երկերի անձնանունների պոետիկայի վերաբերյալ սույն տեսական անդրադարձը. տե՛ս **Տուցա Ա.**, Интерпретация онима в поэтическом тексте: оним – прецедентное имя – образ-символ, Наукові праці Кам'янець-Подільського національного університету імені Івана Огієнка, Філологічні науки, 2015, випуск 38, с. 286-289:

³³⁷ Ֆ. Դոստոևսկու երկերի անձնանունների պոետիկայի մասին տե՛ս **Բեմ Ա.**, Личные имена у Достоевского, Сборник в честь на проф. Л. Милетичь, София, 1933, С. 409-434. **Альтман М. С.** Достоевский по векам имен, Саратов, Издательство Саратовского университета, 1975. **Коган Г.**, Загадочное имя Свидригайлова: («Преступление и наказание» и периодическая печать 1860-х годов) // Известия Академии наук СССР, Серия литературы и языка, М., Наука, 1981. Т. 40. № 5. С. 426-435. **Белов С.** Имена и фамилии у Достоевского, «Телескоп», № 6 (108), 2014, С. 42-43. **Brody E.**, Meaning and Symbolism in the Names of Dostoevsky's Crime and Punishment and The Idiot, Names, 1979, Volume 27, Issue 2, p. 117-140.

1. Խորհրդանշական անուն-ազգանուններ

1.1. Աստվածաշնչյան անուններ: «Հալածուածները» վիպաշարի առաջին իսկ վեպում՝ «Փորձում»³³⁸, պատումը գլխավոր կերպարի դիտանկյունից է ներկայացվում, և գործող անձինք հիմնականում անանուն են: Բայց հետաքրքրական է, որ երկրորդական որոշ կերպարներ հանդես են գալիս **անուններով, ընդ որում՝ աստվածաշնչյան** (օր.՝ Թովմա, Կիրակոս, Սանդորո): Առհասարակ վեպում մարդկային կյանքը ներկայացվում է քառասյին ընթացքի մեջ, իսկ սուրբգրային անունների առկայությունն իսկապես սուր հակադրություն է ստեղծում: Սկսած վիպաշարի երկրորդ հատորից՝ գլխավոր հերոսը նույնպես ձեռք է բերում աստվածաշնչյան անուն՝ **«Մինաս»**: Սակայն նախքան վիպաշարի երկրորդ հատորը ստեղծելը Որբունին վիպաշարի մեջ չմտնող «Եվ եղև մարդ»³³⁹ վեպն է գրում, որի գլխավոր կերպար **Թոմասն** ասես վիպաշարի Մինասի կրկնակը լինի: Նրանք նույնանուն են ճակատագրով, փոփոխական էությունը և մարդկանց հետ ունեցած հարաբերություններով: Հարցազրույցներից մեկում Որբունին հաստատում է, որ Մինասն ու Թոմասը նույնական են, դրա համար էլ նրանց անուններն ինքնաբերաբար համահունչ են ընտրվել³⁴⁰: Սակայն մեր կարծիքով Թոմաս անվան ընտրությունը կապված է **Թովմա** առաքայլի անվան հետ: **Թովմա նշանակում է «երկվորյակ»**³⁴¹, իսկ վիպական Թոմասը դրսևորում է հոգեկան երկվորություն, հակասական է, տատանվող ու կասկածամիտ: Բացի այդ, Որբունու սիրելի հեղինակներ Մորիս Բլանշոն և Ջյուլիա Համսունն էլ ստեղծել են նույնանուն ու նույնաբնույթ կերպարներ: Մորիս Բլանշոյի «Մուլթ Թովման»³⁴² վիպակի համանուն կերպարը և Ջյուլիա Համսունի «Պան» վեպի³⁴³ Թոմաս Գլանը ևս դրսևորում են երկվորություն, ուստի նրանց անվան ընտրությունն էլ է կապվում համանուն առաքայլի հետ:

Որբունին մի առիթով խոստովանել է իր վաղ շրջանի ստեղծագործությունների վրա համսունյան ազդեցության մասին³⁴⁴: «Փորձ» վեպի և Ջյուլիա Համսունի «Սով» վեպի³⁴⁵ ընդհանրություններն ակնհայտ են: Հարկ է նկատել նաև, որ Համսունի «Սով» վեպի կերպարը Որբունու «Փորձ» վեպի կերպարի պես անանուն է, սակայն հաջորդող վեպում («Պան» վեպը «Սով» վեպի շարունակությունն է, ինչպես որ «Հալածուածները» վիպաշարի մնացյալ վեպերը՝ առաջին վեպի՝ «Փորձ»-ի շարունակությունը) անանուն կերպարը անվանվում է Թոմաս, ինչպես որ Որբունու կերպարը՝ Մինաս:

Աստվածաշնչյան անուն է նաև «Սիզիփոսեան տեսիլք» նորավեպի³⁴⁶ կերպարի՝ **Հակոբի անունը**: Հրեական «Հակոբ» (Jacob) անունը, ըստ Սուրբ Գրքի, նշանակում է **«խաբող»** կամ **«կրնկակոխ հետևող, կրունկից բռնող, վրա հասնող»**: Ըստ Հին Կտակարանի՝ Հակոբը ժամանակից շուտ է ծնվել, որպեսզի երկվորյակ եղբորը հասնի և կրունկից բռնի (հատ. 2): Իսկ նորավեպի կերպարը գնացքը բաց թողնելուց հետո որոշում է անձրևի տակ համառորեն վազել՝ գնացքը բռնելու համար մյուս գյուղի

³³⁸ Տե՛ս **Որբունի 2.**, Եվ եղև մարդ, Երևան, «Հայաստան» հրատ., 1967, էջ 13-95:

³³⁹ Նույն տեղում, էջ 99-225:

³⁴⁰ Տե՛ս «Չարեհ Որբունիի հետ» հարցազրույցը // «Սփիւռք», Պեյրուս, 1966, սեպտեմբեր 29, թ. 38, էջ 11:

³⁴¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Եր., Պետ. համալս. հրատ., 1944, հտ. 2: Հետայսու սույն բառարանին կտրվեն հղումները փակագծով, որում կնշվի համապատասխան հատորը:

³⁴² Տե՛ս **Blanchot M.**, Thomas the Obscure, New York, State Hill Press, 1995:

³⁴³ Տե՛ս **Համսուն Կ.**, Պան, Երևան, «Հայաստան» հրատ., 1971:

³⁴⁴ Տե՛ս **Որբունի 2.**, Նամակներ կնոջս Երևանեն // «Աշխարհ», Փարիզ, 1975, դեկտ. 27, թ. 927, էջ 2:

³⁴⁵ Տե՛ս **Համսուն Զ.**, Սով, Երևան, «Ապոլոն» հրատ, 1995:

³⁴⁶ Տե՛ս **Որբունի 2.**, Անձրեւտ օրեր, Փարիզ, «Ամսօրեակ» հրատ., 1958, էջ 125-130:

կայարան հասնելու որոշմամբ: Թեև հասնելն անհնար էր, Յակոբը հայտարարում է, որ կարևորը վազելն է, ոչ թե հասնելը: Պարզ է, որ Որբունին կերպարին կոչել է «Յակոբ»՝ վազելու և գնացքը բռնելու գործողության համար:

Առհասարակ Որբունու ստեղծագործություններում մի շարք անուններ հեղինակն այնպես է ընտրել, որ դրանք մատնանշեն տվյալ **կերպարի հետ կապված որևէ դիպված, հատկանշական գործողություն**: Օրինակ՝ վիպաշարի Վահագը պատերազմի աստծո անունով է կոչվել, քանի որ «Թեկնածուն» վեպում նրա գլխավոր գործողությունը թրթասպանությունն է: Մեկ այլ հատկանշական օրինակ «Կարապին երգը» պատմվածքի³⁴⁷ պատերազմում զինվոր **Գաթունը** որոշում է չպայթարել, ընթացող կռիվը իրենը չի համարում. նա ասես օտար է իր հայրենիքում: «Գաթուն» անունը ամենայն հավանականությամբ գերմանական **«Գաստոն» (Gaston)** անունն է, որի հիմքում գերմ. **«gast»**-հյուր արմատն է³⁴⁸, որն իսկապես հատկանշական է այս պատմվածքի կերպարի ինքնադրսևորմանը:

1.2. Գործողություն կամ հատկանիշ մատնանշող անուններ: Առանձին խումբ են կազմում այն անունները, որոնք ընտրված են՝ **մատնանշելու կերպարի էությունը, բնավորության ամենահատկանշական գիծը**: Օրինակ՝ «Չի քո է կարողություն» վեպի Մանուկը, ինչպես նշվեց, կարծում է, որ իր անունը ուղիղ համեմատական է իր էությանը: Եվ, իսկապես, Մանուկը, հասուն տարիքի տղամարդ լինելով, մանկան պես կապված էր մորը, նախածեռնող չէր, անձնական կյանքում անհաջողակ էր, ինքն իրեն «մակաբույծ» էր համարում թե՛ հոգեբանական, թե՛ սոցիալական առումով: Վ. Շուշանյանն էլ ստեղծել է **Չավեն Մանկունի** անունով նմանատիպ կերպար, որն ինքնությամբ նույնանում է հեղինակի հետ³⁴⁹: Ուշագրավ է, որ Որբունին էլ մի առիթով Գ. Մահարուն խոստովանել է, որ իր մեջ մանուկ է ապրում և ինքն իրեն այդպիսին է համարում. «Մեծ հայրիկս զմայլելի գինով մըն էր, ինծի պես մանկական հոգիի տեր (գիտե՞ս, որ քուկին ալ բարեկամդ մանկական և միամիտ մեկն է)»³⁵⁰:

«Թեկնածուն» վեպում կա **Աբգար** անունով կաղ կերպար, որի անունը, օրինակ, ընտրվել է՝ ընդգծելու **թե՛ հերոսի հոգեկան, թե՛ մարմնական թերությունները**: Իզմիրից Ֆրանսիա գաղթած այս կերպարը կաղ է, որովհետև մայրն ու հայրը մանուկ ժամանակ այնքան էին ծեծել նրան, որ մի ոտքը հաշմվել էր: Հաշմված էր ոչ միայն մարմինը, այլև հոգին, քանի որ ծայրահեղ մարդատյաց էր, սադիստական հակումներ էր դրսևորում, որոնցով արտամղում էր իր մեջ կուտակված մանկական քենն ու անձնական խռովքը: Աբգարի նախատիպը մի իզմիրցի կաղ երիտասարդ է, որը Որբունուն Մարսելից Փարիզ տեղափոխվելիս դիմավորել էր և օգնել, որ աշխատանքի անցնի հենց այն պանդոկում, որում պատկերվում են «Թեկնածուն» երկի գործողությունները: Բայց ուշագրավ է, որ այդ դիպվածից մոտավորապես քսանհինգ տարի հետո Որբունին իր օրագրում կաղի մասին նշում է, որ նրա անունը ոչ մի կերպ չի կարողանում մտաբերել³⁵¹: Ուստի վեպում կաղի կերպարը ստեղծելով՝ անվանում է նրան Աբգար, որն, ըստ հայագետ Ա. Կարիերի ստուգաբանության, նշանակում է «կաղ»³⁵²:

³⁴⁷ Տե՛ս **Որբունի 2.**, Կարապին երգը // «Անդաստան», Փարիզ, թ. 13, էջ 49-61:

³⁴⁸ Տե՛ս **Kohlheim R., Kohlheim V.**, Das grobe vornamen-lexikon, Berlin, Duden, 2016:

³⁴⁹ Տե՛ս **Շուշանյան Շ.**, Չավեն Մանկունիի սերերը // «Նոր-Դար», Երևան, 1996, թ. 1-2, էջ 8-56:

³⁵⁰ **Որբունի 2.**, Կենսագրական շաղակրատություն Գ. Մահարիի հետ // «Սովետական գրականություն», թ. 8, էջ 130:

³⁵¹ Տե՛ս **Որբունի 2.**, Օրագրի էջեր // «Շիրակ», Պեյրուֆ, 1982, թ. 9, էջ 30:

³⁵² Տե՛ս Կարիեր Ա., Աբգարու զրոյցը Մովսես Խորենացու պատմութեան մեջ, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1987, էջ 64:

1.3. Գաղափար արտահայտող անուններ: Որքանու արձակում կան վիպական այնպիսի կերպարներ, որոնց հեղինակն առարկայական գծերով չի օժտել. Նրանք ասես ուրվականներ կամ սովերներ լինեն, որոնք ստեղծվել են իրենց կերպարով **որևէ գաղափար առարկայացնելու համար:** Նրանց **անուններն էլ ուղղակիորեն արտահայտում են այն գաղափարը, որը մարմնանում է նրանց կերպարում:** Այդպիսիք են՝ «Ասֆալթը» վեպի³⁵³ **Չարությունը**, «Թեկնածուն» վեպի **Արշալույսը** և «Դագաղագործը որպես մեռելներու համարատու» պատմվածքի³⁵⁴ **Պասկալը:** **Չարությունը** հայտնվում է այն պահին, երբ գլխավոր կերպար Մինասը կնոջ՝ Նիթոլի մահից հետո վերադառնում է տպարան՝ աշխատանքի: Չարությունն այնքան խորհրդավոր կերպար է, որ ասես անկյութական լինի, խոսելիս ձայնը բերանից չի դուրս գալիս: Բացի այդ, Մինասը խոստովանում է, որ իր վերադարձից հետո ասես առաջին անգամ է տեսնում ու ճանաչում Չարությունին, թեև վաղուց են իրար հետ աշխատում: Չարությունը նրան հայտնում է Խաչիկ Մանուկյանի՝ Մինասի սիրելի ընկերոջ մահվան մասին: Պատահական չէ, որ վեպում Չարությունը հայտնվում է այն ժամանակ, երբ հերոսը բախվում է երկու թանկագին մարդկանց մահվան փաստին: Կարծում ենք, որ Չարությունն իր անունով ու գործառույթով մարմնավորում է Մինասի հոգում իր մեռած սիրելիների վերածնության հույսը: Չարությունի մարմնավորած գաղափարը վերջնականորեն հաստատվում է Զրիստոսի հետ անուղղակի զուգորդման մեջ. ասվում է, որ այնպիսի կեցվածքով է քայլում փողոցում, ասես օվկիալոսի վրայով քայլի³⁵⁵:

Չարության գաղափարի մարմնացումն է նաև վերոնշյալ պատմվածքի **Պասկալը**, որի անունը լատ. «Paschalis» (Չատկի տոն)³⁵⁶ անվան ֆրանսերեն տարբերակն է (հմմտ. ռուս. «Пасха»), որը Զրիստոսի հարության տոնն է և սովորաբար նշվում է ապրիլին: Պասկալը հմուտ դագաղագործ է և գիտի, որ ապրիլին ո՛չ հարուստներն են մեռնում, ո՛չ էլ աղքատները: Բոլորը ուզում են ապրել, քանի որ ապրիլը ապրելու ամիս է: Նրա կարծիքով ապրելը մեռելուն պատրաստվելու գործընթաց է, այսինքն՝ մեկի վերջը մյուսի սկզբի մեջ է, իսկ դա հանգեցնում է վերածնության գաղափարին:

Նոր սկզբի գաղափարը կա նաև «Թեկնածուն» վեպի **Արշալույսի** կերպարում: Ի սկզբանե ներկայացվում է գլխավոր հերոսի սևեռվածությունը Արշալույսի անվան վրա. նրան չտեսած՝ մտածում է, որ աղջիկը պետք է իր անվան նման ազնիվ երություն ունենա և չնայած ամուսնացած լինելուն՝ լինի անաղարտ, դեռատի օրիորդ: Եվ իսկապես Արշալույսը Մինասի ընկերոջ հետ ամուսնացել էր, բայց ամուսինը՝ Վահագնը, տակավին կնոջ հետ չկենակցած, ինքնասպան էր եղել: Դրանից հետո Արշալույսը ցանկանում էր Մինասի հետ միություն կազմել, սակայն վերջինիս կյանքում կար կին, որն արդեն փոխել էր նրա կյանքը: Ուստի Մինասը որոշում է, որ Արշալույսն իր կաղ ընկերոջ բովանդակագուրկ կյանքում կարող է բարերար դեր խաղալ: Անարգված մանկությամբ կաղի կերպարին արդեն անդրադարձել ենք՝ ընդգծելով նրա հոգեխեղման հիմնապատճառները: Բայց Արշալույսի հետ միության լուծումը հասկանալու համար հարկ է դիտարկել Աբգարի կերպարի հետ կապված վիպական որոշ մանրամասներ: Նախքան Արշալույսի հայտնվելը, կյանքի հանդեպ չարացած Աբգարը այգաբացին երկար կանգնում էր կամուրջի վրա և դիտում նոր արթնացող աշխարհը: Նրա ապրումները հետևյալ կերպ են նկարագրվում. «Ամբողջ զգայարաններովը կը վայելէր փողոցներուն անսովոր տեսարանը ճերմըկող գիշերուան մեջ՝ որ օրուան կուսութիւնն է: Իրաւ որ կուսութիւնը պղծողի ցանն ու վայելքը կ'ունենար»³⁵⁷: Առհասարակ մեր աչքից չի վրիպել,

³⁵³ Տե՛ս **Որբունի Զ.**, Չալածուածները. Ասֆալթը, «Սեան» տպարան, Իսթանպուլ, 1972:

³⁵⁴ Տե՛ս **Որբունի Զ.**, Անձրեւոտ օրեր, էջ 131-140:

³⁵⁵ Տե՛ս **Որբունի Զ.**, Չալածուածները. Ասֆալթը, էջ 237:

³⁵⁶ Տե՛ս **Hanks P., Hodges F.**, A dictionary of first names, Oxford University Press, 2003:

³⁵⁷ **Որբունի Զ.**, Չալածուածները. Թեկնածուն, էջ 103:

որ հատկապես առավոտյան Աբգարը կերպարանափոխվում էր՝ դառնալով ավելի մեղմ, մարդամոտ ու քաղցրախոս³⁵⁸: Իսկ մի դիպվածով Աբգարի ըմբոստ ու կոպիտ դեմքին հայտնված ծալիտը համեմատվում է **ամռան արշալույսների** հետ³⁵⁹, որը վերջնականորեն հաստատում է, որ Արշալույսի հետ միությանը Աբգարի հոգու մաքրագործման, փրկության ու վերածնության խորհուրդն է բովանդակում:

1.4. Կույս կերպարների անուններ: Նկատելի է, որ Որբունին իր երկերում **չամուսնացած հայ աղջիկների անունների մի մասն այնպես է ընտրել, որ դրանցում լինի ակնարկ նրանց անաղարտության, մաքրության մասին**, ինչպես, օրինակ, **Արշալույսի** պարագայում, քանի որ անունը հուշում էր, որ չնայած Վահագնի հետ չստացված ամուսնությանը՝ մնացել էր նույն անաղարտ օրիորդը: Կամ, օրինակ, դիտարկենք «Եվ եղև մարդ» վեպի **Սրբուհու** և նրա ընկերուհի **Վերծինի** (Verginia) անունները: Սրբուհու անվան իմաստը հասկանալի է, իսկ ընկերուհու անունը ծագում է լատ. «virgo»-**կույս արմատից** (հատ. Ե): Սակայն այս կերպարների կողքին կա նաև **Ազնիվ** անունով հարսնացու («Սովորական օր մը»), որը աչքաբաց ու «պտտող» աղջիկ է, բայց նրա անունը ընտրված է՝ հակառակ իմաստով ընդգծելու աղջկա անպատշաճ ու անազնիվ վարքուբարքը:

Որբունու՝ կյանքի վերջին տարիներին գրված «Զի քո է կարողութիւն» վեպում էլ **Անահիտ** անունով օրիորդ կա: Ելնելով սույն վեպում հեղինակի՝ անունների հետ կապված որոշ ակնհայտ վրիպումներից և անունների ընտրության նրա հիմնական սկզբունքներից՝ կարծում ենք, որ Անահիտը, որպես չամուսնացած աղջիկ, պետք է կրեր իր մոր՝ **Յոնիսիմեի** անունը, որն ակամայից զուգորդվում է համանուն կույսի հետ, իսկ մոր՝ մայրության և գեղեցկության աստվածուհի Անահիտի անունով կոչվելը առավել տրամաբանական կլիներ: Յնարավոր է, որ հեղինակը այս հարցում էլ վրիպել է, ինչպես որ նույն վեպի այլ հերոսների անունների հարցում: Ընդ որում, վերոնշյալ օրիորդներից Սրբուհու մոր անունը **Աստղիկ** է: Մեր կարծիքով, գրողն ըստ ամենայնի մշակել է որոշակի օրինաչափություն՝ **հարսնացու աղջիկների անունները սրբերի հետ զուգորդելով**, իսկ **նրանց մայրերինը՝ աստվածուհիների**, սակայն մի տեղ շփոթել է անունները՝ իր որդեգրած օրինաչափությունը խախտելով:

Որբունու երկերում **չամուսնացած աղջիկների մյուս մասի անունները ծաղկանուններ են**: Առհասարակ, ծաղիկը խորհրդանշում է հարսնացու, կույս աղջիկ³⁶⁰: Բայց դա կարող է նաև պայմանավորված լինել նրանով, որ Որբունու առաջին սիրո՝ Գոհարիկի ազգանունը **Վարդերեսյան** է:

Դիտարկենք համապատասխան կերպարները: «Վարձու սենեակ» պատմվածքի գլխավոր հերոս Տիգրանի քրոջ անունը **Վարդանուշ** է, «Երբ գնացքները կուշանան» պատմվածքի գլխավոր հերոս Գարեգինի դեռահաս աղջկա անունը՝ **Վարդուհի**: «Փորձը» վեպում Մինասի չամուսնացած քրոջ անունը **Շուշան** է: Շուշանը սպիտակ ծաղիկ է, իսկ համանուն հերոսուհուն նրա սիրած տղան ամեն օր մեկ հատ սպիտակ վարդ էր նվիրում³⁶¹: Սպիտակ գույնով ընդգծվում է աղջկա անաղարտությունը: «Եվ եղև մարդ» վեպում Թոմասի դայակը՝ **օր. Նվարդը**, բավականին հմայիչ աղջիկ է նկարագրվում, և մանկան հոգում նրա հանդեպ նույնիսկ առաջ են գալիս թաքուն մղումներ³⁶²: «Սովորական օր մը» վեպում որպես երկրորդական կերպար հանդես է գալիս **Նվարդ** անունով աղջիկ, որի կերպարին Որբունին ծրագրել էր անդրադառնալ նույնիսկ առանձին

³⁵⁸ Նույն տեղում, էջ 126:

³⁵⁹ Նույն տեղում, էջ 188:

³⁶⁰ Տե՛ս **Որբունի 2.Մ.**, Եվ եղև մարդ, էջ 77:

³⁶¹ Տե՛ս **Ֆրոյդ 2.**, Հոգեվերլուծության ներածություն, Երևան, «Զանգակ» հրատ., 2002, էջ

³⁶² Տե՛ս **Որբունի 2.Մ.**, Եվ եղև մարդ, էջ 178:

վեպով («Նուարդ») վեպը պետք է լիներ «Հալածուածները» վիպաշարի հերթական հատորը): Սակայն ամենից ուշագրավը վիպաշարի Նվարդի **Վարդավառյան** ազգանունն է, քանի որ համանուն տոնը նվիրված է սիրո աստվածուհուն: Նույն վեպում կա Աշխեն անունով օրհորդ, որը, որպես հարմաճու, մրցակից է Նվարդ Վարդավառյանին: Հարկ է նկատել, որ Աշխենի կրտսեր քույրերի՝ երկվորյակ **Սյուզանի ու Վիոլեթի** անուններն էլ են ծաղկանուններ: Մի դիպվածով Մինասը խոսում է Դանայան կույսերի մասին, իսկ աղջիկների ծնողները թյուրիմացաբար շրջվում են, նայում իրենց երեք կույսերին³⁶³: Սակայն հեղինակի երկերում երկու կույսի կերպար կա, որոնց անունները ո՛չ սրբերի անուններ են, ո՛չ էլ ծաղկանուններ: Դրանք են՝ «Խօսակցութիւն սափրիչի կրպակին մեջ» պատմվածքի **Թագուհին** և «Հալածուածները» վիպաշարի **Աշխենը**, որոնց անունները նույնիմաստ են, քանի որ **Աշխեն** ստուգաբանորեն նշանակում է **«իշխանուհի, թագուհի»** (հատ. Ա): Երկուսն էլ չափազանց տիրական են իրենց եռթյամբ, որի համար էլ ստացել են համապատասխան անուններ:

1.5. Սեռային պատկանելություն մատնանշող անուններ: Որքունու ստեղծագործությունների հիմնաթեման սեռի հարցն է, և գրողն իր երկերում կիրառել է արական ու իգական սկիզբ մատնանշող մի շարք խորհրդանիշներ, որոնցով գեղարվեստականորեն վերարտադրել է կին-տղամարդ հարաբերությունները: Նկատելի է, որ նույն օրինաչափությամբ իր շատ կերպարների համար ընտրել է այնպիսի անուններ, որոնք ուղղակիորեն **մատնանշեն կերպարների սեռային պատկանելությունը**: Օրինակ՝ **Արսեն** («Հուղարկավորութիւն») նշանակում է զնդ. «այր, տղամարդ» (հատ. Ա), **Արշավիր** («Երեւանցիին լացը»)՝ հուն. «այր մարդ» (հատ. Ա), **Աբգար** («Խօսակցութիւն սափրիչի կրպակին մեջ»)՝ ըստ Խորենացու՝ հայ. «ավագ այր» (հատ. Ա), **Անդրե** («Խխունջը»)՝ հուն. «մարդ» (հատ. Ա):

Որքունին ստեղծել է մոտավորապես տասը կերպար, որոնց անվանել է **«Մարի»**: «Մարի» անունը տարածված է ամբողջ աշխարհում և ունի նաև «կին», «մայր» նշանակությունը (հատ. Գ) : Հայերենում «մարի» նշանակում է նաև «եգ թռչուն», և կարծում ենք՝ **հեղինակը կերպարների իգությունն ընդգծելու միտումով է անունն ընտրել**: Հենց իր առաջին պատմվածքում («Մառի»³⁶⁴) գրողը, ծննդավայր Օրդուի կամ Պուլսի՝ իր դպրոցական սերը պատկերելով, իր հետ նույնացող կերպարին անվանում է **Արման**, իսկ սիրած աղջկա՝ Գոհարիկ Վարդերեսյանի կամ Հերմիների հետ նույնացող կերպարին՝ **Մարի**: «Արման» նշանակում է կարոտ (հատ. Ա), և գուցե կապված է սփյուռքահայ գրողի կարոտի հետ, իսկ աղջկա անունը՝ հավանաբար «Մարի» անվան «կին, աղջիկ» իմաստի հետ:

Դիտարկենք «Խխունջը» պատմվածքի **Մարի** անունով հերոսուհուն, որը **մայրության մարմնացում** է, իսկ խխունջը՝ որպես պատյան, գոգավորություն ունեցող կենդանի, համարվում է ծոցավոր կնոջ խորհրդանիշ: Մի տղամարդ Մարիին առաջարկում է ամուսնանալ, հայրություն անել նրա երեխային, սակայն Մարին հայտարարում է, որ իր երեխային հայր պետք չէ, քանի որ այդ-հայրը սոսկ պատահար է, պատճառ, որի միջոցով կինը հասնում է մայրանալու գերնպատակին: Մարիի անունը միանշանակ այստեղ ընտրված է «կին, մայր» իմաստով : Պատահական չէ նաև զավակի Անդրե անունը, քանի որ հուն. «անդրոս» նշանակում է «մարդ» (տե՛ս «Անդրանիկոս», հատ. Ա): Համաձայն սույն պատմվածքի գաղափարաբանության՝ կինն է մարդ ստեղծում, իսկ տղամարդը սոսկ միջոց է:

³⁶³ Տե՛ս **Որքունի 2.Մ.**, Հալածուածները. Սովորական օր մը, Պեյրուբ, «Սեան» տպարան, 1974, էջ 115:

³⁶⁴ Տե՛ս **Որքունի 2.**, Մառի // «Նոր հաւատք», Փարիզ, 1924, թ. 1, էջ 23-27:

Ուշագրավ է, որ բացի «Մամի» պատմվածքի հայազգի հերոսուհուց, մյուս բոլոր Մարիները օտարազգի կանայք են, որոնք ունեն կնոջական դավադիր, առեղծվածային եություն, ինչպես օրինակ՝ «Խխունջը» պատմվածքի **Մարին**, որը տղամարդուն օգտագործում է մայրանալու համար, «Եվ եղև մարդ» վեպի ֆրանսուհի **Մարի-ժոզեթը**, որը խելքից հանում է Թոմասին և հետապնդում նրան անգամ մահից հետո, «Գործագուրկ մը» պատմվածքի տիկին **Մանունլեսթեն**, որը վավաշոտ ցանկություններ է դրսևորում ամուսնու ընկերոջ նկատմամբ և իր անունով ասես զուգորդվում Մանոն Լեսկոյի («Մանոն» անունը Մարի անվան փաղաքական ձևն է) կերպարին:

Օտարազգի կանանց ազատ, հեղեղուկ ու դավադիր եությունը Որբունին մշտապես զուգորդում է ծովի հետ: Ուսումնասիրելով Որբունու արձակի խորհրդանշային համակարգը՝ ծովն արդեն դիտարկել ենք որպես այլազգի ազատամիտ կնոջ խորհրդանշ³⁶⁵: Հարկ է նշել, որ լատիներեն «mare» արմատը նշանակում է «ծով», այստեղից էլ լատ. «marinus», անգլ. «marine» բառերը (տե՛ս «Մարինոս», հատ. Գ), որոնք նշանակում են «ծովային, ծովի հետ կապված»: Հետևաբար պատահական չէ, որ **ծովի հետ զուգորդվող այլազգի կանանց անունները ստուգաբանորեն նշանակում են «ծով»**: Կնոջ՝ ծովի հետ զուգորդման լավագույն օրինակներից է «Գոհարիկ» պատմվածքի ֆրանսուհի **ժորժեթ Մարինիեի** կերպարը, որի ազգանվան մեջ էլ կա «ծով» արմատը: Ժորժեթն անընդհատ նույնանում է ծովի հետ: Իր ամուսնու գործուղման ընթացքում ծովափին հանգստանում է՝ սպասելով սիրելեանին՝ Որբունուն: Վերջինս, նրան տեսնելով, բացականչում է. «Ու ահա ժորժեթը: Վերջակետ: Ծո՛վ, ծով անանցանելի»³⁶⁶:

Ֆրանսուհիների անվան հետ կապված ևս մեկ օրինակափոխություն կա, որը հարկ է ընդգծել. մեծ մասամբ նրանց **անունները սկսվում են «ժ» տառով (ժորժեթ («Գոհարիկ»), ժանեթ («Տիտղոսի արձանը»), ժերմեն («Անձրեւոտ օրեր»), Մարի-ժոզեթ («Եվ եղև մարդ»)**: Առհասարակ, ֆրանսիական իրականության մեջ «ժ» տառով սկսվող անունները տիպական են: Հիշենք, որ շահնուրյան **Նենեթի** իրական անունն էլ **ժան** է: «Նենեթ» նրան տրված փաղաքական անունն է, որով ընդգծվում է կերպարի իզուրությունը: Պատահական չէ, որ Պետրոսը, Նենեթի անունը զուգորդելով սեռային խորհրդանշի վերածված նշանավոր ֆրանսուհիների անունների հետ, **մ-ն տառերի բաղաձայնությամբ** է ստեղծում. «...միշտ նոյն Նենեթը՝ Մանուններու, Նիսուններու, Նանաներու թռռունկին»³⁶⁷: «ժ» տառով սկսվող անուններից բացի՝ Որբունու արձակում ֆրանսուհիների՝ «մ» և «ն» **տառերով սկսվող անունները** (Մարի անունով մի շարք հերոսուհիներ, վիպաշարի ֆրանսուհի քույրեր՝ Մոնիք և Նիքո) **ընտրված են՝ ընդգծելու անվանակիրների իզուրությունը, հեշտասիրությունը**:

1.6. Ազգություն մատնաշող անուններ: Կարելի է առանձնացնել նաև **անունների այնպիսի խումբ, որում դրանք ուղղակի մատնանշում են կերպարների ազգությունը՝ հիմնականում հայությունը**: Միայն մի անավարտ վեպում ներկայացվում է հայի հետ ամուսնացած ֆրանսուհի տիկին, որի «Ֆրանսուազ» (Francoise) անունը նշանակում է «ֆրանսիացի»³⁶⁸: Հայությունը մատնաշող անուններից շատ են հանդիպում **Արմեն** և **Արամ** անունները: Օրինակ՝ «Ապուլը» պատմվածքում՝ հայ գաղթական **Արմենակը**, «Անձրեւոտ օրեր» պատմվածքում՝ հայազգի փեսա պարոն **Արմենյանը**, «Եվ եղև մարդ» վեպում՝ ընտանիքի հայր պարոն **Արամը**, որին սպանել են Եղեռնի ժամանակ և այլք: Կյանքի վերջին տարիներին «Չի քո է կարողութիւն» վեպը գրելիս Որբունին շփոթմամբ նախորդ հատորներում **Արամ** անունով կոչած կերպարին անվանում է **Արմեն**, մինչդեռ

³⁶⁵ Տե՛ս **Միկոյան Ա.**, Ֆրոյդյան երազների սիմվոլները Չարեհ Որբունու արձակում // «Վեմ», Երևան, 2020, տարի 12, հունվար-մարտ, թ. 1(69), էջ 112-113:

³⁶⁶ **Որբունի 2.**, Պատմաձեքներ, Պելյուք, «Սեւան» տպարարան, 1966, էջ 29:

³⁶⁷ **Շահնուր Շ.**, Երկեր, Եր., հատ. Ա, «Ազգ» հրատ., 2016, էջ 106:

³⁶⁸ Տե՛ս **Hanks P., Hodges F.**, A dictionary of first names.:

Նախորդ հատորներում հեղինակի կողմից Արմեն էր անվանվում Արամի կնոջ եղբայրը³⁶⁹: Այս վրիպումը ցույց է տալիս, որ Արմեն և Արամ անունները հեղինակի համար նույնարժեք են:

Յայ գաղթական կերպարներից շատերին հայոց թագավորների ու թագուհիների անուններով կոչելը և կերպարների ազգությունը ընդգծելու միտումով է: Այդպիսիք են, օրինակ, «Վարձու սենեակ» պատմվածքի և համանուն վեպի **Տիգրանը**, «Գործազուրկ մը» պատմվածքի **Աշոտը**, «Նսուսակցութիւն սափրիչի կրպակին մէջ» պատմվածքի **Արշակն** ու նրա որդի **Աբգարը**, «Անձրեւոտ օրեր» պատմվածքի Արմտիքյան ընտանիքի ներկայացուցիչներ **Տիգրանը**, **Չապելը**, ընտանիքի ընկեր **Երվանդը** և այլն: Յայոց թագավորների անունները խորհրդանշում են ուժացման մատնված սփյուռքահայերի ազգային ինքնագիտակցությունը: Այս առումով առավել ակնհայտ ակնարկ կա «Վարձու սենեակ» վեպի **Տիգրանի** վերաբերյալ. «... Ես՝ Տիգրան Տիգրանեան, որդի՝ ազգիս զոհուած Գարեգին Տիգրանեանի, ժառանգորդ՝ Սեւ ծովու եզերքը հաստատուած Անիէն գաղթած հայերու, Ես, որդին անոր, գաղթած Միջերկրականի եզերքը»³⁷⁰: Սև և Միջերկրական ծովերի նշումով ասես ակնարկվում է Տիգրան Մեծի օրոք հաստատված Ծովից ծով Յայաստանը: Բացի այդ, հերոսն իր ծագումով նույնանում է Որբունու հետ, քանի որ վերջինս ծնվել է Սև ծովի ափին գտնվող Օրդու քաղաքում, բայց նախնիները Անիի Բագրատունիների շառավիղներից են, իսկ Եղեռնից հետո Որբունին գաղթել է Ֆրանսիա՝ հաստատվելով Միջերկրականի ափին գտնվող Մարսել քաղաքում: Ուշագրավ է «Եվ եղև մարդ» վեպի **Փառանձեմի** կերպարը: Նա Եղեռնի ժամանակ ամուսնու կորցնում է, բայց կարողանում է երեխաներին փրկել: Ընտանիքում ստանձնում է հանգուցյալ ամուսնու պաշտոնը, և ինչպես մի առիթով նրա ավագ որդին է ասում, Փառանձեմ ամուսնու մահից հետո ասես դադարել էր կին լինելուց³⁷¹: Կարծում ենք, որ կերպարի անվան ընտրությունը կապված է Փառանձեմ թագուհու անվան հետ, որը ևս ամուսնու բացակայության ժամանակ արժանապատվորեն փոխարինեց նրան և տիրություն արեց որբացած ժողովրդին:

1.7. Ծագում-սերում մատնանշող անուններ: Անունների պես բազմաշերտ ու բազմախորհուրդ է նաև **Որբունու կերպարների ազգանունների պոետիկան:** Ազգանուններից մի քանիսը հորինված են՝ փոխաբերաբար մատնանշելու **տվյալ կերպարի կամ ընտանիքի ծագումը:** Օրինակ՝ «Անձրեւոտ օրեր» պատմվածքում Եղեռնից մազապուրծ եղած և Ֆրանսիա գաղթած ընտանիքի **Արմտիքյան** ազգանունը, որը հորինված է ընդգծելու ավանդապաշտ հայ ընտանիքի՝ արմատներից կառչած լինելը: Այս ընտանիքի կրտսեր դուստրը՝ Վարսենիկը, այնպիսի մոլեգին սիրով է սիրում Եղեռնագարկ հորը, որ ամուսնանալուց հետո անգամ ամուսնու Արմենյան ազգանվամբ ստորագրվելը համարում է հոր հիշատակի ունահարում: Իսկ պրն. **Արմենյանի** ազգանունը մատնանշում է կերպարի ազգությունը:

Իսկ «Յալածուածները» վիպաշարի **Ամիրյանները** վիպական գործողություններում ի սկզբանե դրսևորում են իշխելու, թելադրելու հակում: Այստեղից էլ Ամիրյան («ամիրա»՝ իշխան) ազգանունը: Ընդ որում, ինչպես արդեն նշվել է, Աշխեն նշանակում է իշխանուհի, հետևաբար Աշխեն Ամիրյան, ասել է, թե՛ «Իշխանուհի Իշխանյան»: Վիպաշարի մեկ այլ հատորում հեղինակն ազգանվան ընտրության մեկ այլ հիմնավորում է տալիս՝ Ամիրյանների ծագումը կապելով Բագրատունյաց տոհմի հետ³⁷², որից էլ բխեցնում է նրանց իշխելու մոլուցքը:

³⁶⁹ Այս մասին առավել հանգամանորեն տե՛ս **Որբունի 2.**, Չի քո է կարողություն, էջ 43-44:

³⁷⁰ **Որբունի 2.**, Վարձու սենեակ // «Կայք», Փարիզ, 1993, թ. 3, էջ 50:

³⁷¹ Տե՛ս **Որբունի 2.**, Եվ եղև մարդ, էջ 125:

³⁷² Տե՛ս **Որբունի 2.**, Յալածուածները. Սովորական օր մը, էջ 65:

1.8. Գործողություն կամ հատկանիշ մատնանշող ազգանուններ: Կան ընտանիքներ կամ հերոսներ, որոնց **ազգանունները մատնաշում են նրանց էությունը, բնավորության ամենահատկանշական գիծը:** Վիպաշարի գլխավոր հերոսի՝ Մինասի ազգանունը **Երազյան** է, քանի որ ի սկզբանե դրսևորել է երազկոտ բնավորություն, որի համար մշտապես քննադատվել է հենց իր ընտանիքի անդամների կողմից. «Եթե երազատես չես բան մը չես կրնար ընել: Վա՛յ երազ չունեցողներուն: Եղած տեղերին կը մնան: -Բայց ինչո՞վ տղաս, երազն ալ դրամով կ'ըլլաս»³⁷³:

Վարոյանների ընտանիքին իր կազմով, ընտանիքի անդամների միջև հարաբերություններով նույնանում է Որբունու ընտանիքին և վիպական Երազյաններին: **Վարոյանների որդի Մանուկը** Որբունու անձի հետ լիովին կամ մասմաբ նույնացող մնացած կերպարների պես ունեցել է Եդիպյան բարոյաթը հաղթահարելու, ինչպես նաև սոցիալապես կայանալու և հոգեպես ինքնուրույնանալու խնդիր: Մանուկը սկզբում սևեռուն սիրով սիրել և կապված է եղել մորը, այնուհետև այդ կապվածությունն անդրադարձրել է քրոջ վրա: Միայն հասուն տարիքում Երազյանների Շուշանին սիրահարվելով է կարողացել հաղթահարել իր ընտանիքի կանանց հետ երեխայական կապվածությունը: «Վարոս» նշանակում է «ծռած, կորցրած» (հատ. Ե): Մանուկը արտաքնապես պատկերվում է շեղ բերանով ու աչքերով: Ըստ երևույթին, հեղինակը Վարոյան ազգանունն ընտրել է թե՛ հերոսի արտաքին թերությունները, թե՛ հոգեկան շեղումներն ընդգծելու համար. «... շեղ աչքերով շիւ-շիւ նայելով մեր քոյրերուն՝ կը մեծնայինք, մարդ կը դառնայինք, բայց թուրքը գլխատեց մեր մանկութիւնը. . . .»³⁷⁴:

Մանուկից բացի, Որբունու արձակում հոգեբանորեն մանուկ մնացած ևս մեկ կերպար կա՝ **Խաչիկ Մանուկյանը** («Ասֆալթը»), որի բնավորության կենտրոնական գիծը խտացված է հեղինակի ազգանվան մեջ: Խաչիկ Մանուկյանը «Աղվոր մարդ մը» պատմվածքի **Խաչիկ Աթանեսյանն** է: Երկու կերպարների նախատիպն էլ Որբունու սիրելի ընկեր, ֆրանսահայ գրող **Խաչիկ Զուֆայանն** է, որի սպանությունը Որբունին շատ ծանր է տարել և հոգին պարպելու համար որոշել գրել դրա մասին³⁷⁵: Սկզբում ըստ երևույթին համարձակություն չգտնելով՝ գրել է «Աղուոր մարդ մը» պատմվածքը³⁷⁶, անդրադառնալով Խաչիկի «մանկունակ» բնավորությանը, ոչ թե սպանության դիպվածին և հերոսի ազգանունը դրել է «Աթանեսյան», որը **Նշանակում է «անմահ»** (տե՛ս «Աթանես», հատ. Ա): Իսկ տարիներ հետո գրված «Ասֆալթը» վեպում ներկայացրել է միայն Խաչիկի սպանության դիպվածը³⁷⁷ և ազգանունը դրել «Մանուկյան»: Խաչիկի կերպարը ներկայացնող երկու հերոսների ազգանուններն էլ խորհրդանշական են առաջինը հակառակ իմաստով ակնարկում է Խաչիկի ողբերգական մահվան դիպվածը և մատնանշում հեղինակի հոգում առաջ եկած դիմադրությունը սիրելի ընկերոջ կորստի համար, իսկ երկրորդը ընդգծում է կերպարի երեխայական էությունը: Հերոսի բնույթը մատնանշելու առումով ուշագրավ է նաև «Ապուշը» պատմվածքի գլխավոր հերոս Արմենակի **Սալոյան** ազգանունը: Արմենակը հոգու խորքում փափագում է սիրային կապի մեջ մտնել հասուն տարիքի ֆրանսուհու՝ տիկին Պռնայի հետ, սակայն բավականաչափ համարձակություն չգտնելով՝ փախչում է կնոջ տնից և փոշմանում: Դառնացած կինը նրան ապուշ է անվանում: **Եվ իրապես իր ապուշության, անճարակության համար է կերպարը ստացել Սալոյան ազգանունը (օր.**

³⁷³ Նույն տեղը, էջ 173:

³⁷⁴ **Որբունի 2.**, 2ի բո է կարողություն, էջ 56:

³⁷⁵ Տե՛ս **Որբունի 2.**, Օրագիր // «Սփիւռք», Պեյրուպ, 1959, թ. 33, էջ 4:

³⁷⁶ Տե՛ս **Որբունի 2.**, Անձրեւտ օրեր, էջ 59-79:

³⁷⁷ Տե՛ս **Որբունի 2.**, Հալածուածները. Ասֆալթը, էջ 164:

ժողովրդական լեզվում «դամբուլ» (սալորի տեսակ) փոխաբերական իմաստով նշանակում է «անճարակ, անշնորհք, անմիտ»³⁷⁸:

Առանձին խոմբ են կազմում կերպարի **որևէ արարք, գործառույթ մատնանշելու համար ստեղծված ազգանունները**: Իսկ «Գործազուրկ մը» պատմվածքի հերոսի՝ **Աշոտ Նշանյանի** ազանունն ըստ եուլթյան նրա՝ գերիրապաշտ նկարիչ լինելու հետ է կապված:

Նույն տրամաբանությամբ են ընտրված նաև այլազգի որոշ կերպարների ազգանուններ: Դիտարկենք «Թեկնածուն» վեպի **Յորթանս Դետիեի** և «Ասֆայթը» վեպի **պարոն դը լա Ֆոսի** օրինակները: Յորթանսը հասուն տարիքի կին է, այն պանդոկի տիրուհին, որտեղ բնակվում են վեպի գլխավոր կերպարները՝ եղեռնազարկ հայ երիտասարդները: Յորթանսը փոքրամարմին, բայց ինքնավստահ կին է, որի հետ երիտասարդ ու անփորձ հայ գաղթական Մինասը սեռային կապի մեջ է մտնում: Մինասը նրա հանդեպ երախտագիտությամբ է լցվում, քանի որ այդ կինը իրեն շատ էր հասունացրել: Յերոսի բնորոշմամբ՝ Յորթանսին հաջողվել էր ջախջախել տղայի բարոյականները, քանի որ վերջինս երիտասարդի գրկում կարողանում էր փոքրանալ և այնպիսի դիրք գրավել, ասես երեխայի պես պաշտպանության կարիք ունի: Մինասը նրա մասին խոսելիս նշում է՝ «ատ պգտիկնալ գիտցող կինը», «մկնիկի պես կինը»: **Դետիե** ազգանունը ֆրանսերեն կգրվի «Pitié», որը թարգմանաբար նշանակում է «խղճմտանք, կարեկցանք»³⁷⁹: Հավանաբար Որբունին ազգանունը կապել է Յորթանսի՝ Մինասի գրկում պգտիկանալով անպաշտպան կեցվածք ընդունելու հետ կամ էլ կնոջ **փոքրակազմ լինելու (ֆր. «petite» փոքր)**: Իսկ գործարար դը լա Ֆոսը «Ասֆայթը» վեպի գլխավոր կերպարի՝ Նիթոլի աշխատանքային ղեկավարն է: Նա է կազմակերպում ծնողների վաղուց կորցրած, հայ անտուն ամուսնուց լքված Նիթոլի հուղարկավորությունը, որի ժամանակ արտասանում է դամբանական ճառ: «**Fosse**» նշանակում է «**փոս**»³⁸⁰, հետևաբար պարոնի ազգանվան ընտրությունը կապված է Նիթոլի հուղարկավորման դիպվածի հետ:

1.9. Հակառակ իմաստով որևէ բան խորհրդանշող անուններ: Կան անուններ ու ազգանուններ, որոնք ոչ թե ուղիղ, այլ հակառակ իմաստ ունեն խորհրդանշական կերպարների համար: Օրինակ՝ «Թեկնածուն» վեպում հյուրանոցի սրճարանում մատուցող աշխատող **Վանատուրի անունը**, որը, հակառակ իր անվան նշանակությանը, հյուրընկալ չի գտնվում դասընկերոջ հանդեպ³⁸¹: **Ֆրիդա** անվան մեջ հին բարձր գերմ. «fridu» (խաղաղություն, հաշտություն, պաշտպանություն գեներից) արմատն է³⁸², բայց Որբունու պատմվածքի Ֆրիդան գերիների ճամբարի հսկիչն է³⁸³, խաչիկ Չուֆայանը սպանվում է, բայց նրա համարժեք կերպարը անվանվում է Աթանեսյան (նշ. է «անմահ») և այլն:

Կարծում ենք, որ վերոնշյալ սկզբունքով է մտածված նաև «Հալածուածները» վիպաշարի գլխավոր կերպարի՝ **Նիթոլի** անունը: Նախատիպը Որբունու կինն է, սակայն նկատելի է, որ Նիթոլի կերպարով հեղինակը փորձել է ստեղծել ֆրանսուհու հավաքական տիպ՝ խտացնելով նրա մեջ այն բոլոր հատկանիշները, որոնք խորթ են հայկական իրականությանը: Նիթոլն ունի **Մոնիք** անունով քույր, որն ասես նրա ես-ի մի բեկորը լինի, կրկնակը: «Նիթոլ» և «Մոնիք» անունները նույնարմատ են՝ «nike»-հաղթանակ (տե՛ս «Նիկողայոս», հատ. Դ, էջ 75), և մեկ հնչյունի (-մ) տարբերությամբ բոլոր հնչյունները

³⁷⁸ Տե՛ս **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976, հատ. 1:

³⁷⁹ Տե՛ս **Գասպարյան Ա.**, Ֆրանսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն բառարան, Եր., «Արեգ» հրատ., 2013:

³⁸⁰ Նույն տեղում:

³⁸¹ Տե՛ս **Որբունի Զ.**, Հալածուածները. Թեկնածուն, էջ 53-54:

³⁸² Տե՛ս **Kohlheim R., Kohlheim V.**, Das grobe vornamen-lexikon:

³⁸³ Տե՛ս **Որբունի Զ.**, Պատմածքներ, էջ 81-94:

կրկնվում են անվան մեջ, սակայն հակառակ հերթականությամբ՝ ասես հայելաձև արտացոլմամբ (**Մ Ո Ն Ի Զ-Ն Ի Զ Ո Լ**): Այս կերպարները դրսևորում են նույնասեռական հակումներ: Գրողը մերժողական վերաբերմունք է դրսևորում քույրերի հանդեպ՝ որպես պատիժ երկուսի համար էլ սահմանելով մահացու հիվանդություն: Որբունին հավատում է, որ քույրերն իրենց ոչնչացմամբ պիտի ճանապարհ բացեն նոր ու առողջ հոգեբանությամբ սերունդի համար: Չնայած նրան, որ քույրերի անունները նշանակում են «հաղթանակ», նրանք կործանման մատնված տիպեր են:

2. Նախատիպերի անուն-ազգանունների հետ համընկնող գեղարվեստական անուն-ազգանուններ

Որբունու արձակի մի շարք կերպարներ նույնանուն են հեղինակի անձի հետ, բայց կրում են ուրիշ անուններ: Սակայն մի քանի գրվածքներում հեղինակի անձի հետ նույնացող կերպարներն անվանվում են կամ **Որբունի**, կամ **Չարեհ**: Միայն վիպաշարում է, որ հեղինակի անձի հետ նույնացող բանաստեղծ Մինասի կողքին ստեղծվում է նաև **Չարեհ Որբունի անունով գրողի կերպար**, որ ընթերցողը Մինասին ամբողջապես չնույնացնի հեղինակի հետ, հասկանա, որ Մինասը հեղինակի ես-ի ընդամենը մի բեկորն է, նրա բանաստեղծական ես-ը:

Գրողը հիմնականում **իր սիրելի կանանց է իրական անուններով պատկերում**: Օրինակ՝ **«Գոհարիկ»** պատմվածքի համանուն կերպարը: Բայց գրողի երկերի առանցքային կերպարը իր բազմամյա կինն է՝ **Էլիզաբեթ Յերը**, որը վիպաշարում ներկայացվում է Նիթլ անունով, իսկ մի շարք պատմվածքներում իր անվան կրճատ տարբերակներով՝ **Լիլի («Ժամադրավայր»), Լիզա («Մարդը՝ որ անցեալ չուներ»), Լիզեթ («Սև մագերթ»)** և այլն: Ուշագրավ է «Եվ եղև մարդ» վեպի **Յերմինեի** կերպարը, որը եղեռնից հետո Թոմասի հետ նույն ընտանիքի կողմից էր որդեգրվել, ապա բռնաբարվել թուրքի կողմից: Որբունին օրագրային էջերից մեկում անդրադարձ ունի պոլսեցի Յերմինեին՝ իր սիրած աղջկան, սակայն չի պարզաբանում իրական Յերմինեի հե՞տ էլ է նույն ընտանիքում որդեգրված եղել, թե՞ ոչ³⁸⁴: Բայց օրագրային մեկ այլ էջում պատմում է իր որդեգրության պատմությունը³⁸⁵: Պատանի հասակում Որբունին որդեգրվել է թուրքի՝ Ահմեդ բեյի կողմից, որը ցանկացել է իր աներորդու և «Տրապիզոնի նախկին մյուլթասարըֆ» **Չիա** փաշայի որդիների հետ Որբունուն ուղարկել Պոլիս՝ կրթության, սակայն վերջինս փախել է այդ տնից³⁸⁶: Բայց հետագայում «Թեկնածուն» վեպում գրողը ստեղծել Չիա անունով երիտասարդ թուրքի կերպար, որը հայերի ընկերությունը շատ է գնահատում և ուզում է առաջարկություն անել մի հայ աղջկա: Սակայն Վահագնին, որը, կոտորածի տարիներին որբանալով, որդեգրվել և սեռական բռնության էր ենթարկվել թուրք կնոջ կողմից, նույնացնում է իր խորթ մորը՝ Չիային, և իր մանկության վրեժն առնում Չիային խեղդամահ անելով:

Որոշ երկերում Որբունու ընտանիքի անդամներից ոմանց գեղարվեստական կերպարները հանդես են գալիս նախատիպերի անունների փոքր-ինչ փոփոխված տարբերակներով: Օրինակ՝ Որբունու **Մելանույշ** քույրը «Եվ եղև մարդ» վեպում **Սիրանույշ** անունով է ներկայացվում, վիպաշարում **Որբունու մոր՝ Արաքսիի գեղարվեստական համարժեքը** անվանված է **Արուսյակ**: Իրենց **իրական անուններով կամ ազգանուններով Որբունին գեղարվեստականացրել է նաև սփյուռքահայ մի քանի գրողների**: Որբունու ստեղծագործական նախաքայլերում մեծ դեր է խաղացել **Վահան Թեբեյանը**, քանի որ առաջին անգամ Թեբեյանն է իր «Ժողովրդի

³⁸⁴ Տե՛ս **Որբունի 2.**, Օրագիր // «Անի», Պեյրուֆ, 1954, թ. 2, էջ 81-82:

³⁸⁵ Տե՛ս **Որբունի 2.**, Յալածուածները. Ասֆալթը, էջ 48-49:

³⁸⁶ Տե՛ս **Որբունի 2.**, Երազներու լեզուն // «Անի», Պեյրուֆ, 1946, թ. 1, էջ 10:

ծայն» թերթում տպագրել Որբունու բանաստեղծությունը³⁸⁷: «Թեկնածուն» վեպում Մինասը՝ Որբունու բանաստեղծ ես-ը, Ֆրանսիայում հանդիպում է Թեթեյանին, մոտենում նրան՝ շնորհակալություն հայտնելու³⁸⁸: Վիպաշարի մեկ այլ վեպում էլ պոլսահայ գրող **Սատթեոս Չարիֆյանի** անունն է հիշատակվում: Պատանի Որբունին նրան շատ է հանդիպել Պոլսում, շփվել: Չարիֆյանը եղել է պատանի բանաստեղծի մեծագույն ներշնչանքը³⁸⁹: Իսկ ահա Որբունու սերնդակից ու գրչակից գրող **Վազգեն Շուշանյանի** կերպարը, կարծում ենք, արտացոլվել է **երեք կերպարներում**: Կյանքի վերջին տարում գրված «**Ժամադրավայր**» գրվածքում կա **հենց Վազգեն Շուշանյան անունով կերպար**³⁹⁰, իսկ վիպաշարի առաջին և երկրորդ վեպերում **Վազգեն անունով մի երիտասարդ հեղափոխական** կա, որի մասին խոսելիս հեղինակը խորհրդավոր կերպով օգտագործում է «**ներքին դաշտանկար**» արտահայտությունը³⁹¹, որը Շուշանյանի երկերից մեկի վերնագիրն է³⁹² և կարելի է ընդունել որպես ակնարկ: Բացի այդ, բավականին խոսուն ընդհանրություններ կան «**Թեկնածուն**» վեպի **Վահագնի ու Շուշանյանի** միջև: Երկուսն էլ Եղեռնի ժամանակ իրենց մայրերին կորցրել են և ամբողջ կյանքում այնքան են իդեալականացրել նրանց, որ անկարող են եղել ընտանիք կազմել: Երկուսն էլ ողջ կյանքում բանվորի աշխատանք են կատարել՝ վախճանվելով վաղաժամ³⁹³: Բայց ամենախոսուն փաստն այն է, որ «**Ժամադրավայր**» գրվածքում Վազգեն Շուշանյանը նույն մերժողական վերաբերմունքն է դրսևորում իր ընկերոջ ֆրանսուհի հարսնացուի նկատմամբ, ինչ «**Թեկնածուն**» վեպի Վահագնը իր ընկերոջ՝ Որբունու հետ նույնացող Մինասի սիրեցյալ Նիքոլի հանդեպ: Ուշարժան է, որ շահնուրյան **Չարեհն (Լոխումն)** էլ շատ ընդհանրություններ ունի Չարեհ Որբունու հետ: Որբունին էլ Լոխումի պես մենակ էր տեղափոխվել Ֆրանսիա, կարոտում էր մորը: Օրագրային էջերում գրողը պատկերում է իր ապրումները Պոլսից մոր գալստյան վերաբերյալ³⁹⁴: Որբունու դեպքում էլ հայրենիք վերադառնալը եղել է սևեռուն միտք, նույնիսկ նրա հերոսներից Տիգրանն է Լոխում-Չարեհի պես («**Անձրեւոտ օրեր**») ապրում հայրենիք վերադառնալու մարմաջով: Առհասարակ, անգամ շահնուրյան Չարեհի արտաքին նկարագրությունն³⁹⁵ է համապատասխանում երիտասարդ Որբունու նկարագրին³⁹⁶՝ կաթնաթույր մաշկով, բարակ բերանով, շիկավուն և ալիքավոր մազերով, սակայն տառապանքից գունատված, հյուժված դեմքով և ջղազար շարժումներով: Լոխումի պես Որբունին էլ է ողջ կյանքում գիտակցել մոր ներկայության կարևորությունն իր կյանքում: Նա այնքան է սիրել մորը, որ իր երկերի գրեթե բոլոր հերոսներին կերտել է Էդիայան բարդույթով:

Այսպիսով՝ Չարեհ Որբունու պոետիկայի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ կերպարները մեծամասամբ ունեն նախատիպեր, և հեղինակը կամ նախատիպերի

³⁸⁷ Տե՛ս **Որբունի 2.**, Գառնուկա // Ժողովրդի ծայնը, Կ. Պոլիս 1922, հուլիսի 23, էջ 1:

³⁸⁸ Տե՛ս **Որբունի 2.**, Չալածուածները. Թեկնածուն, էջ 118:

³⁸⁹ **Որբունի 2.**, Կենսագրական շաղակրատություն Գ. Մահարիի հետ, էջ 132:

³⁹⁰ Տե՛ս **Որբունի 2. Մ.**, Ժամադրավայր // Միտք եւ արուեստ. 1976-1987, խմբ.՝ Գրիգոր Պըլտեան, Երեւան., «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», «Անտարես» հրատ., 2018, էջ 203-205:

³⁹¹ Տե՛ս **Որբունի 2.**, Չալածուածները. Ասֆալթը, էջ 48-49:

³⁹² Տե՛ս **Շուշանյան Վ.**, Ներքին դաշտանկար, Երևան, Երևանի համալս. հրատ., 1995:

³⁹³ Վազգեն Շուշանյանի կյանքի մանրամասները տե՛ս **Սևան Գ.**, Վազգեն Շուշանյան. կյանքն ու ստեղծագործությունը, Երևան, Չայկական ՍՄՀ ԳԱ հրատ., 1968; **Շուշանյան Վ.**, Ալեկոծ տարիներ 1920-1932, Մոնթրեալ, 2014:

³⁹⁴ Տե՛ս **Որբունի 2.**, Օրագիր էջեր// Շիրակ, Պեյրուֆ, 1956, թ. 2, էջ 45:

³⁹⁵ Տե՛ս **Շահան Շ.**, Երկեր, Երևան, «Ազգ» հրատ., հտ. Ա, էջ 137-148:

³⁹⁶ 2. Որբունու կողմից իր երիտասարդության նկարագիրը տրվում է «Գոհարիկ» պատմվածքում՝ հեղինակի համանուն կերպարի կեցվածքի նկարագրությամբ. տե՛ս **Որբունի 2.**, Պատմվածքներ, էջ 9-14:

իրական անուններով է կոչում նրանց, կամ իրական անունը փոխարինում խորհրդանշական անուն-ազգանվամբ: Խորհրդանշական անունները, որոնք ուղիղ, փոխաբերական կամ հակառակ իմաստներով մատնանշում են հերոսների տիպը, գերակշռում են Որբունու արձակում: Կան անուն-ազգանուններ, որոնք մատնանշում են հերոսի ծագումը, կարգավիճակը, ազգությունը, բնավորությունը, գործունեությունը, հազվադեպ՝ արտաքինը: Սակայն խորհրդանշական անունների ծանրակշիռ մասը մատնանշում է կերպարի սեռային պատկանելությունը: Ընդ որում, հայ աղջիկների անուններն այնպես են ընտրված, որ մատնանշեն նրանց մաքուր, անպիղծ էությունը, և ի հակադրություն դրա՝ ֆրանսուհիների անուններն ընդգծում են անվանակիրների իզույթունն ու վավաշոտությունը: Փաստորեն Որբունին իր կերպարների անունները դարձնում է յուրօրինակ նշաններ, որոնցով կողավորում-բանաձևում է իր ասելիքը:

THE POETICS OF PROPER NAMES IN Z. VORBOUNI'S LITERARY WORKS

ANNA MIKOYAN

Yerevan State University,

Faculty of Armenian Philology,

Contemporary Armenian Literature Chair, Ph.D Student;

“Zangak” Publishing House, Methodologist,

Yerevan, Republic of Armenia

The purpose of this article is to highlight the approach that the study of the names and surnames of characters created by the author is central in the examination of the poetics of the French-Armenian writer Zareh Vorbouni and his literary works in general. Our main issue is to reveal author's speech with the help of proper names of fictional characters, which is skillfully encrypted in the names – surnames of characters. During the research the semantic method was mainly used; in some cases it was accompanied by hermeneutical-psychoanalytic approaches of reading the literary text. The research concluded that the names of the characters of Zareh Vorbouni were not selected accidentally; they either coincide with the prototype names and surnames, or are symbolic of a given character or literary works. The latter version dominates in the writer's works. There are names and surnames symbolizing the origin, sex, status, nationality, character, system of values, activities, and sometimes even appearance of heroes, each of which is an artistic key to penetrate the depth of the work.

Keywords: *Armenian literature of Diaspora, Z. Vorbouni, poetics, semiotics, proper names of fictional characters, symbols, prototypes.*

ПОЭТИКА СОБСТВЕННЫХ ИМЕН В ЛИТЕРАТУРНЫХ ПРОИЗВЕДЕНИЯХ З. ВОРБУНИ

АННА МИКОЯН

*аспирант кафедры современной армянской литературы
факультета армянской филологии*

Ереванского государственного университета;

методист издательства «Зангак»,

г. Ереван, Республика Армения

Цель данной статьи - отметить подход, согласно которому для изучения поэтического творчества французского писателя армянского происхождения Заре Ворбуни и литературоведческого прочтения его произведений в целом ключевым является изучение имен и фамилий созданных писателем персонажей. Наша задача заключается в том, чтобы с помощью имен собственных Ворбуни раскрыть авторские идеи, зашифрованные в именах и фамилиях его героев.

В ходе исследования использовался в основном семантический метод, в отдельных случаях он дополнялся герменевтически-психоаналитическим подходом к чтению художественного текста. В ходе исследования мы пришли к выводу, что имена персонажей Заре Ворбуни были выбраны не случайно: они либо совпадают с именами и фамилиями прототипа, либо являются символическим для данного персонажа или произведения, причем последнее в творчестве писателя доминирует. Так, есть имена и фамилии, символизирующие происхождение героя, пол, статус, национальность, характер, систему его нравственных ценностей, деятельность и иногда даже его внешний вид. Каждый тип имени собственного является художественным ключом, позволяющим проникнуть в глубину произведения автора.

Ключевые слова: *армянская литература диаспоры, З. Ворбуни, поэтика, семиотика, собственные имена художественных персонажей, символы, прототипы.*



**ՀԱՍԱՐԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԼՍԱՐԱՆԻ
ՊԱՅՄԱՆՉՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՆԹ, ԱՐՄԵՆԻԱ
ԵՎ ՀՊ ՀԵՌՈՒՄՏԱԿԱԼԻՔՆԵՐՈՒՄ***

ՀՏԴ 654.197

ԱՐՏՅՈՍ ԴԵՐՅԱԳԻՆ

*Հայ-ռուսական համալսարանի
լրագրության ֆակուլտետի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
deryagin.artiom@gmail.com*

Հոդվածում փորձել ենք ներկայացնել, թե ինչ պահանջմունքներ ունի հեռուստատեսային լսարանը: Ուսումնասիրության հիմքում դրվել են ամենավարկանիշային հեռուստաալիքներն ու դրանց ամենավարկանիշային հասարակական-քաղաքական հաղորդումները:

Հոդվածի գիտական նորույթն այն է, որ վարկանիշի և տարբեր գործոնների առաջադրման հիմքով բացահայտում ենք, թե ինչ է նախընտրում հենց հասարակական-քաղաքական հեռուստատեսության լսարանը:

Ուսումնասիրության շրջանակն ընդգրկում է Հայաստանում գործող ամենավարկանիշային հեռուստաընկերությունները՝ Արմենիա, Շանթ և Հ1: Հիմնականում անդրադարձել ենք հասարակական-քաղաքական հեռուստահաղորդումներին, որոնց հիման վրա փորձել ենք բացահայտել լսարանի նախընտրություններն ու դրանց հիմքում ընկած գործոնները:

Հետազոտությունն իրականացրել ենք հիմնականում Էմպիրիկ մեթոդաբանության շրջանակներում: Բացի դրանից, ամբողջ վերլուծության հիմքում տարբեր տարրերի ու գործոնների համեմատական վերլուծության մեթոդաբանությունն է:

Հեռուստատեսության հասարակական-քաղաքական կոնտենտում արված վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ, որ հասարակական-քաղաքական հեռուստատեսության լսարանը ցանկանում է հեռուստատեսությամբ լսել ճշգրիտ, հավաստի և չքողարկված տեղեկատվություն, ստանալ փորձագետների գնահատականները, ինչպես նաև հասարակությանը հուզող հացերի վերաբերյալ մասնագետների կարծիքներն ու ընդհանուր մեկնաբանությունները: Լսարանի պահանջմունքների գնահատումն ու չափումը դժվար է, ավելին՝ հստակ չափող գործիք, որպես այդպիսին, չկա: Հեռուստաընկերությունների համար կողմնորոշիչն ու հիմնական ցուցիչը վարկանիշն է: Հեռուստաընկերություններն իրենց հաղորդումների թեմատիկան ընտրում են հենց այդ սկզբունքով:

Հիմնաբառեր՝ *հեռուստատեսություն, հեռարձակում, հեռուստաալիք, հեռուստատեթեր, լսարան, հասարակական-քաղաքական հեռուստատեսություն, վարկանիշ, լսարանի պահանջմունքներ:*

* Հոդվածը ներկայացվել է 26.02.2020թ., գրախոսվել՝ 09.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

Յեռուստատեսային լսարանը և պահանջմունքները

Քաղաքացիական հասարակության և իշխանական ինստիտուտների միջև փոխկապվածության ու փոխազդեցության համար կարևոր կապող օղակ են զանգվածային լրատվության միջոցները (ՉԼՄ): Այդ փոխազդեցության հիմնական խնդիրը միշտ էլ եղել է և շարունակում է մնալ գիտնականների ու հետազոտողների ուշադրության կենտրոնում: Ժամանակակից աշխարհում հենց մասսայական քաղաքական տեղեկատվությունն է ապահովում քաղաքական ու սոցիալական համակարգերի միջև տեղեկատվության փոխանակման գործընթացը, իսկ ՉԼՄ-ները այդ փոխազդեցության կարևոր քաղաքական ինստիտուտներից են: Պատահական չէ ՉԼՄ-ների՝ չորրորդ իշխանություն համարվելը:

Չանգվածային լրատվության միջոցներից հեռուստատեսությունն ունի հասանելիություն, օպերատիվություն, լսարանի լայն ընդգրկում, ինչի շնորհիվ կարողանում է ձևավորել քաղաքական կողմնորոշումներ, ստեղծում է հասարակական տրամադրվածություն այս կամ այն քաղաքական երևույթի նկատմամբ: Բացի դրանից, հեռուստատեսությունը համարվում է համեմատաբար հայտնի տեղեկատվական աղբյուր նույնիսկ ինտերնետային դարաշրջանում:

Շատ կարևոր նշանակություն ունի հեռուստատեսության հենց հասարակական-քաղաքական կողմը, որը խորապես չի ուսումնասիրվել մասնագետների շրջանում: Այլ կերպ ասած՝ թե՛ հեռուստատեսության ժանրային, ձևաչափային կամ գործառնության ուղղությունները բավականին խորը ուսումնասիրված են և բազմաթիվ հեղինակներ ունեն դրանց վերաբերյալ թե՛ մենագրություններ, թե՛ առանձին պարագրաֆներ, ապա հեռուստատեսության հասարակական-քաղաքական տեսանկյունը բավականին հետազոտական բացեր ունի: Նախ անհրաժեշտ է հասկանալ, թե՛ գիտնականներն ու հետազոտողներն ինչ չափով են անդրադարձել այդ ուղղությանը կամ ինչպես են բնորոշել հասարակական-քաղաքական հեռուստատեսությունը:

Յեռուստալրագրության ամենահայտնի հետազոտողներից մեկը՝ Գ.Վ. Կուզնեցովը, նշել է, որ հեռուստատեսությունն ի վիճակի է գրավել բնակչության լայն շերտերին: Այդ կարողությունը բացատրվում է հեռուստատեսության յուրահատկությամբ՝ որպես տեղեկատվության ստեղծման ու տրամադրման միջոցի³⁹⁷:

Կուզնեցովը հասարակական-քաղաքական հեռուստատեսության վերաբերյալ ընդգծել է հետևյալը. «Դեռևս ձևավորման առաջնային փուլերում փոքր Էկրանն ունի հասարակական-քաղաքական ազդեցության մեծ հնարավորություն: Յեռուստատեսությունը կարողանում է ստեղծել հերոսներ, կերտել նոր կերպարներ, սպանել արդեն ստեղծված կերպարներին, անգամ՝ ծնել հանցագործներ»³⁹⁸:

Այսպես, հասարակական-քաղաքական հեռուստատեսությունը կարելի է բնորոշել որպես հեռուստատեսության այն «անկյունը», որը արտահայտում է հասարակական ու սոցիալական հարաբերությունները, հասարակության կենսունակության, միասնականության և համատեղ գործելու մեխանիզմների ամբողջությունը: Այլ կերպ ասած՝ հասարակական-քաղաքական հեռուստատեսությունն իր հիմքում դնում է հասարակական շփումը և հասարակության պահանջմունքների բավարարումը միաժամանակ քաղաքական ու սոցիալական բնագավառներում:

Ելնելով առանձնացված սահմանումից՝ ընդգծենք հասարակական-քաղաքական հեռուստատեսության հիմնական խնդիրները՝

- Որոշակի սոցիալական ու հասարակական նշանակություն ունեցող իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը հասարակությանը,

³⁹⁷ Кузнецов Г., Телевизионная журналистика, Москва 2002, С. 28.

³⁹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 198:

- Վերլուծության ու մեկնաբանությունների միջոցով այդ իրադարձությունների ներկայացումը,
- Իշխանության, քաղաքական ու հասարակական կուսակցությունների և քաղաքական շարժումների շահերի պաշտպանությունը,
- Զաղաքական տարածության ու քաղաքական հարաբերությունների սուբյեկտների առողջ քննադատությունը,
- Հասարակական-քաղաքական գործողությունների ու անհատների մասին հասարակական կարծիքի ձևավորումը:

Հասարակական-քաղաքական հեռուստատեսության առանձնահատկությունների և հիմնական օրինաչափությունների բացահայտման համար շատ կարևոր է հեռուստալսարանի պահանջմունքների բավարարումը:

Հեռուստալսարանի պահանջների ու նախընտրությունների գնահատման գործընթացի զարգացման մեջ մեծ ներդրում են ունեցել սոցիոլոգներ Ջ.Գելապը, Ա.Կրոսբին և Ա.Նիլսենը: Վերջինս հիմնավորել է լսարանի գնահատման ավտոմատացված համակարգերի ներդրման անհրաժեշտությունը: Երբեմն նրա հետազոտական մեթոդաբանությամբ գնահատված արդյունքներն անվանվում են Նաև «նիլսենյան վարկանիշներ»³⁹⁹: Դրան զուգահեռ՝ իրենց յուրահատուկ ներդրումն ունեցան սոցիոլոգներ Պ.Լագերֆելդը, Բ. Բերելսոնը, Է.Գոդեն: Նրանք գլխավորապես շեշտը դնում էին սոցիոլոգիական հետազոտությունների վրա:

Հեռուստատեսության ուսումնասիրությունը ցանկացած տեսանկյունից ենթադրում է հեռուստատեսային լսարանի վերլուծություն: Անհրաժեշտ է բացահայտել, թե ինչում պետք է դրսևորվեն հեռուստատեսության խնդիրները: Փորձագետների և հատկապես սոցիալական հետազոտություններ անցկացնող ինստիտուտների ու շահագրության կենտրոնում են այնպիսի հարցերը, ինչպիսիք են՝ արդյո՞ք հեռուստատեսությունը պետք է ընդառաջ գնա լսարանի պահանջներին, թե՞ պետք է փոփոխի լսարանի պահանջները, ստեղծի՞ իր սեփական լսարանը, թե՞ գրավի արդեն առկա նախընտրություններով լսարանին: Սրանք այն հարցերն են, որոնք չնայած բնագավառների առաջընթացին, շարունակում են մնալ առանց միանշանակ պատասխանի: Եթե հեռուստատեսությանն ու հատկապես հեռուստաձրագրերին նայելն արդեն կոմերցիոն տեսանկյունից, ապա հեռուստատեսությունները սկսում են ավելի շատ կենտրոնանալ այնպիսի գովազդային դադարների ու գովազդների վրա, որոնք առաջ կբերեն հեռուստադիտողների ադեկվատ շահագրգռվածություն: Մյուս կողմից էլ՝ չափազանց մեծ լսարանը չի կարող ունենալ միատեսակ հետաքրքրություններ ու պահանջներ: Ստացվում է, որ պետք է կենտրոնանալ միջին լսարանի ուղղությամբ: Հեռուստատեսության զարգացման համաշաշխարհային միտումները ավելի շատ ձգտում են կոնյունկտուրային հեռուստատեսության ստեղծմանը, ինչը իրականացվում է տարբեր մեթոդներով, որոնցից մեկը ինտերակտիվ հեռուստատեսությունն է: Այնուամենայնիվ, լսարանի չափման համար անհրաժեշտ է մշակել տարբեր մեթոդներ, միջոցներ և գնահատել լսարանի նախընտրություններն ու պահանջները:

Լսարանի չափման անհրաժեշտությունն առաջացել է 1920-ական թթ.-ին, երբ անհրաժեշտ էր հասկանալ, թե այս կամ այն ռադիոհաղորդման լսարանն ինչ ճանաչվածություն ու պահանջարկ ունի: Այդ ժամանակաշրջանում կազմակերպվում էին փոստային հարցումներ, որովհետև ամենաառաջադեմ մեթոդը դա էր համարվում: Որոշ ժամանակ անց՝ մասնավորապես 1930-ական թթ.-ին, սկսեցին հարցումներն իրականացնել հեռախոսով: Այդ ամենի արդյունքում սկսեցին ձևավորվել սոցիոլոգիական հետազոտական ծառայություններ, որոնք մասնագիտանում էին

³⁹⁹ **Корконосенко С.**, Социожурналистика: понятие, структура, практика, учебное пособие для студентов вузов, М., 2004, С. 63-89.

բացառապես լսարանի չափման ուղղությամբ: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ լսարանի չափման մեթոդներն անընդհատ զարգացում էին, և ի հայտ էին գալիս տվյալ ժամանակաշրջանին համապատասխան մեթոդներ: 1950-ական թթ.-ին ամերիկյան հետազոտողների կողմից ներդրվեց հեռուստալսարանի չափման ավտոմատացված մեթոդ, որը կոչվում էր «TV-metre»⁴⁰⁰: Դրանից հետո ներդրվեց նոր ծրագիր, որը կոչվում էր people meter: Վերջինս դեռևս լայնորեն կիրառվում է որոշ ամերիկյան հեռուստաընկերությունների լսարանի գնահատման համար: 1990-ական թթ.-ին առանձին հեռուստաընկերություններ սկսեցին իրենց անհատական հետազոտական ու վերլուծական ծրագրերը լսարանի գնահատման համար:

Պետք է նշել, որ փոճագետներն առանձնացնում են լսարանի պահանջմունքների գնահատման որակական ու քանակական ցուցանիշներ: Որոշ հեղինակներ էլ կարևոր են համարում հոգեբանական ասպեկտներն այս հարցում: Հասարակության մեջ մարդիկ հեռուստատեսային ծրագրերի տարբեր նախընտրություններ են ունենում: Կան մարդիկ, որոնք ամբողջ ազատ ժամանակը տրամադրում են հեռուստատեսությանը կամ որոշակի ժամանակահատված են տրամադրում և, իհարկե, կան մարդիկ, որոնք ընդհանրապես հեռուստացույց չեն նայում: Հեռուստալսարանի պահանջների ու նախընտրությունների գնահատման գործընթացի զարգացման մեջ մեծ ներդրում են ունեցել սոցիոլոգներ Ջ.Գեյլալը, Ա.Կոոսին և Ա.Լիլսենը: Վերջինս հիմնավորել է լսարանի գնահատման ավտոմատացված համակարգերի ներդրման անհրաժեշտությունը: Երբեմն նրա հետազոտական մեթոդաբանությամբ գնահատված արդյունքներն անվանվում են նաև «նիլսենյան վարկանիշներ»: Դրան զուգահեռ՝ իրենց յուրահատուկ ներդրումն ունեցան սոցիոլոգներ Պ.Լազերֆելդը, Բ. Բերելսոնը, Է.Գոդեն: Նրանք գլխավորապես շեշտը դնում էին սոցիոլոգիական հետազոտությունների վրա:

Մեդիաչափումների իրականացման հիմնական պատվիրատուն ու սպառողները հենց ՉԼՄ-ներն են: Դա բնական է, որովհետև առաջին հերթին հենց հեռուստաընկերություններին է հետաքրքրում սեփական լսարանի կամ պոտենցիալ լսարանի պահանջմունքներն ու հետաքրքրությունները:

Ծրագրավորման գործընթացի ձևավորման ու բնականոն զարգացման գործում ավելի ու ավելի է մեծանում վարկանիշավորման դերը: Այժմ դիտարկենք, թե ինչ է վարկանիշավորումը: Հեռուստաայլիքների համար վարկանիշ բառը կախարդական է, այն առաջացնում է հզոր զգացմունքներ և պատճառ դառնում մի շարք գործընթացների առաջացման ու իրագործման համար: Սակայն հեռուստադիտողի համար այդքան էլ պարզ չէ, թե ինչ է վարկանիշը և ինչ կարևորություն ունի այն: Հեռուստադիտողը չի էլ մտածում այն ուղղությամբ, որ հենց իրենից է կախված այդ վարկանիշը, և որ ինքն է ձևավորում վարկանիշային աղյուսակը իր իսկ վարքագծով: Իսկ հեռուստատեսային ոլորտի աշխատակիցների համար կարևոր են հենց վարկանիշները:

Վարկանիշի վրա տարբեր գործոններ կարող են ազդել՝ ինչպես քանակական, այնպես էլ որակական: Պետք է նշել, որ այստեղ արդեն կարևոր դեր են սկսում խաղալ հոգեբանական գործոնները: Օրինակ՝ որևէ թողարկման հաղորդավարը կամ ֆիլմի հերոսը ավելի մեծ ազդեցություն կարող է ունենալ լսարանի պահանջարկի վրա, քան հեռուստածրագրի բուն թողարկումը: Հայաստանում հեռուստալսարանի հետազոտությամբ տարբեր կազմակերպություններ կարող են զբաղվել, սակայն բոլոր հեռուստաընկերությունների լսարանային հետազոտությունները ներկայումս իրականացվում է «Ադմոսֆեր Արմենիա»-ի կողմից:

Հեռուստալսարանի չափումները իրականացվում են միայն քաղաքային բնակչության շրջանում հատուկ չափող սարքերի միջոցով: Ինչպես նշվեց, 2016


⁴⁰⁰ Корконосенко С., Социожурналистика: понятие, структура, практика, учебное пособие для студентов вузов, М., 2004, С. 63-89.

թվականից այդ չափումները իրականացնում է «Ադմոսֆեր Արմենիա» ընկերությունը: Հեռուստանախասիրությունների չափման մեթոդաբանական հիմքում ընկած է պանելային ուսումնասիրությունների մեթոդը, որը ենթադրում է միևնույն սոցիալական օբյեկտի, այս դեպքում՝ տնային տնտեսության երկարատև, պարբերական ուսումնասիրություն:

«Նիլսեն Ադմոսֆեր» ընկերությունը չափում է նաև թվային ազդանշանները, ինչպես նաև այսպես կոչված տեսագրված եթերը (time shift): Այսպիսի չափումների անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանում թվային հեռարձակման անցմամբ, ինչպես նաև քաղաքներում կարելային հեռուստատեսության լայն տարածմամբ⁴⁰¹:

Բացի կարելային հեռուստատեսությունից, կարևոր նշանակություն ունի նաև Ներկայումս լայն տարածում գտած IPTV-ն, որը օգտվողին տալիս է որոշակի առավելություններ ու սահմանափակումներ: Օրինակ՝ Հայաստանում ամենամրցակցային եկու IPTV-ներն առաջարկում են Յուբոմ ՄՊԸ-ն և Ջի Էն Սի ԱԼՖԱ ՓԲԸ-ն (Ռոստելեկոմ): Յոթմի բաժանորդները ունենում են Արմենիա հեռուստաընկերության և ATV հեռուստաընկերության մի քանի տարբերակներ, որոնք ունեն տարբեր ուղղություններ, սակայն Յուբոմի բաժանորդների համար Շանթ հեռուստաընկերությունն անջատված է: Իսկ ինչ վերաբերում է Ռոստելեկոմին, ապա Շանթ հեռուստաընկերության մի քանի տարբերակներն այստեղ հասանելի են: Ներկայումս լսարանի գնահատման ու դիտելիության ցուցանիշների բացահայտման վրա մեծ ազդեցություն են ունենում նաև հեռուստաընկերությունների սոցիալական էջերի բաժանորդագրությունները:

Հեռուստատեսային ձևաչափի նախընտրությունների հարցումների արդյունքում ունենք հետևյալ պատկերը (Տե՛ս գծապատկեր 1)՝



Գծապատկեր 1. Հասարակության նախընտրությունները հեռուստատեսային ձևաչափերի հետ կապված⁴⁰²

⁴⁰¹ Հայաստանի մեդիագովազդի շուկայի կառուցվածքը և ազատականացման հնարավորությունները, Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ, Երևան 2016, էջ 7:

⁴⁰² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից հարցումների անցկացման հիման վրա: Հարցումներն անցկացվել են առցանց:

Անցկացված հարցման վերլուծության արդյունքները վկայում են, որ հեռուստահեռարձակման ոլորտում ներկայումս հասարակության մեծ մասը նախընտրում է ՅուԹուբը: Սակայն միայն այս նախընտրությունների բացահայտումը մեզ հնարավորություն չի տալիս բացահայտելու լսարանի հիմնական պահանջմունքները:

Լսարանի գնահատման ամենաակնառու ցուցանիշը ներկայումս համարվում է վարկանիշային գնահատումը, որն իրականացվում է տարբեր ավտոմատ ու հարցումային ծրագրերի ամփոփման արդյունքում: Ինչպես արդեն նշեցինք, հեռուստատեսային ոլորտի լսարանի գնահատման գործընթացով զբաղվում է ԱրմուՖեր ընկերությունը:


Եթե ուսումնասիրության համար դիտարկենք ՀՀ առաջատար հեռուստաընկերություններից Հանրային հեռուստաընկերությունը, Արմենիա և Շանթ հեռուստաընկերությունները, ապա կարող ենք նշել, որ օրվա տարբեր ժամերին այս ընկերությունների թողարկումների դիտելիությունը տարբեր է լինում:

Վարկանիշային հետազոտությունները հնարավորություն են տալիս հասկանալու, թե ինչ նախընտրություններ ունի հեռուստադիտողը, բացահայտվում է, թե հասարակական-քաղաքական թեմատիկայի նկատմամբ ինչ պահանջմունքներ կարող է ունենալ հասարակությունը:

Տարբեր սոցիոլոգիական ու հետազոտական կենտրոնների ուսումնասիրություններ վկայում են այն մասին, որ լսարանի պահանջմունքների վրա կարող են ազդել տարբեր գործոններ՝ մասնավորապես շաբաթվա օրերը, օրվա տարբեր ժամերը: Քանի որ մեր հետազոտության կենտրոնում հասարակական-քաղաքական հեռուստատեսությունն է, ապա անհրաժեշտ է բացահայտել հասարակական-քաղաքական կոնտենտի դիտելիությունը և ըստ այդմ լսարանի պահանջմունքների ու նախընտրությունների վերլուծություն իրականացնել: Հետազոտության շրջանակն ընտրվել է ըստ վարկանիշային ցուցանիշների: Ըստ դիտելիության վարկանիշի՝ Հայաստանում առաջատար են Հանրային, Արմենիա և Շանթ հեռուստաընկերությունները (տե՛ս գծապատկեր 2):

Հետազոտության համար վերցնենք Հանրային, Շանթ և Արմենիա հեռուստաընկերությունների հասարակական-քաղաքական հետևյալ թեմատիկ թողարկումները՝

1. Լուրերի թողարկումներ՝ Հորիզոն («Շանթ» հեռուստաընկերություն), Ժամը լրատվական («Արմենիա» եռուստաընկերություն), Լուրեր՝ («Հանրային» հեռուստաընկերություն)
2. «Հեռանկար» Շանթ հեռուստաընկերություն (Shanttv.com)
3. «Հրապարակում», «Խաղի կանոններ», «Մեդիա դիտող», «Եկեք հասկանանք», «Հանրային քննարկում», «Խորհրդարանական շաբաթ»՝ Հ1(1tv.am)
4. Սուր անկյուն՝ Արմենիա հեռուստաընկերություն (armeinatv.am):



Գծապատկեր 2. Հայկական հեռուստաընկերությունների վարկանիշային ցուցանիշները 2015-2019թթ.-ին


Լսարանի նախասիրությունները հասարակական-քաղաքական հեռուստատեսային կոնտենտի վերաբերյալ

Հեռուստաընկերությունների հասարակական-քաղաքական կոնտենտի կառուցվածքն ու բովանդակությունը տարբեր են, հետևաբար տարբեր են նաև լսարանները և նրանց նախընտրությունները:

Հասարակական-քաղաքական հեռուստատեսության թեմատիկայի շրջանակներում առանձնակի տեղ ունի տեղեկատվական թեմատիկան, որն առաջին հերթին դրսևորվում է լուրերի թողարկմամբ:

Մեր ընտրած երեք հեռուստաընկերությունների լուրերի թողարկումները միջինում ունեն հավասար դիտելիություն, սակայն առաջին տեղում Հ1-ի լուրերի թողարկումն է, որին շատ քիչ գիջում է ժամը լրատվականը, իսկ երրորդ տեղում Հորիզոնն է (տե՛ս գծապատկեր 3): Փորձենք հասկանալ, թե ինչով է պայմանավորված լսարանի նման նախընտրելիությունը: Նախ առանձնացնենք Հ1-ի լուրերը: Չնայած այն հանգամանքին, որ Հանրային հեռուստաընկերության դիտելիությունը երրորդ տեղում է, լուրերի թողարկման վարկանիշը առաջին տեղում է: Դա կարող է պայմանավորված լինել նրանով, որ Հանրային հեռուստաընկերությունը տարիներ շարունակ միշտ հասանելի է


եղել Հայաստանի բոլոր քաղաքներում, և մարդիկ ուղղակի սովորության համաձայն լուրեր լսելու համար միացնում են Հ1-ը: Բացի դրանից, հանրային հեռուստաընկերության կոնտենտը, ինչքան էլ փորձի չեզոքություն պահպանել, այնուամենայնիվ հնարավորինս պետականամետ է: Դրանով պայմանավորված՝ հասարակության առավել պետականամետ զանգվածը լուրերը դիտում է Հ1-ով: Ինչ վերաբերում է Շանթ հեռուստաընկերության Հորիզոն լրատվականին, ապա դրա ցածր դիտելիությունը պայմանավորված է նրանով, որ արդեն երկու տարի է՝ Շանթը հասանելի է միայն Ռոստելեկոմ ընկերության IPTV-ով և թվային հեռուստատեսությամբ: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Երևանի բնակչության մեծամասնությունը Յուբոմի բաժանորդ է, ապա դա նպաստում է Հորիզոնի դիտելիության կրճատմանը, քանի որ Հայաստանի բնակչության 1/3-ը բնակվում է Երևանում: Հետևաբար լուրերի թողարկման վարկանիշային ցուցանիշով Հորիզոնը զբաղեցնում է երրորդ հորիզոնականը:



Գծապատկեր 3. Հասարակական-քաղաքական կոնտենտ պարունակող հեռուստահաղորդումների վարկանիշային ցուցանիշները 2019թ.-ին⁴⁰³

Լսարանի նախընտրությունների վրա մեծ ազդեցություն է ունենում նաև այս կամ այն հաղորդման գլխավոր թողարկման ժամը (տե՛ս գծապատկեր 4):

⁴⁰³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, հաշվարկվել է 2019թ.-ի ամիսների միջին ցուցանիշը, արդյուրը՝ Ադմոսֆեր Արմենիա ՓԲԸ:



Գծապատկեր 4. Հեռուստատեսության դիտելիության ժամային գրաֆիկն՝ ըստ հարցված լսարանի նախընտրությունների

Ինչպես արդեն նշել ենք, Հ1-ի Լուրերի գլխավոր թողարկումը լինում է երեկոյան՝ 21:00-ին, ինչը կարելի է համարել ամենահարմար ժամը: Այդ ժամին մարդկանց մեծամասնությունն աշխատանքից վերադարձել է, ընթրել և դիտում է հեռուստացույց, իսկ ընդամենը մեկ ժամ հետո՝ 22:00-ին, հասարակության որոշակի շերտն արդեն պատրաստվում է քնելու: Ստացվում է, որ հասարակական-քաղաքական հեռուստատեսության լսարանի վրա մեծ ազդեցություն ունի թողարկման ժամը: Ինչպես նկատում ենք, դիտելիությունը հիմնականում 20:00-23:00 ընկած ժամանակահատվածում է, ինչը վկայում է, որ այդ ժամանակահատվածում հեռարձակվող հաղորդումներն ամենավարկանիշայիններն են Հայաստանում:

Ամփոփում

Եթե ամփոփենք հարցազրույցային ձևաչափի հասարակական-քաղաքական կոնտենտը և լսարանի նախընտրությունները, ապա կարելի է առանձնացնել հետևյալ գործոնները, որոնք ազդում են լսարանի նախընտրությունների վրա.

1. թողարկման ժամը և օրը,
2. ձևաչափը,
3. քննարկվող ու ներկայացվող հարցի արդիականությունը:

Լսարանի նախընտրությունների բացահայտումը և չափողականությունը բավականին բարդ պրոցես է: Բացի դրանից, հաղորդման կամ որևէ ծրագրի վարկանիշի ու դիտելիության վրա մեծ ազդեցություն է ունենում հաղորդավարը: Այսինքն՝ եթե ունենք հայտնի ու պրոֆեսիոնալ հաղորդավար, ապա այդ հանգամանքն իր ազդեցությունն է ունենում հաղորդման վարկանիշի ու դիտելիության վրա: Մասնավորապես համեմատենք «Հանրային քննարկում», «Եկեք հասկանանք», «Նաղի կանոններ» և «Մեդիա դիտորդ» հաղորդումները: Հանրային քննարկումն առաջին տեղում է, իսկ մնացած երեք հաղորդումների վարկանիշային սանդղակը միևնույն նշածոդի վրա է

հիմնականում⁴⁰⁴: Այս հաղորդումներն ունեն նույն ձևաչափը՝ բանավիճային են: Եթե անդրադառնանք «Եկեք հասկանանք» հաղորդմանը, ապա լսարանի հետ հետադարձ կապն այստեղ բավականին ուժեղ է: Ուսումնասիրվում են հասարակությանը հուզող հարցերը ինչպես սոցցանցերում, այնպես էլ հարցումների միջոցով, բացահայտվում են այն խնդիրները, որոնք հասարակության համար անհասկանալի են և քննարկվում են: Այլ կերպ ասած՝ հաղորդման շրջանակներում փորձում են հասկանալ խնդիրները և հեռանկարները:

Համաշխարհային տնտեսությունում ինտեգրացիոն միտումների ուժգնացման պայմաններում տնտեսական առաջընթացն ուղղորդվում է զարգացած ու զարգացող երկրների փոխներգործությամբ, ինչի արդյունքում վերանում են աշխատուժի, կապիտալի և ֆինանսական միջոցների՝ դեպի առավել արդյունավետ օգտագործման ուղղությամբ շարժի հետ կապված սահմանափակումները: Այդ առումով հարկ է նշել, որ վերջին 30 տարիների ընթացքում միջազգային առևտրի ծավալները համաշխարհային ՀՆԱ-ի կառուցվածքում աճել են շուրջ 20 տոկոսային կետով՝ 2018 թվականի դրությամբ կազմելով համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 59 տոկոսը⁴⁶¹: Չարգացող երկրներն, ունենալով բնական ռեսուրսների զգալի պաշարներ և տնտեսական զարգացման լուրջ ներուժ, մշտապես գտնվել են զարգացած երկրների ուշադրության կենտրոնում, որոնք ներդրումային համալիր ծրագրերի միջոցով ներթափանցում են զարգացող երկրներ՝ իրականացնելով ակտիվ տնտեսական գործունեություն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ տնտեսության ժամանակակից ուղղությունների, ինչպես նաև ինովացիոն գործունեության զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը պետք է լինի միջազգային փորձի արդյունքների տեղայնացումը զարգացող երկրներում, ընդ որում՝ ակնհայտ է, որ այդ ուղղությամբ ցանկալի արդյունքները մեծապես կախված են միջազգային տնտեսական համագործակցությունից: Չարգացող երկրներում ինովացիոն արդյունավետ քաղաքականության իրականացումն առաջին հերթին պետք է պայմանավորված լինի սեփական գիտական ներուժի առավելագույն օգտագործմամբ, ինչպես նաև միջազգային փորձի տեղայնացմամբ: Բնականաբար, այդպիսի մոտեցումը կպահանջի համեմատաբար ավելի քիչ ռեսուրսներ, կլինի առավել նվազ ռիսկային, քան այդ ուղղությամբ Նոր մոդելների ստեղծումն ու փորձարկումն է: Բարենպաստ ներդրումային դաշտի ստեղծումը՝ ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների աճի ապահովմանը, լավագույն մեկնարկն է այդ ուղղությամբ առաջընթաց ապահովելու գործում: Կարգավորող ու վերահսկող մարմինների կողմից իրականացվող միջոցառումներն ուղղված են ֆինանսական շուկաների ազատականացմանը, կապիտալի ազատ շարժի հետ կապված սահմանափակումների վերացմանը, ինչպես նաև դրանց կողմից տնտեսավարման ուղղությամբ բարենպաստ իրավական ու հարկային դաշտերի ստեղծումը մրցունակ պայմաններով օտարերկրյա ներդրումների ազատ ներթափանցման համար լավագույն խթաններն են: Հարկ է նաև նշել, որ միջազգային ֆինանսավորման ներգրավմամբ Նորարարական ծրագրերում ներդրումների իրականացումը կարող է ենթադրել արտաքին վերահսկողության բարձր մակարդակ, ուստի՝ նվազագույնի հասնող ծախսեր ու կորուստներ, արդյունքում՝ ներդրումային ծրագրի օպտիմալ հետզման ժամկետ և բարձր եկամտաբերություն: Ֆինանսավորման տեսանկյունից ինովացիոն ծրագրերը, լինելով համեմատաբար բարձր ռիսկային, սովորաբար դուրս են մնում բանկերի և ավանդական այլ ֆինանսական կազմակերպությունների թիրախային վարկավորման ծրագրերից: Ուստի այս առումով հատկապես կարևորվում է ներդրումային բարենպաստ պայմանների ստեղծումն օտարերկրյա վենչուրային կազմակերպությունների համար (venture capitalists), որոնք նպատակաուղղված ներդրումներ են իրականացնում սկսնակ և համեմատաբար բարձր ռիսկային ներդրումային ծրագրերում: Այդ առումով բարձր եկամտաբերություն հետապնդող, ուստի՝ բարձր ռիսկային ծրագրերում ներդրումներ իրականացնող կազմակերպությունները, հետամուտ լինելով շահույթաբերության միջինից բարձր մակարդակի ապահովմանը, կարող են ֆինանսավորման լավագույն աղբյուր

⁴⁶¹ **Trade % of GDP**, World Bank National Accounts Data and OECD National Accounts Data Files, <https://data.worldbank.org/indicator/NE.TRD.GNFS.ZS> ; last visit – 11 May, 2020.

հանդիսանալ նորարարական ներդրումային ծրագրերի իրականացման գործում: Կենչուրային կապիտալի ներգրավման բարդությունները հանրապետությունում հիմնականում պայմանավորված են առևտրայնացման ներուժ ունեցող գիտական գաղափարների ոչ բավարար ներհոսքով, շուկայի պահանջների ոչ բավարար ըմբռնումով, ինչպես նաև սկսնակ կազմակերպությունների՝ միջազգային խմբերից հեռու գտնվելու հանգամանքով:

Ինովացիոն զարգացման ուղին հարթելու նկատառումներ հետապնդող զարգացող երկրներից շատերը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, նաև և առաջ պետք է հետամուտ լինեն միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստմանը: Բարձրորակ մասնագետների սակավությունը, որը բնորոշ է զարգացող երկրներից շատերին, մասնավորապես բխում է կրթական համակարգի ոչ բավարար զարգացվածությունից, ինչպես նաև մրցունակ մասնագետների զգալի արտահոսքից՝ պայմանավորված միջազգային շուկայի համեմատ ոլորտում ոչ մրցունակ վարձատրությամբ: Չարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ նորարարական համակարգերի ներդրումը և արդյունավետ ինովացիոն քաղաքականության վարումը նախնառաջ պետք է ենթադրի կրթական համակարգի բարելավում ու գիտելիքահենք տնտեսության ձևավորում: Մարդկային կապիտալի՝ տնտեսության արդի ուղղությունների հետ համահունչ զարգացումը մեծապես կարող է նպաստել տնտեսավարման գործընթացներում առկա խնդիրների լուծման արդյունավետ ուղիների բացահայտմանը, ինչպես նաև աշխատանքային ռեսուրսների՝ իրական հատվածի կարիքներին համապատասխան ձևավորմանն ու տեղաբաշխմանը: Չարգացած երկրներում բարձրագույն կրթական հաստատությունները լայնորեն ներգրավված են իրական բիզնես խնդիրների լուծման գործընթացներում, ինչը հնարավորություն է տալիս մեծապես նպաստելու տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Գիտակրթական ու գործարար օղակների միջև արդյունավետ համագործակցությունը զարգացած երկրներում դարձել է իրական պահանջարկի բավարարմանն ուղղված նորարարական լուծումների բացահայտման լավագույն ուղիներից մեկը: Միևնույն ժամանակ նման համագործակցությունը արդյունավետ ձևով խթանում է պահանջվող հմտություններով աշխատուժի ձևավորման հիմնախնդրի լուծումը՝ արդյունքում նպաստելով կառուցվածքային գործազրկության մակարդակի կրճատմանը: Այլ կերպ ասած՝ գործարար միջավայրի հետ արդյունավետ համագործակցությունը գիտակրթական ոլորտում բուռն զարգացման նախադրյալներ կարող է ստեղծել կրթական այն ուղղությունների համար, որոնք լավագույն ձևով են իրականացնում գործարար միջավայրի պահանջներին բավարարող հմտություններով մասնագետների պատրաստումը: Ավանհայտ է, որ գիտական համայնքի ու գործարար աշխարհի միջև սերտ համագործակցությունը կարևոր երաշխիք է ինովացիոն գործունեության խթանման և ժամանակակից տեխնոլոգիաների մշակմանն ու ներդրման համար: Այդ իսկ պատճառով տեխնոլոգիապես առաջատար երկրներում գիտական ու տեխնոլոգիական զարգացումը մշտապես գտնվում է ուշադրության կենտրոնում՝ կրթական ու գիտահետազոտական աշխատանքների համար հատկացնելով լուրջ ֆինանսական միջոցներ: 2018 թվականի դրությամբ գիտակրթական գործունեության ֆինանսավորման ուղղությամբ պետական ծախսումների ծավալը ԵՄ-ում կազմել է ՀՆԱ-ի 4.6%-ը⁴⁶²: Համեմատության համար նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի դրությամբ կրթության ֆինանսավորման ուղղությամբ իրականացվել են մոտ 122 միլիարդ դրամի ծախսումներ, որը կազմել է պետական բյուջեի ծախսերի մոտ 8%-ը

⁴⁶² Government Expenditure on Education, total (% of GDP); Eurostat Statistics Explained;

https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Government_expenditure_on_education;

last visit – 17 May, 2020

(ՀՆԱ-ի 2.1%-ը)⁴⁶³, մինչդեռ զարգացած երկրներում ցուցանիշը միջինում գերազանցում է 4.5-5%-ը: Վերոգրյալը փաստում է, որ զարգացող երկրների տնտեսություններում ինովացիոն գործունեությունը խթանելու և այդ ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար առաջնայինը պետք է դառնա գիտության ֆինանսավորումը և ներդրումների ուղղումը կրթական ու գիտահետազոտական, հատկապես նորարարական տեխնոլոգիաների ոլորտ: Միևնույն ժամանակ զարգացող երկրների տնտեսություններին բնորոշ առանձնահատկություններով հանդերձ՝ Հայաստանի Հանրապետությունը տիրապետում է մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող աշխատանքային ռեսուրսների, ինչպես նաև ունի տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտը զարգացնելու և ընդլայնելու հսկայական ներուժ: 2018 թվականի դրությամբ Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ոլորտում զբաղվածների թիվը հասել է մոտ 20,000-ի, ինչը մոտ 27%-ով գերազանցում է ցուցանիշի նախորդ տարվա մակարդակը⁴⁶⁴: Ընդ որում՝ կանխատեսվում է, որ, եթե SS ոլորտը համալրող աշխատուժի վերջին 10 տարիների միտումը պահպանվի, ապա 2030 թվականին ոլորտի համախառն հասույթը կաճի 3.5 անգամ՝ հասնելով 2.6 միլիարդ ԱՄՆ դոլարի⁴⁶⁵: Եվ չնայած այն հանգամանքին, որ ինովացիոն ծախսումները (R&D expenses) 2018 թվականի դրությամբ կազմել են Հայաստանի ՀՆԱ-ի ընդամենը 0.3%-ը, բարձր տեխնոլոգիաների ոլորտը հանրապետությունում ունի զարգացման հսկայական ներուժ և կարող է մեծ ներդրում ունենալ Հայաստանի տնտեսության աճի և զարգացման գործում⁴⁶⁶: Չարգացման այդ հնարավորությունների արդյունավետ օգտագործումը և ճիշտ կառավարումը երկրի տնտեսական զարգացման համատեքստում կարող են լուրջ խթան հանդիսանալ առկա ռեսուրսների առավել նպատակային օգտագործման և միջազգային տնտեսական հարաբերություններում մրցակցային առավելությունների ձեռքբերման համար: Կարելի է ենթադրել, որ տնտեսական հարաբերությունների՝ այս ուղղությամբ ձևավորումն ու զարգացումը երկրի տնտեսության զարգացման ինովացիոն մոդելի սաղմավորման, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության և միջազգային շուկաներում ազգային մրցունակության բարձրացման հզոր խթաններ են:

Ինովացիոն զարգացման առանցքային ուղղություններից հաջորդն ինովացիոն զարգացման ուղղությամբ բարենպաստ պայմանների ստեղծումն է, ինչը, անշուշտ, կնպաստի տնտեսավարող սուբյեկտների նորարարական ծախսումների ընդլայնմանը: Ինովացիոն քաղաքականության՝ այս ուղղությամբ բարելավման համատեքստում չափազանց մեծ է պետական կառավարման մարմինների դերը, որոնց նպատակաուղղված գործունեությամբ է պայմանավորված այդ քաղաքականության իրականացման արդյունավետությունը: Կարևոր է նշել, որ տնտեսավարող սուբյեկտների նորարարական ծախսումների ընդլայնման գործում կարգավորող ու վերահսկող մարմինների դերը հատկապես պետք է լինի տնտեսական հարաբերություններում մրցակցային դաշտի ստեղծումը, այն է՝ խթանվի նոր տնտեսավարող սուբյեկտների մուտքը տնտեսության տվյալ ոլորտ, իսկ գործողների համար սահմանվեն հավասար

⁴⁶³ Պետական Ֆինանսների հիմնական ցուցանիշներ, ՀՀ պետական բյուջեի ծախսերն ըստ ծախսերի գործառնական դասակարգման խմբերի, ՀՀ վիճակագրական կոմիտե: https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_1%20Economy%20and%20finance_14%20Government%20Finances/EF-GF-3-2018.px/?rxid=c9d15bb6-3d3b-4418-b16e-619902e10c86, վերջին այցելությունը՝ մայիսի 11, 2020 թ.:

⁴⁶⁴ **Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ**, «Հայաստանում Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, 2018», էջ 37:

⁴⁶⁵ **EV Consulting**, Հայաստանի Ազգային Սրբունակության զեկույց, 2019 «Աշխատատեղերի ապագան Հայաստանում», էջ 65:

⁴⁶⁶ **K. Schwab**, The World Economic Forum, The Global Competitiveness Report, 2018, p. 73.

մրցակցային պայմաններ: Մրցակցային խիստ պայմաններում, երբ գոյատևման հիմնական նախապայմանը կղառնա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման ուղիների բացահայտման միջոցով մրցակցային առավելության ձեռքբերումը, մրցակից տնտեսավարող սուբյեկտների կողմից նորարարություններին ուղղված ծախսումների կատարումը կղառնա անխուսափելի: Արդյունքում ինովացիոն գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն կունենան առաջ անցնել մրցակիցներից, նորարարական լուծումներով ձեռք բերել նոր հաճախորդներ՝ շուկայից դուրս մղելով ոչ արդյունավետ գործող տնտեսավարող սուբյեկտներին:

WAYS TO INCREASE INNOVATION POLICY EFFICIENCY IN DEVELOPING COUNTRIES (ON THE EXAMPLE OF RA)

FLORA SOGHOYAN

*«Ameriabank» CJSC, Capital Management Center,
Specialist of Assets, Liabilities;*

*Yerevan State University, Faculty of Economics, Ph.D Student,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to explore the potential of innovation development in the Republic of Armenia, as well as to identify systemic solutions to overcome the barriers to the implementation of innovative activities in the economic models of developing countries.

The urgency of the analysis stems from the imperative of their more efficient use due to the limited global resources, which is one of the priority issues facing the world economy.

Systematic, economic-statistical analysis, as well as factor, comparative and monographic methods were used while performing the research.

The research concluded that the development and implementation of an effective innovation policy is a precondition for ensuring the efficiency of the organization of economic processes, reducing production costs and more efficient use of economic resources.

Based on the above, it is proposed to build a model of economic transformation with the use of the latest technologies. At the same time, in order to achieve tangible results, it is proposed to implement systemic reforms in the economy, which should be based on close cooperation between government agencies and business entities, guided by the experience gained in technologically advanced countries.

Key words: *developing countries, innovation policy, business, education, state, regulation, efficiency, international experience, foreign investments.*

ФЛОРА СОГОЯН

*специалист центра управления активами, обязательствами и
капиталом ЗАО «Америабанк»;
аспирант экономического факультета
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является изучение потенциала инновационного развития в Республике Армения, а также выявление системных решений для преодоления препятствий на пути реализации инновационной деятельности в экономических моделях развивающихся стран.

Актуальность анализа обусловлена необходимостью их более эффективного использования в связи с ограниченными глобальными ресурсами, что является одной из приоритетных проблем, стоящих перед мировой экономикой.

В работе использованы системный, экономико-статистический анализ, а также факторный, сравнительный и монографический методы.

В результате проведенного исследования автор пришел к выводу, что разработка и реализация эффективной инновационной политики является предварительным условием обеспечения эффективности организации экономических процессов, снижения себестоимости продукции и более эффективного использования экономических ресурсов.

Исходя из вышеизложенного, предлагается создать модель экономических преобразований, основанную на использовании новейших технологий и на видении экономических субъектов для реализации инновационной деятельности. В то же время для достижения ощутимых результатов предлагается провести системные реформы в экономике, которые должны основываться на тесном сотрудничестве между государственными органами и субъектами предпринимательской деятельности и опираться на опыт, накопленный в технологически развитых странах.

Ключевые слова: *Развивающиеся страны, инновационная политика, хозяйствующий субъект, образование, государственное регулирование, международный опыт, иностранные инвестиции.*

**ՃԱՆԱԶՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ***

ՀՏԴ 165.5

ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի փիլիսոփայության պատմության, տեսության և
տրամաբանության ամբիոնի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
gevorg.hakobyan82@gmail.com*

Հողվածում դիտարկվում և համեմատական վերլուծության է ենթարկվում ճանաչման հիմնախնդիրը մի կողմից՝ գիտական իմացության, մյուս կողմից՝ իրավունքի ու քաղաքականության ոլորտներում: Արձանագրվում են նույնություններ, տարբերություններ և այլ փաստեր: Հեղինակը կիրառել է համեմատության, վերլուծության, համադրության, ընդհանրացման և այլ մեթոդներ: Հողվածում փաստարկվում է, որ ճանաչման՝ որպես քաղաքական ակտի հիմնախնդիրն առնչվող խոչընդոտներն առավել կանխատեսելի ու կառավարելի են, քան գիտության ոլորտում հանդիպողները, հակառակ նրան, որ կա չհիմնավորված համոզմունք, որ գիտությունն առավել ռացիոնալ, անկողմանակալությանն ու օբյեկտիվությանը հակված ոլորտ է, քան քաղաքականությունը: Վերլուծության ելակարգություններն առնչակցվում են Արցախի ճանաչման հիմնահարցին: Փաստարկվում է, որ հողվածում վերլուծված ճանաչման գործընթացն անհարկիորեն արգելափակող, սուբյեկտային երեք «ֆոն»-երն էլ գործում են Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում: Դրանք հարուցում են մի շարք դժվարություններ, և գործընթացը մղում փակուղի: Այդ պայմաններում հայկական կողմը ստիպված է իր պայքարի միջոցները փնտրել խոշոր տերությունների շահերի ընդհանրության դաշտում և տեղեկատվական պատերազմի ասպարեզում: Հողվածը ելրափակվում է այն գաղափարի մատնանշումով, որ եթե Մոդեռնի շրջանում հակամարտող կողմերից առավելության էր հասնում տեխնիկական միջոցների տիրապետող կողմը, ապա ներկայում առավելության կարող է հասնել հակամարտության այն կողմը, որն ունի տեղեկատվական, փաստարկման և վերլուծական ոլորտների հմուտ մասնագետներ:

Հիմնաբառեր՝ գիտություն, իրավունք, քաղաքականություն, ֆոն, սուբյեկտ, խոչընդոտ, ճանաչման հիմնախնդիր, ճանաչման գործընթաց:

Վերլուծության նպատակն ու հիմնախնդրի եռլուծումը

Արդի միջազգային հարաբերություններում կենտրոնական տեղ ու դեր ունի ճանաչման իրավաքաղաքական ակտը: Վերջինս կարող է հավասարապես վերաբերել ինչպես նորանկախ պետությունը որպես այդպիսին որակելուն, այնպես էլ պատմական

* Հողվածը ներկայացվել է 05.05.2020թ., գրախոսվել՝ 11.05.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

ինչ-որ դեպքի եղելությունն ընդունելուն կամ ինչ-որ գործողություններ ու տարածքներ գնահատականի արժանացնելուն և այլն:

Ճանաչումը (ընդունել/մերժելու իմաստով) կենտրոնական տեղ է զբաղեցնում նաև գիտության մեջ, որում ունի գրեթե նույն նշանակությունը, ինչ իրավաբաղաբականում, այն է՝ հաշվի առնել ինչ-որ իրադրություն, այն որակել, գնահատել, արժեքավորել, արտահայտել վերաբերմունք դրա մասին և այլն: Քանի որ գիտական գործընթացները մեծապես կախված են գիտական հանրույթի կողմից ձեռք բերված արդյունքների ճանաչումից, ուստի դրան վերաբերող հարցերն էլ լուրջ քննարկումների ու բանավեճերի առիթ են դարձել մետագիտական հարթության վրա՝ էպիստեմոլոգիայի ու մեթոդաբանության մեջ:

Սույն վերլուծությամբ ցույց են տրվում գիտական տեսությունների ընդունման (այդ իմաստով՝ նրանց ճանաչման) և իրավաբաղաբական ոլորտներում ճանաչման ակտի որոշ նմանություններ ու տարբերություններ՝ փաստարկելու, որ **իրավաբաղաբական ոլորտում տեղի ունեցող զարգացումները պակաս ըմբռնելի ու կառավարելի չեն, քան գիտական ոլորտում ծավալվող գործընթացները:**

Ճանաչման հիմնախնդրի այսօրինակ վերլուծության անհրաժեշտությունը պայմանավորված է առօրեական ու մասնագիտական շրջանակներում լայն տարածում ունեցող այն համոզմունքով, ըստ որի՝ իրավաբաղաբական գործընթացներն այնքան բարդ ու խճճված են, որ հասու չեն ըմբռնման, ուստի դրանց հետագա զարգացումներն անկանխատեսելի և/կամ անկառավարելի են: Այս ազնուստիկական մտայնությունն իրավաբաղաբական գործողներին կարող է մղել (հանցավոր) անգործության, իսկ գործընթացները հանգեցնել արատավոր շրջապտույտ կատարող, ինքնանպատակ ու ապարդյուն ընթացքի: Խնդիրն ավելի է կարևորվում և դառնում հրատապ, երբ սույն մտայնությունը տեղ է գտնում Արցախի հիմնախնդրի կարգավորման բանակցությունների շրջանակներում: Ուստի կարիք է զգացվում քննադատելու և գնահատելու այդպիսի համոզմունքները:

Ի հակադրություն վերը նկարագրված դրության՝ առօրեական ու մասնագիտական շրջանակներում առկա է խիստ լավատեսական մի մտայնություն, ըստ որի՝ գիտական ոլորտը ռացիոնալ հիմքերի վրա կազմակերպված ու գործառույթի համակարգ է, որում տեղի ունեցող գործընթացները և՛ կանխատեսելի են, և՛ կառավարելի⁴⁶⁷:

Անհերքելի փաստ է, որ գիտությունն արձանագրել է նվաճումներ, բայց, ինչպես կտեսնենք, դրանք բնավ չեն հիմնավորում գիտական ոլորտի բացառիկությանը վերաբերող անհարկի լավատեսական համոզմունքները: Ուստի կարելի է ասել, որ գիտության նկատմամբ չափավոր լավատեսությունն ընդունելի է, իսկ իրավաբաղաբական ոլորտի նկատմամբ առկա իմացաբանական չափազանցեցված հոռետեսությունը՝ ոչ: Սի շարք բարդություններ, որոնք առկա են իրավաբաղաբական գործընթացներն ըմբռնելու հարցում, մատնանշելի են նաև գիտական գործընթացների առումով: Եթե այդ բարդությունների (որոնց կանդիդատանաբար ստորև) առկայությունից կարելի է բխեցնել, որ իրավաբաղաբական գործընթացներն իսպառ անըմբռնելի են, ապա նույնը պետք է պնդել նաև գիտության վերաբերմամբ: Իսկ այս դեպքում անհրաժեշտաբար պետք է համաձայնել Ժ. Բորդիարի հետ, ըստ որի՝ այլևս չկա Աստված, որպեսզի տարբերի յուրայիններին, չկա Վերջին դատաստան, որով կեղծը կառանձնացվեր ճշմարտից, իրականը՝ արհեստականորեն հարություն առածից, որովհետև ամեն ինչ արդեն իսկ մեռած և կանխավ, մինչև մեռնելը հարություն առած է: Ներկայումս գոյություն չունեն ո՛չ իրականը, ո՛չ էլ իրականին վերաբերող առասպելն ու նշանները: Առկա

⁴⁶⁷ St'u Kuhn Th., The Function of Dogma in Scientific Research, Scientific Change, Alistair C. Crombie, Ed. (1963), pp. 347-369. © 1963 by Heinemann Educational Books, Ltd. Reprinted by permission of Basic Books, Inc., publishers, P. 302. <http://classes.matthewjbrown.net/teaching-files/hps/kuhn-dogma-revolutions.pdf/>.

օբյեկտիվությունները, վավերականությունները կամ ճշմարտությունները բացառապես երկրորդային են՝ վերարտադրված ու վերամշակված: Այս պայմաններում, երբ իրականությունը վերածվել է հիպերիրականության, սիմուլյակրներն այլևս գոյություն ունեցող օբյեկտների պատկերումները չեն, այլ այնպիսի օբյեկտների, որոնք գոյություն չունեն: Ուստի սիմուլյակրները նշաններ են, որոնք չունեն նշանակվողներ: Սիմուլյակրներն ամենուր են և և ամեն ինչ սիմուլյակր է⁴⁶⁸: Այսինքն՝ իրականացել է Ռ. Բարթի «մարգարեությունը», և մահացել է Յեղիևակը՝ «... ռացիոնալ կարգավորությունը, գիտությունը, օրենքը»⁴⁶⁹: Իսկ ներկայիս բոլոր ինստիտուտները, այդ թվում՝ իրավաբաղաբականներն ու գիտականները, ամեն գնով փորձում են դուրս պրծնել անպատասխանատու և մեռելային իրավիճակից⁴⁷⁰: Յետևաբար ոչ մի իմաստ չունի ինչպես գիտությամբ, այնպես էլ իրավաբաղաբական գործունեությամբ զբաղվելը, ինչպես որ իմաստ չունի հույս կապելն այս ոլորտների և/կամ դրանց գործորդների հետ:

Գիտական գործընթացներն իրավաբաղաբական գործընթացներից առավել ըմբռնելի ու կանխատեսելի լինել/չլինելու հանգամանքի պարզաբանումը ցույց կտա, որ իրավաբաղաբական գործընթացների ճանաչողության հարցում առկա ազնուստիկական հայացքներն անհիմն են: Այս պարզաբանումը կարող է իրականացվել գիտության մեջ նոր արդյունքների ընդունման, դրանք որպես գիտական ճանաչելու և միջազգային հարաբերություններում ճանաչման՝ որպես իրավաբաղաբական ակտի համեմատելու միջոցով:

Գիտական գործընթացների առավել ըմբռնելի լինելու տեսակետի սխալ հիմքերը

Ի տարբերություն իրավաբաղաբական ճանաչման ակտի՝ գիտական ճանաչման գործընթացն առավել ըմբռնելի լինելու մտայնության օգտին կարող են խոսել հետևյալ փաստերն ու դրանց վերաբերյալ կարծիքները: Գիտության մեջ նոր օրենքների, տեսությունների, հայեցակարգերի ընդունման (այլ կերպ՝ դրանց ճանաչման) հիմնահարցը համակողմանի քննության է ենթարկվել և՛ անցյալում, և՛ ներկայում՝ ոչ միայն մեթոդաբան-էպիստեմոլոգների, այլև մասնավոր գիտակարգերի ներկայացուցիչների կողմից: Պայմանավորված այս քննարկումների և ուսումնասիրությունների ընթացքներով ու արդյունքներով՝ ձևավորվել են համապատասխան ինստիտուտներ, որոնց շրջանակներում հստակ կարգավորվում ուն կառավարվում է գիտականի կողմից իրագործված հետազոտության՝ որպես գիտության մեջ ընդունելի (մերժելի) արդյունքի ճանաչմանը վերաբերող հարցերի ամբողջությունը: Դրա համանմանությամբ իրավաբաղաբական հարաբերություններում ճանաչման ակտի հիմնահարցը նույնպես ենթարկվել է լուրջ քննարկումների և ուսումնասիրությունների, առկա են բազմաթիվ ու բազմապիսի ինստիտուտներ, սակայն ճանաչման ո՛չ գործընթացը, ո՛չ էլ կայացումը (միտումնավոր և/կամ պատահականորեն) հստակ կանոնակարգման չեն ենթարկվել: Ներկայումս գոյություն չունի միջազգային ճանաչման չափանիշներն ամրագրող իրավական մի փաստաթուղթ, որի վրա հիմնվելով հնարավոր լինել իրավաբաղաբական գնահատականի արժանացնել լեզալ ու լեզուիմ ինքնիշխանության հավակնող գործորդներին: Ընդհակառակը, հանրահայտ փաստ է, որ անհասկանալի ու անորոշ հիմունքներով որոշ ժողովուրդների թույլ է տրվում իրացնել ինքնորոշման ակտ, իսկ որոշներին նույն՝ անհասկանալի ու անորոշ հիմունքներով մերժվում:

Եթե գիտական իմացության արդյունքների ճանաչման (գիտության մեջ դրանց ընդունման, ներառման) շրջանակներում միշտ մատնանշվում է, թե ինչպիսի հիմքեր ունի

⁴⁶⁸ Տե՛ս **Бодрийяр Ж.**, Симулякры и симуляция, Тула, Текст, 2013, С. 23-32.

⁴⁶⁹ **Барт Р.**, Смерть автора, Избранные работы: Семиотика: Поэтика, М.: Прогресс, 1989, С. 389.

⁴⁷⁰ Տե՛ս **Бодрийяр Ж.**, Симулякры и симуляция, Тула, Текст, 2013, С. 41.

տվյալ ճանաչումը, ապա իրավաբաղաբականի դեպքում գրեթե միշտ լուրջության կամ անորոշության են մատնվում ճանաչման բովանդակային կողմերը (հիմքերը, պատճառները, չափանիշները): Իրավաբաղաբական ճանաչման ձևը (de jure, de facto, ad hoc) միշտ կախված է ճանաչողի կամբից ու քաղաբական իրադրությունից: Վերջինս կարող է իրականացնել ճանաչման ակտ, կարող է նաև չիրականացնել այդ ակտը: Կախված քաղաբական և այլ իրադրություններից՝ իրավաբաղաբական գործորը կարող է հայտարարություն տարածել ճանաչման ակտի վերաբերյալ, սակայն կարող է նաև իսպառ չանդրադառնալ ինչպես ճանաչման ակտի իրագործմանը, այնպես էլ դրա մերժմանը:

Միջազգային իրավունքի մի շարք տեսաբաններ պետականության ճանաչման չափանիշներն արդի աշխարհում կապում են ՄԱԿ-ին անդամակցելու պրակտիկայի հետ, որի դեպքում ճանաչումը կարող է ընդունել և՛ խմբային, և՛ միանձնյա քաղաբական ակտի ձև, ուստի այստեղ չկա ոչ մի նույնաձևություն, և առկա պրակտիկայից ոչ մի հստակ եզրակացություն անել հնարավոր չէ: Մասնագետները, ընդհանրացնելով ճանաչման ակտի տարբեր գործընթացները, եզրակացնում են, որ հիմնական չափանիշների շարքին են պատկանում քաղաբական ռեալ իշխանության լեգիտիմ կազմակերպվածությունը, մարդու և քաղաբացու հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանքի առկայությունը, հակամարտությունների լուծման խաղաղ ճանապարհի նախընտրությունը, տնտեսական ինքնուրույնությունը, միջազգային հարաբերություններ հաստատելու ունակությունը և այլն: Սակայն այս և այլ չափանիշների իմաստները խիստ անորոշ են, և համապատասխան գրականության ու գործնական քննարկի բանաձևումներում առկա չէ ինչ-որ օրինաչափություն: Ի տարբերություն սրա՝ գիտության մեջ նոր արդյունքների ճանաչմանը վերաբերող բոլոր չափանիշները համակողմանի քննարկվում են, սահմանվում են դրանց նշանակությունները, որոշարկվում հասկացությունները և այլն: Այսինքն՝ գիտական ոլորտում առկա է առնվազն հարաբերական համաձայնություն ընդհանուր հասկացությունների, հայեցակետերի, հայեցակարգերի և այլ բանաձևումների վերաբերյալ:

Քաղաբական ճանաչման դեստինատորի վերացումից հետո վերանում է պետության ճանաչման խնդիրը⁴⁷¹: Լավագույն դեպքում իրողությունն արձանագրվում է պատմագիտական գրականության մեջ, որին կրկին անդրադառնում են ընտրողաբար՝ կախված հարցի վերաբրծարծման նպատակից: Ի տարբերություն սրա՝ գիտության մեջ, վերապահորեն ասած, չկա «վերացած» խնդիր. գիտական հիմնախնդիրները երբեք չեն վերանում: Դրանք լուծվում ու փակվում են միայն ժամանակավորապես և, պայմանավորված նոր հայտնագործություններով, կրկին ներբերվում են գիտական խոսույթ: Նույնիսկ այնպիսի խնդիրներ, որոնք համարվում են ակնհայտորեն լուծված, երբեմն-երբեմն վերաբացվում են և արմատապես վերանայվում: Այսինքն՝ չի կարող լինել գիտական նախկին մի հիմնախնդիր, որն իսպառ դուրս մնա գիտական խոսույթից:

Այսպիսով, ինչպես վերն էլ արձանագրվեց, առաջին հայացքից գիտության մեջ ճանաչման հիմնահարցը ճշգրտության ու պարզության առումներով մեծ առավելություններ ունի իրավաբաղաբականից: Սակայն այդպիսի պնդումն իրականում միակողմանի է: Կան մի շարք դժվարահաղթահարելի խնդիրներ, որոնք առկա են և՛ իրավաբաղաբական ճանաչման, և՛ գիտական ճանաչման դեպքերում, բայց դրանք, ի տարբերություն իրավաբաղաբականի, գիտականի դեպքում շատ ավելի բարդ են:

⁴⁷¹ Իրավաբաղաբական ճանաչման հիմնախնդրի վերաբերյալ այս և այլ մանրամասներ, տե՛ս Александровна X. E., Формы и критерии признания государств, Пробелы в российском законодательстве, 3/2012, Cyberleninka, С. 219-222, <https://cyberleninka.ru/article/v/formy-i-kriterii-priznaniya-gosudarstv/>:

Գիտական գործընթացների արտագիտական և իռացիոնալ բնույթը

Սկսած նոր ժամանակներից՝ փիլիսոփայական միտքն առավելապես կենտրոնացավ իմացաբանական, մեթոդաբանական, էպիստեմոլոգիական հիմնահարցերի վրա: Այդ հիմնահարցերը քննարկվել ու քննարկվում են և այսօր էլ շարունակում են մնալ փիլիսոփայական մտքի կենտրոնում: Գիտելիքի ճշմարտության, օբյեկտիվության, անհակասականության և նմանատիպ այլ չափանիշների հիմնահարցերն առավել ինտենսիվորեն սկսեցին քննարկվել արդեն մեր ժամանակներում, որովհետև գիտական հայտնագործությունները, տեխնիկայի ու տեխնոլոգիայի նվաճումները նոր մարտահրավերներ նետեցին մարդկությանը: Իսկ սուբյեկտիվիզմը, սկեպտիցիզմն ու ագնոստիցիզմը սկսեցին առավել հիմնավոր հարձակումներ իրականացնել ինչպես գիտության, այնպես էլ հոգևոր մշակույթի բոլոր ոլորտների նկատմամբ: Ուստի բոլոր ոլորտների՝ լավատեսական կողմնորոշում ունեցող մտավորական գործիչները, այդ թվում՝ փիլիսոփաները փորձեցին ու ներկայումս էլ փորձում են դիմագրավել այդ մարտահրավերներին:

Գիտական ճանաչման մի շարք չափանիշներ (օբյեկտիվություն, անկողմնակալություն, ճշմարտություն և այլն) «արդարացնելու» նպատակով Կ. Փոփերը զարգացրեց մի հայեցակետ, ըստ որի՝ գոյություն ունեն երեք «աշխարհներ»: առաջինը ֆիզիկական օբյեկտների աշխարհն է, երկրորդը մտայնության, մտածողության աշխարհն է, իսկ երրորդը մտքի օբյեկտիվ բովանդակության, մասնավորապես՝ գիտական և պոետիկ մտքերի ու արվեստի գործերի ինքնուրույն աշխարհն է: Ըստ փիլիսոփայի՝ այս երրորդ աշխարհի բովանդակությունը խիստ յուրահատուկ է. այն գիտելիք է՝ առանց ճանաչող սուբյեկտի: Յեղիևակը պնդում է, որ այդ երրորդ աշխարհի բովանդակությունը (հայեցակարգեր, տեսություններ, փաստարկներ և այլն) շատ նման է պլատոնյան էյդոսներին և հեգելյան համաշխարհային ոգուն, որն անտարբեր է իմացության սուբյեկտի նկատմամբ: Յեղիևակը գտնում է նաև, որ չնայած երրորդ աշխարհը ստեղծում է մարդը, սակայն միևնույն է, այն ինքնուրույն է, որովհետև ստեղծում և ի հայտ է բերում այնպիսի նորույթներ, ինչպիսիք մարդը չի հեղինակել: Դրանք ազդում են երկրորդ և նույնիսկ առաջին աշխարհների վրա⁴⁷²:

Այս նկարագրությունից երևում է, որ Փոփերը, գիտնականների համայնքը հայտարարելով անդեմ, ջանում է հող նախապատրաստել օբյեկտիվության համար: Սակայն ինչպես փաստարկում է պրոֆեսոր Յ. Ա. Գևորգյանը, դա Փոփերին չի հաջողվում, որովհետև իմացության օբյեկտը, ինքնին վերցրած, խնդիրներից զերծ է: Օբյեկտային խնդիրները, որոնց արմատներն իրականում սուբյեկտի մեջ են, ստեղծվում են հենց սուբյեկտի գործունեության ընթացքում ու արդյունքում: Ուստի անկախ բովանդակությունից՝ «... անհեթեթ է խոսել իրականությունից դեպի մարդկային գիտակցություն չմիջնորդավորված և ուղղակի ձևով պարզ «փոխանցման» մասին»⁴⁷³: Այսինքն՝ գիտելիքի չափանիշների հիմնահարցը հնարավոր չէ լուծել՝ գիտնականների համայնքն անդեմ հայտարարելու միջոցով:

Ի հակադրություն Փոփերի՝ Թոմաս Կունը ոչ միայն արձանագրեց սուբյեկտիվության անխուսափելիությունը, այլև «լեգիտիմացրեց» այն՝ բացատրելու գիտական հեղափոխությունների կառուցվածքը: Ըստ Կունի՝ յուրաքանչյուր գիտության գիտակարգային մատրիցան՝ հարացույցը, որի շրջանակներում գործառնում է «նորմալ գիտությունը», բաղկացած է մի շարք տարրերից: Կունը հանգամանորեն անդրադառնում

⁴⁷² Տե՛ս **Popper R.K.**, Objective Knowledge, An Evolutionary Approach, Oxford, Clarendon Press, 1994, P. 06-119.

⁴⁷³ **Геворкян Г.**, К вопросу о признании в нуке утверждений и теорий, Философия. Наука. Культура., Ер., Гитутюн, С. 68.

Ե դրանցից չորսին՝ «Նշանային ընդհանրականներին», «մետաֆիզիկական հարացույցին», «արժեքին» և «նմուշին»:

«Նշանային ընդհանրականներին» արտահայտվում են նշանների միջոցով և ընդունելություն գտնում գիտնականների համայնքում: Գիտնականները սրանց օգնությամբ կառուցում են հասկացության հարաբերություններ, որոշարկում սիմվոլները և դրանք կիրառում որպես օբյեկտներ: Գիտակարգային (դիսցիպլինար) մատրիցայի երկրորդ տարրը «մետաֆիզիկական հարացույցն է կամ հարացույցի մետաֆիզիկական մասերը», որոնք պայմանավորում են գիտնականների գոյաբանական նախընտրությունները հայեցակարգային մոդելի վերաբերյալ: Երրորդ տարն «արժեքն» է, որի էությունից է կախված, թե ինչ վերաբերմունք ունի գիտնականների տվյալ համայնքը գիտության, վերջինիս նպատակների, արդյունքների վերաբերյալ: Իսկ չորրորդ՝ ամենաեական տարրը «նմուշն» է, որովհետև ըստ ամենայնի սրանից է մեկնարկում և սրան է հանգում գիտնականների տվյալ համայնքի մասնագիտական գործունեությունը⁴⁷⁴:

Ինչպես տեսանք, ըստ Թ. Կունի՝ գիտությունը միշտ շրջապատված է արտագիտական մի շարք իրողություններով, որոնք ուղեկցում են գիտական տեսությանը: Այդ արտագիտական իրողությունները կարող են լինել ռացիոնալ ու իռացիոնալ, գիտակցական ու անգիտակցական, հայեցողական և այլն: Սրանց ցանկացած համադրական ամբողջն իր հերթին խմբային մակարդակում միշտ ինչ-որ մշակույթի և/կամ ենթամշակույթի ազդեցության տակ է, այդ թվում՝ մոդայի: Իսկ անձի մակարդակում այս ամենից զատ առկա են նաև խառնվածքի, բնավորության, դաստիարակության, ներ-անմիջական միջավայրի գործոնները և այլն: Հասկանալի է, որ Թ. Կունի այս տեսության բոլոր դրույթներն էլ կարելի է դնել հարցականի տակ, բայց որ գիտության ընթացքը հսկայական ազդեցություններ է կրում արտագիտական (կամ նույնիսկ հակագիտական) երևույթներից, ամեն կասկածից վեր է:

Գիտության վրա ունեցած արտագիտական և իռացիոնալ երևույթներին վերաբերող էպիստեմոլոգիական խոսույթն իր լրմանը հասցրեց Պ. Ֆայերաբենդը, որն իր հիմնադրած մեթոդական անարխիզմի շրջանակներում գիտությունը լիովին հավասարեցրեց դիցաբանությանը, կրոնին, մարմնավաճառությանը, ձեռներցությանը և մարդկային գործունեության այլ ընդունելի կամ անընդունելի ձևերին: Ֆայերաբենդը հստակ ցույց տվեց արտագիտական, մասնավորապես քաղաքական ուղղակի և անուղղակի ահռելի ազդեցությունները, որոնք կրել ու կրում է գիտությունը: Մեթոդական անարխիզմի հիմնադիրը, ի թիվս այլնի, փաստարկում է նաև, որ կրոնը և/կամ միջը, հարաբերած գիտությանը, ոչ մի պակասություն չունեն: Իսկ որոշ հարցերում վերջիններս ավելի մեծ բարձունքներ են նվաճել, քան գիտությունը՝ չնայած գիտության մեծ, բայց անհիմն հեղինակության⁴⁷⁵:

Կատարված նկարագրությունները լիովին պարզորոշում են, որ գիտական գործընթացները ոչ միայն լիովին ռացիոնալ ու ճանաչելի չեն, այլև շատ հաճախ ուղղորդվում են հենց իռացիոնալ խթանիչներից:

Վերադառնալով իմացության արդյունքների՝ գիտության մեջ ընդունելու, դրանք որպես գիտական ճանաչելու գործընթացին՝ նշենք, որ, ի թիվս այլոց, հիմնախնդիրը բազմակողմանիորեն քննել ու իր հարաբերական լրմանն է հասցրել պրոֆեսոր Հ. Գևորգյանը: Պրոֆեսորը, ընդհանրացնելով դրան առնչվող մի շարք էական գաղափարներ, պնդում է, որ ճանաչողության օբյեկտը չի կարող պարունակել խնդիրներ, եթե այն հարաբերված չէ ճանաչողության սուբյեկտին: Ըստ հեղինակի՝ գիտությունը ոչ միայն անդրադարձ է, այլև՝ ստեղծագործություն: Գիտությունն իր խնդիրների և դրանց ստեղծման մասնակիցն է: Ուստի գիտելիքի (օրենք, տեսություն, հայեցակարգ և այլն)

⁴⁷⁴ Տե՛ս Кун Т., Структура Научных Революций, М., Прогресс, 1977, С. 237-244.

⁴⁷⁵ Տե՛ս Фейерабэнд П., Против метода. Очерк анархистской теории познания, М., Аст Москва, Хранитель, 2007, С. 24-26.

ճանաչման համար էական են ոչ միայն դրա տրամաբանական ու փորձնական հիմնավորվածությունը, հավանականությունն ու օբյեկտիվությունը, այլև գործնական արդարացվածությունը, նպատակն ու գործառնությունը: Այս ամենից բացի, առկա է նաև բացառապես սուբյեկտիվ ներհատուկ՝ անձնային-սուբյեկտային հարաբերականություն, այսինքն՝ մեկից ավել անհատներ միևնույն փաստարկին կարող են վերագրել համոզական տարբեր գործություններ: Այս իրողությանը, որը Դ. Պոյան անվանում է «մարդու ֆոն», պրոֆեսոր Յ. Գևորգյանը հավելում է ևս մեկը՝ ժամանակաշրջանի «ֆոն»-ը, որոնք ապացուցողականության հետ կազմում են ճանաչման հիմնախնդրի երեք հիմնարար գործոնները: Այս ամենը խիստ դժվարացնում է ճանաչման իրացումը, և եթե ինչ-որ գաղափար, այնուամենայնիվ, ճանաչվում է, ապա նշանակում է, որ ճանաչողության սուբյեկտը դրան լուրջ է վերաբերվում: Այն ենթակա է ուսումնասիրման և հետազայում հերքման կամ հաստատման⁴⁷⁶: Այսինքն՝ գիտության մեջ նոր արդյունքների ճանաչումը գերծ չէ այն բոլոր արտագիտական և իռացիոնալ խնդիրներից, որոնք առկա են մարդկային կենսագործունեության այլ ոլորտներում:

Վերը նկարագրված խնդիրների դժվարահղթահարելի կամ անհաղթահարելի լինելը էպիստեմոլոգիայի համար սովորական խոսույթ է, սակայն փաստն այն է, որ գիտությունը կարիք է զգում, որպեսզի այս ամենը ժամանակ առ ժամանակ ի ցույց դրվի և ապացուցվի (կամ հերքվի): Գոյություն ունի տարածված անհիմն համոզումներ, իբր անհարկի մերժողականությունը, քարացած մտայնությունները, հեղինակությունների առաջ ընկրկելը դուրս են գիտության շրջանակներից: Այս համոզումները տիրապետող է ոչ միայն գիտությունից դուրս գտնվող «գիտության երկրպագուների», այլև հենց գիտնականների շրջանում, որոնք շատ հաճախ համոզված են, որ իրենք գերծ են նախապաշարումներից և լիովին անաչառ կերպով հետամտում են ճշմարտությանը: Սակայն ինչպես պնդում է Թ. Կունը, «կան մի շարք վկայություններ», որոնք փաստում են ճիշտ հակառակը: Գիտնականը մինչև իր հետազոտությունը սկսելը գիտի, թե ինչ արդյունք պետք է ունենա: Եթե ակնկալած արդյունքը շուտով ի հայտ է գալիս, ապա լավ է, իսկ եթե ոչ, ապա նա այնքան է պայքարում սարքավորումների ու հավասարումների դեմ, մինչև ստացվի կանխատեսված նմուշը: Սրա պատճառն այն է, որ ինչ-որ բան պետք է գիտնականին ասի, թե նա որտեղ և ինչ փնտրի: Գիտության այսպիսին լինելը Թ. Կունը բացատրում է ավանդույթների պահպանման, կրթության կազմակերպման և այլ նմանատիպ արտագիտական գործոններով՝ փաստարկելով, որ գիտությունը դոգմատիկ է⁴⁷⁷:

Այսպիսով, ինչպես ակնհայտորեն երևում է, գիտության կազմակերպումն ու հնարավոր զարգացումները մեծապես պայմանավորված են արտագիտական և իռացիոնալ գործոններով: Սակայն այս պարագայում հարցն այն չէ, թե ինչպիսի արտագիտական կամ հակագիտական տարրեր են մասնակցում գիտության զարգացման ընթացքին, այլ այն, որ **գիտությունը կա՛մ չգիտի իր այդպիսի բաղկացուցիչների մասին, կա՛մ գիտի, բայց ձևացնում է, թե դրանք չկան:**

Միջանկյալ եզրակացություններ

Առաջին մոտեցմամբ կարելի է ենթադրել, որ քաղաքական ճանաչման հիմնախնդիրը թերևս լինի ավելի խնդրահարույց, քան գիտականը, որովհետև բացի վերը նշված խնդիրներից, իրավաբանական ճանաչումը բախվում է նաև իրեն հատուկ բարդությունների, որոնք չկան գիտական ճանաչման դեպքում: Սակայն այդպես չէ:

⁴⁷⁶ Տե՛ս Գևորգյան Գ., К вопросу о признании в нуке утверждений и теорий, Философия. Наука. Культура., Ер., Гитутюн, С. 79-88.

⁴⁷⁷ Տե՛ս Kuhn Th., The Function of Dogma in Scientific Research, Scientific Change, Alistair C. Crombie, Ed. (1963), pp. 347-369. © 1963 by Heinemann Educational Books, Ltd. Reprinted by permission of Basic Books, Inc., publishers, էջ 301-310, e <http://classes.matthewjbrown.net/teaching-files/hps/kuhn-dogma-revolutions.pdf/>.

Իրավաբաղաբական հարաբերության սուբյեկտը գլխավորապես առաջնորդվում է շահով և, ի տարբերություն գիտական ճանաչողության սուբյեկտի, կարիք չունի բողոքելու իր շահադիտական նպատակները, եթե հնարավոր բողոքումը տեղի չի ունենում մարտավարական նկատառումներով: Սեփական շահին հետամուտ լինելը լիովին լեգիտիմ իրողություն է իրավաբաղաբական շրջանակներում, որը հիմնավորվում է ինչպես գործնական, այնպես էլ տեսական-հիմնարար խոսույթների մակարդակներում⁴⁷⁸: Իսկ սա նշանակում է, որ իրավաբաղաբական գործընթացները, մասնավորապես ճանաչման ակտի իրականացումը, լիովին կախված է վերը հիշատակված սուբյեկտային ֆոներից: Եվ այս հանգամանքը ո՛չ գաղտնիք է, ո՛չ էլ նորություն: Այսպիսով՝ վերը կատարված համեմատությունից կարելի է եզրակացնել.

ա) միևնույն արգելակիչներն առկա են և՛ գիտության մեջ նոր արդյունքների ճանաչման, և՛ իրավաբաղաբական ճանաչման ոլորտներում, սակայն իրավաբաղաբական խոսույթը «գիտի» դրանց մասին, իսկ գիտականը՝ ոչ,

բ) գիտականների հանրությունը՝ իմացության սուբյեկտը (ճանաչողը), անդեմ է, հետևաբար զերծ է պատասխանատվությունից, իսկ բաղաբական ճանաչման սուբյեկտը լիովին դիմավորված է (պետություն, կազմակերպություն և այլն), ուստի՝ պատասխանատու: Բաղաբական սուբյեկտը պատասխանատու է ոչ միայն ճանաչման (դրական հայտարարության) համար, այլ նաև լուրջություն պահպանելու դեպքում,

գ) քանի որ գոյություն ունեն վնասակար այնպիսի երևույթներ, որոնք առկա են և՛ գիտության, և՛ իրավաբաղաբական ոլորտներում, ապա գիտության շրջանակներում քննարկված ու պարզաբանված այդ երևույթները կարելի է արտարկել նաև իրավաբաղաբական գործընթացների վրա: Այս դեպքում խոսքը վերաբերում է գիտական ճանաչման ակտն անհարկորեն խաթարող ֆոներին, որոնց ելությունները բավականաչափ պարզաբանված են, որպեսզի հնարավոր լինի վերջիններիս քննարկումը իրավաբաղաբական ճանաչման համատեքստում:

Ճանաչումը խաթարող սուբյեկտային ֆոները Արցախյան հիմնախնդրում

Ինչպես տեսանք, իրավաբաղաբական գործընթացներն ըմբռնելու և կանխատեսելու առումով գտնվում են հարաբերականորեն ավելի բարենպաստ պայմաններում, քան գիտական գործընթացները, ուստի ասվածն առնչելով Արցախյան հիմնախնդրին՝ կարելի է ասել, որ Արցախի միջազգային ճանաչման խոսույթը սկզբունքորեն հնարավոր է վերլուծել ու ըմբռնել: Այս հնարավոր ըմբռնումից էլ կարող են մեկնարկել խելամիտ կանխատեսումներ, և որ ամենակարևորն է՝ ուղղորդիչ միջամտություններ:

Արցախի հիմնահարցի կարգավորման գործընթացում հայկական կողմը բախվում է մի շարք խնդիրների, որոնցից առաջնայինը, թերևս, հայկական ներքին անհամաձայնություններն են (տեսաբաններ-գործորդներ, զիջումների հակվածներ-պահանջատերեր և այլք): Այս խիստ կարևոր ու ծավալուն խնդիրը կարոտ է հատուկ ուսումնասիրությունների և ամենաբարձր մակարդակի լուծումների, որին այստեղ չենք անդրադառնում: Իսկ արտաքին բաղաբականության էական հարցն այն է, թե ի՞նչն է խանգարում միջազգային հանրությանը (որը հարատևորեն շեշտադրում է համամարդկային արժեքները)՝ իրականացնելու արդարության մեկ մասնավոր ակտ, այն է՝ ճանաչել ու սատարել Արցախի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը: Այլ կերպ ասած՝ սուբյեկտային ո՞ր ֆոնին են բախվում հայկական դիվանագիտական գործիչները Արցախյան հիմնահարցի շրջանակներում՝ ապացուցողական, մարդու, թե՛ ժամանակաշրջանի:

⁴⁷⁸ Տե՛ս, օրինակ, **Аристотель**, Политика, Сочинения в четырех томах. Том 4, М., 1984, С. 376.

Հայկական գործորդները նախևառաջ բախվում են ապացուցողական ֆոնին: Ինչպես արդեն ասվեց, հայկական կողմն ունի ներքին հակասություններ և Արցախյան հիմնահարցի վերաբերյալ, այն է՝ նպատակի, միջոցների, գործիքների և այլ նմանատիպ եական հարցերի շուրջ չունի մեկ միասնական հայեցակարգ: Ուստի այս պայմաններում ոչ միայն ծագում է այն հարցը, թե ինչպե՞ս և ու՞մ ապացուցել, այլև՝ ի՞նչ ապացուցել: Խնդրով զբաղվող առանձին մտավորականներ, հոգուտ հայկական կողմի, ջանք ու եռանդ չեն խնայում՝ բացահայտելու և կառուցարկելու անկասելի փաստարկներ ու հակափաստարկներ, որոնք պետք է ներկայացվեն և՛ պաշտոնական Բաթլին, և՛ համաշխարհային հանրությանը (ի դեմս, ասենք, Մինսկի խմբի համանախագահների): Մտավորականությունը հարատևորեն մատնացույց է անում այն հզոր փաստարկները, որոնք կարող են լուրջ հակահարվածներ հասցնել թուրքամետ բանախոսներին, իսկ հայկական քաղաքական գործիչները անհասկանալի պատճառներով ականջալուր չեն լինում անշահախնդիր ու սրտացավ այդ մտածողներին: Նրանք կարծես շարունակաբար կատարում են կառավարման դասական սխալը՝ մտածելով, թե գոյություն ունի միայն երկու կարծիք. մեկն իրենցն է, մյուսը՝ անմտություն:

Նկարագրվածը ներքին խնդիրների միայն մի չնչին մասն է արտացոլում, սակայն այս քննարկումը շարունակելու ո՛չ հնարավորություն կա, ո՛չ էլ առավել ևս կարիք, որովհետև այս մասին շատ լավ գիտեն և՛ տեսաբանները, և՛ պատասխանատու գործիչները:

Հայկական կողմը բախվում է նաև մարդու ֆոնին առնվազն մի քանի առումներով: Առաջինը թուրքերի զուտ նվաճողական և կովկասյան թաթարների հայատյաց մտայնությունն է, որի իրացման գործում գործուն մասնակցություն են ունեցել Արևելյան Անդրկովկասում իշխանություն ունեցած բոլոր գործորդները՝ ցարական ու բոլշևիկյան Ռուսաստանները (ցարականը՝ առաջին հերթին), գերմանական, անգլիական և այլ ուժեր: Մյուսը համաշխարհային հանրության անտեղյակությունն է, որը հայ-թուրքական կոնֆլիկտում, չունենալով ուղղակի շահ, հավանաբար կցուցաբերեր անկողմանակալ ու մարդասիրական մոտեցումներ, եթե տեղյակ լիներ կոնֆլիկտի իսկությանը: Այս առումով տիպիկ է Կ. Փոփերի այն պնդումը, որ «... չարության դեմ պայքարելն առավել դժվար է, քան չափավոր հիմարության, որովհետև բարի մարդը, ով շատ խելամիտ չէ, հաճախ շահագրգիռ է սովորելու»⁴⁷⁹: Եթե փոփերյան այս ասույթի «չարություն» և «հիմարություն» բառերը փոխարինենք իմաստով դրանց շատ մոտ «ծավալապաշտական բռնատիրություն» և «չտեղեկացվածություն» բառերով, ապա կստացվի ներկա իրականության ճշգրիտ պատկերը, որովհետև հայկական դիվանագիտական գործորդները բախվում են թուրք-թաթարական ծավալապաշտական ու հափշտակիչ քաղաքականության և համաշխարհային (հավանական) անկողմանակալ հանրության անտեղյակությանը: Լայն հանրության անտեղյակության («հիմարության») բուն մեղավորը ո՛չ թուրք-ադրբեջանական հզոր քարոզչամեքենան է, ո՛չ էլ այդ մեքենայի արտադրանքն անքննադատաբար կլանող հանրույթը: Այդ իրադրության ստեղծման իրական մեղավորը հայկական կողմն է, որը տեղեկատվական պատերազմում վաղուց ի վեր մատնված է հանցավոր անգործության: Ինչպես Աղդամի (անթույլատրելիորեն հայտնի է՝ Խոջալուի) դեպքերի կապակցությամբ, այնպես էլ մի շարք հարցերում հայկական գործիչները դրսևորում են պարզամտության հասնող լավատեսություն՝ «... մտածելով, թե «ինչ ուզում են՝ թող ադրբեջանցիները ասեն, միևնույնն է՝ ճշմարտությունը մեր կողմն է»»⁴⁸⁰: Մինչդեռ անվիճելի է այն փաստը, որ ներկայումս բոլոր տիպի պարտություններին նախորդում է տեղեկատվականը:

⁴⁷⁹ Popper K., Conjectures and Refutations, The Growth of Scientific Knowledge, Manufactured in the United States of America, 1962, P. 365-366.

⁴⁸⁰ Մանասյան Ա., Ղևոնդյան Ա., Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել..., Ե., Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2011, էջ 146:

Իսկ ինչ վերաբերում է հենց բուն թուրք-թաթարական վարքածևին, ապա այստեղ ո՛չ փաստարկման, ո՛չ էլ պատմական դեպքերը հիշատակելու կարիք չկա: Ծավալապաշտությունը, ցեղասպանություններն ու հափշտակությունները թուրքական դասական քաղաքականության անկապտելի մասն են, որոնց գործադրմամբ էլ 1918թ.-ին ստեղծվեց «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն» կոչված քաղաքական նորագոյացությունը: Սա «... Թուրքիայի կողմից իր սահմաններից դուրս բնիկ ժողովրդի ցեղասպանության ճանապարհով թուրքական նոր պետություն հիմնելու առաջին փորձն էր, որը նախորդել է միջազգային հանրության կողմից մինչ օրս ճանաչում չստացած Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության ստեղծմանը»⁴⁸¹: Իսկ պաշտոնական Բաբուն, թունավորված լինելով պանթուրքիզմի գաղափարներով⁴⁸² և կովկասյան թաթարների ինքնության գիտակցությունը կառուցած լինելով հայատյացության վրա⁴⁸³, շարունակում է հայկական կողմին տարածքային և այլ անհեթեթ պահանջներ ներկայացնել: Այսինքն՝ այս վերջին առումով հայկական արտաքին դիվանագիտությունը բախվում է պաշտոնական Բաբլի հափշտակիչ ու ցեղասպան քաղաքական կեցութածևին և, այսպես կոչված, Ադրբեջանի Հանրապետության շարքային քաղաքացի՝ նախկին կովկասյան թաթարի տգիտության հետ: Մի մարտնչող տգիտություն, որը թերևս երբեք էլ թույլ չի տա, որ կողող գիտակցի, թե ինքը ոչ թե թուրք է, այլ հավանաբար պարսիկ, իսկ հայերի դեմ իրեն թշնամացրել են ցարական ու թուրքական գործակալները⁴⁸⁴:

Վերջապես հայկական կողմը բախվում է ժամանակաշրջանի ֆոնին, որը, կարելի է ասել, որոշիչ դեր ունի Արցախյան հիմնախնդրի կարգավորման հարցում: Չնայած բոլոր ժամանակաշրջաններն էլ միմյանցից տարբեր են, սակայն արդի ժամանակներն ունեն մի շարք յուրահատկություններ, որոնք ներկա ու անցյալ ժամանակաշրջանների տարբերությունները ահռելիորեն մեծացնում են: Ներկայումս խոսվում է հետխորհրդային, տեղեկատվական, գլոբալացման, պոստմոդեռնի և սոցիալական այնպիսի ժամանակաշրջանների մասին, որոնք իրենց նախադեպը չունեն և չեն էլ կարող ունենալ: Ուստի այս հանգամանքները կրկին պարտադրում են, որպեսզի իրավաքաղաքական գործողները քաջատեղյակ լինեն մասնագիտական ուսումնասիրություններին և ամենայն լրջությամբ հաշվի նստեն դրանց հետ: Մի հրամայական, որի իրացումը լայն տարածում ունի առաջադեմ աշխարհում և, իհարկե, թուրք-ադրբեջանական ճամբարի որոշ շրջանակներում: Սրանք բավական լավ են յուրացրել արևմտյան քաղաքական տեխնիկա-տեխնոլոգիաները և հաջողությամբ կիրառում են ինչպես հայկական, այնպես էլ հենց արևմտյան կողմերի դեմ: Ներկայումս թուրք-ադրբեջանամետ գործողները «... Ֆրանսիային, Մեծ Բրիտանիային, ԱՄՆ-ին, Ռուսաստանին և այլ պետություններին վախեցնում են՝ սպառնալով Կորսիկայի, Բասկերի Երկրի, Շոտլանդիայի և Նոյնիսկ

⁴⁸¹ **Մանսայան Ա.**, Ադրբեջան-Արցախ հարյուրամյա հակամարտության փոխակերպումները իրադարձային հենքի և իրավաքաղաքական արդյունքների դիտակետից // Բանբեր ԵՊՀ, Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն մատենաշար, 2018, թիվ 2(26), էջ 5:

⁴⁸² Տե՛ս **Մանսայան Ա., Ղևոնդյան Ա.**, Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել..., Ե., Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2011, էջ 44-45:

⁴⁸³ Ավելի մանրամասն տե՛ս **Սարգսյան Տ.**, Հայ-թաթարական բախումները ռուսական կայսրության ազգային քաղաքականության համատեքստում // Բանբեր Երևանի Համալսարանի, Հայագիտություն, Հասարակական գիտություններ, № 3 (30), Ե., Երևանի Պետական Համալսարանի Հրատարակչություն, 2019, էջ 64-67:

⁴⁸⁴ Տե՛ս **Մանսայան Ա.**, Ադրբեջանահայրությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և Հայոց ցեղասպանության ճանաչման համատեքստում // «Գլոբուս», Նորավանք հրատ., N 8-9, 2014, էջ 113:

ամերիկյան նեգրերի անջատողականությամբ»⁴⁸⁵: Վերջիններս էլ այս շանտաժի ճնշման ներքո մոռացության են մատնում ներկայիս (և անցյալի) Ադրբեջանի Հանրապետության՝ տրամաբանությունից զուրկ երևույթ, իրավական զավեշտ⁴⁸⁶ ու տիպիկ հակաօրինական կազմավորում լինելու⁴⁸⁷ փաստը և նմանատիպ մի շարք էական փաստեր:

Այսինքն՝ և՛ թուրք-ադրբեջանական կողմը, և՛ աշխարհաքաղաքական գործողները, գտնվելով ժամանակաշրջանի ֆոնում և հաշվի առնելով այն, իրականացնում են անարդար, բայց լեգիտիմացված գործողությունների շարք: Այստեղից էլ (ի թիվս նավթային քաղաքականության և այլնի) սևվում է ազգերի ազատ ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների հակադրման զուտ շահադիտական պրակտիկան, որին հավելվում է Ադրբեջանի Հանրապետության կորցրած տարածքների կեղծ ու անհեթեթ խոսույթը, և Արցախյան հիմնահարցի կարգավորման գործընթացը մղվում է փակուղի:

Եզրակացություն

